

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

891.99.09
Հ-24

Հ Ա Յ Ա Բ Ա Ռ Ա Տ Ա

403

523

9361

891.99.09
2-24

- 6 NOV 2011
136955

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

I Գ. Ի Ր. Ք.

ՊԱՏՐԱՍՏԵԼ Ե ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՑԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ
ԻՆՍԻՏՈՒՏԻ ԲՐԻԳԱԴԻ

ԹՈՒՑԱՏՐՎԱԾ Ե ՀԱՅՈ ԼՈԽՎՃՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՂՄԻՑ, ՈՐՊԵՍ ԴԱՍԱԳԻՐՔ
ՄԻԶՆԱԿԱՐԴ ԴՊՐՈՑԵՐԻ VIII ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՑԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Ց

ԵՐԵՎԱՆ

1940

01 JUN 2013

64.072

Ուժերորդ դասարանի դասագիրքը գրել եմ:

Ա. «Հիմ շրջան» և «Միջին շրջան»— Մ. Մկրյան, Փիլոլոգ. գիտ. թեկնածու:

Բ. «Նոր շրջան»-ի «Հայ գրականությունը XIX դարի առաջին հիմնայական բաժինը» Ռ. Զարյան, Փիլոլոգ. գիտ. թեկնածու:

Խմբագրությամբ

Թրոփ. ՀԱՊ. ՄԵԼԻՔՅԱՆԻ և ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ



29870

1195-98

История Армянской литературы для VIII класса

Подготовлен бригадой Института Литературы и языка
Армянского филиала АН СССР

Армгиз, Ереван, 1940

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՀԿ(Բ)Պ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԿԻ ՈՐՈՉՈՒՄՈՎ ՍՍՀԽՄ ԿԻՄՈՒՀ
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԱՊԵՄԽԱՅԻ ՀԱՅԿԱՂԱՆ ՖԻԼԻԽԱԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ Ա
ԼԵՂՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ պատրաստել է «Հայ գրականության պատ-
մությունն՝ սկզբից մինչև մեր օրերը», որպես դասագիրք միջնա-
կարգ դպրոցի բարձր դասարանների համար:

Հայ գրականության պատմության նոր դասագիրքը նշանա-
կալից երևույթ է թե' մեր ժողովրդի անցյալի բազմադարյան
կուտուրական ժառանգության լենինյան գնահատման և թե' գրա-
կանության ավանդումը միջնակարգ դպրոցում գիտական հիմքե-
րի վրա գնելու ասպարիզում:

Մինչև այժմ թե' սովետական շրջանում և թե' անցյալում մի-
կրվել հայ գրականության ամբողջական, գիտական պատմու-
թյունը:

Վրթանես Փափազյանի «Հայ գրականության պատմություն՝
սկզբից մինչև մեր օրերը», որ իր ժամանակ, անկասկած, մի դը-
րական գործ էր, չը կարող բավարարել առաջավոր գիտության
ավանդներին: Փափազյանի գործն ավելի շուտ գրականության
գաղրգացման ընթացքի խրոնիկա էր, քան պատմություն: Առող
Մանվելյանի «Ծուսահայ գրականության պատմությունը» սահմա-
նափակվում է միայն նոր շրջանի գրականությամբ և այն էլ ոռւ-
սահայ գրողների ստեղծագործությամբ: Պալասանյանի, Զամի-
նյանի, Լեռյի և մյուսների գրականության պատմությունները
նույնպես խիստ պակասավոր էին:

Նախասովետական շրջանի հայկական միջնակարգ դպրոցնե-
րում հայ գրականությունն ավանդվում եր անսիստեմ ու թերի:
Ամեն մի ուսուցիչ ավանդում էր ըստ իր սիստեմի և գիտցածի:

Սովետական շրջանում հայ գրականության պատմության ա-
վանդումը միջնակարգ դպրոցներում զգալի չափով կարգավոր-
վեց: Պետությունը հայկական բարձրագույն դպրոցների միջոցով
պատրաստեց բարձրորակ մանկավարժական կադրեր, պայմաններ

ստեղծեց գրականության դասագրքեր կազմելու և այլն; Չնայած այդ նվաճումներին, այնուամենայնիվ մեր դպրոցներում հայ գրաբանության ավանդումը դեռ իր բարձրության վրա չի դրված: Դլխավոր թերությունը՝ դասագրքի բացակայությունն է: Գրականության պատմությունը մինչև այժմ անցել են գրեստոմատիաների միջոցով: Այդ գրեստոմատիաներում տեղ չեն գտել հայ հին գրականությունը, ժողովրդական բանահյուսությունը: Միշին դաւերի գրականությունը ներկայացվել է թերի: Գրեստոմատիաներում տեղ չեն գտել նոր շրջանի մի շարք ականավոր գրողներ (Ալիշան, Թեշիկթաշլյան, Պատկանյան, Սերենց և այլն), Գրողների կյանքը և հասարակական գործունեությունը մարգսիստորեն, հարկ եղած շափով չի լուսաբանվել:

Միշնակարգ դպրոց ավարտողները համեմատաբար լրիվ ու ճիշտ գաղափար չեն կազմում բազմադարյան հայ գրականության մասին:

Նոր գասագիրքը առաջին փորձն է հայ գրականության աշխանդումը կարգավորելու և սովորական առաջավոր գիտության սկզբունքներով որոշ սիստեմի բերելու:

Անկասկած, նոր դասագիրքը, որպես առաջին փորձ, գերծ չի լինի որոշ թերություններից:

Մեր հասարակայնության օգնությամբ նկատված թերությունները կվերացվեն դասագրքի հետագա հրատարակություններում:

Դասագիրքը հրատարակվում է երեք գրքով.

Ա. Առաջին գիրքն ընդուրկում է «Հին շրջան»-ը, «Միշին շրջան»-ը և «Նոր շրջան»-ի սկիզբը, և հարմարեցված է ութերրդ դասարանի ծրագրին:

Բ. Երրորդ գիրքն ընդուրկում է «Նոր շրջան»-ի 50—90-ական թվականների գրականությունը և հարմարեցված է իններրդ դասարանի ծրագրին:

Գ. Երրորդ գիրքն ընդուրկում է 20-րդ դարի գրականությունը (նախասովետական և սովորական շրջանի) և հարմարեցված է տասերրդ դասարանի ծրագրին:

Դասագրքում գրաբար արձակ երկերից մեջբերումներն արշված են աշխարհաբար թարգմանությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ԽՍՏՏՈՒՅՑ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ V—IX ԴԱՐԵՐՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր թվականությունից ավելի քան հազար տարի առաջ Հայաստանում ապրում էին բազմաթիվ ժողովուրդներ: Գրանցից խալդերը, դաշնակցելով մյուսների հետ, կարողացան բավական ուժեղ պետություն ստեղծել: Խալդերի պետության մեջ առաջացավ սեփական կուլտուրա, որ իր բարձրությամբ ընդհանրապես ետքեր մնում հին ժամանակների նշանակոր երկրի՝ հարևան Ասորեստանի կուլտուրայից: Մինչև մեր օրերը պահպանվել են խալդերի ստեղծագործ աշխատանքի զարմանք շարժող հոյակապ հուշարձաններ՝ քարափոր բերդեր, ջրանցքներ, մեծ քանակությամբ սեպաձեւ արձանագրություններ, որոնք երբեմն փորագրված են ահունի մեծությամբ և բարձրությամբ միակտոր քարաժայուերի վրա: Սեպաձեւ արձանագրությունների հնությունը հասնում է մինչև երկրորդ հազարամյակի վերջերը մեր թվականությունից առաջ:

Ժամանակի ընթացքում խալդերի և Հայաստանում ապրող մյուս ժողովուրդների ձուլումից առաջացավ հայ ժողովուրդը, որը բնականաբար ժառանգեց խալդերի և մյուսների ստեղծած կուլտուրան և էլ ավելի բարձր աստիճանի հասցրեց այն: Այսպիսով, Հայաստանի գրավոր կուլտուրայի սկիզբը կազմում են խալդական սեպաձեւ արձանագրությունները, որոնք մերձավոր արևելքի ծոլովուրդների հնագույն պատմության ուսումնասիրության համար մեծարժեք գրավոր աղբյուրներ են:

Դժվար է ճշտությամբ որոշել, թե երբվանից է Հայաստանում սեպաձիր արձանագրությունների փոխարեն սովորական տառա-

Նիշներով գրականություն սկսվել: Հայտնի է միայն, որ սեպագիծ արձանագրությունները համնում են մինչև VI դարը (մեր թվ. առ.), որից հետո, պետք է ենթազրել, գրության այդ ձևը գործածությունից դուրս է եկել: Դրանից հետո, մինչև մեր թվականության V դարը, այսինքն մինչև Մեսրոպյան շրջանը, հայերն անհասկած ունեցել են գիր ու գրականություն, սակայն այդ պաշտոր գրականության հուշարձանները ունշացվել են:

Նախամեսրոպյան Հայերեն գրականություն գոյություն է օրշանի հայ ցրակառ ունեցել V դարից առաջ (երկրորդական նուրբություն) հանգամանք է՝ սեփական, թե՛ օտար տալիս Մովսես Խորենացի պատմիչը: Նա ասում է, որ հնում կային բազմաթիվ հեթանոսական մեհենական մատյաններ, որոնք թարգմանված են եղել Հոմարեն, ասորերեն և այլ լեզուներով, զրուցների մատյաններ, ֆեոդալ իշխանների միջև կընթափած կալվածագրեր և այլն: Իսկ Զազար Փարպեցի պատմիւր, նկարագրելով, թե ինչպես Մեսրոպ Մաշտոցը մեծ վիշտ էր ըստ գում, տեսնելով, որ ասորերեն լեզվով կրոնական գրքերի ընթերցանությունից լսողները ոչինչ չեն հասկանում, ավելացնում է: «Մանավանդ որ հայերեն լեզվի նշանագրերը կային, որով կարելի էր հայկական և ոչ մուրացած հնչուաններով կարդալ...»: Այս փաստերից բացի, ամենախոշոր երեսութը, սակայն, մնում է հայոց գրական հին լեզուն, «գրաբարը», որը իր ճոխությամբ, փիլիսոփայական բարդ մտքեր արտահայտելու կարողությամբ ետ չէր մնում հին Հոմարենից: V դարում Հոմարենից կլասիկ ճշտությամբ գրաբար թարգմանվեցին «Աստվածաշունչը» և բազմաթիվ ուրիշ գրքեր: Առանց գրականության գոյության, անշուշտ, գրաբարը այդքան ճոխության ու նրբության չէր կարող հասնել:

Սակայն V դարից առաջ գոյություն ունեցած հայերեն գրականությունից մեզ ոչ մի փաստաթուղթ չի հասել, և, որ կարենքն է, ամենայն հավանականությամբ, IV դարում, քրիստոնեությունը Հայաստան մոտք գործելուց հետո՝ հայերեն լեզվով գրականությունը պաշտոնապես ընդհատվել է մինչև V դարը, երբ պետությունը և եկեղեցին նորից վերստեղծեցին այն:

Քրիստոնեությունը Հայաստանում տարածվեց վիխավորապես ջնորհիվ պետական նախաձեռնության, այն ժամանակվա թագա

վոր Տրդատ III օրոք: Որպեսզի քրիստոնեությունն արմատավորվեր ժողովրդի մեջ, հոգևորականությունը, որ այն ժամանակ կազմված էր գերազանցապես հույսներից և ասորիներից, սկսում է անխնա կերպով ոչնչացնել հայ հեթանոսական կուլտուրան ու գրականությունը, որը շատ հարուստ էր և սերտ կապված էր ժողովրդական բանահյուսության ու հումական անտիկ կուլտուրայի և գրականության հետ:

Այդ կապը գոյություն ուներ շատ վաղուց, բայց առանձնապես ուժեղացել էր Տիգրան Մեծի թագավորության շրջանից ըստակած: Այսպես, օրինակ, մեր թվականությունից առաջ I դարում, Հայաստանի մայրաքաղաք Արտաշատում եղել է հոմական թատրոն, իսկ Տիգրան Մեծի սրդին՝ Արտավազդ թագավորը գրել է հունարեն լեզվով ողբերգություններ, պատմություններ և ճառեր. Գառնիի բերդում I—II դարերին շինված պալատը, որ անտիկ ճարտարապետության հրաշակերտներից մեկն է, նմանապես ցայտուն կերպով արտահայտում է այդ կապը:

Հեթանոսական շրջանի հայերեն գրականության հանդեպ քրիստոնյա հոգևորականության ունեցած ժխտական վերաբերմունքի պատճառը Հայաստանում բյուզանդական կայսրության վարած քաղաքականությունն էր: Հայտնի է, որ V դարում, գրերի գյուտից հետո, երբ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը էլյուզանդիայի գերիշխանության տակ գտնված Հայաստանի մասում ուզում են հայերեն գրերը գործածության մեջ մտցնել, հույն իշխանավորների կողմից ուժեղ գիմադրության և արգելքի են հանդիպում: Բանն այնտեղ է հասնում, որ Մաշտոցը ստիպված է լինում գնալ Կ. Պոլիս, անձամբ ներկայանալ բյուզանդական կայսրին՝ գրերի գործածության թուլավություն ստանալու համար: Այս զեպքը պարզ կերպով ցուց է տալիս, թե ինչպես օտար տիրողները վախենում էին հայերեն գրականության առաջանալուց:

Կարելի է կռահել, որ շորրորդ գարում էլ բյուզանդական բըռնակաները, հարմար առիթ և հնարավորություն եղած զեպքում, կաշխատեն ունշացնել հայերեն լեզվով գրական կուլտուրան և փոխարինել այն հոմարենով, որպեսզի ժողովրդի գիմադրությանը հարված հասցնեն և երկրում իրենց ազդեցությունն ուժեղացնեն: Հատկանշական է, որ պարսկական պետությունը, որ նույն

պես ձգտում էր Հայաստանում իր աղջկությունն ուժեղացնելը՝ պարսկական զորքով Հայաստան ներխուժած Մեհրուժան Արծրունու ձեռքով հավաքեց և այրել տվեց երկրում եղած հունարեն լեզվով գրքերը։

Այսպիսով, ըստ երևութին, քրիստոնեությունն ընդունելոց հետո Հայաստանում դադարում են հայերեն գրել, և հայերենի տառերը գործածությունից դուրս գալով՝ ժամանակի ընթացքում մոռացվում են։

Սակայն, IV դարու վերջին և V դարի սկզբներին հայ ժողովողի և պետության համար ստեղծվեց քաղաքական այնպիսի իրադրություն, որ անհրաժեշտություն գգացվեց վճռական միջոց։ Ներ ձեռք առնել հայերեն գիր ու գրականություն ստեղծելու։

Հայաստանը, որ երկար դարեր հաղթական դիմադրություն էր ցույց տալիս այն ժամանակվա երկու հղորագույն պետությունների՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի հափշտակողական հարձակումներին, IV դարու վերջերին թուլացավ և պետական ամբողջականությունը կորցրեց։

387 թվին Բյուզանդիան և Պարսկաստանը դաշնագրով Հայաստանը բաժանեցին երկու մասի և վերցրին իրենց գերիշխառնության տակ։ Հայաստանի բյուզանդական մասում շուրջային հայ պետականությունը, իսկ պարսկական մասում առժամանակ հայ պետությունը շարունակեց իր գոյությունը պահել կիսանկախ ձևով։ Երկրի ներքին կյանքը որոշ ժամանակ ղեկավարում էին հայ Արշակոնի թագավորները (մինչ 427 թ.):

Պարսիկ բռնակալները Հայաստանի իրենց ենթակա մասում ամեն կերպ աշխատում էին վերացնել քրիստոնեությունը և տարածել զրադաշտականությունն, որպեսզի թուլացնեն հայ ժողովրդի դիմադրությունը և երկիրը վերջնականապես ենթարկեն իրենց։ Ուստի այն ժամանակ հայ ժողովրդի և պետության շահերը պահանջում էին, որ քրիստոնեական կրոնն ավելի տարածեն և արմատավորվի։ Իսկ դրա համար անհրաժեշտ էր, որ կրոնական գրականությունը, ժամասսացությունը և քարոզությունը լիներ հայերեն լեզվով, մինչդեռ ասորերեն էին և ժողովրդական զանգվածները դրանցից ոչինչ չհասկանում (հունարենի գործածությունն արգելված էր պարսկական իշխանությունների կողմէ)։ Փալստոս Բյուզանդ պատմիլու դրում է, «Եթե վարդապետ



Մեսոր Մատոնց

Ները մինչև առավելու նստեին և հորդահոս անձրկի տարափի պես քարոզ խոսեին, ապա բազմաթիվ մարդկանցից — նախարարներից կամ շինական ժողովրդից — չկար և ոչ մեկը, մի բառ, անգամ մի վանկ հասկանար և լսածից ամենաշնչին մի հիշողություն, մի հետք մտքումը պահերաւ:

V դարի՝ սկզբում հայերեն լեզվով գրականություն ստեղծելու գործը համաժողովրդական և պետական գործ էր, դա հայ ժողովրդի՝ իր անկախությունը պահպանելու ձգտման մի ուժեղ արտահայտությունն էր:

Մեսրոպ Մասոսցը եվ եվ իրոք, մեզ հասած պատմական տեսայերեն գրերի գյոււքը ղեկությունները ցուց են տալիս, որ հայ յերեն գրականություն ստեղծելու խնդիրներով նախ և առաջ գրադպել է հայ պետությունը: Հայ հին պատմիչների միաբերան վկայությամբ, երբ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը դիմում են Վուամշապուհ թագավորին հայերեն գիր և գրականություն ունենալու հարցով և ուզում են նրա կարծիքն իմանալ, թագավորը նրանց պատասխանում է, թե ինքն արդեն գիտե, որ Միշագետքում Դանիել անոնով մի ասորի եպիսկոպոսի մոտ հայերեն գրեր կան: Թագավորն անմիջապես, հատուկ հրովարտակով, իր մտերիմ պալատականներից մեկին, Վահրիճ անոնով մի մարդու, ուղարկում է Դանիելի մոտ այդ գրերը բերելու Հետաքրքրականն այն է, որ Վահրիճ անոնով այս պալատականը բուլութին էլ պատահական մի անձնավորություն չի եղել այդ գործի համար: Խորենացին անվանում է նրան պատվավոր մարդ և նույն գործին (այսինքն գրերի ստեղծման) փափագող ու պատմում է հետևյալը. «Վահրիճը Դանիելի մոտ գնալով, նրանից լավ սովորեց և հոնական ձեռքի օրինակով կարգավորեց վաղուց դունված գրերը և վերադառնալով տվեց Մեծն Սահակին և Մեսրոպին: Սոքա սովորելով իրենք, իրենց հետ քանի մի տարի տըղաներ ևս կրթելով, տեղեկացան, իմացան, որ այն տառերը բառական չէին հայկական բառերի հնչունները ճշտությամբ արտահայտելու:

Այսպիսով պարզվում է, որ պետության նախաձեռնությամբ և հանձնարարությամբ աշխարհիկ մարդիկ խոշոր աշխատանքներ կատարել հայերեն լեզվի հնչունները որոշելու և հայկական տառերը գործածելի դարձնելու ուղղությամբ, մինչև որ այդ խըն-

դիրը վերջնականապես կլուծեր Մեսրոպ Մաշտոցը, որի անվան հետ է կապված հայերեն գրերի գյուտը:

Երբ երկու տարրուց հետո պարզվում է, որ Վահրիճի բերած գրերը բավական չեն հայերեն բոլոր հնչուններն արտահայտելու համար, ուկամշապուհ թագավորի սրատագին աղաշանքով, ինչպես գրում է Ղազար Փարպեցին, սկսված աշխատանքները հանձըն է առնում շարունակել Մեսրոպ Մաշտոցը, որին և, քրտնաշան աշխատանքով հետո, հաջողվում է այդ բանը գլուխ բերել:

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 361 թվին Տարոնի Հացեկաց գյուղում: Մանկությունից սովորում է հոնարեն լեզուն և գրականությունը, ապա գալով Այրարատ, ծառայության է մտնում հայ Արշակունի Խոսրով թագավորի արքունիքի դիվանում — քարտուղարի և թարգմանչի պաշտոնով: Այստեղ նա ծանոթանում է աշխարհիկ կարգերին և զինվորական արվեստին: Այսուհետեւ նա տարվում է կրոնական գրքերի ընթերցանությամբ, թողնում է արքունիքը և առհասարակ աշխարհիկ կյանքը, դառնում է կուսակրոն ու նվիրում է իր անձը ճգնակեցության: Այդ տարիներին նրա շուրջ հավաքվում են աշակերտներ, որոնց հետ նա դուրս է գալիս քրիստոնեություն քարողելու Հայաստանի այն գավառներում, ուր շարունակում էին դեռ հեթանոսական աստվածներ պաշտել: Մեսրոպի կենսագիր Կորյունը պատմում է, որ նա իր այդ քարոզչական շրջագայության ժամանակ փորձով տեսնում է, թե որքան դժվար է հոնարեն և ասորերեն կրոնական գրքերի բովանդակությունը լսողներին հասկանալի դարձնել, ուստի հայերեն գրականություն ստեղծելու առաջարկով դիմում է Սահակ Պարթև կաթողիկոսին:

Երբ Վուամշապուհը հանձնարարում է Մեսրոպին Վահրիճի սկսած աշխատանքը շարունակել, ոա, վերցնելով իր աշակերտներին, նորից գնում է Դանիելի մոտ: Վահրիճի բերած տառերից ավելին շտոնելով, ուղևորվում է իր ժամանակի լուսավորության կենտրոն հանդիսացող մի քանի քաղաքներ՝ Եղեսիա, Ամիդ, Սամոսատ, նպատակ ունենալով ծանոթանալու այդ քաղաքներում գտնվող մի քանի հողակավոր լեզվագետների հայացքներին և ուսումնասիրելու գրադարանների հարուստ գրականությունը: Ըստ երկութիւն այդ նա անում էր նաև հայերեն հին ձեռագրեր և գրեր գտնելու հույսով: Երկար հետազոտություններից հետո Մես-

ըոսկը լրացնում է Դանիելի մոտ գտնված հայերեն հին գրերի պակասը և Հռոփանոս անոնով մի հույն նշանավոր գրչագրի հետ ձևավորելով տառերը՝ 405—412 թ. թ. վերադառնում է Հայաստան: Նա բերում է իր հետ նաև «Աստվածաշնչից» թարգմանված մի հատված («Սողոմոնի առակները»): Հայաստան վերադարձած Մեսրոպին մայրաքաղաքամ, Վաղարշապատում փառահեղ ու հանդիսավոր ընդունելություն են ցուց տալիս: Թագավորն ու ժողովորդը նրան դիմավորում են քաղաքից դուրս, իրենց հետ վերցրած վերադառնում են ցնծության աղաղակներով և ամբողջ օրը անց են կացնում տոնական խրախճանքների մեջ:

Հայերեն գրերի գյուտը մեծ վոգերություն է առաջացնում ժողովրդի և մտավորականության մեջ: Սկսվում է մի շունչնված գրական-ստեղծագործական և գրական-թարգմանական եռուղետ: Հայաստանի տարբեր վայրերում բացվում են բազմաթիվ գրոցներ, հավաքվում են բազմաթիվ աշակերտներ նոր գրերի գործածությունը, ինչպես և ուրիշ լեզուներ, սովորեցնելու համար:

Հայերեն լեզվի ուսուցման և հայերեն գրականության ստեղծման ծավալված աշխատանքների մեջ ամենագործունյա դերը Սահակ Պարթևի հետ միասին կատարում է ինքը Մեսրոպ Մաշտոցը. նրա մասին իրավամբ Մովսես Խորենացին ասում է. «Մըտքով՝ ստեղծող, խոսքերով՝ պայծառ, գործերով՝ համբերող, սերով՝ անկեղծ, սովորեցնելու մեջ՝ շնչանձրացող. և որ նրա վարքի մեջ ամբարտավանությունը և մարդահաճությունը երրեք շրկարողացան տեղ գտնել»: Ըստ հայ պատմիչների տված տեղեկությունների, Մաշտոցը կուլտուրական գործունեությունը ծավալում է նաև Հայաստանի սահմաններից դուրս, հարևան բարեկամական երկրներում՝ Վրաստանում և Աղվանից աշխարհում: Նա տեղական գիտնականների հետ միասին մշակում է վրացերեն և աղվաներեն լեզուներին համապատասխան գրեր: Մեսրոպ Մաշտոցը վախճանվել է 440 թվին:

Վ դարի սկզբում հայերեն գրականության առաջացումը հայ ժողովրդի պատմության մեջ հանդիսացավ աննախընթաց, ամենախոշոր կուլտուրական երևույթ, որ ուներ նաև շափաղանց մեծ քաղաքական նշանակություն: Հայ գրականությունն ինչպես այն ժամանակ, այնպես էլ հետադարձում, խոշոր չափով նպաստեց

Հայ ժողովրդի՝ իր անկախության և աղատության համար մղած հերոսական պայքարին: Մյուս կողմից Վ և հետագա գարերում ստեղծված գրական կուլտուրան այնքան բարձր է իր արժեքով, որ դուրս գալով ազգային սահմաններից, ունեցավ միջազգային, համամարդկային նշանակություն: Այս բանը շատ անդամ նշել է Մայն իր աշխատություններում:

Հայ գրականության կատարվող կարգմանություններին զուգակիցնավորումը Վ դարում հայ ինքնուրույն գրականությունը:

Վ գարում համարեն և ասորերեն գրերից Հայ գրականություններին զուգական կատարվող կարգմանություններին զուգական կատարվող կարգմանություններին էին հայ ինքնուրույն գրականությունը: Հայ գրականություններից հարցում կատարացու «Ճառերը», Հովհաննես Ասորու «Ճառերը», Եվոկիս Կեսարացու «Քրոնիկոնը» և այլն: Թարգմանվեցին նաև բազմաթիվ կրոնական վարքագրություններ: Հայ առաջին թարգմանիչներից ամենանշանավորներն էին Եզիկի Կողբացին, Կորյուն Միանիչներից ամենանշանավորներն էին Եզիկի Կողբացին, Կորյուն Միանիչներին, Հովհեփ Պաղնացին, Հովհիան Եկեղյացին և հայ գրականության ստեղծման գործի նշանավոր կազմակերպուներից Մեկը՝ Սահմակ Պարքեր, որի մասին Ղազար Փարպեցին գրել է. այլը կատարյալ գիտությամբ հունաց շատ գիտնականներից թարձր էր. նա կատարելապես հմուտ էր ձայնավոր տառերին և Յոհանոս Պատմությունը. մանավանդ տեղյակ էր և իիլիսոփայական արվեստին»:

Թարգմանական հայ գրականությունը անընդհատ շարունակվեց և Վ դարից հետո: Այդ գրականությունը միջազգային կուլտուրայի համար այն նշանակությունն ունի, որ հունացին միշտ արժեք ունեցող գործերի բնագրերը կորել են, և դրանց մասին գիտնականները կարող են գաղափար կազմել միայն շնորհիվ հայերեն թարգմանությունների:

Վ դարում, հայ ինքնուրույն գրականության սկզբնավորումից հետո մինչև Տ դարը, մինչև հայ գեղարվեստական գրականության վերածնության վաղ շրջանը, առանձնապես զարգացան տարածմագրությունը, կրոնա-հոնետորական և վարքագրական գրականությունը, եկեղեցական գրականությունը, փիլիսոփայությունը, բնական գիտությունները՝ աշխարհագրություն, տիեզերագիտություն և այլն: Այդ դարերում հայ հոետորներից փիլիսոփանեցին:

րից, բնագետներից նշանալոր են նզենիկ Կողբացին, իր ռելծ ա-
ղանդոց» գրով, Կորյուն Մբանչելին իր Մեսրոպի վարքի պատ-
մությունով, «Կավիր Անհաղթը իր «Գիրք սահմանաց», «ՄԵՒԾՈ-
ՐԻՆ ՍՊՈՐԳՈՒԹԵԱՆԵ ԱՐԴԱՍՈՒԵԼԻ» և այլ աշխատույթուններով,
Հովհան Մանդակունին իր փայլուն «ՃԱՊԵՐՈՎ», Հովհան Մայրա-
գոմեցին իր «ԹՊԵՐԵՐՈՎ», Անանիա Շիրակացին իր աստղաբաշ-
խորյան, տոմարագիտուրյան, մաքեմատիկայի վերաբերյալ աշ-
խատուրյուններով:

Այդ գիտնականներն իրենց ժամանակի ամենակրթված, հու-
նական անտիկ կովառային շատ լավ տեղյակ մարդկանցից
են: Մըրանցից հատկապես եզնիկ Կողբացին, Կորյունը և Հովհան
Մանդակունին աշքի են բնկնում իրենց գրելու հատուկ ձևով և
պատկերավորությամբ: Մակայն իրենց գրվածքների գեղարվես-
տական արժանիքներով ավելի նշանավոր են հայ պատմիշ-գրող-
ները, որոնք մեծ պատմագիրներ լինելով հանդերձ, միաժամա-
նակ և հայ գեղարվեստական գրականության ամենախոշոր ներ-
կայացուցիչներն են մինչև Գրիգոր Նարեկացին:

Բանն այն է, որ գրականության ծավալուն զարգացումից հե-
տո էլ, ֆեոդալականության շահերն արտահայտող քրիստոնյա
հոգևորականությունը հալածում էր աշխարհիկ արվեստները և
իսկստ ժխտական վերաբերմունք ուներ դեպի ժողովրդական բա-
նահանությունը: Գեղարվեստական գրական ժանրերից գրավոր
ձևով պահպանում էին միայն եկեղեցական արարողությունների
հետ կապված կրոնական բանաստեղծությունները, որոնք իրենց
բովանդակությամբ կտրված լինելով իրական կյանքից, չէին կա-
րող արվեստի բարձրարժեք գործեր լինել: Պատմիչներն են միայն
նկարագրում կյանքը, հասարակական հարաբերությունները և
լայն շահերով օգտագործում ժողովրդական բանահանությունը:
Նրանց գրած պատմությունները գրական մի շարք առանձնա-
հատկությունների շնորհիվ հնում փոխարինում էին վիպասանա-
կան ժանրի ստեղծագործություններին: Այնուհետև հայ հին գր-
բողների մեջ պատմիչները նշանավոր են իրենց գրվածքների ի-
դիքական բովանդակության տեսակետից: Սովորաբար որևէ գեղ-
արվական տոհմի իշխանի հանձնարարությամբ պատմություն
գրելով, պրաხս խոշոր մտածողներ, տաղանդավոր և հանձարեղ
մարդիկ, նրանք բարձրացել են առանձին գեղարվական տոհմերի

շահերն արտահայտելու տեսակետից և կանգնել են ամբողջ Շիռ-
դովլողի, ամբողջ երկրի և պետության շահերի արտահայտու-
թյան տեսակետի վրա: Հայ պատմիչները ժողովրդասիրության,
Հայրենականական արարության, երկրի ազատության բարձր
կղեաների ամենացայտում արտահայտիչներն են եղել:

V—IX դարերի հայ պատմիչ-գրողներից նշանավորներն են՝
Ագարանգեղոս, Փավստոս Բյուզանդի, Մովսես Խորենացի, Եղիշե,
Դազար Փարպեցի, Սեբեոս, Հովհան Մամիկոնյան, Մովսես Կա-
ղանկատվացի, Ղևոնդ, Հովհաննես Դրասխանակերտցի, Թովմա
Արծրունի և ուրիշներ:

Պատմիչ գրողների ստեղծագործության մասին խոսելուց առ
հաջ անհրաժեշտ է կանգ առնել հայ հին ժողովրդական բանա-
հանության վրա:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ.
ԱՌԱՄՊԵԼ ԵՎ ԷՊՈՍ

Հայ ժողովուրդն իր կյանքի հնագույն շրջաններից սկսած ստեղծագործել է բանավոր արվեստի բազմաթիվ ժամրերով: Բոլոր նշաններից ե մեզ հասած փառերից երևում է, որ այդ ըստեղծագործությունը եղել է բազմազան, բովանդակությամբ ճոխ, հարուստ և մշակութով բարձր:

Հայ ժողովրդական հին բանահյուսության գոհարներից, գեղարվեստական հոյակապ ստեղծագործություններից մեզ միայն փշրանքներ են հասել: Շնորհիվ մեր պատմիչների գրմածքների մեջ պահպանված փառերի, կարելի է ընդհանուր գաղափար կազմել հայ ժողովրդական հին բանահյուսության բնույթի և բովանդակության մասին: Պատմիշ-զրողները, հայ ժողովրդի պատմության հին շրջանի մասին գրելիս, շատ դեպքով ուրիշ աղբյուր չունենալով՝ օգտվել են բանավոր գրականությունից, երբեմն վերամշակելով, առանց այդ մասին հիշատակություն անելու (Ագաթանգեղոսը և Փալստոս Բյուզանդը), երբեմն էլ հիշատակություններ անելով ու բառացի մեջբերումներ կատարելով (Մովսես Խորենացի): Այսպիսով, բնականաբար, հայ ժողովրդական հին բանահյուսության նմուշների բուն էության մասին կարելի է ճիշտ գաղափար կազմել առավելապես Խորենացու «Հայոց պատմություն»-ից: Ինքը Մովսես Խորենացին շատ տեղ ակնարկում է, որ իրոք, իր պատմության համար աղբյուր է եղել ժողովրդական հին բանահյուսությունը:

Այսպես օրինակ, երբ նա պատմում է Հայկի Հայաստան գալու մասին, ավելացնում է. «Սա արդարացնում է անդիր հին զրուցը»: Երբ նա խոսում է ասորական թագուհի Շամիրամի

Հայաստանում սպանվելու մասին, զրում է. «Մեր աշխարհի առ ոսպելները ևս արգարացնում են բազմահմուտ ասորում, որոնք ցույց են տալիս Շամիրամի Հայաստանի մեջ մեռնելը...»: Երբ պատմում է Տիգրանի և Աժդահակի կոմի մասին, ավելացնում է. «Այս հայտնում են ճշտապես և թվելաց երգերը, որոնք ախորժելով պահպանին, ինչպես լուսմ եմ, զինեվիտ Գողթն գավառի մարդիկը...»: Երբ նա իր պատմության մեջ բառացի մեջ է բերում «զրուցազն Վահագնի մասին եղած հաշակավոր երգը, անմիշապես հայտնում է. «Մենք մեր ականջով լսեցինք, ինչպես մի քանիսներն այս երգում են բամբիուլաւ: Խոսելով Արտաշես թագավորի կյանքի և գործերի մասին և զիմելով Սահակ Բագրատունուն, Խորենացին հետեւալն է ասում. «Եկեղին Արտաշեսի գործերը մեծ մասամբ հայտնի են քեզ այն վիպասանություններից, որոնք պատմվում են Գողթնում...»:

1195-98

Խորենացու «Հայոց պատմությունից» կատարած այս մեջբերումները արժեքավոր են նաև այն բանով, որ դրանց մեջ հիշատակվում են ժողովրդական բանահյուսության տարբեր տեսակներ ցույց տվող անուններ, օրինակ՝ «զրուց», «առասպել», «թվելաց երգ», «վիպասաններ», «վիպասանների երգեր» և այլն: Այս անունները վերաբերում են էպիկական ժանրի զանազան տեսակներին: Այդ տեսակները, որոնց բովանդակությունը պատմում է Խորենացին, ուրիշ բան չեն եղել, եթե ոչ ժողովրդական դիցարանական առասպեկներ և զյուցազներգություններ-էպուններ:

Անշուշտ հայ ժողովրդական հին բանահյուսությունը նույնքան հարուստ է եղել և լիրիկական ու դրամատիկական ժանրի բազմազան ստեղծագործություններով (Հարսանեկան երգեր, պարի երգեր, թաղման երգեր, գուտանական թատերական ներկայացումներ և այլն, որոնց գոյության մասին մեր հին գրողները արել են բազմաթիվ հիշատակություններ), բայց դժբախտաբար դրանցից բառացի ոչ մի նմուշ մեզ չի հասել:

Հայ ժողովուրդը իր հանճարեղ ստեղծագործությունների մեջ պատկերել է ու երգել իր պայքարը բնության տարերքի դեմ, և այն հերոսական կորիները, որ նա մղել է բռնակալական պետությունների գեմ երկար դարերի ընթացքում իր ազատությունը և անկախությունը պահպանուելու համար: Հայ ժողո-



Վերդական ստեղծագործությունները հադեցված են Հայրենական բական բարձր իդեաներով և բուռն զգացմունքներով: Այնուհետև ժողովրդի ստեղծագործության մեջ ուժեղ արտահայտություն են դուել կենցաղը և աշխարհի ու կյանքի մասին ունեցած պատկերացումները: Այս բոլորն էլ հենց նախ և առաջ պայմանավորում են Հայ ժողովրդի հին բանահյուսության գեղարվեստական մեծ արժեքը:

«Հայկ Բել» Հայկի և Բելի կովի մասին եղած առասպեկտ ստեղծվել է հնագույն ժամանակներում և երկար դարեր ապրել է ժողովրդի մեջ: Այդ առասպեկտի պատմական էությունն անշուշտ կազմում է Հայաստանի հին բնակիչների՝ Հայերի նախնիներ խալդերի մղած կոփները հին աշխարհի ամենահզոր պետություններից մեկի, Ասորեստանի դեմ՝ իրենց Հայրենիքը պաշտպանելու նպատակով: Առասպեկտի բովանդակությունը հետեւվլան է:

Առաջին աստվածները զարհուրելի և երևելի էին: Նրանցից ծագեց Հաստամարմին Հսկաների ցեղը: Այդ Հսկաներից մեկն էր Հաբեթյան Հայկը, որը քաջ նետաձիգ էր և հաստ աղեղ բռնող: Սա երևելի և քաջ լինելով ընդդիմանում է նրանց, որոնք ձգտում էին Հսկաների վրա իշխանություն ձեռք բերել: Բարելու նում, Հսկաների աշտարակաշինության փորձի անհաջողությունից հետո, Հսկաներից մեկին՝ Բելին Հաջողվում է տիրապետող դառնալ: Հայկը չի կամենում ենթարկվել Բելին, ուստի իր ընտանիքով գալիս բնակվում է Արարատյան երկիրը:

Հսկա Բելը, որը միայն երեկոներն ընթրելիս քառասում ոշխար էր ուտում, իր որդուն հավատարիմ մարդկանց հետ ուշադրում է Հայկի մոտ և հպատակություն պահանջում: Հայկը խստությամբ մերժում է: Այն ժամանակ կատաղած Բելը համար քում է մի հսկա բանակ և գալիս է Հայկի երկիրը նվաճելուն և նա իր հանդուզն և անձոռնի զորքով, զառիվայր հոսող ջրի նըռաման, շտապում է հասնել Հայկի բնակության սահմանները, մեծ հույս ունենալով իր մարդկանց սրտի և մարմնի ուժի վրա:

Գանդուր մազերով, զվարթ աշքերով, ուշիմ և խոհեմ հըսական՝ Հայկը՝ Բելի հարձակման լուրն առնելով, իսկույն համար քում է իր որդիներին, թոռներին և իր մոտ եղած ուրիշ մարդ-

կանց, որոնք բոլորը շատ փոքր թիվ էին կազմում, և դուրս է գալիս Բելի դեմ: Երբ Հայկը հասնում է մի ծովակի ափ, որի ջուրը աղի է, խրախուս է կարդում իր զորքին ասելով. «Երբ մենք դուրս կանք Բելի զորքի դեմ, աշխատենք հասնել այն տեղին, ուր կանգնած է Բելը քաջերի բազմության մեջ, որ կամ մեռնենք և մեր բոլոր գերդաստանը Բելի ծառայության տակ մտնի, կամ ցույց տալով մեր մատների հաջողությունը նրա վրա, ցընք նրա զորքը և հաղթություն ստանանք»:

Երբ երկու բանակները իրար են հասնում, ընդհարումից ահագին գլուզուն է բարձրանում երկրի վրա, ընկնում են բազական թվով հսկա մարդիկ երկու կողմից էլ: Կովի ժամանակ Հայկը ճանաշում է Բելին, որը թիկնապահների ուժեղ գնդով շրջապատված զրահավորված կանգնած էր մի բլրի վրա: Կոհվը հետզետե խստանում է, և ելքը մնում է անորոշ: Այս տեսնելով, Բելը զարհուրված է և կասկածելով կովի հաջող վախճանի մասին, որոշում է ետ քաշվել՝ մինչև օգնական զորքերը հասնեն: Սղեղնավոր Հայկը այս բանում իր աշխանական իմաստությունը է յուրաքանչյուրն իր աշքը տեսած կողմը:

Հայկը տեղի ունեցած պատերազմի վայրը կոչում է Հայոց Ճոր, իսկ այն բլրուր, որի վրա սպանվում է Բելը՝ Գերեզմանք: Բելի դիակը զմուսել տալով, Հայկը հրամայում է տանել Հարք և թղթել բարձր վայրում, որ սպանված թշնամու կանաչք ու որդիները տեսնեն և դաս առնեն: Ըստ այս առասպեկտի՝ Հայկի անունով էլ մեր երկիրը կոչվում է Հայաստան:

«Հայկ և Բել» առասպեկտ տարբեր վարիանտներով պահպանվել է ժողովրդի մեջ մինչև նոր ժամանակները: Այսպես, օրինակ, նշանավոր բանասեր Գարեգին Սրվանձտյանը իր «Պըց-Տըրոց» գրքում, Նեմրութ սարի շուրջը բնակվող գյուղացիներից լսելով, պատմում է Հետևյալը: Դատվան գյուղից դեպի Նեմրութ երևում է ցցված քարաժայուերի մի շարան, որ մութ ժամանակ և Տեղովից ուղարկերի քարավանի են նմանում: Տեղացիք զրանք Բելի պատեր, և ուղարականներ են համարում, որոնք քարացել են ա-

Հից, երբ Բելը սպանվել է: Բելը կուապաշտ թագավոր է եղել, որը մեծ զորքով եկել է Հայոց թագավորի ու Երկրի վրա կոփի: Հայոց թագավորը նրան սպանել է և տարել Նեմրութ (որը հը-ռաբխային բարձր լեռ է), սարի վլուսը մեծ թռնիր փորել ու մեջն ալրել: Հետո կրակը զուր է դարձել և Բելի փոշին դեմքը եղցրել, որ Անի թե քամին տանի, և այդ զուրն է, որ սարի տակ իշնելով բղխում ե մի ակից, սկիզբ տալով Մեղրագետին:

«Հայկ և Բել» առասպելը էպիկական մի շարք գծերով մուտենում է ժողովրդական հերոսական էպոսին: Նրա մեջ մեծ շընչով գծված են գլխավոր հերոսների բնալորությունները. ինչպէս Հայկը, այնպէս էլ Բելը գեղարվեստական խորն ընդհանրացումներ են: Հայկը գեղեցիկ արտաքինով հսկա է, մի մեծ ընտանիքի նահապետ: Առասպելի մեջ նա կոչվում է գեղեցիկ, վայելչակազմ, խիստ գանգուր մազերով, զվարթ աշքերով (խայտակն), և այլ նման էպիտետներով: Նրա էության հիմնական գիծը ազատասիրությունն է. նա չի հանդուրժում հսկաների իր վրա գործադրած բռնությանը: Այսպիսով Հայկը հանդիսանում է հետագայում ըստեղծված հայ ժողովրդական էպոսների հերոսներից շատերի նախատիպարը: Նա հերոսաբար պաշտպանում է իր հայրենիքը և ժողովուրդը բռնակալների լծից:

Բելը Հայկի հակապատկերն է. հանդուզն, անբարտավան և փառասեր. իբրև բռնակալի իսկական մարմնացում, շատ բնորոշ է, երբ Հայկի հետ ունեցած կովի միջոցին, վտանգի առաջ հանդիս է բերում ողորմելի վախիություն: Նա միշտ շրջապատված է թիկնապահներով և խուսափում է ճակատ առ ճակատ կովի դուրս գալուց:

«Յար գեղեցիկ Փատմական նույն հանգամանքներում, առ եվ Շամիրամ» վելի քան երկու հազար հինգ հարյուր տառ ի առաջ, ստեղծվել է նաև մի գեղեցիկ առասպել, որի գլխավոր հերոսներն են Հայկի սերնդից՝ Հայաստանի թագավոր Սրա գեղեցիկը և Ասորեստանի թագուհի Շամիրամը:

Ասորեստանի թագուհի Շամիրամը, լսած լինելով Սրայի դեղեցկության մասին, խիստ ցանկանում է տեսնել նրան: Մասնա վանդ յուր ամուսնու՝ Նինոսի մահից հետո իր կիրքը պաշտելով՝ Սրայի մոտ է ուղարկում պատգամավորներ մեծ ընծաներով և պարգմերով ու աղաջում գալ Ասորեստան, իր հետ ամուսնանալ:

Թագավորել, կամ իր ցանկությունը կատարելով՝ վերադառնալը Պատգամավորները մի քանի անգամ գալիս գնում են, բայց Սրան միշտ էլ վճռաբար մերժում է Շամիրամի կամքը կատարել: Բայց որովհետև Շամիրամը ցանկասեր մալեպնության մեջ էր, ահապին զորք վերցնելով գալիս է Հայաստան Սրայի վրա, ոչ նրան սպանելու, այլ նվաճելու կամ ձեռք բերելու նպատակով: Նա շտապով հասնում է Սրարատչան դաշտը, որտեղ նրա գեմ գուրս է գալիս Սրան և տեղի է սանենում կոփի: Չնայած Շամիրամը հրամայել էր իր զորագետներին Սրային կենդանի թողնել, սակայն կովում Սրան սպանվում է: Հետո նրան գտնում են քաջ զինվորների դիմակների մեջ:

Շամիրամը հրամայում է Սրայի դիմակը դնել իր ապարանքի վերնատառնը, որպեսզի արակեղները կենդանացնեն: Իր տոփական ցանկությունից ցնորված լինելով, նա հույս ուներ, որ Սրան կը կենդանանա: Բայց երբ դիմակը նեխսվում է, թաղել է տալիս, իսկ իր սիրեկաններից մեկին հազցնում է Սրայի շորերը և հայտնում է ամենքին, թե իր աստվածները կենդանացրել են նրան: Այս բանը նա անում է հայ զորքի զայրուցիքը մեղմելու նպատակով, որը վրեժ լուծելու համար պատրաստվում էր դուրս գալ նրա դեմ պատերազմի: Հետո Շամիրամը, հավանելով օդի և տեղի գեղեցկությունը, Հայաստանի մի քանի վայրերում շինում է առ պարանք-ամառանոցներ: Իր երկիրը վերադառնալուց հետո, Շամիրամի դեմ ապատամբություն է բռնկվում, նա հետիւն փախչում է Հայաստան: Հասնելով Վանա ծովի ափը, ծարավում է և երբ ցանկանում է աղբյուրից ջուր խմել, վրա են հասնում նրան հալածող սուսերավորները, խլում և ծովն են ցցում նրա հուռութները— կախարդական հատկություն ունեցող ուլունքները: Այս բանի հետևանքով Շամիրամը քար է դառնում:

Այս բոլորը Խորենացին պատմելով ըստ մեր աշխարհի առ սասպելների՝ վերջին դեպքի կապակցությամբ բառացի ըերում է ծողովրդական մի արտահայտություն.

«Ուզնք Շամիրամա ի ծովը»

Հետաքրքրական է, որ հազարավոր տարիներ մեղանից առաջ ստեղծված այս էպիկական գրուցիք մի վարիանտը բանասերները ծողովրդից լսել և գրի են առել ՀԻ դարու վերջերին: Այս ևս մի

ցայտուն ապացուց է այն բանի, որ Խորենացին հարազատորեն է պատմել ժողովրդից լսածները:

Հնագույն ժամանակների ժողովրդական այս ստեղծագործության մեջ սփանչելի նրբությամբ ու խորությամբ գծված են գլխավոր հերոսների՝ Արայի և Շամիրամի կերպարները։ Արան մարմարվուած է ժողովրդի ողջախոհությունը և ազնվությունը։ Նա անկաշառ է։ Շամիրամի ոչ մի խոստում չի գայթակղեցնում նըրան՝ դավաճանելու իր սիրած կնոջը և նա զենքը ձեռքին դուրս է գալիս ընտանիքի պատիվը պաշտպանելու։ Այս դեպքը, միաժամանակ, այլաբանորեն պարունակում է ուրիշ իմաստ. դա հայրենիքի ու ժողովրդի պատվի ու ինքնուրուցնության պաշտպանության իդեան է։ Շամիրամն իր մեջ մարմնացնում է բռնակալներին հատուկ անբարոյականությունը, վավաշոտությունը։ Նա վարում է ցոփ ու շվայտ կյանք, տանջում ու կեղեքում է իր հապատակներին, որի համար էլ նրա դեմ ծագում է ապստամբություն։

«Տիգրան Եվ Աժդակ» Մեր թվականությունից առաջ VII դարի հակը վերջում կործանվում է Ասորեստանի պետությունը, որ շարունակ ձգտում էր ընկճել Ճայաստանը և Ենթարկել իրեն։ Պատմական ասպարեզ է գալիս մի ուրիշ հզոր պետություն— Մարաստանը, որի կյանքը սակայն երկար չի տևում։ Շատ շանցած՝ այդ պետության դեմ հայերի դաշնակցությամբ ապստամբում են պարսիկները. մարերի թագավոր Աժդակն սպանվում է և նրա բռնապետությունը ոչնչացվում։ Ահա ին ժամանակների պատմական այս անցուդարձի շրջանում է ստեղծվել «Տիգրան և Աժդահակ» էպոսը, որը, ի հարկե, իր մեջ ընդհանրացրել է և հետագա դարերի մի շարք պատմական անցքեր, որոնք կենսական նշանակություն են ունեցել մեր ժողովրդի համար։ «Տիգրան և Աժդահակ» էպոսի մեջ նույնիսկ հիշատակություններ կան այնպիսի դեպքերի մասին, որոնք կատարվել են և դարում՝ մեր թվականությունից առաջ, Տիգրան մեծի էպոսացնում, երբ հին Հայաստանը հասավ իր հզորության գագաթնակետին։ Էպոսի բովանդակությունը հետևյալն է։

Մարաստանի Վիշապ-թագավոր Աժդահակը խիստ երկյուղ է կրում Հայաստանի թագավոր Տիգրանից, մանավանդ, երբ իմաստ է, թե իր հակառակորդ պարսիկ Կյուրոս իշխանը դաշնակցել

է նրա հետ։ Այս երկյուղից շփոթված՝ Աժդահակը մի գիշեր վատ երազ է տեսնում և սարսափահար քնից վեր թռչելով, իսկուն կանչով է իր բոլոր խորհրդատումներին, որպես ահսած երազը նեկանաբանեն։ Տիգրան և ընկճված նա երազը պատմում է խորհրդատումներին։ «Մի անձանոթերկում,—ասում է նա,—բարձրանում էր մի մեծ լեռ, որի գագաթը կարծես սառնամանիքով էր պատաժ։ Երբ նայում էի սարին, ինձ երևաց նրա գագաթին նըստած մի կին, որը երկոնքից ցավով էր բռնված։ Այդ կինը ծնեց երեք գյուղագուներ, որոնցից մեկը մի ահագին վիշապ սանձած՝ հարձակվեց իմ տերության վրա»։ Այնուհետև, շարունակելով պատմել իր երազը, Աժդահակը նկարագրում է, թե ինչպես ինքը մենամարտի է բռնվում այդ դյուցազնի հետ և նրա ձեռքով ըստ պանվում։

Մեկնելով երազը, խորհրդատումները թագավորին ասում են, թե քեզ վտանգ է սպառնում Տիգրանի կողմից, որից պետք է զգուշանաւ։ Վտանգի դեմ առնելու համար նրանք խորհրդուի են տալիս ամուսնանալ Տիգրանի քրոջ՝ Տիգրանուհու հետ, և այդ կեղծ բարեկամության ու երթևեկության հնար ստեղծելու նպատակով, որպեսզի կարողանան Տիգրանին դավադրաբար բռնել։ Աժդահակն այդպես էլ վարվում է։ Շատ խնդրելով՝ նա ամուսնում է Տիգրանուհու հետ, որին մեծ պատիվների է արժանացնում, բայց թագուն շարության վզստայններ է գործում։

Մի անգամ Աժդահակը դիմում է Տիգրանուհուն և ասում. «Իմացիր, որ Տիգրանն իր կնոջ՝ Զարուհու նախանձից գրգռվելով՝ ձգտում է ինձ սպանել, որպեսզի իր կինը քո փոխարեն մարերի վրա թագուհի դառնա և աստվածների շարքն անցնի։ Այժմ մնում է, որ դու կամ մնաս եղբայրասեր և հանձն առնես խայտառակ կործանում, կամ քո անձի օգուտը հանաշելով՝ օգնես ինձ եղբորդ կողմից սպառնացող վտանգը վերացնելու համար»։ Աժդահակը մտքում դրել էր Տիգրանուհուն սպանել, եթե նա իր հետ շամաձայնվեր։ Բայց խորագետ գեղեցկուհին հասկանալով նյութված դավաճանությունը, Աժդահակին սիրալիր խոսքերով է պատասխանում, իսկ հավատարիմ մարդկանց միջոցով Տիգրանին լուր է ուղարկում ամուսնու շար խորհրդի մասին։

Ծուտով Աժդահակը նամակով Տիգրանին հրավիրում է սահմանագլուխ ինչ-որ կարևոր գործի մասին խորհրդակցելու։ Տիգ-

րանը, որ արդեն իմացել էր բանի էռվյումը, մերժում է Աժդահակի հրավերը և պատրաստվում է կովի; Կովի մեջ նրանք հանդիպում են իրար; Տիգրանը զրի պես ճեղքելով Աժդահակի զրահը, շամփրում է նրան իր նիզակի ծայրին և ձեռքը ետ քաշելիս՝ նրա թոքերի կես մասը դուրս է բերում նիզակի հետ; Աժդահակը մեռնում է և կոփկը վերջանում:

Տիգրանն իր քրոջն ուղարկում է Տիգրանակերտում բնակվելու, իսկ Աժդահակի առաջին կնոջը՝ Անուշին իր որդիների հետ բնակեցնում է Մասիսի ստորոտում; Վիշապ-Աժդահակի սերնդին պատկանողները էպոսում կոչվում են վիշապազուններ, որոնք հետո իրեկ գործող անձինք հանդես են գալիս «Սրտաշես և Սրտավաղդ» էպոսի մեջ:

«Տիգրան և Աժդահակ» հին էպիկական ժողովրդական ստեղծածագործության մեջ էլ, ինչպես «Հայկի և Բելի» մեջ էր, հակառակոված են երկու տարբեր կերպարներ, որոնք պատմական ուսալընդհանրացումներ են: Տիգրանը ժողովրդի սիրելի հերոսն է, օժտված արտաքին ու ներքին գեղեցիկ հատկություններով, որոնց մասին Խորենացին ժողովրդական բանահյուսության խոսքերով գրում է. «Երեսը գունավոր էր, աշքերը անուշ, թիկունքը հաստ, ազդրերը լիք, ոտները գեղեցիկ, ինքն էլ գեղեցիկ, կերակուրների, և ըմպելիքի մեջ պարկեցա, խնջույքների մեջ շափավոր: Սրա մասին մեր հները, որոնք բամբիսի վրա երգում էին, ասում էին, թե սա մարմնի ցանկությունների մեջ ևս շափավոր էր, և մեծիմաստ ու ճարտարախոս և մարդկության վերաբերյալ ամենայն գործի մեջ պիտանի»:

Ժողովուրդն իր ազատության վրա բռնանալ ցանկացողների նկատմամբ խորին ատելություն տածելով, ստեղծագործության մեջ զրանց պատկերացնում է բացասական գծերով: Աժդահակը մի հրեշտավոր անձնավորություն է, նրան սպասավորում են դեմքը: Զար ոգին համբուրել է նրա ուսերը և նրանց վրա առաջացել են վիշապ-օձեր: Զնայած իր դիվականության, սա էլ Բելի նման, վտանգի դեպքում վախկոտ է, հերոսականություն չունի և իր հակառակորդին աշխատում է ոչնչացնել նենդամտորեն, խարեբայական միջոցներով:

«Տիգրան և Աժդահակ» էպոսը բովանդակության որոշ գծերով էապված է իրանական ժողովրդական էպիկական զրուցների հետ

Առհասարակ հարևան ժողովությունների բանահյուսությունների մեջ հաճախ են պատահում վոխազգեցության փաստեր: Խորենացին պատմում է Քյուրասպ Աժդահակի վերաբերյալ պարսկական մի պատմություն է Մասիսի վերաբերյալ պարսկական մի պատմություն է Անդրանիկի մասին, որոնք ծանոթ են եղել Հայաստանում: Խորենացուց հինգ հարյուր տարի հետո դրանք լսել ու կեղարվեստական մշակման է ենթարկել Իրանի հանճարեղ բանաստեղծ Ֆիրդուսին:

«Վահագն» ժողովրդական ստեղծագործության մեջ Վահագնը, որ հեթանոսության շրջանում պաշտվել է իրեւ աստված, Տիգրանի որդիներից մեկն է: Խորենացին Վահագնի մասին եղած ժողովրդական երգերից բերում է բառացի մի հատված, որը պատկերում է նրա ծնունդը.

Երկնէր երկին,
Երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր
Եւ զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վագեր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուա,
Եւ աշկուքն էին արեդակունք:

Այնուհետև Խորենացին հիշատակում է, որ գուսանները երաժում էին նույն ձևով Վահագնի մասին, թե ինչպես նա կովել է վիշապների հետ և հաղթել է, որ այդ երգի մեջ նկարագրած Վահագնի ֆաշագործությունները շատ նման էին Հերակլի գործած հակառակություններին: Եվ իսկապես, հնում հունաբենից կատարած գայերեն թարգմանությունների մեջ Հերակլ (Հերկուս) անունը թարգմանել են Վահագն: Կատ պատմիշ Ավաթանգեղոսի՝ Վահագնը Հայաստանում պաշտվել է որպես քաջության աստված: Վահագնը Հայաստանում պարսկական համարում են կամ Արեգակի Բանասերներից ոմանք Վահագնին համարում են կամ Արեգակի Կամ ամպրոպի—Կայծակի աստված և ըստ այնմ էլ կարծում էին, որ Վահագնի ծննդյան նկարագիրը արկի ծագման կամ կայծակի առաջացման բանաստեղծական պատկերացումն է:

VII դարի հայ նշանավոր դիտնական Անանիա Շիրակացին իր գործերում Վահագնի արարքների մասին պատմում է հնուց մնացած մի զրուց. «Հին հայերից ոմանք ասել են, թե Վահագնը, հայերի նախնին, խիստ ձմռան հարդ է գողանում ասորաց նախնուց՝ Բարշամից. այդ մենք բնագիտության (տիեզերագրության) մեջ սովորաբար անվանում ենք հարդագողի հետք»: Շիրակացու այս դեպքի հիշատակությունից երևում է, որ Վահագնի մասին դիցաբանական-էպիկական երգեր ու պատմություններ ստեղծվել են վաղ անցյալում և ժողովրդի մեջ պահպանվելով, հետո միացել են «Տիգրան և Ամդահակ» էպոսին — Վահագնը գարձել է Տիգրանի որդին և շարունակել է հոր սկսած պայքարը վիշապների դեմ, որի համար կոչվել է «Վիշապաքաղ»:

«Արտաշես Եպ
Արտավագգ» ձԱրտաշես և Արտավագդ» էպոսը ծագել է
մեր թիւկանությունից առաջ առաջին դարում, ապա ուժեղ շափով
հարստացել Տրդատ Ա.-ի թագավորության շրջանի անցքերով։ Այս
էպոսը, մի ուրուզն ամբողջություն լինելով հանդերձ, ըստ երևուց-
թին եղել է «Տիկրան և Աժդահակի» շարունակությունը։

«Արտաշես և Արտավազդ» էպոսի բովանդակության մասին Մովսես Խորենացին համեմատաքար ավելի ընդարձակ տեղեկություններ է տալիս և ավելի շատ բառացի մեջբերումներ է անում։ Այս էպոսը ստեղծվել է այն էպոսայում, երբ հայ ժողովուրդը հերոսական պայքարը եր մղում Հռոմի բռնապետության դեմ։ Այդ պայքարը իրոք պատկերացվել է «Արտաշես և Արտավազդ» ժողովուրդական ստեղծագործության մեջ, այդ մասին Խորենացին տվել է երկու մեծարժեք վկայություն։ Երբ նա պատմում է, թե ինչպես Սմբատի Հայաստանից բացակայելու ժամանակ Հռոմի կայսրի հարկահանները մեծ զորքով գալիս են Հայաստան, և թագավոր Արտաշեսը ստիպված է լինում հարկատու դառնալ, — ասում է. «Այդ մասին վկայում են պարսկական մատյանները և հայոց վիպասանների երգը»։ Հետո, երբ պատմում է այն դեպքը, թե ինչպես Արտաշեսին, որը հրաժարվել էր Հռոմին հարկ տալուց, պատժելու համար Դոմետիանոս կայսրի ուղարկած հռոմեական լեգենը շարդում են հայերը, — ավելացնում է «Այս դեպքը կամենալով երգել, առասպելեների մեջ ասում են, թե եկել է մի ոմն Դոմետ, որը ինքը Դոմետիանոս կայսրն է, և նա չի եկել այս»

առեղ, բայց Արա Հրամանը և դուքս այլաբանորեն նրա անունով են կոչվում»:

«Արտաշես և Արտավազդ» էպոսում խոր կերպով արտացոլ-
վել է ոչ միայն հայ ժողովրդի արտաքին թշնամի ուժերի դեմ
մղած պայքարը, այլև լայն կերպով պատկերացվել է Հայաստանի
ներքին քաղաքական կյանքը, բնակչության կենցաղը, սովորու-
թյուններն ու հավատալիքները։ Սյս բոլորը պարզ երևում է էպո-
սի բովանդակությունից։

Որսի ժամանակ պատահաբար սպասվող է թագավոր՝
նատրուկը։ Հռոմայեցիների օժանդակությամբ թագավոր է դառնում
Երվանդը։ Կասկածելով Սանատրուկի որդիների վրա, նա կոտո-
րում է բոլորին. ազատվում է միայն մանուկ Արտաշեսը, որին
ծծմայրը փախցնում է Հերի կողմերը գտնվող հովվական իշխան-
ները։ Արտաշեսի գոնված տեղի մասին ծծմայրը լուր է ուղար-
կում նրա դայակին՝ թագադիր իշխան Սմբատին, որը Երվանդին
հակառակորդ էր։ Սմբատը գալիս է Արտաշեսի մոտ, և ծպտված
առժամանակ ապրում հովվակների մեջ։ Ժանտատեսիլ բռնակալ
Երվանդը շատ միջոցների է դիմում Արտաշեսին ոչնչացնելու հա-
մար, բայց ապարդյուն։

Երբ Արտաշեսը շափահամ է դառնում, Սմբատը նրա հետ
մտնում է Հայաստան և Երվանդի դեմ ապստամբություն բարձ-
րացնում։ Կովի ժամանակ Արտաշեսի կողմն է անցնում և Վիշա-
պազում Արգավանը (Աժդահակի սերնդից)։ Երվանդը, որից բոլորը
դժգոհ լինելով երես են դարձնում, պարտվում է և սպանվում։
Թագավորում է Արտաշեսը և հիմնում Արտաշատ մայրաքաղաքը։

Ալանները ահագին բազմությամբ թափվուա սև ձայշամաւա կողոպուտի նպատակով։ Արտաշեսը հավաքում է իր զորքը և դուրս գալիս նրանց գեմ։ Սկսվում է քաջ աղեղ բանեցնող Երկու ազգերի պատերազմը։ Ալանները փոքր ինչ ետ են քաշվում և անցնում են Կուր գետի մլուս ափից։ Արտաշեսը նմանապես հասնում է այդ գետին և բանակ դնում հակառակ ափին։ Ալանների թագավորի որդուն գերի բռնելով բերել էին Արտաշեսի մոտ, որին ազատելու համար ալանները հաշտություն են խնդրում և խոստանում այլևս չգալ Հայաստան ասպատակելու։ Արտաշեսը մերժում է։ Այն ժամանակ գերի ընկածի քուրք՝ Սաթենիկը, գալիս է գետափի և ձայն տալիս դեպի Արտաշեսի բանակը.

Քե՛զ ասեմ, այր քաջ Արտաշէս,
 Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանց.
 Ե՛կ հաւանեա՛ց բանից աշագեղոյ դստերս Ալանաց՝
 տալ զպատանիդ։
 Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝
 Զայլոց գիւցազանց զարմից բառնալ դկենդանութիւն,
 Կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել,
 Եւ թշնամութիւն յափուենական
 Ի մեջ երկոցոնց ազգաց քաջաց հաստատել։^{*)})

Արտաշեսը, լսելով այսպիսի իմաստուն խոսքեր և տեսնելով
 գեղեցիկ կույսին, սիրահարվում է նրա վրա և կանչելով իր դա-
 յակ Սմբատին, հայտնում է իր սրտի կամքը՝ օրիորդին կին առ-
 նելու, հոր հետ դաշինք կնքելու և եղբորը գերությունից ազատե-
 լու։ Սմբատը հավանություն է տալիս և մարդ ուղարկում ալան-
 ների թագավորի մոտ, հարսնախոսության համար, Թագավորը
 Արտաշեսին ուղարկում է հետեւյալ պատասխանը։

Եւ ուստի՝ տացէ քաջն Արտաշէս
 Հազարս ի հաղարաց
 Եւ բիւրս ի բիւրոց
 Ընդ քաջազդոյ կոյս օրիորդիս Ալանաց։^{**)})

Այս պատասխանը ստանալուց հետո Արտաշեսը, հին սովոր-
 ության համաձայն, փախցնում է Սաթենիկին։

*) Քեզ եմ առում, քաջ տղամարդ Արտաշես,
 Որ հաղթեցիր Ալանաց քաջ ազգին.
 Եղ համաձայնիլր Ալանաց աշաղեղ աղջկա խոսքին՝
 Տալու պատանիդ։
 Որովհետև զյուցազուների համար օրենք չե
 Ուրիշ զարմերի զյուցազուների կյանքը խլել,
 Կամ ծառայեցնելով՝ ստրուկների դասում պահել.
 Եղ հալիտենական թշնամություն
 Երկու քաջ աղջերի մեջ հաստատել։
 **) Եղ վարտեղից պիտի տա քաջ Արտաշեսը
 Հազարները հազարներից
 Եղ բյուրերը բյուրերից
 Քաջազդի ալանների կույս օրիորդի վոլսարենց

Շեծաւ արի արքայն Արտաշէս ի սեամ գեղեցիկ,
 Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
 Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն,
 Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
 Ընկեց ի մէջք օրիորդին Ալանաց,
 Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
 Արագ հասուցանելով ի բանակն իւր։^{*)})

Արտաշեսի և Սաթենիկի ամուսնությունից ծնվում է Արտա-
 շեազգը, որին վիշապազունները գողանում են և փոխարեն դև են
 դնում։ Ինքը Սաթենիկը սիրահարվում է վիշապազունների իշխա-
 նի Արգավանի վրա, որը թագավորի երկրորդը լինելու պատիվն
 ուներ,

Տենչայ Սաթենիկ տիկին
 Տենչանս զարտախուր խաւարտ,
 Եւ զտից խաւարծի
 Ի բարձիցն Արգավանատ։

Արտավազդը մեծանալով քաջ ու ինքնահավան է դառնում։
 Նա նախանձում է Արգավանին թագավորի երկրորդը լինելու աս-
 տիճանի համար և զրդում է հորը նրան այդ աստիճանից զրկել
 և աստիճանը տալ իրեն։ Արտաշեսը այդպես էլ վարվում է։ Մի
 անդամ Արգավանը դավադրաբար վիշապների պալատում ճաշ է
 պատրաստում Արտաշեսի պատվին։ Ճաշի ժամանակ Արտաշեսի
 որդիներն իմանում են, որ Արգավանը մտածել է դաշով Արտա-
 շեսին սպանել, ուստի մեծ շփոթ են բարձրացնում և փետում են
 նրա մորուքը։ Այս դեպքից շատ վրովիված Արտաշեսը վերադառ-
 նում է իսկույն Արտաշատ և իր Սաման որդուն զորքով ուղար-
 կում է Արգավանի դեմ։ Սա հրկիզում է Արգավանի պալատը և

*) Քաջ արքա Արտաշեսը հեծավ գեղեցիկ սկը
 Եղ հանեց ոսկէօղ շիկափոկ պարանը
 Եղ սրաթև արծովի պես անցավ գետը
 Եղ ոսկէօղ պարանը ձգեց
 Անցկացրեց Ալանաց օրիորդի մեջքը.
 Եղ շատ ցաւեցրեց օրիորդի փափուկ մւջքը,
 Արագ հասցնելով իր բանակը։

վիշապազումների մյուս շինությունները: Իսկ Արտավագդեց լրա-
վականանալով թագավորի երկրորդը լինելու պատիվը Արգավա-
նից խլելուց, խլում է և Նախիջևան քաղաքը: Արգավանի որդին
փորձում է դիմադրել, բայց Արտավագդը հաղթում է և բոլոր
վիշապազումներին կոտորում: Սպանվում է և Արգավանը:

Այս դեպքերի ընթացքում «Արտաշես և Արտավագդ» էպոսի մեջ միաժամանակ պատմվել է հոռմայեցիների դեմ մղած կոփված երի մասին։ Այդ կոփված երի մեջ իբրև կենտրոնական դեմք, ճակատամարտերի բախտը հայերի համար հաղթականորեն վճռող, հանդես է գալիս սովորաբար Արտաշեսի զորապետ և դայակ Սմբատը։ Զնայած Արտավագդը Սմբատի հաջողություններին նախանձելով հալածում է նրան և ուզում է նույնիսկ սպանել, բայց Սմբատը, հայրենիքի շահերը և պատիվը անձնականից բարձր դասելով, միշտ օգնության է հասնում Արտավագդին, երբ նա Հայաստանում ներխուժած բանակների դեմ կովելիս նեղ դրության մեջ է ընկնում։

Էպոսով երգվել են նաև Արտաշեսի կատարած շինարարական գործերը, որոնց նպատակն էր բարձրացնելու ժողովրդի բարեկեցությունը:

«Արտաշես և Արտավազդ» էպոսը վերջանում է Արտաշեսի մահով և Արտավազդի շղթայվելով— քաջքերի կողմից։ Արտաշեսը մի արշավանքի ժամանակ օտար երկրում հիվանդանում է և հայրենիքի կարոտը սրտում վախճանվում։ Նրա վերջին, կարոտի խոսքերն էին։

Ու տայր ինձ զծուխ ծըխանի

Եւ զառաւօտրն Նաւասարդի.

զվագել եղանց եւ զվագելն եղջերուաց.

Մեզ փող հարուաք եւ թմբկի հարկանէաք...”)

Արտաշեսի մահվան ժամանակ շատեղը, հեթանոսական սույնության համաձայն, ինքնասպանություն են գործում սիրած

*.) Ովկ կտուաբ ինձ ծխանի ծուլսը

Եկ Նավասարդի առավոտը,

Եղնիկների վաղելը

Եղիշեալուների վաղեւը,

Ենք պող էինք փշում.

Եղ թորուզ զաբկուս :

արքայի հետ թաղվելու համար։ Այս բանից նեղանում է Արտապատճենը և ասում հորը.

Սինչ դու գնացե՞ր,
Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ*)
Երա համար անիծելով նրան՝ Արտաշեսն այսպէս է ասում.
Եթէ դու յորս հեծցիս
յԱղատն ի վեր ի Մասիս,
Զքեզ կացին քաջք,
Տարցին յԱղատն ի վեր ի Մասիս.
Անդ կայցես,
Եւ գլուխ մի՛ տեսցես: **)

Հոր անեծքը կատարվում է: Մի անգամ, երբ Արտավազդը
որսի է ելուս Մասիսի վրա, նրան բռնում են քաջքերը և շղթա-
յում լեռան այրերից մեկում, ուր նա մնում է անմահ: Արտա-
վազդի երկու հավատարիմ շները անընդհատ կրծում են երկաթ-
յա շղթաները, և նա աշխատում է դուրս գալ քարայրից ու վերջ
տալ աշխարհին, բայց դարբինների մուրճ խփելու ձայնից նրա
կապանքները նորից գորանում են: Ինչպես մյուս, այնպես էլ
այս ժողովրդական ստեղծագործության մեջ պատմական և դի-
ցարանական տարրերը գեղեցիկ կերպով միահյուսված են իրար-
հետ:

«Արտաշես և Արտավազդ» էպոսը, նախորդ առասպելների և էպիկական գրուցների հետ համեմատած, ամենաընդարձակն է և հարուստ գործող անձերով:

Հայրենասիրական, ժողովրդասիրական բարձր իդեաների կրողներն այս էպոսի մեջ հանդիսանում են Արտաշեսը և Սմբատը։ Արտաշեսը ոչ միայն հոգում է երկիրը արտաքին թշնամիներից պաշտպանելու մասին, այլև ժողովրդի բարեկեցությունը

*) Դու գնացիք

ԵՎ ամբողջ երկիրը քեզ հետ տարաբ.

Ես ավերակներին ինչպես թագավորեմ

() Եթե դու հեծնես դնաս որսի**

Աղատ Մասիսն ի վեր,

ჭაღებელ ჭხვ მულ მოსინ,

Ազատ Սասին ի վ
Ա Տ Ե Ր Ե Վ Ա Ր

Այստեղ սահմանական է

բարձրացնելու, խաղաղ աշխատանքը ապահովելու և արհեստաներն ու գիտությունը զարգացնելու մասին։ «Ասում են, — բանավոր կերպով լսած լինելով գրում է Խորենացին, — որ Արտաշեսի ժամանակ հայերի աշխարհում շմշակված գետին չեր գտնվում»։ Սմբատը, որը էպոսում միշտ թշնամիների դեմ տարած հաղթանակների կազմակերպիչն է, դրական գծերով օժտված մի հսկա է։ Սրան, ըստ էպոսի, սեղմ բնութագրում է Խորենացին ասելով։ «Սիրելի է ինձ ասել քաջ Սմբատի համար ևս, որովհետև արդարել առասպելը շատ հեռու չե ճշմարտությունից, որովհետև նա ունի մարմնի մեծություն քաջության համեմատ, և առաքինության հետամուռ էր»։

Էպոսի հետաքրքիր կերպարներից մեկն է Արտավազդը։ Ըստ երեսութին, «Արտաշես և Արտավազդ» էպոսը, ինչպես սովորաբար և մյուսները, ունեցել է իր տարրեր պատումները, որոնցից Խորենացու լսածի մեջ Արտավազդը բնավորության բացասական գծեր ունի։ Մինչդեռ Վ դարու մի ուրիշ գրող՝ Եզնիկ Կողբացին մի այլ պատումի հիման վրա Արտավազդին ներկայացնում է դրական կերպարանքով։ Կողբացին ասում է, որ հեթանոս հայերը հավատում են, թե Արտավազդին բռնել են դմերը և շղթայել, բայց նա անմահ է և մի օր ազատվելով՝ իրենց պետք է ազատություն բերի։

Հայ ժողովրդական էպիկական ստեղծագործությունները բավական հարուստ են կանանց կերպարներով, և որ ամենից բնուրոշն է, կանայք այդ ստեղծագործությունների մեջ վճռական դեր են կատարում և հանդես են դալիս այնպիսի գործերով, որոնք արդյունք են նրանց իմաստության և քաջասրտության։ Այդպիսիների թվին է պատկանում Սաթենիկը, ինչպես և Տիգրանութին («Տիգրան և Աժդահակ»-ում)։ Էպոսի մեջ կանայք, սովորաբար, ինչպես Խորենացին է որակել, խորագետ գեղեցկուհիներ են։

Թեպետ հայ հին ժողովրդական գուսանական բանահյուսությունից մեջ փշրանքներ են միայն հասել, բայց դրանց օրինակով կարելի է պարզ պատկերացնում ունենալ ժողովրդական հին ըստ արեթիկական կուլտուրան տեղծագործությունների պոետիկական կուլտուր բայց մասին։ Վահագնի ծնունդի նկարագիրը տվող հատվածը, Սաթենիկի դիմումը Արտաշեսին, Արտաշեսի Սաթենիկին փախց-

նելու նկարագրությունը և մյուս նմուշները հիացմունք են առաջցանում իրենց ստեղծագործական խորությամբ ու գեղեցկությամբ։ Դրանց լեզուն պարզ է ու բյուրեղի նման հղկված։ Պատկերները, համեմատությունները գոնագեղ են և զարյանալի ինքնատիպ։ Բառերը և էպիտեսները ընտրված են շատ նույր ճաշակով (օրինակ՝ «Միրանի ծով», «Սեամ գեղեցիկ», «Ազատն Սակով» և այլն)։

Այնուհետև աշքի է ընկնում մի յուրահատկություն պատմելու եղանակի ու ոտանավորի կառուցվածքի մեջ։ Այդ այն է, որ որոշ տողեր ու արտահայտություններ հաճախ կրկնվում են ներդաշնակորեն։ Այդ կրկնությունները մի կողմից՝ առաջացնում են ոտանավորում ոկթմ ու երաժշտականություն, մյուս կորմից էլ աստիճանաբար առաջ են մղում գործողության ընթացքը։ Այսպիսի կրկնության մի գեղեցիկ նմուշ կա, օրինակ, հին էպոսի հերոսներից մեկի՝ Վարդգեսի մասին մնացած հատվածում։

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով,
Եկեալ նստեալ զՇրէշ բլրով,
ԶԱրտիմեղ քաղաքաւ, զՔասաղ գետով
Կոել կոփել զդուռն երուանդայ արքայի։*)
Կամ Արտաշեսի անհեքում։

Եթէ դու յորս հեծցիս
յԱզատն ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք,
Տարցին յԱզատն ի վեր ի Մասիս...

Այս բոլորը ցուցց են տալիս, որ հայ ժողովրդական հին ըստեղծագործությունները իրենց բովանդակության խորությամբ ու բազմազանությամբ և իրենց բանաստեղծական բարձր մշակություն եղել են հանճարեղ գեղարվեստական ստեղծագործություններ։

Ճիշտ է, այդ ստեղծագործությունները եկեղեցականության ժխտական վերաբերմունքի պատճառով գրի չեն առնվել և մեզ

*) Վարդգես մանուկը բաժանվում գնում է Տուհաց գավառից Քասաղ գետի շուրջը, Գալիս նստում է Շրէշ բլրի շուրջը, Արտահետ քաղաքի մոտ, Քասաղ գետի շուրջը, Կոելու, կոփելու երվանդ արքայի դուռը։

Հայ գր. պատմ. I գիրք—2

շեն հասել, բայց նրանց ամբողջ կովտուրան փաստորեն պահպանվել է՝ անցնելով VII—X դարերում ստեղծված հայ ժողովրդական մեծագույն էպոսին՝ «Սասունցի Դավթին»:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

V—IX ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԻՉ ԳՐՈՂՆԵՐԸ

Վաղ միջնադարի հայ գրականությունը նույն շրջանի միջազգային գրականության պատմության մեջ աչքի է ընկնում իր աշխարհիկ բնույթով։ Այսպես, օրինակ, Ելրոպայում V դարում և հետո որոշ ժամանակաշրջանում, գրականության հիմնական տեսակն է դառնում սրբերի վարքագրությունը, մինչեռ Հայաստանում իշխող տեսակը դառնում է պատմագրությունը, որի կուտուրական նշանակությունը անշուշտ մեծ է ամբողջ մարդկության համար։

Հայ պատմիչ-գրողների գործերը դարեր շարունակ ժողովրդի ընթերցանության ամենասիրած գրքերի թվին են պատկանել։ Դրանք երկար դարերի ընթացքում իր ազատության և անկախության համար պայքարող հայ ժողովրդին դաստիարակել են հայունասիրական ու հերոսական ոգով։

Ա.Գ.Ա.Թ.Ա.Ն.Գ.Ե.Պ.Ո.Ս

Այսնքը Հինգերորդ դարեկերջի պատմիչ Դավար Փարպեցին իրենից առաջ երկու պատմագիրների անուն է հիշատակում։ Ագաթանգեղոսի և Փալստոս Բյուզանդիի Բացի Փարպեցուց, շատ ուժիշներ ել միշտ մատնանշում են Ագաթանգեղոսի անունը, իբրև առաջին պատմության գրքի հեղինակի։

Ագաթանգեղոսի մասին մեզ ոչ մի ստույգ տեղեկություն չի հասել։ Նրա «Հայոց պատմության» առաջաբանում կա ինքնակենապրական մի համառոտ տեղեկություն։ Այդ տեղեկության մեջ Ագաթանգեղոսն իրեն համարում է հոռմայեցի և Տրդատ թագավորի արքունիքում քարտուղար։ Իր պատմությունը իրը թիգրել է Տրդատի հանձնարարությամբ։ Ենելով սրանից, մի քանի բանասիրներ այն միտքն են հայտնել, թի Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» գրվել է IV դարում (այդ դարում է թագա-

վորել Տրդատ III), և քանի որ այդ պատմության հոմարեն օրինակը ևս գոյություն ունի, այստեղից հետեւը են, թե Ագաթանգեղոսը գրել է հոռմարեն։ Բայց հետագայում մի շարք գիտնականներ, որոնց թվում և Մարգ, Գամեմատելով իրար հետ Ագաթանգեղոսի պատմության հայերեն և հոռմարեն օրինակները, ապացուցեցին, որ հոռմարենը հնում թարգմանվել է հայերենից, և որ դա գրվել է Տրդատի թագավորությունից հետո, V դարում, իսկ հեղինակը եղել է հայ։

Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ Պագարանգեղոսի պատմվում է, թե ինչպես քրիստոնեություն «Հայոց պատմության» նը Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսաբովանդակությունը վորշի ջանքերով մուտք է գործել Հայաստան։ Գիրքը բաղկացած է երեք մասից, առաջինը վերնագրված է՝ «Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի», երկրորդ մասը՝ «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի», իսկ վերջինը՝ «Իւարձ փըրկութեան աշխարհիս Հայաստանի ընդ ձեռն առն սրբոյն նահանակի»։ Գրական տեսակետից հետաքրքրական է Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» առաջին մասը, որը պատմական ճիշտ անցքերի նկարագրություն պարունակելով հանդերձ, առավելապես իրենից ներկայացնում է մի քրիստոնեական լեզենդ, սրբի վարքագրություն, խառը աշխարհիկ էպոսի որոշ դրվագներով, — մի հանգամանք, որ լեզենդին տալիս է առանձին հետաքրքրություն։

Գրիգոր Լուսավորչի կեգենդը միջնադարում ֆեոդալականության լեզենգը բած գրական ժանրն էր։ Այդ ժանրը նըրանք ծառայեցնում էին քրիստոնեական կրոնի պրոպագանիզմի համար։ Քրիստոնեական լեզենդի բնույթի մասին բավական ամբողջական գաղափար կարող է տալ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» առաջին մասը, Գրիգոր Լուսավորչի անձնավորության շուրջ հյուաված գրույցը։

Պարսկաստանում Սասանյան Արտաշիրը տապալելով Պարթև Արշակոնիների թագավորությունը, ինքն է անցնում իշխանության վլուխ։ Հայաստանի այն ժամանակվա թագավոր Արշակոնի Խոսրովը որոշում է Արտաշիրին պատժել։ Հարձակվում է նրա երկրի վրա և մի քանի մեծ հաղթանակներ տանում։ Արտաշիրը,

Հպանգավոր հակառակորդից ազատվելու համար, դիմում է դաշտադրության: Նա Հայաստան է ուղարկում Անակ անոնով Պարթև Արշակոնի իշխանին: Վերջինս ձեւացնում է, թե Արտաշիրի հալածանքներից է փախել, և մտերմանալով Խոսրովի հետ՝ հարմար ժամանակ սպանում է նրան: Խոսրովի հավատարիմները ջնջում են Անակի ամբողջ ընտանիքը, ազատվում են միայն երկու տղա: Կրիզոր և Սուլեն անոններով Սրանցից Գրիգորին փախցնում: Են Կեսարիա, որտեղ նա քրիստոնյա է դառնում. և երբ Խոսրովի որդի Տրդատը Բյուզանդիայից Հայաստան է գնում թագավորելու, Գրիգորը միանում է նրան և հոր հանցանքը քավելու համար, որոշում է հավատարիմ ծառայել: Սակայն Տրդատն իմանում է, որ Գրիգորը քրիստոնյա է, ուստի հրամայում է նրան խիստ արշարանքների ենթարկել և ստիպել, որ հավատն ուրանաւ:

Գրիգորին ենթարկում են բազմատեսակ սարսափելի տանջանքների և պատիճների, որոնք կրելուց հետո էլ նա, իբր թե, մնում է կենդանի, իր հավատքի մեջ չի թուլանում, տանջանքի ոչ մի նշան ցուց չի տալիս: Իսկ երբ Տրդատն իմանում է, թե Գրիգորն իր հոր սպանողի որդին է, հրամայում է նրան գցել խոր միրապը, որպեսզի այնտեղ սովամահ լինի: Գրիգորը տամներեք տարի աստծու զրությամբ կենդանի մնում է Ցորում, շրջապատված օձերով և կարիճներով, մինչև որ նրան հանում են այնտեղ:

Գրիգորին հորից հանելու պատճառը լինում է հետևյալը: Հոռմի կայսր Դիոկլետիանոսի ձեռքից Հայաստան են փախչում քրիստոնյա մի խոմք կույսեր, որոնցից մեկի՝ Հոփիսիմեի գեղեցկության մասին տեղեկանալով՝ Տրդատը հրամայում է բերել նրան իր պալատը: Երբ նրա կամքը կատարում են, երկնքից սոսկալի որոտ է լսվում և աղետներ են թափվում մարդկանց զլիքին: Տրդատը փորձում է Հոփիսիմեին տիրանալ, սակայն Հաղթվում է նրանից, չնայած իր հսկայական ուժին: Հոփիսիմեն հեղեղելով պահպանների շարքերը, ուրիշ է գալիս պալատից և գնում միանում իր ընկերուհիներին: Զայրացած Տրդատը փախըռտական կույսերի հետեւ ուղարկում է իր դաշիճներին: Կույսերի մեծ մասը նահատակվում է: Այն ժամանակ երկնքից ցասում է գալիս Տրդատի վրա, նա խոզ է դառնում և ընկնում եղեգնութեաբը:

Այս դեպքից հետո Տրդատի քույր Խոսրովադուխտը երազով իմանում է, որ իր խոզ դարձած եղբորը կարող է բժշկել միայն Գրիգորը: Գրիգորին հանում են հորից և նա աղօթելով նորից մարդ է դարձնում Տրդատին: Այս հրաշքից հետո Տրդատը դառնում է քրիստոնյա և Գրիգորի հետ միասին ձեռնարկում: Է ամբողջ Հայաստանում քրիստոնեություն տարածելու գործին: Կործանում են բոլոր մեհյանները և ժողովրդին մկրտում են Սրածանի գետում: Այսպես է տեղի ունենում, ըստ Ազաթանգեղոսի, Հայերի դարձ դեպի քրիստոնեությունը:

Տրդատը և Գրիգորը, իհարկե, պատմական անձնավորություններ են, բայց այն, ինչ որ սրանց մասին պատմված է Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ, գերազանցապես լեզենդ է: Այս լեզենդն ըստ երևույթին, ունեցել է և իր տարբեր վարիանտները, որոնցից մեկը հետագայում գրի է առել պատմիչ Ձենոր Գլակը, իսկ մի ուրիշը թարգմանվել է արաբերեն:

Գրիգոր կուապորչի անձնավորության շուրջ հյուսված քրիստոնեական լեզենդին խառնվել են էպոսի որոշ դրվագներ, որոնց հերոսը հանդիսանում է Տրդատը: Տրդատը Ազաթանգեղոսի պատմության մեջ ներկայացվում է որպես ահոելի ուժի տեր մի հսկա, որ անընդհատ պայքար է մղում հայ ժողովրդի թշնամիների դեմ և միշտ հաղթում: Ազաթանգեղոսը ժողովրդի մեջ տարածված մի ասցվածք է բառացի մեջ բերում, որ ասում է, թե ստեղծվել է Տրդատի՝ իր թշնամիների դեմ տարած հաղթանակների կապակցությամբ: Ահա այս ասացվածքը, «Ընշպես սեպ Տրդատը, որ սիգալով քանդեց գետերի թումբերը, իսկ սիգալիս ծովերի հորածանքները ցամաքեցրեց»: Այս մեջբերումից հետո պատմիչը անմիջապես ավելացնում է: «Որովհետեւ սեպ էր հանդերձներով այլ և ուժով և ամրությամբ, զորությամբ, բուն ոսկորներով և հաղթմարմնով, անզուգական պատերազմով և քաշ, թիկնեղ և բարձր հասակով...»: Այնուհետև Ազաթանգեղոսը զանազան առիթով պատմում է մի շարք զրուցներ և դեպքեր, որոնք Տրդատի հըսկայական ուժի պատկերացում են տալիս:

Այսպիսով Ազաթանգեղոսի «Հայոց պատմությունը», հատակապես առաջին մասը, խոզոր շափով գեղարվեստական-վիպական բնույթ ունի: Սրանով հանդերձ, Ազաթանգեղոսի գործը հայ Մողովրդի պատմության որոշ շրջանի անցքերի ուսումնասիրությունը:

թյան համար մեծ արժեք է ներկայացնում: Նրա մեջ շատ կարևոր տեղեկություններ կան հայ հին ֆեոդալական հասարակության հարաբերությունների, ժողովրդի կենցաղի, հին հեթանոսական կրոնի և աստվածների մասին:

Հուման՝ Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» թարգմանվել է Հունարեն, արաբերեն, լրացերեն, նոր ժամանակներում թարգմանվել է ֆրանսերեն, իտալերեն և այլ լեզուներով:

ՓԱՎՍՏՈՍ ԲՅՈՒՋԱՆԴ

Այսօք Փավստոս Բյուզանդը հայ ամենալսոշոր պատմիչ գրողներից մեկն է, որը Ագաթանգեղոսից հետո պատմագրությունը մի հսկա թուշքով վեր է բարձրացրել: Փավստոսի «Հայոց պատմությունը» միաժամանակ ունի բացառիկ գեղարվեստական հատկություններ: Սրա պատճառն այն է, որ Փավստոսը, ի տարբերություն Ագաթանգեղոսի, իր պատմության մեջ գերազանցապես օգտագործել է ոչ այնքան քրիստոնեական լեզվներ, որքան ժողովրդական էպոսը: Մյուս կողմից էլ էպոսը ուժեղ կերպով ազել է Փավստոսի գրելակերպի և ոճի վրա:

Փավստոս Բյուզանդի կյանքի և անձնավորության մասին մեզ համարյա ոչ մի տեղեկություն չի հասել: Փավստոսը Բյուզանդացի է կոչվել, ըստ երևութիւն, Բյուզանդիայում կրթություն ստացած լինելու պատճառով. նա իր պատմության մեջ մի տեղ խոստանում է իր մասին զրքի վերջում կենսագրական տեղեկություններ տալ, սակայն մեզ հասած ոչ մի ձեռագրում այդ խոստացած տեղեկությունները չկան:

Փավստոսի «Հայոց այն տեղից, ուր վերջացնում է Ագաթանցամության» բոդեղուսը, այսինքն Տրդատի մահից և նրա վանդակությունը որդի ենորդով Կոտակի թագավորությունից: Փավստոսը դեպքերը զարունակում է մինչև Հայաստանի բաժանվելը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև (387 թ.):

Այն ժամանակաշրջանը, որի մասին պատմում է Փավստոսը, շափականց հարուստ է պատմական անցքերով: Մի կողմից՝ դա հայ ժողովրդի հերոսական պայքարի ու դիմադրության շրջանը էր Բյուզանդիայի և Պարսկաստանի դեմ, որոնք ձգտում էին տիւ-

րանալ Հայաստանին, մյուս կողմից՝ Երկրի ներքին կյանքում պայքար էր գնում պետության ամրացման համար: Այդ նպատակով էլ Արշակոնի թագավորները ձգտում էին պետությունը կենտրոնախուզ ֆեոդալ իշխաններին ու հոգևորականներին հնազանդեցնելու համար: Բյուզանդը Հայաստանի անկախության և ամբողջության գաղափարի ամենաշերմ արտահայտիչներիցն է, որա համար էլ նա իր պատմության մեջ տեղ է հատկացնում Արշակոնիներից մի քանիսին և Մամիկոնյան իշխաններին, որոնք հայկական բանակի ժառանգական սպարապետներն էին: Մամիկոնյաններն այն շրջանում օգնուած էին Արշակոնիներին պետությունը կենտրոնացնելու, պետության միասնությունը պահպաննելու և կազմակերպում օտար նվաճողներին դիմացրելու գործը:

Ըստ երևութիւն Հայաստանի Արշակոնի թագավորներից և Մամիկոնյաններից մի քանիսը, որոնք աշքի ընկնող դեր էին կատարել IV դարում Հայաստանի արտաքին և ներքին թշնամիների դեմ պայքարելու գործում, դարձել են բանավոր էպիկական ըստեղծագործությունների հերոսներ: Էպիկական ստեղծագործությունների նյութ են դարձել անկախության պաշտպանության համար մղվող պայքարի հետ կապված պատմական նշանավոր անցքերը: Փավստոսը պատմական անձնավորությունների մասին պատմելիս, նրանց կենդանագրում է, ինչպես գեղարվեստական գրողը դրանցից շատերը, որոնց նկարագրելիս հեղինակը օգտագործել է նաև բանավոր զրուցները, դարձել են միաժամանակ աւղղակի վիպական կերպարներ:

Այսպես օրինակ, Հայաստանի անկախության, ապահովության և պետության կենտրոնացման ուժեղ քաղաքականություն տանող Արշակ II-ի կյանքի և գործերի մասին խոսելիս, Փավստոսը պատմում է հետեւյալը. Բյուզանդական Վաղես կայսրը Արշակին կաշառելու և իրեն ենթարկելու նպատակով, նվերներով և հարուստ գանձերով Հայաստան է ուղարկում նրա եղբոր որդիներին՝ Գնելին և Տիրիթին: Արշակը, լսելով սրանց գալստյան մասին, հասկանում է բանի էությունը և մտաբերելով Վաղեսի Հայաստանին պատմառած վնասները, խստ զարանում է կայսրի և նվեր բերողների վրա, ասելով. «Եատ քարեր կայսեր վրա և ձեր վրա՝ բերելու համար, մենք քարեր շատ ունենք, նրա և ձեր

ատամները թափելու համար, նրա՝ տալու համար և ձերը՝ բերելու համար», : Արշակի այս խոսքերը պատմին անշուշտ բանավոր աղբյուրներից է քաղել:

Ավելի բնորոշ է հետեւյալ դեպքը: Պարսից Շապուհ երկայնակյաց թագավորը խաբեռլիյամբ Արշակին իր մոտ է կանչում՝ իբր թե դաշինք կնքելու համար: Երբ Արշակը գնում է Տիգրոն Շապուհի մոտ, վերջինս նրա հավատարմությունը փորձելու համար աստղագետների և հմայողների խորհրդով, ուղարկում, Հայաստանից բերել է տալիս հող ու զուր և համայում է իր խորանի հատակի կեսը ծածկել բերված հողով և զուրն էլ ցանել վրանն Այնուհետև Արշակի հետ երթևեկելով խորանում, խոսում են իւրենց հարաբերությունների մասին. Երբ նրանք կանգնում են Պարսկաստանի հողի վրա, Արշակը խեղճանում է և մեղա է գալիս Շապուհի առաջ, նրա դեմ մղած պայքարի համար, իսկ երբ անցնում են խորանի այն մասով, ուր փուլած է մայրենի երկրից բերված հողն ու զուրը, Արշակը համարձակ է դառնում, ուժ է բերված հողն ու զուրը, Արշակը համարձակ է դառնում, ուժ է ստանում և սպանում է Հայաստան վերադառնալուց հետո Շապուհին պատժել: Այս փորձից հետո Շապուհը համոզվում է, որ Արշակը իրեն չի հպատակվի, ուստի նրան բանտարկել է տալիս Անհուշ բերդում:

Արշակի հետ կապված այս դրվագը, որը հիշեցնում է Անհուշի մասին եղած հունական առասպեկտ, Փալստոսը, ի հարկեց վերցրել է ժողովրդական բանավոր էպիկական ստեղծագործություններից:

Փալստոսի ամենասիրած պատմական Փասակի Կերպարը անձնավորություններից մեկը Վասակ Մատմիկոնյանն է: Ինչպես Արշակի, այնպես էլ Վասակի մասին պատմելիս, օգտագործելով էպիկական զրուցները, նա իր պատմության մեջ նրան ներկայացնում է լեռենդար գծերով, էպոսի դրական հերոսներին հատուկ հերոսական խարակտերով: Վասակը Արշակի թագավորության ժամանակ հայկական դորքերի ընդհանությամանատարն էր. նա բազմաթիվ կոփվներ է վարում ու միշտ էլ շարդում Հայաստան ներխուժող այս կամ այն պետության բանակները, Փալստոսի պատմության մեջ նա ներկայանում է հայ ժողովրդի անկախության ու պետականության պահպան չերմ նախանձախնդիր:

Նրա բնավորության հերոսականության համար շատ բնորոշ են հետևյալ դեպքերը: Մի անգամ, երբ Վասակը Արշակի հետ գտնվում են Շապուհի մոտ, սրա ախոռապետը Արշակին և Վասակին զբոսանքի ժամանակ հանդիպելիս ծաղրանքով ասում է. «Հայոց այծերի արքա, եկ նստիր խոտի խուրձի վրա»: Թագավորին ասված այս խիստ վիրավորական խոսքերը լսելով, Վասակը զայրանում է և անմիջապես սուրը մերկացնելով տեղն ու տեղը գլխատում նրան: Շապուհին մնում է գովել Վասակի համարձակությունը: Մի որիշ անգամ, երբ Վասակը էլի Արշակի հետ կությունը: Մի որիշ անգամ, Երբ Վասակը դավադրաբար, երդումը ստորաբար դրժելով, Արշակին Անհուշ բերդում շղթայելու կարգադրություն անելուց հետո դառնում է Վասակին, որը փոքր էր մարմնով, և ասում. «Աղվես, դու էիր խանգարիչը, որ այս նեղություն տվիր մեզ: Դու էիր, որ այսքան տարի կոտորեցիր արիներին: Հապա ինչպես կարող ես պրծնել իմ ձեռքից: Աղվեսի մահով կսպանեմ քեզ»: Վասակը պատասխան է տալիս ասելով. «Այժմ դու ինձ անձամբ փոքր ես տեւնում, և սուրս հետո չեմ. իմ մեծության շափը չեմ առել: Որովհետև մինչ այժմ ես քեզ համար առյօւծ էի, իսկ հիմա աղվես: Սակայն երբ ես զեռ Վասակ էի, մի ոտս մի սարի վրա էր, մյուսը՝ մյուս սարի վրա. Երբ աշ ոտսի էի հենվում, աշ սարն էր գետինն իշնում, երբ ձախ ոտսի էի հենվում, ձախ սարն էր գետինն իշնում: Ապա պարսից Շապուհ թագավորը հարց է տալիս.

«Հապա մի ցուց տուր, թե որոնք են այն սարերը, որ դու գետինն էիր իշեցնում»: «Այդ երկու սարերից մեկը դու էիր, — պետինն էիր իշեցնում»: «Այդ երկու սարերից մերժակը»: Վասակի այս ասում և Վասակը, — մյուսը՝ հուների թագավորը»: Վասակի այս այլաբանական հիպերբոլիկ պատասխանը ձիշտ կերպով բացահայտում է հայ ժողովրդի ուժը և բնավորության հերոսականությունը: Այս խոսակցությունից հետո բնակալ Շապուհը Վասակին մորթազերծ է անել տալիս:

Փալստոսի պատմության մեջ պատկերաց Մոււեղի Կերպարը ված պատմական հերոսական անձնավորություններից նշանավոր է և Մուշեղ Մամիկոնյանը:

Մուշեղը շարունակում է իր հոր, Վասակի քաղաքականությունը, հաջողությամբ պայքարում է պետության թե արտաքին, թե ներքին թշնամիների դեմ: Որ Մուշեղը նմանապես դարձել է

Վիպական ստեղծագործության նյութ, այդ երևում է ի միջի այց՝
լոց և հետևյալ դրվագից:

Մուշեղին դավագրաբար սպանում են, գրում է Փալստուրը:
Նրա հարազատները չեն հավատում, որ նա կարող էր մեռնել,
որովհետև կովկանի մեջ միշտ անխօցելի էր մնացել, ուստի նրա
մարմինը ըստ հեթանոսական սովորության դնում են մի աշտա-
րակի վրա, որ արակեզները վերքը լիզեն և կմնդանացնեն:

Փալստուր իր սիրած հերոսին, Մուշեղին, այսպիսի գնահա-
տական-նկարագիր է տալիս. «Քաջ զորավարն ու հայոց սպարա-
պետը... միամտությամբ և արդար վաստակով միշտ ջանում էր
և աշխատանք թափում հայոց աշխարհի թագավորության համար,
Ֆիշեր ցերեկ չարչարվում էր, ճիգ ու ջանք էր թափում պատե-
րազմի հակատում լինել և երբեք չեր թողնում, որ մի կորի հող
հայոց սահմաններից խլեն»:

Մուշեղի կատարած բազմաթիվ քաջագործություններից նշա-
նավոր է հետևյալը: Շապուհը մի մեծ քանակ կազմած պատ-
րաստվում է հարձակվել Հայաստանի վրա, բայց դեռ Հայաստան
չմտած, Մուշեղը հայկական զորքով հանկարծակի հարձակվում
է նրա վրա և մեծ ջարդ տալիս: Շապուհը հազիվ ճողովրելով
փախչում է, գերի թողնելով նույնիսկ իր կանանցը: Մուշեղը
վեհանձնաբար Շապուհի կանանց անվնաս ազատ է թողնում:
բայց նրա մեծամեծներից վեց հարյուր հոգու հրամայում է մորա-
թագերծ անել իր հոր՝ Վասակի վրեմբ լուծելու համար: Շապուհը
խոստովանելով Մուշեղի քաջությունը և վեհանձնությունը, իր գի-
նու թափի վրա փորագրել է տալիս Մուշեղի նկարը սպիտակ ձիու
մբա նստած:

Հովհան եպիսկոպոս- Փալստուրի «Հայոց պատմության» մեջ
սի երգիծական կան էջեր, որոնք հոգևորականության դիմ
պուրերեն ուղղված ժողովրդական սատիրայի փայ-

լում նմուշներ են: Այսպես, նա իր զրբի վերջում պատմում է ոմն
Հովհան եպիսկոպոսի կյանքից և վարքագծից երեք առանձին
բեպք, որոնք անկասկած վերցված են ժողովրդական բանալոր
սատիրական նովելներից:

Առաջին դեպքը հետևյալն է: Մի անգամ Հովհան եպիսկոպոս
ու էջ նստած ճանապարհ գնալիս հանդիպում է ձիու վրա նստած
մի աշխարհականի, որը վերադառնում է ավագակությունից: Ե-

նդիսկոպոսի աշքն ընկնում է կեղեցիկ ձիում, ուստի ինքը էշից
իշնելով բռնում է ձիու սանձը և հեծյալին ասում. իշիր, բան ու-
նեմ հետդ խոսելու: Իշեցնելով ձիուց, տանում է մի կողմ և ա-
սում. քեզ տերտեր պիտի օծեմ: Անծանոթը հակառակվում է, ա-
սելով որ ինքը ավազակ է, չարագործ և չի կարող տերտեր դառ-
նալ. սակայն եպիսկոպոսը նրան զորով չոքեցնում է և ձեռքը
դնելով գլխին օրհնում է, ասելով. գնա քո գյուղը և տերտերու-
թյուն արա, — և դրա համար իրեւ վարձ վերցնում է ավազակի
ձին, շնայած վերջինիս ցուց տված դիմագրության: Ավազակը
կնում է տուն և հայտարարում, որ ինքը տերտեր է դարձել, և
ինոչ ու երեխաներին ասում. — եկեք ձեզ համար աղոթեմ: Կինը
ծիծաղելով ամուսնու վրա՝ նաև չի հավատում, բայց երբ լսում
է եղեկությունը, հայտնում է նրան, որ նա մկրտված չի եղել,
ինչպես կարող էր տերտեր օծվել: Ամուսինն այդ լսելով, ձին ետ
ստանալու հույսով, վազում է եպիսկոպոսի մոտ և հայտնում է, որ
ինքը մկրտված չի և չի կարող տերտեր լինել: Հովհան եպիսկո-
պոսը վերցնում է մի սափոր ջուր, ջուռ է տալիս ավազակի վրա
և ասում, — գնա տերտերություն արա, արդեն մկրտված ես:

Հոգևորականության ագահությունը և ընշաքաղցությունը
մերկացնելու տեսակետից ոչ պակաս սուր ու հետաքրքրական է
Հովհան եպիսկոպոսի մասին պատմած մի ուրիշ դեպք: Հովհան
եպիսկոպոսը երբ թագավորի մոտ էր զնում, — գրում է Փալստուրը,
նրա առաջ զանազան խեղկատակություններ էր անում, չոքում
էր թագավորի առաջ, ուղտ ձեանալով կուանչում էր և ասում.
Շնուղտ եմ, ուղտ եմ, թագավորի մեղքերը բառնում եմ, դրեք իմ
վոա թագավորի մեղքերը, որ բառնամ»: Թագավորը ամեն անդամ
պյուղերի կամ ագարակների կնքած մուրհակներ էր զնում նրա
կոնակի վրա իր մեղքերի փոխարեն: Այսպիսի ստորաքարշակ
արքով եպիսկոպոսը ձեռք է բերում մեծ կալվածքներ:

Փալստուրի «Հայոց պատմությունը» կար-
գացվում է մեծ հետաքրքրությամբ: Նրա
ինքուն կենդանի է և պատկերավոր: Լավագույն վիպասանի նը-
ման նա կարողանում է ընթեցողին տեսանելի, ցայտուն, շոշա-
փելի դարձնել նկարագրած անցքերը: Օրինակ՝ Պատ թագավորի
սպանության դեպքի նկարագրությունը: Բյուզանդական զորապետ
Տերենդը Հայաստանի թագավորը Պատին կանչում է իր մոտ խըն-

Հովհանքի. Պապը ոչնչի մասին չկտնկածելով, մի քանի ուղեկիցների հետ խնճուզքում զվարձանում է: Բյուղանդական լեզեռներները գենքերն զգեստների տակ թագցրած, իբր թե պատիվ մատուցելու համար, կանգնած են նրա թիկունքում և—

«Մինչդեռ Պապ թագավորը ձեռքին բռնած ուրախության գիշին՝ նայում էր քազմազան գուանների ամբոխին, ձախ ձեռքով արմունկին հենված նստել էր, մատներով մի ոսկե աման բռնել, իսկ աջ ձեռքը դրել էր աջ ազդրին կապած թրի կոթի վրա, և մինչդեռ խմելիս բերանը բաժակին էր, իսկ աշքերը հառել էր դեպի հառաջ և մտիկ էր անում բազմազան գուանների ամբոխին,— հույն զորքին ակնարկով հրաման է տրվում: Երկու լեզեռներն առաջարկության էին կանոնական գործություն կատարել, հանկարծ մեկն սակրերը բարձրացնելով զարկում են Պապ թագավորին. մեկը սակրով խփում է վզին, մյուս սակրավորն էլ հարվածում է թրի կոթի վրա դրած աջ ձեռքի թաթին և կտրում ու դեն նետում այս: Պապ թագավորը տապալվում է երեսի վրա ու պարանոցի արյունը խառնվում է թափված վինու հետ: Դահլիճի շփոթության և խոռվության ժամանակ Անձևացոց գավառի տեր Գնելը ոտքի է կտնդնում իր նստած տեղից, հանում է իր սուրբ և սպանում է թագավորին խփող զինվորներից մեկին: Ապա հունաց Տերենդ զորավարը սուրբ հանում է, հեռվից հարվածում և Գնելի գլխի ոկավառակը աշքերից վերև կտրում, դեն նետում: Եվ ոչ ոք այս ուժինետև ովհնչ շնչանդգնեց ասելու:

Բյուղանդական զորավարի այս ստոր արարքը ցնցող տպավորություն է գործում նաև նկարագրության գեղարվեստականության պատճառով:

Փակտոս բյուղանդի «Հայոց պատմությունը» թարգմանված է եվրոպական մի շարք լեզուներով:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԾԻ

Կայեց Հայ լլասիկ պատմապության ամենախոշոր դեմքը Մովսես Խորենացին է: Խորենացու «Հայոց պատմություն»-ը մեծ աղդեցություն է թողել հետագա բոլոր հայ գրողների վրա ընդ-

հանրապես և պատմիչների վրա՝ մասնավորապես: Գրողները և պատմիչները Խորենացու գործին և անձնավորության վերաբեր վել են մեծ պատկառանքով. նրան սովորաբար անվանել են «Միհծն քերթող Մովսէս», «Տիեզերահողակեալ վարպետ քերթող» (Թումա Արծրունի), «Քերթողահայրն Մովսէս» (Մովսես Կաղան կատվացի) և այլն: Խորենացու հմայքը մեծ է եղել և Հայաստանի հարևան երկրներում:

Մովսես Խորենացին, ինչպես ասում է ավանդությունը, ծնվել է Տարոնի Խորնի կամ Խորոնք գյուղում: Ծննդյան և մահվան թը-վականները հայտնի չեն: Մեր մյուս պատմիչների համեմատու թյամբ Խորենացու կյանքի մասին, շնորհիվ իր «Հայոց պատմության» մեջ թողած ինքնակենսագրական տեղեկությունների, մեզ աւելի բան է հայտնի: Այդ տեղեկությունների համաձայն Սահակը և Մեսրոպը Եփեսոսի ծողովից (432 թվին) հետո իրենց աշակը շահերտներից գարծյալ մի խոմբ ուղարկում են Ալեքսանդրիա Հունարեն լեզվի և դիտությունների մեջ կատարելագործվելու Խորենացին: Եթե ենթազրենք, որ նա այդ ժամանակ կարող էր 20—25 տարեկան լինել, ապա ուրեմն նա ծնվել է V դարում՝ հավանաբար սկզբներին: Ալեքսանդրիա գնալու ճանապարհին Խորենացին և իր ընկերները որոշ ժամանակ մնում են Եղեսիա քաղաքում և ծանոթանություն տեղի դիւնանի հարուստ գրականության հետ, հետո դնում են Երուսաղեմ՝ «Փոքր ինչ ժամանակ պաշտետինցիների մոտ ուսման մեջ մնալու» համար: «Եւ այսպես ծանր գնալով մատանք Եղիպտոս, մեծահոշակ աշխարհը...»— գրում է Խորենացին իրենց ճամբորդության մասին: Այնտեղ է շինված հարմարավոր և բարեխառն Ալեքսանդրիա մեծ քաղաքը: Այս քաղաքում այժմ չի նստում հինգ գագաթով Պղուտոնիոսը, պատելով անսահման աշխարհը, այլ Մարկոսը յուր ավելացրաների քարությամբ: Զկան և վիշապի ցեղի գյուղագունների գերեզմանները, այլ վայելու կերպով կանգնած են սուրբերի մատուռներ... Եկուու հարցնում են պատգամ դժոխքի իշխան Պրոդեհաղից, այլ սովորում են զանազան գիտությունների զորություններ նոր Պղատոնից: իմ ուսուցչից եմ ասում, որին արժանի աշակերտ շտոնը վեցա, սակայն և ոչ անկատար վարժմունքով արվեստներին

վերջ տալով զարգացած; Ալեքսանդրիա քաղաքի անցյալն ու ներգա կան համեմատելով, Խորենացին իրեն հատուկ նրբամտությամբ փոխաբերական իմաստ ոմեցող պատկերավոր արտահայտություններով ցույց է տալիս այդ քաղաքի կուլտուրական կյանքում տեղի ունեցած խոշոր փոփոխությունը: Այն ժամանակ, երբ Խորենացին գնացել էր Ալեքսանդրիա սովորելու, Քյուղանդիայում և եվրոպական երկրներում քրիստոնեական եկեղեցին ուժեղ ռեակցիա էր սկսել հոմական հեթանոսական կուլտուրայի դեմ, այրում էին դարերով կուտակված հարուստ ձեռագրեր ոմեցող գրադարանները, ավերում անտիկ կուլտուրայի բազմաթիվ օջախները և հուշարձանները: Այսպիսի մի ժամանակաշրջանում Ալեքսանդրիայում գտնվելով, Խորենացին բնավ չի ենթարկվել իշխող տրամադրություններին: Նա մեծ սիրով ուսումնասիրել է հոմական կլասիկ փիլիսոփայությունը ու գրականությունը և առհասարակ յուրացրել է այն ամեն լավագույնը, ինչ որ հնարավոր է եղել: Շատ բնորոշ է, որ Խորենացին իր ուսուցչին մեծարելու համար «Նոր Պլատոն» է անվանում նրան: Այս ցույց է տալիս (ինչպես և նրա գրքում եղած շատ ուրիշ փաստեր), թե նա ինչպիսի խոր համակրանք է ունեցել զին աշխարհի մեծագույն փիլիսոփաներից մեկի՝ Պլատոնի նկատմամբ:

Թողնելով Ալեքսանդրիան, Խորենացին և իր ընկերները ծովով ուղևորվում են դեպի Հոմաստան, բայց ճանապարհին քամիների ուղղությունը փոխվելու հետեւանքով, նավը նրանց գործ է հանում իտալիայի ափերը: Պատահական առիթից օգտվելով նրանք կարճ ժամանակով ապրում են Հռոմում, ապա այնտեղից անցնելով Հոմաստան, որոշ ժամանակ անց են կացնում Աթենքում: Երբ ձմեռը վերջանում է, հայաստանցի ուսանողները ուղեավորվում են Բյուզանդիա, այնտեղից հայրենիք վերադառնալու համար: Հայաստան հասնելիս, նրանք գտնում են իրենց ուսուցիչներին՝ Սահակին և Մեսրոպին արդեն վախճանված: Այս առթիվ Խորենացին գրել է. «... Մինչդեռ նորանք կհուսային մեր վերադարձին, որ պարծենան իմ բազմահմուտ արվեստով և կատարելագույն պատրաստությամբ, ինչպես մենք ևս առանց կասկածանքի արագությամբ փութալով, Քյուղանդիայից եկանք շուտով, և կհուսայինք հարսանիքում պարել և առագաստի երգեր երգել, իսկ այժմ, ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ող-

բալով, հառաջում եմ ողղումելի կերպով»: Քանի որ Սահակը և Մեսրոպը վախճանվել էին 540 թվականից այստեղից կարելի է ենթադրել, թե Խորենացին հունական կուլտուրայի կինտրոններում ապրել ու սովորել է յոթից ութ տարի:

Խորենացու մասին մեզ հասել են նաև մի քանի այլ տեղեկություններ, որոնցից երեսում է, թե Հունաստանից վերադառնալուց հետո խավարամիտ հոգևորականները նրան խիստ հալածանքների են ենթարկել, և նա ստիպված է եղել միառժամանակ մեկուսանալ, քաշվել հրապարակից և ապրել անհայտության մեջ, մինչև որ վերջապես գնահատվում է Սահակ Բագրատունու կողմից և հանձնարարությունը է ստանում գրելու «Հայոց պատմություն»:

Խորենացու «Հայոց պատմության» սկզբանությունը եվրոպականությունը է խոսում Սահակ Բագրատունու մեջ արտահայտած առաջնությունը կամ հայտնում նրա հանձնարարության առթիվ, ըստ երևությին այն պատճառով, որ այդ հանձնարարությունը գուգադիպել էր հայոց ամբողջ պատմությունը գրելու իր արդեն ունեցած մտահղացման: Դրա համար էլ նա առանց որեւ համեստության կեղծ ցույցի՝ հայտնում է նրան, թե ինքը սիրով հանձն է առնում այդ դժվարին աշխատանքը. «Այս քո խնդիրը սիրելի է իմ ճաշակին և առավել ևս իմ սովորություններին», գրել է Խորենացին Սահակ Բագրատունուն:

Խորենացու «Հայոց պատմությունը» հանձարեղ մի մարդու խիզախ ձեռնարկություն էր: Այդ երկն իր մի շարք հատկություններով միանգամայն նորություն հանդիսացավ հայ գրականության պատմության մեջ: Խորենացին հայ պատմությունին էր, որ գրեց ամբողջ հայոց պատմությունը՝ միշներից մինչև իր ապրած ժամանակաշրջանը, նախապատմական ժամանակներից մինչև 427 թվականի անցքերը՝ Հայաստանից Արշակունիների թագավորության վերացումը: Հետագա հայ պատմիշներից և ոչ մեկը նման գործ չի ձեռնարկել: Խորենացին նորանց համար եղել է մի խոշոր հեղինակություն, որի գրածը հարկ եղած դեպքում համառոտագրելով, օգտագործել են:

Խորենացին առաջին էր, որ գրեց այսպիս ասած «Քննական

Թատմություն», այսինքն նա իր ձեռքի տակ եղած ավշալ շըզա
նին վերաբերող բոլոր փաստերը և դոկումենտները համեմատում,
քննադատական վերաբերմունք է ցուց տալիս և որոշ ընտրու-
թյուն է կատարում։ Մինչդեռ նրանից առաջ եղած պատմիչները
նույնիսկ չեն հիշատակում իրենց օգտագործած աղբյուրների
անումը։

Ամենից կարևորն այն է, որ փաստերի ընտրության ժամա-
նակ և նրանց մասին եղբակացություններ անելիս Խորենացին
երբեք չի առաջնորդվել Սահակ Բագրատունու պահանջներով։
Եղբոր նշաններից երեսը է, որ Բագրատունին ունեցել է իր ծրա-
գիրը՝ հանձնարարված պատմության բովանդակության մասին,
բայց Խորենացին գրել է այնպես, ինչպես ինքն է լավ համարել։
Նա հաճախ վիճում է Բագրատունու հետ և խիստ քննադատու-
թյան ենթարկում նրան։ Խորենացու, իբրև պատմագրի, արժա-
նիքներից մեկն էլ այն է, որ նա խոչըն շափով օգտագործել է
ժողովրդական բանահյուսությունը, որի մասին նա բարձր կար-
ծիք ուներ։ Այսպես օրինակ, հունական առասպելները նա ան-
վանում է «վսեմ և իմաստալի...», որոնք այլարանաբար թագցը-
նում են իրենց մեջ գործերի ճշմարտությունը։ Ժողովրդական ա-
ռասպելների և էպոսի մասին այսպիսի առողջ գիտական հայացք
ունենալով, Խորենացին լայն կերպով օգտագործել է իր պատ-
մության մեջ հայ ժողովրդական հին առասպելներն ու էպոսը,
ուշխատելով, ինչպես ինքն է ասում, դրանց այլարանությունը
ճշտել, դրանց մեջ թագնված ճշմարտությունը բացահայտել։ Այս
պատճառով էլ Խորենացու պատմությունն անդնահատելի արժեք
ունի հայ ժողովրդական հին բանահյուսության ուսումնասիրու-
թյան համար։ Խորենացին հիացնում է ընթերցողին ժողովրդական
բանահյուսության հետ ունեցած իր ընդարձակ ծանոթությամբ։
Թվում է թե նա շրջել է ամբողջ Հայաստանը և ծանոթացել ժո-
ղովրդական ստեղծագործությանը։

Փակստոս Բյուզանդից հետո Խորենացին ավելի քան խոր և
ամենա կերպով է արտահայտել Հայաստանի պետական ամբող-
ջության, անկախության և ժողովրդի պատմության իդեաները։
Որպես ազնիվ հայրենասեր և ժողովրդասեր, որ բարձր է կանգ-
նած առանձին ֆեոդալական-նախարարական տոհմերի շահերի

նեղ շրջանակներից, Խորենացին թագավորների, իշխանների և
հոգևորականների նկատմամբ հանդես է բերում ուժեղ քննադա-
տական սպիր, երբ սրանք իրենց գործերով օգտակար չեն լինում.
Հայրենիքի պաշտպանության, ժողովրդի բարեկեցության և կու-
տուրայի զարգացման։

Խորենացին իր պատմության I գրքի Յ-րդ գլուխը վերնա-
գրել է «Մեր առաջին թագավորների և իշխանների անիմաստա-
սեր բարքի մասին»։ Այս գլուխը նա դատապարտում է այն հայ
թագավորներին և իշխաններին, որոնք հոգ չեն տարել իրենց
ժամանակի անցքերը գոր առնել տալու— պատմագրություն
ստեղծելու մասին։ Պատմագրության արժեքը նա պատկերաց-
նում է այսպիս, ոնքանց շարադրությունները (այսինքն հին
պատմիչների գրածները) կարդալով, մենք հմտանում ենք աշ-
խարհային կարգերին և սովորում ենք քաղաքական օրենքներ»։
Իսկ անիմաստասեր թագավորների և իշխանների մասին Խո-
րենացին գրում է, «Մեզ ամենքիս հայտնի են մեր թագավոր-
ների և ուրիշ նախնիների անհոգությունը դեպի իմաստությունը
և նոցա բանական հոգու անկատարելությունը։ Արովհետեւ թե-
պետ մենք փոքր ազգ ենք, թվով շատ նվազ և զորությամբ տը-
կար և շատ անգամ ուրիշ թագավորության տակ նվաճված, սա-
կայն մեր աշխարհում ևս կատարվել են քաջության շատ գոր-
ծեր, որոնք արժանի էին գրավոր հիշատակի, բայց մեր թագա-
վորներից ոչ մինը հոգ շտարավ գրել տալու։ Պատմիչը այդ
թագավորներին և իշխաններին անվանում է անբան, թուլամիտ
և վայրենի մարդիկ»։

Նույնպիսի խստությամբ Խորենացին դատապարտում է այն
կրոնավորներին, որոնք «տխմար են ու ինքնահավան, ոսկեսեր,
կեղծավոր ու սնափառ» և որոնք «գալլեր դարձած՝ պատառում
են իրենց ժողովուրդը»։

Խորենացին դրական գնահատական է տալիս և գովասան-
քով է խոսում այն թագավորների և իշխանների մասին, որոնց
ժողոծունեությունը իր կարծիքով օգտակար է եղել երկրին և ժո-
ղովրդին։

Խորենացու ոճը Մովսես Խորենացու «Հայոց պատմու-
թյունը» հայ գրականության հին հուշար-
ձանների մեջ առանձնապես աշքի է ընկնում նաև լեզվի և ոճի

բարձր կուլտուրայիվ։ Փատմության մեջ ընդգրկված ահաղին ժամանակաշրջանի անցքերի մասին հեղինակը գրել է սեղմ ու ճով։ Նա ամեն կերպ գիտակցաբար խուսափել է երկար ու ճուռմաբան արտահայտություններից ու նկարագրություններից և ձգտել է, որ ավելորդաբանություններով չմթափնվի շարագրանքի իմաստու։ Խորենացին լավ է համարում ընթերցողին գրավել գրվածքի ներքին իմաստի գեղեցկությամբ, ասածների ճշտությամբ, և ոչ թե զարդարում խոսքերով ու արտահայտություններու։ Այս առթիվ իր պատմության մեջ նա գրում է. «Այս պատմությունը հասարակ խոսքերով կանցնեմ, որպեսզի չկարծի, թե մենք ցանկանում ենք զարդարում խոսքերով գրավել, այլ մեր խոսքերի ճշմարտությունը փափագելով, որպեսզի շուտ շուտ և առանց կշտանալու կարդան մեր հայրենիքի պատմությունը։ Մի ուրիշ տեղ. «Այս երկու ծանր նեղություններն են, որ քո հարցասիրությունիցդ մեզ հասնում են, — համառոտություն և արագաբանություն։ Սոքա ևս պիտի լինին վսեմ և սլայծառ, Պղատոնի լեզվի նման, հեռու ստությունից և լի նորանով, ինչ ընդդեմ է ստության»։

Պարզությամբ ու սեղմությամբ հանդերձ Խորենացու լեզուն և ոճը սուր է և պատկերավոր։ Ժողովրդական բանահյուսությունը, որը նա օգտագործել է պատմական տեղեկություններ քաղելու համար, թեպետ ոչ Փալստոսի շափ, ուժեղ ազգեցություն է թողել նրա պատմելու եղանակի վրա։ Խորենացին գործածում է բազմաթիվ էպիտետներ, համեմատություններ, որոնք կամ ժողովրդական բանահյուսությունից են վերցված, կամ դրա օրինակով հեղինակն է ինքնուրույնաբար ստեղծել։ Մանավանդ շատ գեղեցիկ համեմատություններ ե անում ուազմի տեսարաններ նկարագրելիս։ Ահա մի օրինակ Զիրավի ճակատամարտի նկարագրելիս։ Այս մի օրինակ Զիրավի ճակատամարտի նկարագրությունից. «Իսկ երբ արեգակը ծագեց մեր գորքի դեմ, պղնձով պատաժ վահանների ճառագայթները իրեն մեծ ամպից փայլատակում էին սարերի շուրջը, և այնտեղից թըռչում էին մեր նախարարների քաջ զրահավորները, ինչպես կայծակի ճառագայթներ...»։

Խորենացու «Հայոց պատմություն»-ը թարգմանված է ուռաներեն և բազմաթիվ ելեկոպական այլ լեզուներով, ինչպես և վրացերեն լեզվով։ Նրա մասին տարբեր լեզուներով գրվել են

թարգմաթիվ Կոտոմնասիրություններ։ Խորենացու «Հայոց պատմություն»-ը ոչ միայն հայ ժողովրդի, այլև հայերի հարևան բոռ ժողովրդների պատմությունների ուսումնասիրման մեծարածք աղբյուրների թվին է պատկանում։ Խորենացին Վ դարի հաւաշշարհային կուլտուրայի ամենախոշոր դեմքերից մեկն է։

Մովսես Խորենացու անունով մեզ են հասել ուրիշ գրվածքներ էլ («Աշխարհագրություն», «Պիտոյից գիրք» և այլն), որոնց հարազատությունը սակայն վիճելի է։

ԵՂԻՉԵ

Կայանք Եղիշեն հայ պատմագրության ամենափայլը դեմքերից մեկն է. նրա գրած Վկարդանանց պատմությունը՝ դեպքեարի պատմականորեն հաջող պատմառաբանությամբ կարելի է հաշմեմատել Խորենացու Հայոց պատմության հետ։ Անցյալի բառնասերներից ոմանք այն սխալ միտքն են զարգացրել, որ իր թեղիշեի գործը Շիսկական պատմություն չէ, որովհետև Ծեղինակը սառը դիտող չէ և չի բավականանում միայն դեպքերի արձանագրությամբ, այլ շատ խորհրդագություններ է անում և ձգտում է մարդկանց ոգևորել ու զգացմունքները բորբոքել. մինչդեռ միանդամայն դրական գլուխ է, երբ Եղիշեն պատմական դեպքերի պասիվ դիտող չէ, և աշխատել է նկարագրած անցքերը լուսաբանել, գնահատական տալ։ Այս բանը, ընդհակառակն, բարձրացնում է նրա պատմության գիտական արժեքը։

Եղիշեի կյանքի մասին մեզ շատ փիլ տեղեկություններ են հաշմանդամ իրեն համարում է Վարդան Մամիկոնյանի դեպքակարությամբ պարսից իշխանության դեմ տեղի ունեցած առաջատար պատմության ժամանակակից և դեպքերից շատերի ականատեսութեան։

Մի հին ճառընտիրի^{*}) մեջ Եղիշեի մասին ասված է, թե նույնական զրագարի բանակի զինվորներից էր և նրա զպրապետը՝ որ պատմամբության պարտությունից հետո թողնում է զինվորական ծառայությունը և զառնում կրոնավոր, հետո առանձնանալով Մոկաց լեռները, իր անձը նվիրում է ճգնակեցության։ Այդ ժամ-

* Հնտիր ճառերի ժողովածու

մանակ էլ նա դրում է իր աշխատովիցումը՝ «Վարդանանց պատշաճությունը»:

Եղիշեի «Վարդա-
նաց պատմությունը» վանդակությունը կազմում է 451 թվանին
և գրական լծի գեմ ծագած ժողովրդա-
կան մի մեծ ապստամբության մանրա-
կերավորությունը մասն նկարագրությունը։ Եղիշեի գրած
պատմությունը գիտական գործ լինելով հանդերձ, միաժամանակ՝
մի սրանչելի էպոպեա է։ Սկզբից մինչև վերջ այն գրված է ու-
ժեղ շնչով, պատկերավոր, փայլուն ոճով և լեզվով։ Դրամատի-
կական մեծ պաթոսով Եղիշեն նկարագրում է հայ ժողովրդի հե-
րոսական պայքարը պարսկական բռնակալության դեմ։ Նա հայ-
բենասիրական հորդ զգացմունքով գովերգում է այդ պայքարի
հերոսներին, իսկ դավաճաններին և ժողովրդին ստրկացնել ձըգ-
տող բռնակալներին նկարագրում է մեծ ատելությամբ։ Եղիշեի
պատմության մեջ բավական ուժեղ են նաև կրոնական զեղում-
ները, մի բան, վոր այն ժամանակվա համար շատ հասկանա-
լի էր։

Եղիշեկի պատմության մեջ, ինչպես Փալստոսի մոտ էր, սկառամական անձնավորություններից շատերը միաժամանակ Արեգակնայի հետական կերպարներ են՝ բնավորության յուրահատուկ դժեռով։ Այդպես են, օրինակ, ապստամբության ղեկավար Վարդան Մամիկոնյանը, նրա հակառակորդ Վասսակ Սյունեցին, սլարսկական բռնակալ Հազկերտը, նրա հազարապետ Միհրներ սհեր և ուրիշ անձնավորություններ։

Եղիշեն մարդկանց և գեղքերը նկարագրելիս հաճախ համեմատություններ է անում, որոնք միշտ էլ ինքնատիպ ու գեղեցիկ են և միաժամանակ հաջող կերպով բացահայտում են նկարագրված մարդու բնավորությունը և գեղքի բնույթը։ Օրինակ, Հաղեկերտի կատաղի զայրուցիթի բռնկումը մի տեղ պատկերացված է տյապես։ «... մի չար դեմ պես չեր դադարում ձմռան բուքը հուզելուց և շարժելուց։ Այսպես նման էր մի ծովածուփ ալեկոծ խոռվության, ոչ թե մի քիչ երեսից, այլ անդունդներից էր բարձրանում՝ փրփրած և կուտակված և վիշտապահայն որոտալով։ Ապագանաբար գոշելով՝ իր տիեզերական իշխանությունն առնասարակ դողացնում էր, կարծես թե փուլ գալով, համաձաւվալ տաշ-

წოიძელია է բոլոր լեռների, ձերերի և խոր տեղերի վրա՝ միանդաւ մայն ավերելու բոլոր գեղցցիկ դաշտերը»:

Մի սպիր տեղ. Այն ժամանակ թագավորը լեղից ավելի դառնացած՝ ծովի պես հուզվում էր իր ներսում կամավոր մաղձով, և քթից ու բերնից առհասարակ ջերմախառն գոլորշի էր դուրս դալիս, ինչպես սաստիկ հնոցից թանձրացած ծովմբ:

Եղիշեն վառ պատկերներով նկարագրում է ապստամբության տարերային թափը և արագ ծավալումը։ Առանձին գեղեցկություն ունեն նրա պատմության մեջ նաև պատերազմական տեսարանների նկարագրությունները, մանավանդ հայկական և պարսկական զորքերի միջև տեղի ունեցած պահավոր ճակատամարտի նը-կարագիրը։ Այստեղ, ինչպես և ամբողջ ապստամբության նախապատրաստության ու ղեկավարության նկարագրության ընթացքում, Եղիշեն ցայտուն կերպով ցուցադրում է իր սիրած հերոսի՝ Վարդանի բնավորության գծերը և հայացքները։ Վո՞րքան բնուրոշ է, օրինակ, կովից առաջ զորքին խրախուսելու համար արտասանած նրա ճառը։ «Ո՞վ քաջ նիզակակիցներս, — ասում է Վարդանը, ... վախենալով չվհատենք հեթանոսների բազմությունից, թիկոնք շղարձնենք մի մահկանացու մարդու ահազին սուրից, որովհետև եթե տերը մեր ձեռքը տա հաղթությունը, կսատաւեցնենք նրանց զորքերը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը։ Եվ եթե այս պատերազմի սուրբ մահովը հասած է մեր կյանքի վախճանը, ընդունենք որտի ուրախությունով, միայն թե վաստությունը շնառնենք քաջության»։

ԱՀԱ նաև պատերազմի նկարագրությունը. «Երբ այսպես պատրաստվեցան, երկու կողմերն էլ լի սրտմտությամբ և մեծ քարկությամբ զայրանում էին և երկուսն էլ իրար վրա էին հարձակվում զաղանային ուժով: Եվ երկու կողմերի խառնաշփոթ աղաղակը ճայթումներ էր հանում, ինչպես իրար զարնվող տմպեսի մեջ, և ճայների հնչումը դրդացնում էր լեռների քարանձավները: Սաղավարտների զատությունից և զրահավոր զինյալների արտափայլումից ճառագայթներ էին արձակվում՝ ինչպես արեգակից: Նաև շատ սրերի շողալուց և բազմախառն նիգակների ճոճումից ահագին հրձիգություններ էին եռում՝ կարծես երկըն-քից: Եվ ո՞վ կարող է ասել ահավոր ճայների մեծամեծ շփոթը, թե ինչպես վահանավորների կոփյունը և աղեղների լարերի

Հայթմունքը առհասարակ խլացնում էին ամենքի ականջները։
Բացի գեղեցիկ համեմատություններից, Եղիշեի պատմելով
ունին առանձին հմայք են տալիս նաև նրա աֆորիզմները։ Նա
սիրում է, ամեն մի պատեհ առիթով մի աֆորիզմ ասել։ Օրինակ՝
«Լավ է կույր լինել աշքով, քան կույր մտքով»։ «Զհասկացված
մահը՝ մահ է, հասկացված մահը՝ անմահություն»։

Եղիշեի պարզանանց պատմությունը՝ թարգմանված է ոռու
սերեն, փրանսերեն և մի շարք այլ լեզուներով։

Դ. Ա. Զ. Ա. Ր. Փ. Ա. Ր. Պ. Ե Ց Խ

Կայանք
V դարի հայ պատմիչների փայլուն հառ
մաստեղության վերջին ներկայացուցիչը;
Դադար Փարպեցին է; Փարպեցին ծնվել է Փարպի գյուղում մո-
տավորապես 440—443 թվերին։ Սկզբնական կրթությունն ստացել
է վրաց Աշուած Բգեշիսի տանը Վահան Մամիկոնյանի հետ միա-
սին. այնուհետև գնացել է Հունաստան սովորելու, որտեղից վե-
րադառնալուց հետո, մի քանի տարի ապրել է Մյունիքում։ Երբ
Վահան Մամիկոնյանը Հայաստանի մարզպան է դառնում, Դա-
դարին նշանակում է Վահարշապատի վանքի վանահայր։ Եատ
շանցած, խալարմիտ հոգևորականությունը նրա դեմ հալածանք
է սկսում, նրան խիստ կերպով զրագրում են մարզպանի և
կաթողիկոսի մոտ։ Կերչիններս երես են դարձնում Վահարից,
ուստի նա ստիպված է լինում փախչել Հայաստանից։ Փախստա-
վայրից նա նամակ է գրում մարզպան Վահանին, որտեղ ապա-
ցուցում է իր անմեղությունը։ Վահանը համոզվում է այդ բա-
նում, և Դադարին կանչելով Հայաստան, հանձնարարում է պատ-
մությունը գրել։

Փարպեցուց մեզ հասել է երկու աշխատություն։ «Հայոց
պատմություն»-ը և «Ստախոս աբեղաների մեղադրություն»
թուղթը։

**Փարպեցու «Հայոց
պատմությունը» եվ
«բուղը»**
կըսելով գրերի ստեղծման շրջանից՝ գլխա-
վորապես կանգ է առնում պարսկական տիրապետության դեմ
Հայաստանում ծագած երկրորդ խոշոր ապստամբության վրա։

(481—84 թ. թ.), որ այս անգամ վերջանում է Հաղթանակով։
Փարպեցին իր պատմությունն ավարտում է ապստամբության ղեա-
կավար Վահան Մամիկոնյանին Հայաստանի մարզպան նշանա-
կելու դեպքով ու այդ առթիվ եղած հանդիսավոր արարողու-
թյունների նկարագրությամբ։ Զաղար Փարպեցին պատկանում է
հայ ազնիվ հայրենասերների թվին։ Նա էլ Եղիշեի նման մեծ
պաթուով է նկարագրում ապստամբության մասնակիցների քա-
շագործությունները և նրանց անձնուրաց հաստատակամությունը։

Փարպեցին իր պատմությունը գրել է գիտնականի մեծ հըմ-
տությամբ։ Նա, ինչպես առհասարակ հայ պատմիչները, աչքի է
ընկնում գրելու շափի զգացմամբ։ Հայ պատմիչները ամեն կերպ
աշխատել են իրենց գրվածքին կիրթ ու վայելու ձև տալ, բո-
վանդակությունը մասերի բաժանելիս պահպանել համաշափու-
թյուն։ Փարպեցին իր գործի առաջարանում պատմագրի աշխա-
տանքը պատկերացնում է այսպես. «... Պետք է խոսքերի վայե-
լու գասավորություն, ինչպես կանոնավոր գիտությունը պահան-
ջում է, պատկառանքով ստույգ գրել, որ իմաստասերները լսե-
լով շպարսավեն. ավելորդ խոսքերով նոր բան չհորինել, եղած-
ները շպակասեցնել՝ անփուլթ համառոտությամբ պատմելով նը-
րանց մասին, այլ բոլորը հրապարակ հանել ողջախոհ զգուշու-
թյամբ։» Փարպեցին հաջողությամբ իր «Հայոց պատմությունը»
գրել է այն պահանջների համաձայն, ինչ որ նա գեղեցիկ կեր-
պով ուրվագծել է առաջարանի այս տողերի մեջ։

Զաղար Փարպեցու «Ստախոս աբեղաների մեղադրություն»
վերնագրով թուղթն ուղղված է Հայաստանի մարզպան Վահան
Մամիկոնյանին, գրված է Ամիդ քաղաքում, ուր ստիպված էր ե-
ղել նա փախչել։ Այդ գրությունը մեծ հետաքրքրություն ներկա-
յացնող փաստաթուղթ է նախ այն պատճառով, որ պարունակում
է Փարպեցու համարյա ողջ կենսագրությունը, բայց ավելի նշա-
նակալից է այն, որ դրա մեջ պատմիչը հայ հոգևորականության
պարբերն ու ստոր արարքներն է մերկացրել։ Նա մարզպան Վա-
հանին առած թղթում սրամտաբար և համարձակությամբ հերքում
է իր մասին տարածված լուրերը և հարձակվելով դրանց տարա-
ծող հոգևորականության վրա՝ բազմաթիվ փաստերով ապացու-
ցում է նրա շահամուլությունը, խարդախությունը, տփիտությունը
և խալարամտությունը։ Նա բերում է մի քանի ցնցող փաստեր։

թե ինչպես շատ գիտնական մարդիկ տանջվել ու հալածվել են հոգեռականների ձեռքից և մահվան դուռը հասել: Այսպես՝ նա պատմում է, թե ինչպես նրանց հալածանքները մահվան դուռն են հասցրել Մովսես փիլիսոփային (ոմանք կարծում են, թե խոսքը Մովսես Խորենացու մասին է), հետո ոսկորները գերեզմանից հանել են տվել և գետը ձգել:

Ենորհիվ իր բովանդակության այս գծի, Փարաբեցու թուղթը շատ սիրելի է եղել բոլոր նրանց համար, որոնք պայքարել են հոգեռականության դեմ: Պատահական չէր, անշուշտ, որ 60-ական թվականների հայ խոշոր դեմոկրատ-հեղափոխական հրապարակախոս և գրող Միքաել Նալբանդյանը թարգմանեց այն և հրատարակեց մանրազնին ծանոթություններով:

Դազար Փարաբեցու աշխատությունները թարգմանվել են եվրոպական մի շարք լեզուներով:

ՀՈՎՃԱՆ ՄԱՍԻԿՈՆՅԱՆ, ՍԵԲԵՌՍ, ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՋԱՏՎՈՅԻ ԵՎ ՂԵՎՈՒՄԻ

Ամբողջ VI դարի ընթացքում հայ ժողովուրդը անհավասար հերոսական կոիվ էր մզում Պարսկաստանի և Բյուզանդիայի դեմ, իսկ VII դարում Հայաստան ներխուժեցին արաբները, որոնք մասսայական կոտորածներ արին ու ժողովրդին ծանր հարկերի տակ դրին:

Չնայած այդ բոլորին, հայ պատմագրությունն անընդհատ շարունակվել է և միշտ էլ ունեցել է իր խոշոր ներկայացուցիչները. իսկ գրականության, արվեստի և առևասարակ կուլտուրայի մի քանի ճյուղերը նույնիսկ ավելի են զարգացել: Այսպես օրինակ, խիստ շատանում են դավանաբանական գրվածքները և ուժեղական է եկեղեցական բանաստեղծությունը: Իսկ VII դարից հայ զանում է եկեղեցական բանաստեղծությունը, իսկ VIII դարից հայ ճարտարապետությունը մեզ թողել է իր արվեստի մի այնպիսի գլուխ գործոց, որպիսին Զվարթնոցն է: Այս եկեղեցին, որի ավերակները պահպանվել են մինչև օրս էլ, համաշխարհային ճարտարապետական արվեստի հիմքմունք առաջացնող նմուշներից մեկն է:

V դարից հետո հանդես եկած հայ պատմիչները, օգտագործելով և շարունակելով իրենց նախորդներին, գերազանցապես

Շամանակակից անցքերի մասին են պատմելու Բավական թվով դրավոր աղբյուրներ ունենալու և նկարագրված պատմական անցքերին ժամանակակից լինելու պատճառով հայ պատմիչները, բացառությամբ մի քանիսի, այլևս այն շափով կարիք չեն գդանելով դիմելու ժողովրդական բանահյուսության և օգտագործելու այն, որքան այդ անում էին V դարի պատմիչները:

Բացառություն կազմող պատմիչներիցն է Հովհան Մամիկոնյանը, որի «Պատմութիւն Տարոնոյ» վերնագրով գիրքը պարունակում է հայ պարսկական կոիվների շուրջ հյուսված էպիկական գրուցներ: Այդ գրուցների կենտրոնական դեմքը Գալլ Վահանն է, որի բնավորությունը շատ գերերով հիշեցնում է Ողիսեսին: Սա թշնամու մեծ բանակները ջարդում է իր փոքրաթիվ զորքով, միշտ դիմելով ճարպիկ հնարապիտության և օգտագործելով հակառակորդ բանակի հրամանատարների տիմարությունը:

Հովհան Մամիկոնյանի գրի առած այդ էպիկական գրուցներն անմիջապես նախորդել են հայ ժողովրդական մեծ էպոսին՝ «Սասունցի Դավթին», որ ստեղծվել է VII—X դարերի ընթացքում: Ինչպես «Սասունցի Դավթին»-ում, այնպես էլ Հովհան Մամիկոնյանի գրի առած էպիկական գրուցներում, ուժեղ արտացյալություն է գտել ժողովրդական խորտակիշ սատիրան թշնամիների նկատմամբ: Այսպես, նրա պատմության մեջ բառացիպահանվել է մի երգիծական հատված, որտեղ ժողովուրդը ծաղրում է թշնամի բանակը՝ նրա կրած մեծ կորուստների համար.

Կերան գաղանք զմարմինս դիականցն վարագայ,
և գիրացան,

Կուզ կերեալ, ուտաւ որպէս դարձ,
Աղուէս՝ հպարտ եղեւ քան դառիւծ.
Գալլ՝ քանզի շատակեր էր պայթեաց,
Եւ արշ՝ քանզի զոր ուտէն շմնայ առ ինքն ի
սովու մեռաւ.

Անգեղք՝ քանզի ագահք էին՝ նստան և այլ ոչ
կարացին վերանալ.

Մկումք՝ քանզի շատ կրեցին ի ծակսն ոտքն մաշեցան:*)

*) Գաղանները կերան վարագի լեշերը և գիրացան:—
Կուզը կերակ և արշի պէս վքվեց.

VII դարի մյուս նշանավոր պատմիչներն են Սեբեոսը և Մովսես Կաղանկատվացին, իսկ VIII դարից հայտնի է միայն մի պատմիչ՝ Ղելոնդ վարդապետը։ Սրանցից Սեբեոսի և Ղելոնդի գրած պատմությունները մեծ կարեռություն ունեն ոչ միայն Հայաստանում, այլև VII—VIII դարերի ընթացքում Սեբեավոր Արևելքի բոլոր երկրներում տեղի ունեցած անցքերի ուսումնասիրության համար։ Հայտնի է, որ VIII դարում արաբները պատմագրություն չունեին, արար ժողովրդի այդ շրջանի կյանքի և սովորությունների մասին տեղեկություններ է տալիս միայն Ղելոնդ պատմիչը։ Իսկ Մովսես Կաղանկատվացու գրած պատմությունն իր բովանդակությամբ մի եղակի աշխատություն է։ Կաղանկատվացին միակն է, որ գրել է հնում Հայաստանին սահմանակից բարեկամ մի երկրի և ժողովրդի, այն է՝ աղվանների և նրանց աշխարհի պատմության մասին։

ՇԱ.ՊՈՒՀ ԲԱ.ԳՐԱ.ՏՈՒԽԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱ.ՍԽԱՆԱԿԵՐՏՅԻ ԵՎ ԹՈՎԱՄՈ. Ա.ՐԾՈՒԽԻՆԻ

Շապուհ Բագրատունին, Հովհաննես Դրասխանակերտցին և Թովմա Արծրունին ապրել են IX դարում։ Վերջին երկուսի կյանքը տևել է մինչև X դարի սկզբները։

Շապուհ Բագրատունին, որի գրած պատմությունն ընդգրկել է իր ապրած ժամանակաշրջանի անցքերը, հայ առաջին պատմիչն է, որ եղել է աշխարհական մարդ։ Նա Հովհան Մամիկոնյանի նման գրել է պարզ և ժողովրդական խոսակցական ոճին մոտ լեզվով։ Դրասխանակերտցին Շապուհ Բագրատունու պատմության մասին ասել է, որ այն գրված է «գեղջկական ոճով»։

Դրասխանակերտցին և Արծրունին աշքի են ընկնում իրենց շարադրանքի փայլուն հոկտորական և երեխմն գեղարվեստական ոճով։ Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու գրած պատմությունները առաջին առաջարկությունները են Հայության առաջնային գործառնությունները։

Աղվեսը առյօնձից ամելի հայրա դարձալ։

Գայլը շատակերությունից տրաքեց։

Արջը սովից մեռալ, որովհետև կերածը չի մնում նրա մեջ։

Անգղները շատ ուժելուց նոտեցին և չկարողացան բարձրանալ։

Մկների ստքերը մաշվեցին՝ իրենց բները շատ բան կրելուց։

Յյունները, Ղելոնդի և Բագրատունու գրածների նման, ընդգրկում են հայ կյանքի այն ժամանակաշրջանը, երբ հայ ժողովուրդը հերոսական պայքար էր մղում արաբական լծից ազատվելու համար, երբ մեկը մյուսի հետևից տեղի էին ունենում մասնակական ապստամբություններ։ Ահա այդ ժողովուրդական ապստամբություններից մեկի (սասունցիների) գեղեցիկ պատկերավոր նըւկարգագրությունը Թովմա Արծրունու մոտ, մի ապստամբություն, որ ամենայն հավանականությամբ «Սասունցի Դավիթ»-ի ստեղծման անմիջական աղդակներից մեկն է հանդիսացել։

«Երբ ձմեռվա կեսն եղավ, և խստացած մրրկալից օդը միգախառն թանձրացավ, և ձյան հաստ հարթահատակ շերտը դիզվեց այն լեռան շուրջը, որտեղ Տարոն քաղաքն էր շինված, այնտեղ բնակություն հաստատեց տաճկաց զորավարը՝ նման օրհասական արջին, որ ձմեռվա օրերին արմատներով պարենավորվելով իր որջում կյանքի և մահու մեջ է ապրում... Այնպես էլ տաճկաց Ցուսուք զորավարը ձմեռն անց էր կացնում, որպեսզի սրով, գերությամբ և մեծ հարվածներով Հայոց աշխարհի վրա դուրս գա... իրենց հրամանով աշխարհի կարգը սահմանեն, և իրենք ընտանիքներով նստեն հայոց ամրություններում։

Երբ լեռների բնակիչները տեսան... թե իրենք էլ նույն աղետը պիտի կրեն, ինչ դաշտայինները կրեցին, այն ժամանակ Խութի կամավոր զինվորների միաբան բազմությունը վրա հասավ... Եվ վերցնելով իրենց տեսկերը, որ միշտ պատրաստ կրում էին անտառներում որշացող գաղանների և վերահաս թշնամիների դեմ, եկան քաղաքի վրա և պաշարեցին այն և զորքը սրասաւտակման մատնեցին...։ Սակայն կարծեցյալ մարզպանն ինքը փախչում և իրեն գցում է բարձրաբերձ եկեղեցին...։ և այնտեղ գմբեթի խորշերում թագնվելով, ահասարսուռ դողի մեջ է ընկնում։ Կամավոր զինվորները շրջապատեցին եկեղեցին, մի քանիսը գմբեթի անցքերով բարձրացան դեպի նա, մեկը տեղը խըրեց նրա թոքերի տակ՝ անութիւն և թիկունքի մեջտեղ... նա շոմնը իմեց և էշի թաղումով թաղվեց։

Այսպես ահա Սասունի լեռնականները ոչնչացնում են Հայաստան կողոպուտի եկած արաբական մեծ բանակը և սպանում են նաև զորապետ Ցուսուքին։

Մեր պատմիչ՝ գրողներն իրենց աշխատություններում արտա-
ցոլելով ժողովրդի այդ հերոսական կոփիներն օտարերկրյա ըըռ-
նակաների դեմ, երբեմն կերտում են կատարյալ գեղարվեստա-
կան էպոպեներ։ Նրանց երկերում պատմագրությունը և վիպա-
գրությունը հաճախ հյուալում են միմյանց։

ՄԻՋԻՆ ՇՐՋԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ X—XII ԴԱՐԵՐՈՒՄ

Ա. Ռ. Զ. Խ. Բ. Ա. Ժ. Խ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովրդական բանահյուսության զարգացումը միջին
դարերում սերտ կապված է այն հերոսական ազատագրական
պայքարի հետ, որ ժողովուրդը մղել է արաբական նվաճողների
դեմ։ Հայաստանի անկախության համար։

IX դարի վերջում արաբական դաժան բռնակալական տիրա-
պետության դեմ մղած երկարատև հերոսական պայքարով հայ
ժողովուրդը ձեռք բերեց իր անկախությունը։ Արաբական խալի-
ֆաթը ստիպված եղավ 885 թվին իրու Հայաստանի թագավոր
ճանաչել իշխան Աշոտ Բագրատումոն։ Բագրատումիների թագա-
վորությունը, որ տարածվում էր Հայաստանի մեծ մասի վրա,
տևեց մինչև 1077 թիվը։ 914 թվին թագավորի տիտղոս ստացան
նաև Արծրունիները Վասպուրականում։

Հայաստանի ժողովրդական ապստամբությունները, հաղթանակ-
ները օտարերկրյա նվաճողների նկատմամբ, անկախության նը-
կաճումը աղբյուր հանդիսացան մասնավորապես վիպական բա-
նահյուսության նորանոր կոթողներ կերտելու։ Ազատագրված ժո-
ղովուրդն իր դարավոր պայքարը և պատմական հաղթանակը
պատճենագրեց հերոսական «Սասունցի Դավիթ» էպոսով։

(Ժողովրդական էպոս)

Միջնադարյան հայ գեղարվեստական կուլտուրայի պատմության մեջ բացառիկ տեղ է բռնում «Սասունցի Դավիթ» ժողովրդական հերոսական էպոսը:

«Սասունցի Դավիթ»-ը ձևավորվել է VII—X դարերում և բառավոր կերպով սերնդից սերունդ անցնելով՝ բազմաթիվ պատում և ներով հասել է մինչև մեր օրերը։ Հայկական մեծ էպոսը Մշունիստ գյուղի բնակիչ ասացող Կրպոյից առաջին անգամ գրի է առել ու 1874 թվին Պոլսում՝ իր «Գրոց ու բրոց» և «Սասունցի Դավիթ» կամ Մհերի դուռա վերնագրով գրքում՝ հրատարակել է նըշանագրով բանահավաք Գարեգին Սրվանձտյանը։ Դրանից հետո էպոսի մի այլ պատում 1886 թվին էջմիածնում, Մոկաց երկրի Գինեկանց գյուղի բնակիչ նահապետից գրի է առել ու 1889 թվին Շուշում «Դավիթ և Մհեր», ժողովրդական դիցազնական վեպ։ Վերնագրով հրատարակել գիտնական Մանուկ Սբեղյանը։ Հետագայում մի շարք բանասերներ գրադիւն են այս մեծ էպոսով ու տարբեր ժամանակներում հրատարակել նոր պատումներ։ Սահմանական միայն սովորական շրջանում ուժեղ թափ ստացավ էպոսի հավաքման ու հրատարակման աշխատանքը։ Կոմունիստական պարտիան և Սովետական Կառավարությունը բարձր գնճատելով «Սասունցի Դավիթ» հանճարեղ էպոսի գեմոկրատական-հայրենասիրական էությունը՝ 1939 թվին կազմակերպեցին նրա հազարամյա հոբելյանը։ Հոբելյանը առիթ հանդիսացավ վաթսունի հասնող պատումներից կազմելու «Սասունցի Դավիթ» համահավաք տեքստը։ Համահավաք տեքստը թարգմանվեց սովետական եղբայրական ժողովուրդների լեզուներով (ոռակերեն, ուկրաիներեն, վրացերեն, աղբբեշաներեն, բելոռուսերեն, չուվաշերեն և այլն)։ Հնկեր Ստալինի ցուցանակով «Սասունցի Դավիթ» հոբելյանը դարձավ Սովետական Միության կուլտուրայի տոնը։ Հայկական ազգային հերոսական էպոսը սրտագին կերպով ու հիացմունքով մեծարեցին սովետական բոլոր ժողովրդները։

Էպոսի ստեղծման էպոս առաջանական գագառացանքը եղի կյանքի համար կենսական նշանակությամբ ներկայացնելու թյուն ունեցող պատմական անցքերի շըրջանում։ Այսպես, իսպանական «Միդա» էպոսը ստեղծվել է արաբական նվաճողների դեմ իսպանական ժողովրդի մղածաղատարական կոփվների ընթացքում։ Խուսական «Ասք Իգորի գնդի մասին» էպոսը կերտվել է պոլովցների հարձակման դեմ վարած կոփվների ընթացքում, — մի էպոս, որի մեջ, ինչպես Մարգան է ասել, մոնղոլական արշավանդների նախորյակին ուսւիշանների միացման կոչ էր արվում։ «Սասունցի Դավիթ»ն էլ ստեղծվել է այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը հերոսական պայքար էր մղում արաբական խալիֆաթի դեմ՝ ազատություն և անկախություն նվաճելու համար։

Ինչպես ամեն մի ժողովրդական էպոս, այնպես էլ «Սասունցի Դավիթը», իրական պատմական եղելությունների, ժողովրդի կյանքի և հասկացողությունների գեղարվեստական խոր ընդհանուրացումն է։ Էպոսի մեջ չի պահպանվում անցքերի ժամանակագրական կարգը և կոնկրետ նկարագիրը, այնպես որ Սասունցիուցանների մղած կոփվները և տարած հաղթանակները Բաղդադի Խալիֆայի և Մորա Մելիքի դեմ՝ արաբական բռնակալության դեմ հայ ժողովուրդի մղած բազմաթիվ հերոսական կոփվների ընդհանրացումն է։ Մագելով Սասունում, «Սասունցի Դավիթը» տարածվել է ամբողջ ժողովրդի մեջ, հարստացել է բովանդակությամբ ու գարձել հայ ազգային էպոս։

«Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսը պատկանում է մարդկության երեկե ստեղծած հանճարեղ գեղարվեստական գործերի թվին։ «Սասունցի Դավիթ» գեղարվեստական մեծ արժեքը պայմանագրությունը է պատմական իրականության ուսալիստական ընդհանրացմամբ, համամարդկային իդեաներով, հերոսների բնակորության գետեղղական ու բազմակողմանի պատկերացմամբ, կուռ կառուցվածքով, հայկական վառ կոլորիտի պահպանմամբ, գործողության ուժեղ թափով և ոճի պատկերավորությամբ ու պարզությամբ։

«Սասունցի Դավիթ» «Սասունցի Դավիթ» պատմական հիմքը և կառուցվածքը բովանդակությունը հայ ժողովրդի դարաշնոր պայքարն է արաբական նվաճողների դեմ՝ Հայաստանի

լավագույն զավակների հերոսական սխրագործություններն այդ պայքարի ընթացքում:

«Սաստմցի Դավիթը» բարդ գեղարվեստական կառուցվածք ունի: Այն բաղկացած է չորս ինքնուրույն ճյուղերից և ամեն մի ճյուղը արտացոլում է Հայոց դյուցազների մի սերնդի պայքարը օտար բռնակալների դեմ, Հայաստանի անկախության և ազատության համար:

Առաջին ճյուղը պատկերում է Սանասարի և Բաղդասարի, երկրորդը՝ Սանասարի որդի առյուծածեկ Մհերի, երրորդը՝ Մհերի որդի Դավիթի և չորրորդը՝ Դավիթի որդի փոքր Մհերի կոիվը:

Դյուցազնների յորբաքանչյուր սերնդը պայքարում է պատմական տարբեր հանգամանքներում և նոր, արդեն փոփոխված պայմանները էպոսը հարստացնում են գեղարվեստական նոր կոնֆլիկտներով, գործողություններով ու պատկերներով:

Սանասարի և Բաղդասարի ճյուղում պատկերվում է Բաղդադի ամենազոր Խալիֆի արշավանքը Հայաստանի վրա, Դագիկ թագուրի դիմադրությունը և պարտությունը, Հայոց դյուցազնների առաջին սերնդի ծնունդը Գագիկի դստեր Շովինարից, որ հըղիացել էր Հայրենի երկրի ջրից: Պատմվում է, թե ինչպես ջրից սերված պատանի դյուցազնները Բաղդադում ջարդում են Խալիֆին, ազատագրում Հայաստանը և հիմնադրում Սասնա անառիկ բերդը, որը դառնում է ժողովրդի ազատության նշանաբանը:

Այս ճյուղի ամենաբարորդ կողմերից մեկն էլ այն է, որ ջրից սերված Սանասարը ծովի հատակից ստանում է անհաղթության ասպազնեն՝ Քուսկիկ Ջալալին, Թուլր-Կայծակին, Խաչ-Պատարագին: Այդ ասպազնը հետագայում ծառայում է դյուցազնների բոլոր սերնդներին:

Սանասարի ամուսնությունը Քաջանց թագավորի աղջկա՝ Դեղնուն-ծամի հետ ապահովում է դյուցազնների սերնդի շատունակում: Սանասարն ունենում է որդիներ, որոնցից հոր տիտանական ուժով և Հայրենասիրությամբ օժտված է Մհերը:

Մհերի ճյուղում պատկերվում է Սանասարի մահից հետո Հայաստանի հարկատու դառնալը Մսրա-Մելիքին՝ Խալիֆի Հայորդին, և Մհերի պայքարն ու Հաղթանակը Մելիքի նկատմամբ:

Մհերի ճյուղում հանդիս են գալիս նոր կոնֆլիկտներ: Մհեր

իր կովում է Սաստմը սովոր մատնող առյուծի դեմ, հաղթում և դրա համար էլ կոչվում է առյուծածեկ Մհեր: Նա հաղթում է Սպիտականի տակ դմին, գերությունից ազատում Մելքոն թագավորի աղջկանը՝ Արմաղանին ու ամուսնանում նրա հետ: Նոր ու հոգեբանական բարդ դրվագ է Մհերի կենակցումը Մելիքի մահից հետո նրա կոնց հետ, երկրորդ Մելիքի ծնունդն այդ կենակցումից:

Մհերն ու Արմաղանն ունենում են մի զավակ՝ Դավիթին ու մեռնում:

Դավիթի ճյուղում արտացոլվում է Հայաստանի վիճակն ու պայքարը ավելի բարդ հանգամանքներում և այս ճյուղը հարուտ է նոր դրություններով: Այդ տեսակետից խիստ բնորոշ է Դավիթի մանկությունը Մըրում պատկերող վուկիլը:

Պատմական անախրոնիզմ է, բայց գաղափարական-գեղարվեստական մեծ երևույթ, երբ Մելիքին հաղթելուց հետո՝ Դավիթի կովում է Աշմու Շապուհի (Պարսկաստանի) և Բապը Ֆրենկի (Հոռոմի) դեմ ու պարտում նրանց: Դավիթի հաղթանակը Մսրամելիքի, Աշմու Շապուհի և Բապը Ֆրենկի նկատմամբ արտացոլում է հայ ժողովրդի ձգտումը՝ պարտված տեսնել իր բոլոր թշրիմիներին:

Դավիթի ամուսնությունը Խանդութ խաթունի հետ ստեղծում է գեղարվեստական նորանոր հանգուցներ: Այդ հանգուցները բացահայտվում են, երբ ծնվում է Դավիթի որդին՝ փոքր Մհերը:

Փոքր Մհերի ճյուղում արտացոլվում է Սասնա դյուցազնների վերջին սերնդի պայքարը Հայաստանի թշնամիների՝ Զըմբշկիկ Սուլթանի, Կողբադինի թոռների և այլոց դեմ: Մհերը մերկացնում է Հայրենիքի ներքին թշնամիներին՝ դավաճան հոգևորականներին: Երկարատև պայքարում նա համոզվում է, որ աշխարհում տիրող բռնությունները և շարիքները հովանավորվում են աստծու կողմից ու կոիվ է հայտարարում աստծուն:

Փոքր Մհերի ճյուղում ավելի է խորանում և բազմազան հայանակներով արտացոլվում ժողովրդական մասսաների դժգությունը աշխարհի անարդարության դեմ: Անարդար կյանքից դժգությունը Մհերը իր ասպազնությունը է ժայռում, սպասելով, մինչև որ հին աշխարհը ավերվի և ստեղծվի նորը, արդարը՝ խաղաղ աշխատանքի և աղատության հայրենիքը:

Հայ. գր. սատմ. | գիրք-ՂՅ

«Սասունցի Դավիթ» Ողջ միջնադարի հայ գեղարվեստական փղեական բովանդապահականության մեջ «Սասունցի Դավիթը» կուրյունը իր իղեական բովանդակության հարստությամբ բացառիկ տեղ է բռնում:

Հ դարում, երբ ձեւալորդել է «Սասունցի Դավիթը», գրականության մեջ դեռ ուժեղ էր եկեղեցական-կրոնական աշխարհակացությունը, որ քարոզում էր ժողովրդին համակերպվել ծանր իրականությանը: Մինչդեռ «Սասունցի Դավիթը» նախ և առաջ սովորեցնում և դաստիարակում է ժողովրդին պայքարել հինգ ծանր վիճակը փոխելու և նոր, երջանիկ կյանք ստեղծելու համար:

«Սասունցի Դավիթը» ունի իղեական մեծ բովանդակություն: Հայ ժողովուրդն այդ էպոսի մեջ խոր և ուժեղ կերպով արտահայտել է իր ուժի անպարտելիության գիտակցությունը, իր աղատամիրական ոգին, ջերմ սերը դեպի հայրենիքը, իր ցասումն ու ատելությունը՝ ուղղված ամեն տեսակ կեղեքիչների և բռնակալների դեմ, բոլոր ժողովուրդների աղատության ու եղբայրության վեհ գաղափարը, ազնիվ աշխատանքի կուլտը: Հենց այս իղեաներով էլ, որոնք միաժամանակ միջազգայնական ու համամարդկային են, պայմանավորված են «Սասունցի Դավիթ» էպոսի դյուցազում հերոսների գործողությունները և աշարժները:

Սանասարի եզրակացնական կերպարները Սանասարն ու Բաղդասարը Սասնա բերքագույն դիմագիրները և Սասնա դյուցազումների ների նախահայրերն են: Նրանք սովորական մարդիկ չեն: Նրանք զրային ծնունդ ունեն և զորանում, ուժ են առնում զրից: Սանասարն ու Բաղդասարը իրենց ծննդի հրաշքայնությամբ կապված են հայ ժողովրդական հնագույն առասպեկների հետ: Նրանք մարդկային պատկերի մեջ մարմնավորում են բնության ուժերը: Բնության արգասավորող տարերք՝ զրի ծնունդ հսկա Սանասարը զրից է հանում իր հրեղեն ձին՝ Քուռիկիկ Ջալալին, թուր Կեծակին և մյուս զենքերն ու զըրահները: Սակայն որքան էլ երկվորյակ եղբայրներն իրենց ծառագույն ու տիտանական ուժով կապված լինեն բնության հետ: Բնավորության գծերով նրանք իրական մարդիկ են, զժտված աշխարհության բարձր, հատկություններով:

Սանասարը և Բաղդասարը, ինչպես և նրանց հետնորդները, իրենց ֆիզիկական աճուրդի ուժը գործադրում են ոչ թե անձնական փառք վաստակելու, այլ միայն և միայն մարդկության, ժողովրդին որևէ բարիք գործելու համար: Բնորոշ է, որ երկու եղբայրները որոշում են նախ իրենց հետ եկած աղքատ ընտանիքների համար տներ շինել, հետո իրենց: Իսկ որքան պերճանիքների համար տներ շինել, հետո իրենց: Իսկ որքան պերճանիքների համար մարդիկ լսելով Սանասարի ու Բաղդասարի արարքների մասին, աշխարհի բոլոր կողմերից գնում են նրանց մոտ բնակվելու, որպեսզի ազատություն և աշխատանքի ապահովություն վայելեն:

Էնպես փահլեան էղավ Սանասար,
Որ էնոր ձեն աշխատք բռնեց:
Շատ մարդեր որ լսեցին, ասին.
«Աղբե՛ր, մենք նստեր ենք էստեղ, ի՞նչ.
Գող մարդեր ամեն ժամանակիկ՝
Կը գան, մեր ապրանք զարնեն, կը տանեն:
Ըհը՛, էն աստվածը, մենք կ'երթանք էղա Սասուն:
Որ Սանասարի, Բաղդասարի պես՝
Երկու զորեղ փահլեան կա.
Որ էդ տեղի մարդոց ոչ հարկ կ'առնեն, ոչ տուրք,
Որ մեկ մարդ մեր ապրանք զարնե տանիք:
Հա քիշ քիշ, հա քիշ քիշ գնացին էնոնց մոտ.
Շատացա՛վ, մեծ քաղաք էղավ Սասուն:

Մեծ Մեերի կերպարը Սանասարի որդիներից միայն Մհերն է ժառանգում հոր դյուցազնական բոլոր հատկությունները: Կաթնաղբյուրի զրից խմելով, Մհերն էլ է գերամարդկային ուժի տեր զառնում: Այդ սքանչելագործ Կաթնաղբյուրի գոյությունը էպոսում շափազանց խոր իմաստ ունի: Կուլի գնալուց առաջ Մհերի որդի Դավիթն էլ է խմում այդ աղբյուրի գաղափարը և մարմնով մեծանում, կրկնապատկում, եռապատկում իր զուրքը և մարմնով մեծանում, կրկնապատկում, զարդարությունը ուժը: Կաթնաղբյուրը՝ դա երկրի ուժն է, ժողովրդի հետ կապված լինելու գաղափարը:

«Սասունցի Դավիթ» էպոսի գործողության ընթացքում հերոսների ամեն մի սերունդ ավելի ու ավելի շատ սխրագործություններ է անում ժողովրդի համար, մարդկության համար: Այսպես:

Մհերը յոթ տարի պահում է սասումցիներին իր որսած կենդանիաներով, սպանում է Սպիտակ դեկին և նրա սև եղան, վերցնում է Մսրա Մելիքի գրած հարկը և այլն: Մհերին բնութագրող դյուցազնական ամենավեհ արարքներից է նաև այն, թե ինչպես նաև Մսրաից վերադառնալուց հետո, իմանալով, որ Արմաղանը երդվել է ամուսնուն իր մոտ լիովնել, և որ այդ երդումը խախտելու գեղագում, երկուան էլ կմեռնեն, այնուամենայնիվ, հայրենիքի շահերի համար երդմնազանց է լինում, զավակ է ունենում և մեռնում: Այդ անձնազության նպատակն էր նոր կյանք ծնել, Սասնա ճրագը վառ պահել:

Բայց հայ ժողովուրդն իր անպարտելի ուժը, իր լավագույն ձգտումները, խոհերն ու զգացմունքներն ամբողջական կերպով մարմնավորել է Մհերի որդու՝ Դավիթի պատկերի մեջ:

Դավիթը գեղեցկակազմ հսկա է: Ժողով Դավիթի կերպարը վորդն իր սիրած հերոսին մանկությունից իսկ օժտել է ազատասիրական ոգով: Նա սկզբից ևեթ չի հընազանդվում, չի ենթարկվում բռնակալ Մսրա Մելիքին, Խաղի ժամանակ Դավիթը բռնում է Մելիքի նետած հոլը և հանդիսականների առաջ խայտառակում նրան: Երբ Մելիքը պահանջում է Դավիթից Սասում վերադառնալուց առաջ, որպես հպատակության նշան, իր թրի տակից անց կենալ,

Դավիթ լրգնաց, շանցավ թրի տակով:
Կըշտո՞վ անցավ.
Ճկութ քսավ ի շարդու քար,
Քարեն կրա՞կ էլավ:

Զափազանց ցայտուն մի դեպք է, երբ Դավիթը քանդում է նոր Որսասարի պարիսպները և կաշկանդված կենդանիներին թողնում որ փախչեն: Նա չի կարողանում տեսնել նույնիսկ առատությունը կորցրած գազանին:

Մեծ է Դավիթի ցասումը ժողովրդին կեղեքողների և ազատության վրա բռնացողների դեմ: ալդպիսիներին նա առանց ինայելու ջնջում է երկրի երեսից: Նա շատ հստակ պատկերացում ունի կողբադիների և մելիքների մասին: Երբեք աշխատավոր ժողովրդի խաղաղ ու երջանիկ կյանքի նախանձախնդիր, նա առ

մեն անդամ խոր և ազնիվ զայրուցիով է լցվում այդ խաղաղությունն ու երջանկությունը վրդովողների դեմ, որոնց ոչնչացնելու համար վայրկյան անդամ չի հապաղում:

Թշնամու նկատմամբ Դավիթն իր գործողությունների մեջ արագ է ու վճռական: Երբ նա լսում է Մսրա Մելիքի Սասում մտնելու մասին, զայրուցիով քունն ու գինովությունն անմիջապես անցնում է և իսկույն պատրաստվում է Մելիքի դեմ կովի դնալ: Դավիթը երկար չի մտածում: Թշնամին մտել է երկիր, պկետք է անմիջապես դուրս վոնդել:

Դավիթը գերմարդկային ուժ ունեցող հսկա է, երբեք անարդար կոփվ չի մղում, չնայած տարած հաղթանակներին, նա ուրիշ ժողովուրդների ազատության վրա չի բռնանում, նրանց երկրները չի գրավում: Այսպես, օրինակ, Մսրա Մելիքին սպանելուց հետո Դավիթը նրա զորքին ոչ մի վնաս չի տալիս և թուշատրում է իրենց տները վերադառնալ: Դավիթը պարտվածներից հարկ չի վերցնում: Մսրա բանակի նկատմամբ ունեցած Դավիթի այս վերաբերմունքի մեջ, ինչպես և էպոսի բազմաթիվ այլ գործականներում, սահմանական կերպով դրսեռը վում է հայ ժողովրդական վեպի խոր ինտերնացիոնալիզմը: Դավիթի և արար ծերունի զինվորի խոսակցության մեջ հստակ պատկերացված է այն ճշմարտությունը, որ ժողովրդի և բռնակաների շահերը մեկ չեն, տարբեր են, իրար հակառակ: Այս տեսակետից շատ հետաքրքրական է նաև Դավիթի և Հռոմի Պապի կոմի գրվագը: Պապը, որ էպոսում անվանվում է Բապը Ֆրենկ, կամ Պապե Ֆրանկ, բանակ է ուղարկում Հայաստանի վրա: Դավիթն իսկույն դուրս է գալիս թշնամու դեմ: Պապի զորքը շարդուկով՝ լեղապատռ փախչում է: Դավիթը հաղթված զորքին այլևս չի վնասում, այլ պահանջում է որ թագավորի տեղը ցուց տան: Փախչողները ցուց են տալիս այն քաղաքը, ուր ապրում է իրենց թագավորը՝ Պապ Ֆրանկը: Դավիթը գնում է այդ քաղաքը և Պապին բռնելով, գլուխից կտրում է:

Դավիթը ոչ միայն Պապին է սպանում, այլև նրա բոլոր մեծավորներին, և իշխանությունը հանձնում է փոքրավորներին՝ ժողովրդին:

Պոշ մարդեր սպանեց,
Պստկներ տեղ գրեց, ասաց:
— Քանի դու ժիր եք, կոիվ միք է՛րթա:

Այսպիսի կարդ ու կանոն հաստատելուց հետո նա վերաբառնում է, չմոռանալով ժողովրդին պատվիրել.

— Որ դու նեղ կ'ընկնեք,
Ինձի՛ թուղթ գրեք, ես կը գամ:

Այսպիսով, Դավիթը պայքարում է ոչ միայն Հայ՝ ժողովրդին, այլև մյուս ժողովուրդներին էլ բռնակալների լծից ազատելու համար: Դավիթը թշնամի է թագավորներին ու նրանց մեծավորներին և անխնա ոչնչացնում է դրանց: Դավիթի ատելությունը աշխատավորության տածած ատելությունն է ֆեոդալականության նկատմամբ:

Դավիթն իսկական դյուցազն է: Նա պարզ է ու անկեղծ, թշնամու դեմ միշտ դուրս է գալիս ճակատ առ ճակատ, երբեք խորամանկության; իսքերայության չի դիմում: Աւղամտությունը, ջշմարտախոսությունը Դավիթի համար սրբություն են. Նրա համար մահվան է հավասար ասած խոսքը դրժելը, որոշածը շրկատարելը:

Դավիթի բնավորության մեջ, էպիկական վեհության հետ միասին, կա լիրիկական քնքություն: Դավիթի և Խանդութի սիրո ամբողջ պատմությունը բուռն թափով արտահայտված նուրբ ըզգացմունքների մի պատմություն է: Խսկ կոիվ գնալուց առաջ Դավիթի հրաժեշտի երգը ցուց է տալիս, թե նա որքա՞ն անկեղծ ու քնքույշ սիրով է սիրում ժողովրդին և որքա՞ն սերտ է կապված նրա հետ.

Օ՛ քուրեր, դուք կացե՛ք բարով:
Դուք ինձի քուրությո՛ւն էք արե:
Օ՛ մերեր, դուք կացե՛ք բարով:
Դուք ինձի մերությո՛ւն էք արե:
Բարի՛ դրկիցներ, դուք կացե՛ք բարով:
Դուք կացե՛ք բարով մեծ ու պստիկով:
Իմ դուռ-դրկիցներ, ձեր էրես շա՛տ եմ թուր,
Ինձ հալա՛լ արեք:

Բարի տանտիկիննե՛ր, ինչ հա՛յ կը թխե՞ք
Դավիթի անուն հիշեցեք:
Զահելնե՛ր, դուք է՛ւ, ինչ որ քեֆ կ'անեք,—
Դավիթի անո՞ւն հիշեցեք:
Իմ քուրե՛ր, մարե՛ր, իմ լա՛վ դրկիցներ,
Մնացե՛ք բարով:

Փոքր Սիերի Սանասար-Բաղդասարի սերնդի վերջին կերպարը ներկայացուցիչը՝ Փոքր Մհերը՝ իր նախորդների նման նախ և առաջ հայրենիքի և ժողովրդի բարորության նվիրված հսկա է:

Մհերը նախորդների նման իր աճուելի ուժը ծառայեցնում է մարդկությանը օգտակար գործերի համար: Այն հանգամանքը, որ էպոսում ասված է, թե Մհերը մի օր դուրս է գալու քարայրեց, ցուց է տալիս, որ Մհերը մարմնացնում է իր մեջ ժողովրդի հույսերը, լավատեսական հեռանկարները: Հենց Մհերի անման մնալու պարագան ժողովրդի ապագայի նկատմամբ ունեցած լավատեսության արդյունք է:

Դավիթի նման Մհերի գործունեության շրջանակներն էլ շատ լայն են և չեն սահմանափակվում միայն Սասունով: Նա շատ երկրներ է լինում, շատ ժողովուրդների մեջ է ապրում և բոլոր դեպքերում էլ օգնում է այդ ժողովուրդներին՝ ազատելով նրանց դաժան բռնակալներից, կեղեքիշներից և զանազան մարդակեր առասպելական դեմերից:

Անխնա է Մհերը թշնամիների նկատմամբ: Չմշկիկ Սուլթանի հետ ունեցած կովում նա չի հանգստանում, մինչև որ չի հանգնում նրա քաղաքում վերջին երդիկից բարձրացող ծուխը: Բայց միմնույն ժամանակ Մհերը շատ զգայուն և հոգատար է իր հարազատների նկատմամբ: Երբ սպանված Դավիթի զենքերը բերում են Սասուն, Մհերը սպում է նրանց վրա: Այդ սուզը հուզիչ է, հագեցված է խորը քնարականությամբ. դեպի ծնողն ունեցած սիրո զգացմունքն է հորդում նրա սրտից: Այդ զգացմունքի ավելի քան խոր ու գեղեցիկ արտահայտությունն է այն դեպքը, երբ անմահ ու անժառանգ Մհերը, ձանձրացած աշխարհից, հիշշում է իր ծնողներին ու գնում է այցելության նրանց գերեզմանաներին:

Մհերը աստվածամարտ է; Մհերը մերկացնում է Մատղաշը վանքի վանականների գավադրությունը հայրենիքի դեմ, ցուց է տալիս, թե ինչպես այսպիս կոչված աստծո ներկայացուցիչները, երկրում վտանգում են ժողովրդի կյանքն ու ազատությունը: Մհերը կռվի է կանչում աստծուն, նրան համարելով շարության և անարդարության հովանավորող: Սասնա դյուցազնը ճակատամարտում է աստծո ուղարկած հրեշտակների դեմ այնպես, ինչպես կռվում էր երկրային բռնակալների դեմ:

«Սասոմցի Դավիթ» էպոսի պայծառ պատկերված հերոսնեա
ըից են նաև Քեռի Թորոսն ու Զենով Հովանը»

Գեղի թորոսը և Զենով Հովանը պարզա-
պես մեծ ընտանիքի նահապետներ են։
Դավիթը, իբրև կրտսեր, սովորաբար լսում
է հարցում է Նրանց, Նրանցից զանազան խորհուրդներ է հարց-
նում։ Նրանք էլ ամեն կերպ հոգում են Դավիթի մասին, սիրում
են Նրան, երբ նեղության մեջ է ընկնում, օդնության են հաս-
նում և, որպես կյանքի մեծ փորձ ունեցողներ, բարի խրատներ
տալիս։ Հովանը մի հսկա է, որը էպոսի մեջ հաճախ հանդես է
գալիս որպես ուժեղ կամք ունեցող և դյուցազնական գործեր
կատարելու ընդունակ անձնավորություն։ Այս տեսակետից շատ
բնորոշ է այն գեպքը, երբ Զենով Հովանը երազ տեսնելով իմա-
նում է, որ Դավիթի կյանքը վտանգի մեջ է և շտապում է կռվի
վայրը։ Հովանի իր ծիրերի հետ ունեցած խոսակցության տեսա-
բանը ցույց է տալիս նրա մեծ սերը գեպի Դավիթը՝ Սամնա աստ-
ղը և նրա գործելու հերոսական թափն ու վճռականությունը։
Դավիթի սպանության վրեժն առնելու համար Զենով Հովանն էլ
Մհերի հետ գնում է մարտի դաշտ և մասնակցում է թշնամիների,
բնաջնջման։ Բայց Հովանի բնավորության մեջ կան թուլության,
թշնամու հանդեպ հնազանդողականության գծեր եւ։

Քենի Թորոսի բնավորության մեջ ավելի քան Զհնով Հովանի, ուժեղ է արտահայտված հերոսականության դիմք։ Վախկուտությունը չունի նաև Քենի Թորոսն ամեն անգամ պատրաստ է անձնվիրաբեր պաշտպանելու ժողովրդին հարձակվող թշնամուց։ Երբ Մսրա Մելիքն ահազին բանակով Սասուն է գալիս, Քենի Թորոսը, ինայելով մանուկ Դավթին, դիտմամբ նրան հարրեցնում է, որ Կովին շմանակցի, իսկ ինքը՝ այդ քառասուն հոգուց

բաղկացած ընտանիքի նահապետը, Գալաքում է իր «Ճերիխ» և
գնում է Մսրա Մելիքի գեմ (ի հարկե, Գավլիթն սթափվելով
կանխում է նրան); Գեղեցիկ է Քեռի Թորոսի՝ յուդայիններին ուղա-
ղած ուազմի կոչը.

Քեսի Թորոս ինքն էլավ, թմբով զարկեց, ասաց,
«Էլե՛ք, էլե՛ք,
Քոթո՛թ, Մոթո՛թ,
Անուշ Քոթոթ,
Վժիկ Մըխո,
Ճընճղափորիկ,
Ու Խոր Մանովկ,
Ու Խոր Գուսան,
Ու Ճոռ Վիրապ,
Էլե՛ք, էլե՛ք,
Էսօր լավ է, քանց ամեն օր...

Հայրենիքի և ժողովրդի թշնամու գեմ պայքարի օրը Քեսի
Թորոսի համար բոլոր օրերից ամենալավ օրն է:
Սարա Մելիքի «Սասոնցի Գալթի» մեջ խոր ռեալիստա-
կերպարը կան գծերով է պատկերված նաև Գալթի
գլխավոր հակառակորդ Մարա Մելիքը: Մելիքը նմանապես ահ-
ուելի հսկա է, «Ազնանց ծննից»: Մարա Մելիքին և Գալթին ցեղա-
կից դարձնելով, բայց Մելիքին ավելի թուլ և պարտվող գերում
ներկայացնելով, ստեղծագործող ժողովուրդը դատապարտել է
բունականներին, ժողովրդի կամքի հակառակ անարդար պատե-
րազմ մղողներին: Գալթին ավելի ուժեղ է և հաղթում է Մարա
Մելիքին, որովհետև արդարացի է, որովհետև նրա կամքը՝ ժողո-
վուրդի կամքն է: Խսկապես, Մելիքը կատարյալ բռնակալի պատ-
կեր է: Նա որոշում է Սասոնցի Գալթի վրա հարձակվել, հավա-
քում է իր հապատակներից բոլոր խելոք մարդկանց և խորհուրդ
հարցնում այդ որոշումը կատարելու մասին: Սակայն՝

Շատեր կային՝ ավերություն չեմ՝ ուզի,
Շատեր կային՝ որ կասեին.— Մելիք,
Դավիթ քեզ ի՞նչ վընաս կը տա իսկի;
Դավիթ միամիտ իր տան նստե,
Դու ե՞ս ավերություն ափի,
Եկի զո՞ւ ես, որ չես դադրի՞ց

Իմաստուններն արտահայտելով Մսրա ժողովորդի տրամառ դրությունը, հակառակում են Մելիքին: Բնորոշ է, որ Մելիքը դըրանից հետ այլևս չի ցանկանում խելոքների հետ խոսել և առանձնանում է ոչոկա մարդկանց հետ զրուցելու Այդ զոկ մարդիկ, որոնք ըստ երևութին նրա մեծավորներն են, խրախոսում են Մելիքին և խորհուրդ են տալիս անհապաղ հարձակվել Դալաթի վրա և քանի դեռ փոքրահասակ է, ոչնչացնել նրան:

Մսրա Մելիքի բնավորության հատկանշական գծերից են նաև գոռոզամտությունը և անբարտավանությունը, խարդախությունը և կեղծավորությունը: Երբ նա Դավթին տեսնում է իր վըրանում, մի փշելով ուզում է թոցնել.

Մելիք որ ճանաշեց զԴավիթ,
Փշեց, որ թոցնի տեղեն:
Տեսավ՝ Դավիթ իրար չ'եկավ:
Մելիքի մոտեն քառուն գոմշի ուժ պակասեց:

Գոռոզության հետ Մելիքի բնավորության համար բնորոշ է և նենդությունը: Նա Դավթին հրավիրում է իր հետ ճաշի նստել և հետո կոփվ անել, առաջուց նրա նստելու տեղի տակ հոր փորած լինելով: Մսրա Մելիքը մտադրվել էր հակառակորդին հաղթել զրուցազնին ոչ վայել խաբեռությամբ: Դյուցազնական պատվասիրությունից էլ զորկ լինելով, կովի ժամանակ, երբ հարվածներ տալու հերթը հասնում է Դավթին, Մելիքը վախից խախտում է մենամարտի պայմանները:

Կանաց կերպար «Սասունցի Դավիթ» էպոսում մեծ թիվ են ներք կազմում և կարևոր դեր են կատարում նաև կին հերոսները: Հակառակ միշնադարյան քրիստոնեական աշխարհայեցողության ժխտական վերաբերմունքին կանանց նըկատմամբ, էպոսում կին հերոսները պատկերված են ազատասիրական ոգով, ինքնուրույն մտածողությամբ և ուժեղ բնավորւթյան գծերով:

Էպոսում կանայք մեծ դեր են խաղում թե՛ իրեն մայրեր, թե՛ իրեն ամուսիններ: Էպոսի գործողության ընթացքը պայմանավորում է նաև նրանց գործունեությամբ: Սասնա դյուցազնունների մայրերը և կանայք նմանապես դյուցազնական են: Նրանք ոչ պակաս անձնազո՞ւ հայրենասերներ են, քան իրենց ամուսին-

ները և որդիները, որոնց համար միշտ բարի խորհրդատուններ և պայքարի ընկերներ են: Այսպես օրինակ, Սանասարի և Բաղդասարի մայրը՝ Շովինարը համաձայնվում է Բաղդադի Խալիֆի հետ ամուսնանալ միայն և միայն հայրենասերական և ժողովրդասիրական զգացմունքներից և գիտակցությունից մղված: Որքան բնորոշ և հոյակապ է նրա խորհրդածությունը, որը նախորդում է այդ անձնազո՞ւթյանը.

Որ ես են կռապաշտ թագավոր շառնեմ,
Զամեն տի սպանի իմ պատճառով,
Աղեկ էն է, ե՛ս էրթամ,
Ուրիշ մարդու թող բան շընի:
Ե՛ս մենակ մեռնիմ իմ հոր թերեն,
Ես մեկ զան եմ, էրթամ, կորսըլիմ,
Քանց մեր Հայաստան երկիր ավերի:
Էն հազար հազար հոգիք կորուանին:

«Սասունցի Դավթի» կին դյուցազներից ամենագեղեցիկ և ամենաամբողջական գծերով պատկերված է խանդութ խաթումը: Խանդութն ունի իր՝ իրեն մարդու՝ արժանավորության բարձր գիտակցություն. նա միշտ նախաձեռնող է և ինքնուրույն, համարձակ է և արիստական: Խանդութը չի ենթարկվում անգամ իր սիրած տղամարդուն, նա ավելորդ և անպատշաճ համբուրի համար բրոնցքով հարվածում է խոր և քնքուշ սիրով իր սիրած Դավթին և ասում:

Դու քո հոր կարիճն ես, ես էլ իմ:

Այս գեպքի ժամանակ է, որ ինչպես նկարագրված է պատումներից մեկում, հանկարծակի զայրությով բռնկած Դավթին զսպելով՝ Քեռի Թորոսը արդարացնում է խանդութին այդ արարքի համար և խորամտորեն ասում. —

Առյուծն առյուծ ա, էղնի էգ թե որձ:

Սա մի ասացվածք է, որ ցայտուն կերպով արտահայտում է Մողովորի հայացքը կնոշ և տղամարդու հավասարության մասին: Խանդութը նույնքան անձնազո՞ւթյան ընդունակ է հայրենիքի համար, որքան և Դավիթը: Ամեն դեպքում նա պատրաստ

զենքը ձեռքին դուրս գալ թշնամու դեմ; Այդպես է նաև Մհերը
կինը՝ Գոհար Խաթումը:

«Սասունցի Դավիթ» էպոսի կանանց հետաքրքրական կերպարներից են Խսմիլ Խանումը և Զմշկիկ Սուլթանը: Խսմիլ Խանումը նենդ ու խորամանկ կնոջ տիպար է. նա թեպետ զերծ չէ մարդկային որոշ գգացմունքներից, բայց անմասն էլ չի իր որդու՝ Մսրա Մելիքի շար մտադրությունների մեջ: Զմշկիկ Սուլթանը հանդես է բերված իբրև վրեժխնդիր կնոջ կերպար:

Բանաստեղծ ժողովուրդը «Սասունցի Դավիթ» էպոսի բոլոր հերոսներին էլ պատկերացրել է յուրահատուկ գծերով և գեղեցիկ ամբողջականությամբ:

Ժողովուրդը «Սասունցի Դավիթ» այն հանդամանքին, որ Սասունա սունցի Դավիթը դյուցազունները հենց իրենք իրենց մեջ են հպոսում մարմնավորում ժողովրդին, այնուամենայնիվ էպոսում լայն ու վառ կերպով պատկերված է նաև ժողովուրդը: Դավիթը և էպոսի մյուս դյուցազուններն իրենց սիրագործությունների ընթացքում միշտ գտնում են աշխատավոր ժողովրդի պաշտպանությունն ու օժանդակությունը: Ժողովուրդը սրտանց ուրախանում ու ոգեսրում է նրանց հաջողություններով և մտահոգվում ու տիրում նրանց առաջ ծառացած գժվարությունների կամ պատահած դժբախտությունների ժամանակ: Բնորոշ փաստ է, օրինակ, երբ Դավիթը գնում է Մսրա Մելիքի դեմ կովելու, Սասունա հարսները գալիս են նրա առաջ և երգելով բարի ճանապարհ մաղթում: Խսկ երբ Դավիթը հաղթանակած վերադառնում է, Սասունի ողջ ժողովուրդը Զենով Հովանի հետ գնում է նրան ցնծությամբ դիմավորելու: Բնորոշ է նաև, թե ինչպես մեծ Մհերի մահից հետո սասունցիք երկար տարիներ անկեղծ ու խոր վշտով սուր են պահում:

Ժողովրդի և Սասունա դյուցազունների փոխարարերության գեղարվեստական կոնկրետացումներից ամենաուշագրավը կորեկի արտի տեր պառավ կնոջ կատարած դերն է էպոսում: Պառավ կինը ներկայացնելով ժողովուրդը, դժվար պահերին միշտ օգնության է հասնում Դավիթին իր իմաստում խորհուրդներով ու հորդուրներով, և նրա ահոելի ֆիզիկական ուժը գործադրության ուժը ու օգտակար ընթացքի մեջ է դնում: Դավիթը միշտ էլ լու

նում է պառավ կնոջ խրատներին և հասնում է դրական արդյունքների:

«Սասունցի Դավիթում» պատկերված է նաև Մսրա ժողովուրդը, որը երբեք համակրանք ցուց չի տալիս Մսրա Մելիքի ձեռնարկումներին: Մսրա ժողովուրդը ճանաչում է հարկան հայ ժողովրդի ուժը և հարգում է նրա իրավունքները: Դավիթի հետ խոսող ծերունի զորականի կերպարում գեղեցիկ կերպով ընդհանրացված են Մսրա ժողովուրդի խաղաղասիրական արամագրությունները:

Ժողովրդական հույս «Սասունցի Դավիթ» էպոսին մի առանձին մոռը եվ սատիրան գեղեցկություն է տալիս նաև ժողովրդական առողջ երգիծանքը: Այդ երգիծանքը մեղմ, բարեկամական կան առողջ երգիծանքը: Սասունցի Դավիթը մեղմ, բարեկամական չումոր է, երբ վերաբերում է սիրելի դյուցազուններին, և խիստ ու ոչնչացնող սատիրա, երբ ուղղված է հերոսական սխրագործությունների անընդունակ անձնավորությունների՝ իշխանների, թագավորների և հոգևորականության ներկայացուցիչների դեմ:

Էպոսում ժողովուրդը հաճախ բարի հոմորով ծաղլել է իր սիրելի հերոսներին՝ նրանց երբեմն տարօրինակ արարքների համար, արարքներ, սրոնք միշտ հետեւանք են չափից դուրս միահմտության, դյուրահավատության և պարզասրտության: Այսպէս, օրինակ, կոմիքական դեպքեր են Ծուռ Բաղդասարի հարբելը Ախմախու ասրում, մանուկ Դավիթ՝ պատուհանի ճեղքից մութ սենյակ ընկած արևի շողքի հետ կովելը, նրա հովվության հետ կապված անցքերը և այլն: Սասունա դյուցազունների բնավորության երգիծական սրոշ գծերը և արարքները, ներկայացված բոլոր վեհ հատկությունների հետ միասին, նրանց կերպարին տալիս են կենսական բարձր ճշմարտություն:

Ժողովուրդը ոչնչացնող ծաղրի է ենթարկել Վատերին, թուշամորթներին, բռնակալներին, շահագործողներին՝ անկախ նրանց պագային պատկանելիությունից: Շատ հատկանշական է, օրինակ, որ գոռողամիտ «Մեծաբերան» Կովբաղինին ծաղրում են և սասունցիները և մարցիները: Երբ Կովբաղինը հոխորտանքով գնում է Սասուն թալանի ու հարկանանության, Մսրա կանայք սուր հեղնանքի են ենթարկում նրան: —

Բարով, Բադին ու Չարխաղին,
Էդ ո՞ւ կերթաք էղպես վազան,
Է՛յ Կողբադին, Է՛յ դու Սուդին
Իր դարձեր էք էղպես գազան...

Երբ Կողբադինը Դավթից պատուհասվելով վերադառնում է,
Մորա կանայք նրան սպանիչ ծաղրի են ենթարկում.

— Իդա դիհեն գացիր՝ քանց գել գազան,
Ու են դիհեն էկար՝ քանց շուն վազան.
— Մըզրախդ քո վզեն կախում՝ քանց շան խառան,
Բերանդ է բաց՝ քանց պատուհան.
— Փալիք կերթա, քանց տոպրակի տակի թան՝
Ճանճեր վերան կապած քարվան:

Ողբակի վիճակում գտնվող Կողբադինն ստիպված է լինում:
Խոստովանել, որ ինքը շարաշար սխալվել է՝ Սասուն թալանի գըշ
նալը հեշտ բան պատկերացնելով:

Սասունցիներից էպոսի մեջ սուր երգիծանքով է խոսվում:
Վերգոյի մասին: Սա զուրկ է տիտան Սանասարից սերված լինեա-
լու նշաններից և միանգամայն անընդունակ է հերոսական սիրա-
զործությունների: Վերգոն մարդկային թուլությունների մարմնա-
ցումն է. շափազանց վախկոտ է և շուտ ենթարկվող: Նա շարա-
խնդորեն հեղնում է Դավթին Մորա Մելիքի դեմ կռվի գնալու
համար, որովհետև չի հավատում, թե նրա պայքարը դրական
վլախճան կունենա:

«Սասունցի Դավթի» «Սասունցի Դավթի» էպոսը դարերի ըն-
պահեթիկական արժա- թացքում պահպանված լինելով ժողովրդի
նիւերը մեջ, շարունակ հղվել է և գեղարվեստա-
կան մշակման մեջ բարձրության հասել:

«Սասունցի Դավթի» ունի կուռ կառուցվածք: Դիպքերը զար-
գանում են սահուն և անկաշկանդ: Զկա որևէ ավելորդաբանու-
թյուն: Ամբողջ էպոսում, սկզբից մինչև վերջ, գործողությունն ա-
ռաջ է գնում էպիկական ուժեղ թափով: Ինչպիսի շարժում, թափ
ու արագություն է զգացվում, ասենք, Դավթին օգնություն գնա-
ցող Զենով Հովանի՝ իր ձիերի հետ ունեցած խոսակցության տե-
սարանում, կամ Դավթի մահվան դեպքի նկարագրության ողջ ըն-
թացքում:

«Սասունցի Դավթի» մեջ պատմելու և նկարագրելու ձևը և
դործողության տեմպը միշտ համապատասխանում է դեպքերի
դրության և հերոսների հոգեկան վիճակին, որոնց փոփոխության
հետ փոխվում է և բանաստեղծության շափն ու ոիթմբ: Մրանով
էպոսն իր երաժշտականությամբ դառնում է բազմազան ու հա-
րուստ: Էպոսի ոտանավորի շափը միանգամայն համապատաս-
խանում է նրա բովանդակությանը: Կա ազատ ու հանդիսավոր
շափ է, որ հիանալի կերպով դրսեղում է էպոսի հերոսական-
շափ ու դյուցազնական ներքին էպիթյունը: «Սասունցի Դավթի» պատում-
ների մեծ մասը ոտանավոր է, յամբական պարզունյա ազատ
ոտանավոր՝ անապեստի խառնուրդով և անապեստյան ազատ ո-
տանավոր՝ յամբի խառնուրդով: Այս շափերը գործածվում են ան-
խըտիր:

Էպոսի լեզուն, որ ամփոփում է ժողովրդական բարբառների
արժեքավոր բոլոր տարրերը, զանագեղ է և պատկերավոր, հա-
րուստ՝ գեղեցիկ էպիտեներով, համեմատություններով ու փո-
րուստ՝ նախական էպիթյուններով: Բավական է իբրև օրինակ վերցնել Խան-
գութ Խանումի գովերը:

Կ'իրիշկեմ՝ Խանութ Խանում, ձեռ-ոտ կալամով քաշած է,
Ա՛խ, հալա տըգո, կալամով քաշած է:

Կ'իրիշկեմ՝ էնոր էղնգներ, ունդայով տաշած է,
Ա՛խ, հալա տըգո, ունդայով տաշած է:

Կ'իրիշկեմ՝ էնոր ծամեր, քասում ճուղ ծամ է,
Ա՛խ, հալա տըգո, քասում ճուղ ծամ է...

Կ'իրիշկեմ՝ էրեսի կարմրություն, նոան գինի է,
Ա՛խ, հալա տըգո, նոան գինի է:

Կ'իրիշկեմ՝ էնոր ծըծեր մեջ ծոցին, քանց Հալաբա
շաքար քաղցր է,

Ա՛խ, հալա տըգո, քաղցր է:

Էպոսի մեջ տեղ են բնում հիմերբուկ արտահայտու-
թյուններն ու նկարագրությունները, որոնք հնարավորություն են
տալիս սեղմ ու արագ կերպով պատկերել հերոսների անսովոր
ուժն ու մեծությունը, նրանց զենք ու զրահի ահավորությունը, և
առաջացնել գեղարվեստական անմիջական, ուժեղ տպավորու-
թյուն: Օրինակ, երբ Սանասարը ծովի տակի աղբյուրից չուր խմե-
թացքում:

լով մեծանում է, նրա մեծության չափը տրված է մի հիմքութեակ արտահայտությամբ.

Տեսալ Բաղդասարը՝ մեկ սար էլեր սարի վրա, կը գա...»

Այստեղ մի սարը Սանասարն է, մյուսը՝ Քուսպիկ Զալալին։ Դեպքերի և անձնավորությունների հիմքերովիկ և առասպես լական բնույթի նկարագրություններն արտահայտում են ժողովրդի ուժի և հզորության գաղափարը։ Առհասարակ առասպելականությունը մեծ տեղ է բռնում էպոսում, որը, սակայն, խորենացու ոճով ասած, այլաբանաբար ճշմարտություն է թագցնում իր մեջ։

«Սասունցի Դավիթ» էպոսն անմահ է։ Այդ հոյակապ ստեղծագործությունը ներկայումս էլ ոգևորում է սովետական երիտասարդությանը և դաստիարակում հայրենասիրական, ժողովրդասիրական ու հերոսական ոգով։ «Սասունցի Դավիթը» հասկանալի ու հարազատ է ոչ միայն հայ ժողովրդին, այլև Սովետական մեծ Միության եղբայրական բոլոր ժողովրդներին և ողջ աշխարհի աշխատավոր մարդկությանը։

«Սասունցի Դավիթը» թարգմանվել է բազմաթիվ լեզուներով։ Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս հայ բազմաթիվ գրողներ զանազան ձևով մշակել են և շարունակում են մշակել հայ ժողովրդի այս մեծագույն ստեղծագործությունը։

ԵՐԱՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ X—XII ԴԱՐԵՐՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ գրականության (գրավոր) պատմության մեջ V-ից մինչ ՀԿ դարը ներառյալ, աշխարհիկ գեղարվեստական տարրերը մեծ մասամբ երևան են գալիս պատմագիրների գրվածքների մեջ։ Սակայն X դարից սկսած պատմագրությունը և գեղարվեստական գրականությունը զնալով սահմանազատվում են։ Բանաստեղծությունը, որ առաջ շատ հեռու էր ունալի իրականությունից, ուներ զուտ կրոնական վերաբերում էր ամենանշանակալի պատմությունը։

Շողովրդական թանահյուսության թեմաները, ավելի ցայտուն արատահայտել ժողովրդի տրամադրությունները։ Բայց գրական լեզուն մնում է դեռ գրաբարը, որը բավական հեռու էր միջնադարյան ժողովրդական խոսակցական լեզվից։

Կովտուրայի և գրականության ասպարիզում առաջացած այս նոր երևույթները արդյունք էին այն նոր հասարակական-քաղաքական պայմանների, որ ստեղծվեցին Հայաստանում Բագրատունիների, Արծրունիների և Կիլիկիայում։ Ռուբինյանների թագավորության ժամանակաշրջանում։

X դարում Բագրատունիների և Արծրունիների թագավորության շրջանում մեծ թափով զարգանում են քաղաքները, որոնցից մի քանիսը համաշխարհային հոչակ ունեցող առևտրական կենտրոններ են զանում։ Քաղաքացիների և ֆեոդալների միջև ուժեղանում է պայքարը։ Քաղաքի աշխատավորությունը ձգտում է սահմանափակել աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների իրավունքները։ Դրանցից է, որ կրոնական գաղափարների ուժեղ ազդեցության տակ գտնվող մի քանի պատմիչներ մեծ ատելությամբ են խոսում Անիի և մյուս խոշոր քաղաքների բնակչության և նրանց բարքերի մասին։ Այդ շրջանում եկեղեցու, որ ամենամեծ հողատերն էր դարձել, և մյուս աշխարհիկ ֆեոդալների դեմ ուժեղ պայքար է ծավալվում զյուղում։

Խոսելով Ելիոպայի միջնադարի գյուղացիական տպատամբությունների մասին, Էնգելսը ասել է «... Յուրաքանչյուր պայքար ֆեոդալիզմի դեմ այն ժամանակ պետք է կրոնական զգաստավորում ընդուներ, ուղղվեր առաջին հերթին եկեղեցու դեմ»։ Այս ամբողջապես վերաբերում է և Հայաստանի միջնադարին։ Իրոք, Հայաստանում IX—X դարերում գյուղացիության և քաղաքի աշխատավորության մղած պայքարը ֆեոդալականության դեմ հանդես է գալիս գերազանցապես աղանդավորական շարժման կերպարանքով։ Հայ իրականության մեջ ամենանշանակությունը և առմենատարածվածը թոնդրակյանների աղանդն է (ազանդի կենտրոն Թոնդրակ գյուղի անունով)։

Թոնդրակյաններն իրենց աղեղցության շրջաններում քանդում էին եկեղեցիները, չեին բնդումում Քրիստոսի աստվածությունը։ Նրան համարում էին խաչի վրա մեռած սովորական մարդ։ Նըրացանք ժիւտում էին բոլոր սբբերի զյուղությունը, հանդերձյալ կյանա

Քը, եկեղեցականների դասը և եկեղեցական բոլոր խորհուրդները՝
Մկրտություն, ծննդադրություն, հաղորդություն, պատակի արարու-
թյուն— համարում էին սուս բաներ։ Նրանց տնտեսական և
քաղաքական ծրագրներից և պրակտիկայից քիչ բան է մեզ հայտ-
նի։ Գիտենք միայն, որ նրանք ապրում էին համայնական կյան-
քով և ձգուում էին բյուզանդական լծից Հայաստանն ազատագրել։
Վերջին հանգամանքն ի միջի այլոց երկում է և այն բանից, որ
թոնդրակյանների աղանդը, վերջ ի վերջո, ճնշվեց միայն բյու-
զանդական գենքի ուժով, և Բյուզանդիայի կողմնակից հայ իշ-
խան Գրիգոր Մագիստրոսի ձևորով։

IX—XI դարերում Բագրատոննիների և Արծրունիների թաշքավորությունների շրջանում, մի կողմից քաղաքների զարգացման, մյուս կողմից՝ գյուղացիական շարժումների ուժեղացման հետևանքով, եկեղեցականության և առհասարակ ֆեոդալականության դեմ եղած տրամադրություններն ուժեղացան: Այդ տրամադրություններն արտահայտվեցին ծաղկող արվեստների մեջ: Արվեստները մտան աշխարհականացման հովը: Այլ խոսքով, ըստ կըսվեց հայ գրականության և արվեստների վերածնության շըրջանը: Աշխարհականացման ուժեղ տարրեր երևան եկան մանավանդ բանաստեղծության, նկարչության, ճարտարապետության ու քանդակագործության բնագավառում: Կառուցվում են հոյակապ եկեղեցիներ ու վանքեր, որոնց ճարտարապետները շենքի արդարքին և ներքին ձևավորման մեջ օգտագործում էին աշխարհիկ մոտիվներ: Այդ տեսակետից հոշակավոր է Անին իր ճարտարապետական հոյակապ հուշարձաններով: Ոչ պակաս նշանավոր է նաև Գագիկ Արծրունու կառուցած Աղթամարա եկեղեցին (Վանա լճի համանում կզզու վրա), որի նկարագիրը տվել է ժամանակակից պատմիչ Թոմա Արծրունին: Եկեղեցու դրսի պատերի վրա եղած գարդաքանդակների մասին նաև հետևյալն է ասում: «... Երեների բազմությունը և թոշումների երամները, ինչպես և գաղանների, խողերի և առյուծների, ցուկերի և արշերի շարքերն իրար գեմ գարդարված՝ մարդում հիշեցնում էր նրանց բնական կենդանությունը, որ իմաստումների համար շատ ցանկալի է... նկարակերտված խաղողաբեր որթերը՝ այլինքործների, գաղանների և մեղունների հետ միասին...»:

X դարում առանձնապես նկատելի է Հայ և արաբական կովտուաների փոխազդեցությունը:

Բյուզանդացիների և սելջուկների XI դարում գործած ավելածությունից հետո Զաքարյանների տիրապետության և Կիլիկիան հայկական պետության սահմաններում նորից ծաղկում են քաղաքները, հիմնվում են բազմաթիվ վանքեր, (Հախվատ, Սահահին, Գետիկ, Արքակաղին, Այգեկ և այլն), որոնք միաժամանակ ուսման և կրթության վայրեր են հանդիսանում: Մի կողմից՝ ուժեղանում է հայ և վրացական կովտուրաների փոխազդեցությունը, մյուս կողմից՝ Կիլիկիայում հայերը շփում են եվրոպացիների հետ:

Արվեստների աշխարհականացումն ավելի է ուժեղանում
XI—XII դարերի ընթացքում։ Մանավանդ XII դարից սկսած ու-
ժեղ կերպով զարգանում է գրչության-ձեռագիրների արվեստը և
դրա հետ կապված մանրանկարչությունը։ Նկարիչները ձեռագրեր
պատկերազարդելիս գործածում են գույների շտեսնված վառ ե-
րանգներ։ IX—XII դարերում հանդես են գալիք բազմաթիվ նշա-
նալոր գեղարվեստական գրողներ, պատմիչներ, օրենսդետներ,
քժիշկներ և այլն, որոնց թվում՝ Անանիա Նարեկացի, Խոսրով
Անձեացի, Գրիգոր Նարեկացի, Ստեփանոս Ասողիկ, Գրիգոր Մա-
զմաւրոս, Արիստակես Լասարիվերացի, Գրիգոր Վկայաներ, Հով-
հաննես Սարկավագ, Ներսես Շնորհալի, Ներսես Լամրոնացի,
Մատքես Ուսեայեցի, Սամուել Անեցի, Միփրար Հերացի, Գրի-
գոր Տղա, Միքրար Գոշ և ուղիշները։

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

Այս Եկեղեցը եղած գրական գրիգոր Նարեկացու դերը մեծ է հայ պետքորդութեառությունը զարվեստական գրականության զարգացման պատմության մեջ։ Մառը վրացի բանաստեղծ Շոթա Ռուսթավելուն, Գրիգոր Նարեկացուն և միջնադարյան հայ մյուս քնարերգումներին համարել է Կովկասի միջնադարյան գրական կույտաւայի խոշորագույն դիմքերը։

Գրիգոր Նաբեկացու կենսագրության մասին շատ քիչ տեղեւ կություններ կան։ Գրիգորի հայրը՝ Անձևացյաց Խոսրով եպիսկոպոսը՝ X դարի պատուն ու նշանավոր մարդկանցից մեկն էր։

Խոսրովը ծերովթյան համակռմ քանազրիվց իբրև աղանդալոր ու թուղթակյան գյուղացիական շարժմանը համակրող:

Գրիգոր Նարեկացին ծնվել է մոտավորապես 950 թվին, մեծացել ու գաստիարակվել է հոչակալվոր Նարեկա վանքում. նրա դաստիարակն էր Անանիա Նարեկացին, որին ժամանակի պատմիչները անվանել են «փիլիսոփայն մեծ»: Անանիան նմանապես թոնդրակեցիովթյան համակրողներից էր: Անկասկած, Գրիգորն ըստացել է այն ժամանակվա համար լավագույն կրթությունը. քանի որ Գրիգորի հայրը և գաստիարակը թոնդրակեցիներ էին, հարց է ծագում, արդյոք նա էլ չի հարել այդ շարժմանը: Հայտնի է, որ Գրիգորին էլ մեղադրել են թոնդրակեցիովթյան մեջ, և հոգևորականներն ու իշխանները ցանկացել են նրան դատի տալ: Առաջմաս հայտնի չէ որևէ փաստ, որի հիման վրա կարելի լիներ այդ հարցին դրական պատասխան տալ: Հայտնի է, որ նրա նկատմամբ եղած կասկածները չեն ապացուցվել: Հայտնի է նրա, որ Գրիգոր Նարեկացին զրել է մի թուղթ թոնդրակեցոց դեմ: Սակայն, անկախ այս հանգամանքից, պարզորեն նկատվում է, որ նրա ողջ կործերը փաստորեն կրել են իրենց վրա Հ դարձում ժողովրդի զարգացող հակաեկեղեցական, աշխարհիկ տրամադրությունների ուժեղ ազդեցությունը:

Գրիգոր Նարեկացին վախճանվել է 1003 թվին:

Նարեկացոց մեզ հասել են բավական թվով գրվածքներ՝ «Դանձեր», «Տաղեր», «Մեկնութիւն երդոց երդոյն», ներբողներ, մղթեր և «Մատեան ողբերգութեան» պոեմը: Սրանցից ամինից թղթեր և հայ բանաստեղծության մեջ դարապլում կազմաթեավորները և հայ բանաստեղծության մեջ դարապլում ավելի, մող նորովթյունները նրա «Տաղեր» կոչված, թվով քսանից ավելի, մող լիրիկական բանաստեղծություններն են և «Մատեան Ողբերգութեան» լիրիկական մեծ պոեմը:

Հայերեն գրականություն ստեղծվելուց հետո

Հայ լիրիկական տո առաջացավ նաև կրոնական-եկեղեցաքանասեղությունը կան բանաստեղծության ժանրը: Այդ բանակացուց առաջ նաստեղծությունները, որոնք հետագայում կոչվեցին շարականներ, գրվում էին եկեղեցիներում ծիսակատարության ժամանակ երգելու համար: Դրանք օրէնքություններ և որոշ առումով լիրիկական դիրիկատիկական բանաստեղծություններ էին. նրանց հարությունը հարության մեջ ոչ ծննդյան պատմությունն է անում, ոչ հարության, ոչ էլ կարդավառի տոնն է նկարագրում: Այդ բանաստեղծությունները էին նրանց հայության մեջ առաջատար գործարքներ:

միջոցով՝ քրիստոնեություն սովորեցնել և բարեպաշտություն զարգեցնել: Շարականների թեման կազմում էր ավետարանի պատմությունները, հատկապես Քրիստոսի աստվածության փառաբանումը, հետո՝ մեղքերի համար զղանքն ու ապաշխարանքը: Շարական գրողները, քիչ բացառությամբ նյութի այս միատեսակությունը արտահայտել են միատեսակ ձևով: Մանավանդ Նարեկացու էպոխայում ստեղծվել էին ավետարանի բովանդակության բանաստեղծական վերարտադրման քարացած ձևեր, որոնցից շեղմելը դիտվում էր որպես աղանդավորության արտահայտություն: Այս բանը բնականաբար խիստ կաշկանդում էր բանաստեղծներին: Իսկ XIII դարի վերջերին, երբ ուժեղ թափով զարգանում էր աշխարհիկ բանաստեղծությունը, հոգեոր իշխանությունը աղանդավորությունից վախենալով, ընտրեց որոշ թվով շարականներ, կազմեց մի ժողովածու և պարտադրեց արարողությունների ժամանակ միայն այդ շարականները երգել: Դրանից հետո բանաստեղծության այդ ժամանակական առաջատար վերջանականապես գնաց գեպի անկում:

Շարականները ժողովրդական աշխարհիկ բանաստեղծությունից կտրված էին, բայց նրա որոշ ազդեցությունից այնուամենայնիվ զերծ չեն: Մանավանդ Մարիամ աստվածածնին և Քրիստոսին նվիրված շարականներում պատահում են ժողովրդական բանահյուսությունից վերցրած էպիտեսներ և պատկերներ:

Գրիգոր Նարեկացին առաջինն էր հայ գործականության մեջ, որ հաղթահարելով շարականների բովանդակության և ձեկի միապաղպաղությունը, ստեղծեց նոր տեսակի լիրիկական բանաստեղծություն, աննախինթաց շափերով օգտագործելով ժողովրդական անդիր բանաստեղծության կուլտուրան: Նա առաջինն էր, որ անշատեց բանաստեղծությունը եկեղեցական արարողությունից և պատկերացուց այն որպես ինքնուրույն մի բան և մասսայական լինքերցանության նյութ: Սրա ամենացայտում արտահայտությունը էր նրա «Տաղերը»:

Նարեկացու «Տաղեր»-ի թեման արտաքուստ «Տաղերը» դեռ մնում է կրոնական. այսպես նա իր բանաստեղծությունները վերնագրում է «Տաղ ծննդեան», «Տաղ յարութեան», «Տաղ վարդավառին» և այլն, բայց ուսանալորի մեջ ոչ ծննդյան պատմությունն է անում, ոչ հարության, ոչ էլ կարդավառի տոնն է նկարագրում: Այդ բանաստեղծությունները էին նկարագրում:

բում Նարեկացին սովորաբար նկարագրում է Մարիամին, բնուաթյունը, երգում է գարունը, և այս բոլորը՝ աշխարհիկ պատկեր ներով, շատ դեպքում ժողովրդական բանահյուսությունից վերցրած: Նարեկացու բանաստեղծությունները հիշեցնում են իտալական վերածնության շրջանի նկարիչների գործերը, որոնք պատկերում էին Մարիամ աստվածածնին կատարյալ աշխարհիկ կնոջ կերպարանքով: Այսպես օրինակ, տաղերից մեկում Մարիամի պատկերը տրված է հետեւյալ կերպ:

Աշքն ծով ի ծով ծիծաղախիտ—
Մաւալանայր յառաւոտում,
Երկու փայլակնաձև արեգական նման
Շողն ի ժմին իշեալ յառաւոտէ լոյս:
Յայտէն նոնենի սարդիատունկ,
Գեղաշիտակ ծայրից ծաղկանց,
Որոյ սիւնն ի սրտին նուախայօրէն
Կարկաջայր սաթբերունի սէր:
Բերան երկթերթի վարդն ի շրթանց կաթէր
Լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիդն...
Մոցն լուսափայլ կարմիր վարդով լցեալ
Սղիքն ծիրանի մանուշակի հոյլք:

Նարեկացու «Տաղերը» ըստ էության ազատ են մուայլ կրոնական ոգուց: Նրանք հագեցված են կենսուրախությամբ, հումանիստական և պանթեիստական տրամադրություններով: Նարեկացին մեծ սքանչացումով երգում է մարդը և բնության գեղեցկությունները— արևածագը, թիփից թուփի ոստոստող թռչունները, գարնան փիթող ծառերն ու բացվող ծաղիկները, կանաչապատ լեռները և կարկաշուն աղբյուրները. նա դիտում է ամպը և օդի մեջ շաղված անձրկի կաթիկները, ապա՝ լուսինը և աստղերը: Բանաստեղծի համար բնությունը մի հոյակապ ներդաշնակություն է, որ սիրով ու սիրաբողբոջ տարիմամբ» է լցոնում մարդու հոգին: Նա զգում է, լսում է բնության մեջ երգ ու երաժշտություն.

Երգ զարմանալի, երգ շարժվարժենի...
Խորհուրդ, խորհուրդ
Համերամ զարդ, երամից զարդ:

Ն Հուզումնալից ողջունում է—

... Մառոց ծաղկանց
Բողբոջախիտ խիտասաղարթ,
Գոյն գեղեցիկ, պատղինավետ,
Ակնահաճոյ, համ քաղցրումակ,
Հոտ բուրազուարթ, փունջ խուռներամ
Մայրից վարդից փթթինաղարդ,
Թերթ տարածեալ ոսկեճաճանչ
Տերևախիտ կանաչացեալ:

Շատ հետաքրքրական է Նարեկացու «Յարութեան» տաղերից մեկը, հետաքրքրական նրանով, որ բանաստեղծն այստեղ գյուղական սայլի և սայլապանի նկարագրությունը տալիս է բոլոր մանրամասնություններով, պատկերում է թիկնեղ, զլաբազուկ, ահեղագոլ գյուղացի աշխատավորին: Այս առաջին գեղքն է հայ բանաստեղծության մեջ, երբ պատկերացվում է ժողովրդի կյանքի հետ կապ ունեցող իրական երկույթն ու մարդու Այնուհետև, որ ավելի քան կարևոր է, այս տաղը մի սքանչելի օրինակ է բանաստեղծության մեջ բազմազան չափերի կիրառման, երաժշտականության և ուժեղ ուժմի ստեղծման:

Նարեկացու «Տաղերը» ոչ միայն նշանավոր են հայ հին բանաստեղծության մեջ ժողովրդական բանահյուսությունից վերցված գեղեցիկ պատկերներով, այլև իրենց արվեստով և առանձնահատկություններով: Նարեկացուց առաջ և նույնիսկ հետո էլ շատերը արաբական բանաստեղծության ազդեցությամբ գրում էին նույնահանգ վերջավորությամբ ոտանավորներ, որոնք ինչպան էլ երաժշտական լինեին, բայց միատեսակությամբ խիստ հոգնեցնում էին: Հստ երկույթին սկզբնական շրջանում Նարեկացին էլ արաբական բանաստեղծությունից որոշ ազդեցություն է կրել: Նա ոմի տաղեր, որոնք շատ խրթին են, նույնիսկ անհասկանալի, որոնց գրելու միակ նպատակն է եղել, կարծեք թե, ցուցց տալ նույնահանգություն ստեղծելու վարպետություն: Վերցնելով այն, ինչ դրական էր արաբական բանաստեղծության շափական արվեստի մեջ, Նարեկացին ստեղծել է միանգամայն ինքնուրուցին և բարձրարժեք գործեր, հենվելով հայ ժողովրդական բազմազան բանաստեղծության վրա: Նրա «Տաղերը», ինչպես և

Նրա «Մատեան Ողբերգութեան» պոեմը մինչև հիմա էլ բովանադակության համապատասխան ոիթմ ու երաժշտականություն բառեղծելու տեսակետից ուսանելի են: «Յարութիւն» տաղում բանաստեղծը նկարագրում է զարդարված մի սայլ անշարժ վիճակում, հետո՝ շարժվելիս այս շարժումը և անշարժությունը, արտահաջողված է նաև ոտանալորի ոիթմի փոփոխությամբ:

Եթէ հարյուր բարդ խողըրձան, վեց կորընկան
Մին մանուշակ խրձադիղեալ
Ի Մատեաց յաջ կողմանէ
Սայլիկն ածեալ են կացուցեալ
Եվ ահա շարժեր սայլիկն այն,
Եվ ահա շխաղայր անիվն այն:

Բայց երբ Շնուամիջակ, հաստաբազով, լայնաթիկունք, խարչակագեղ, ահեղագոշ սայլապանը ձայն է տալիս «Մաղկախաչ» տուցք, արագաքայլք» եղներին, անիվներն սկսում են գլորվել:

Ի գիլ գայր ի գիլ սայլիկն ի գիլ
Ի Մատեաց յաջ կողմանէն՝
Սայլիկն ի գիլ գայր ի գիլ...:

Այս հատվածը ցուց է տալիս, որ Նարեկացին մեծ վարպետությամբ կարողանում է երաժշտականություն ստեղծել՝ օգտագործելով նաև բառերի նմանահնչյունությունը: Այդպիսի վարպետության սքանչելի նմուշներից մեկն է հանդիսանաւմ նրա «Վարդավառի» տաղը, որը բացի վերնագրից և վերջին տողերից ուժնը կորնական չունի իր մեջ:

Գոհար վարդն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից
Ի վեր ի վերայ վարսից,
Սավալէր ծաղիկ ծովային:

Նմանահնչյունությունն ստեղծված է ովք և «Ճճ բաղաձայններով սկսվող բառերով» Կամ «Ճճ-ով սկսվող բառերով», նույն տաղի հետևյալ տներում:

Շուշանն շողեր հովտին
Շողշողեր դեմ արեգական

Այն հյուսիսային հովէն,
Հով հարեալ գոհար շուշանին
Շուշանն շաղով լցեալ,
Շող շաղով և շար մարդարտով.
Մաղկունք ամէն շաղ առին,
Շաղն ամպէն, ամպն՝ արեգակէն:

«Մատեան ողբերգութեան» Նարեկացու «Մատեան» ողբերգութեան լիբեան պոեմը բիկական ընդարձակ պոեմը միջնադարյան միջազգային գրականության մեջ միստիցիզմի ամենակատարյալ գրական արտահայտություններից մեկն է: Պոեմն ունի ինը սունդինդ գլուխ. առաջին գլուխը վերնագրված է այսպես. «Ը խորոց սրտի խօսք ընդ աստուծոյ». մնացած մյուս բոլոր գլուխները վերնագրված են. Վկերստին յալելված կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի, ի խորոց սրտի խօսք ընդ աստուծոյ», վերնագրերի այս բնույթը և շարունակական կրկնությունները ցուց է տալիս, թե ինչ բովանդակություն ունի «Մատեան Ողբերգութեան» պոեմը: Բոլոր գլուխներում էլ հեղինակը նույն տրամադրություններն է արտահայտում, բայց գիտից զլուխ ավելի ու ավելի նա ուժեղացնում, խորացնում է այդ տրամադրությունները, իր խոհերն ու զգացմունքները, վարպետորեն փոխում է արտահայտչական ձևերը — պատկերներն ու ոտանավորների շափը, ստեղծում է անհոմ քանակությամբ հոմանիշ բառեր և էպիտետներ: Վերջո, Նարեկացին «Ողբերգության մատյանում» իր խոհերին ու զգացմունքներին այնպիսի ահավոր խորություն ու թափ է հաղորդում, որ արդեն ուկեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պատմում է, կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մոնչում է մինչև երկինք» (Թումանյան):

Իբրև միստիկ, Նարեկացին իր պոեմում ձգտում է աստծու էության հետ միանալ:

Ինչքան միստիկը ձգտում է մեղքերից և մեղավոր զգացմունքներից ազատվել, մաքրվել, նրան թվում է, թե այնքան զլուխ ստեղծանում են: Ինչքան նա ինքն իրեն խարազանում է, արանք շատանում են: Ինչքան բարակ իրեն ազատել, իրեն մոտեցնել, զաշում է աստծուն՝ մեղքերից իրեն ազատել, իրեն մոտեցնել, ծնվում է միստիկի ողբերգությունը: Ահա թե ինչու Նարեկից ծնվում է միստիկի ողբերգությունը:

կացին իր պոեմի վերնագիրը դրել է «Մատեան ողբերգութեան»՝ էնդեւսն իր օֆիլուացիական պատերազմը Գերմանիայում» գրքում ելքոպական երկրներում հանդես եկած զանազան աղանդավորական շարժումների հետ միասին միստիցիզմն էլ համարում է փեղալականության և փեղալ եկեղեցու դեմ ուղղված դժունության ու պայքարի արտահայտության ձևերից մեկը: Այս սանը ամենայն իրավամբ կարելի է ասել և Նարեկացու միստիցիզմի մասին, որ ավելի վաղ է հանդես եկել: Նարեկացին իրը միստիկ գտնում է, որ մարդու և աստծու միջև միշնորդի անհամեշտությունը չկա, որ մարդը ինքը կարող է անմիշապես կապվել աստծու հետ: Իսկ սրանից ստացվում է այն, որ փեղալական եկեղեցին և Հոգևորականները ավելորդ բաներ են:

Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» պոեմը նույնպես խոչոր չափով նպաստել է հայ լիրիկական բանաստեղծության զարգացմանը: Վառ և ուժեղ երևակայության տեր լինելով, Նարեկացին արել է բազմաթիվ լեզվական գյուտեր: Բանաստեղծական պատկերները, հիպերբոլիկ արտահայտությունները, համեմատությունները գետի նման հորդում են նրա ստեղծագործության մեջ: Ի հարկե, երբեմն Նարեկացին ընկնում է հոետորականության մեջ և թույլ է տալիս ոճի շինծու ճոռմություն, բայց հաճախ օգտագործում է իրական աշխարհից և ժողովրդական բանահյուսությունից վերցրած կենդանի և գունագեղ արտահայտություններ, որոնք ընդհանրապես գեղեցիկ կերպով արտացըլում են նկարագրած պատկերի տեսողական և ձայնական հշտությունները: Այսպես օրինակ, մի տեղ իր «մեղքերի» շատության գաղափարը արտահայտում է հետեւյալ ժողովրդական հիպերբոլիկ պատկերով:

Եթէ զլիճ մի ծովուց ի յորակութիւն դեղոյ եղեցից,
Եւ զգաշտ ասպարիսօք բազմօք սահմանեալ՝
Ի տարածումն լայնութեան քարտենի շափեցից,
Եւ զպուրակս յոքոմց անտառաց շամրից եղեգանց
Ի հատուածս գոյութեան գրչաց կազմեցից,
Եւ ոչ զթիւ մի ի բարդելոցն անօրէնութեանց
Զօրեցից ընդ գրով սահմանի գրաւել:

Նարեկացու ստեղծագործությունը խոշոր նշանակություն ունի հայ գեղարվեստական գրականության զարգացման պատմու-

թյան մեջ: Նարեկացին հիմք դրեց հայ լիրիկական ժանրի բաւանատեղությանը՝ վերջ տալով եկեղեցուց ունեցած նրա ծառայական կախման: Նա բանաստեղծության մեջ մտցրեց նոր մոտիվներ, արտահայտեց նոր տրամադրություններ, որոնք վերածնության սկզբնափորման ուժեղ ազդանշաններ հանդիսացան: Հետագայի հայ բանաստեղծները շատ բան սովորեցին Գրիգոր Նարեկացուց:

Գրիգոր Նարեկացուց հետո մինչև XI դարի վերջերը, որքան հայտնի է, աշքի ընկնող որևէ գեղարվեստական գրող չի երևում:

XI դարի հայտնի աստվածաբան-փիլիսոփա Գրիգոր Մագիստրոսը գրել է նաև բավական թվով բանաստեղծություններ: Թեպետ ներսես Շնորհալին (Մագիստրոսի աղջկա թոռը), նրա մասին գրել է.

Հստ Հոմերի տաղաշափեալ.

Հստ Պղատոնի պերճաբանեալ.

Ցունականին ներհուն եղեալ.

Ցորն իմաստիցն մակացեալ:

Բայց Մագիստրոսը թույլ է իբրև բանաստեղծ: Ստեղծագործության բնագավառում նա փաստորեն ետ է գնացել Նարեկացուց: Մագիստրոսի ոտանակորները, որոնք գրված են բռնահանգով, ինչպես և նրա «Հազարատողեան առ Մանուշեա» պոեմը, շատ գեպքում ավետարանի բովանդակության հարասություններ են միայն, ճոռում ոճով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԴ ԻՄՍՍԱՍՍԵՐ

XI դարի վերջերին և XII դարի սկզբներին, սեղուկների գործած ավերածությունների ծանր ժամանակաշրջանում, ապրել է մի շատ կուստուրական անձնավորություն՝ փիլիսոփա և բանաւտեղծ Հովհաննես Սարկավազը: Նրանից մեզ հասել է «Բան իմաստութեան ի պատճառս զրօսանց առ ձագն որ զաղօթանոցաւ նորա ճռուղեր քաղցրածայն որ կոչի Սարիկ» վերնագրով ընդուրձակ խոհական պոեմը, որը միջնադարյան հայ գրականության խոշորագույն հուշարձաններից մեկն է:

Հովհաննես իմաստակարի ծննդյան թվականը՝ հայտնի չէ:

Հայտնի է միայն, որ նա վախճանվել է ծերության հասակում, 1129 թվին։ Նրա գերեզմանաքարի վրա փորագրված է. «Արձանս այս սեմական է սովիեստոսի Սարկավագին»։ Չպետք է կարծել, որ «սովիեստոս» մականունը բացասական իմաստով է գործածվել, ընդհակառակը, նրան այդպես են կոչել հունական փիլիսոփայության և գիտության քաջահմուտ լինելու պատճառով։ Հովհաննեսին և իր գործերին ծանոթ պատմիչները մեծ գովասանքով են արտահայտվել նրա մասին։ «Ետերից փիտությամբ մեծիմաստ և ամեն բանի մեջ հանձարեղ էր մտքով հարուստ Հովհաննեսը՝ սարկավագ կոշլած Հաղպատում։ Սա շատ բան ուսումնասիրեց, զգերում բարի հիշատակ թողեց։ Սա շատերի փափակած հաստատում և անշարժ հայկական տոմարը սահմանեց՝ շարժականի և անհաստատունի փոխարեն։ Բոլոր ազգերի տոմարը համաձայնեցրեց հայկականին. որովհետև շատ իմաստում մարդ էր...։ Այսպես է գրել Հովհաննեսի մասին XIII դարու պատմիչ Կիրակոս Գանձակեցին, որի տված այլ տեղեկություններից երևում է, որ Հովհաննես Սարկավագը իր ապրած շրջանում և հետո մեծ հեղինակություն է վայելել։ Նրան իր փիտության համար բարձր են զնահատել նաև վրացական արքունիքում։ Իր ժամանակակիցների մեջ մեծ հոչակ է վայելել, նմանապես, նրա Անիում հիմնած դպրոցը, որտեղ մի շարք պիտություններ դասավանդել է ինքը։

Հովհաննես Սարկավագ իմաստասերը հրաշալի կերպով ծանոթ է եղել հին հունական փիլիսոփայությանն ու արվեստին։ Նրա, իրեկ գրողի՝ բարձր կովտուրան երեսում է մեզ հասած միակ գեղարվեստական փիլիսոփայական գործից սարյակ թուղումի մասին, որ իր կառուցվածքի ոճով հիշեցնում է Պլատոնի դիալոգ։ Ներբեռ։

«Բան իմաստութեան Հովհաննեսի օրան իմաստութեան... առ առ ձագն... որ կոչի ձագն... որ կոչի Սարիկ» պոեմը հայ պուածութեան կումբի պատմության մեջ առաջին գեղարվեստական գործն է, որը ոչ մի կապ չունի ավետարանական թեմաների հետ։ Այս լիրիկական պոեմի հերոսներն են ինքը՝ բանաստեղծը և սարյակ թուղունը, որոնց մեջ տեղի է ունենում մի շատ հետաքրքրական խոսակցություն։ Այդ զրուցի ընթացքում աղծարձութեան է գեղարվեստական ստեղծագործության նոր տես-

Սարիկ» պոեմը եղիայի պատմության մեջ առաջին գեղարվեստական գործն է, որը ոչ մի կապ չունի ավետարանական թեմաների հետ։ Այս լիրիկական պոեմի հերոսներն են ինքը՝ բանաստեղծը և սարյակ թուղունը, որոնց մեջ տեղի է ունենում մի շատ հետաքրքրական խոսակցություն։ Այդ զրուցի ընթացքում աղծարձութեան է գեղարվեստական ստեղծագործության նոր տես-

ություն։ Պոեմում արձարձվում է բնության և պոեզիայի փոխարարելության հարցը, ըստ որում առաջնությունը տրվում է բնությանը, կյանքին։ Այդ տեսությունն իր զարգացումը գտավ Եվրոպայում ավելի ուշ, միայն վերածնության շրջանում։

Բանաստեղծը հրավիրում է «արթում և զվարթում», «կանչող և կարկաչող» Սարյակ թունիկին մոտենալ իրեն և խոսել իր հետ, քանի որ ինքն ուրախությամբ ուզում է աշակերտել նրան։

Եկ ուսոյ ինձ զի ծանեաց կիսակատար իմաստակիս...»

Անյօդ ձայնիւ վարդապետայ, և ստացիր զիս աշակերտ։*)

Բանաստեղծը Սարյակին մի քանի հարցեր է տալիս և ստացած պատասխաններին փորձում է հակածառել, բայց վերջում հայտարարում է իրեն պարտված։

Ճըշմարտիւ զայս խօսեցաւ ըստ պատահմանցըն

հանդիպման,

Քզբացատրեալ հոյլը բանից իմաստաբար բարբառելով,
Որով յաղթել մեզ իմաստնոցս և կարծեցեալ

բանաստեղծաց

Լըռութեամբ յանդիմանեալ, ոչ կարօտեալ եկար բանից։**)

Պոեմի մեջ բանաստեղծի պարտությունը նշանակում է բընության հաղթանակը։ Հովհաննես Սարկավագը իրեն Սարյակի հետ համեմատած «կարծեցյալ բանաստեղծ» է անվանում, ուրեմն իսկական բանաստեղծը Սարյակն է։ Սրանով նա այն միտքըն է զարգացնում, թե բնականը, բնությունը ամենից բարձրն է ու մաքորը և ամենքին հասկանալի, ուստի մարդիկ ստեղծագործելիս պետք է հետևեն բնության, սովորեն բնությունից։ Դրա համար էլ Սարկավագը Սարյակի երգն ավելի բարձր է դասում, քան նույնիսկ Ամփիոնի, Արփոնի և Որփիւսի նման առասպեկտական երաժիշտների երգն ու նվագը։

*) Եկ կիսակատար իմաստակիս սովորեցրու, որ ճանաչեմ ինձ;
Պարզ ձայնով ուսուցաներ և ինձ աշակերտ ընդունիր։

**) Ճշմարիտ, այս խօսվեց հանդիպելու ժամանակ՝
Բացարելով չատ բաներ՝ իմաստաբար բարբառած,
Որով յաղթեց իմաստուններս և բանաստեղծներիս կարծեցյալ,
Առանց երկար խսոքերի, հանդիմանեց լուռթյամբ։

Ամփիոն այս թերացի և Արիոն Միթեմնացին
Որդես թրակացի, այս երաժիշտք են մեծագովք.
Այլ նըւազեալ են առ նոքօք որք բնականամ են

պաճուճեալք,

Զի գործի այսր արուսետի նոքա չունին ի բնութենէ:
Աստ գաս նըստիս մերձ առ ինք իբր արուեստիւ ինձ
յանգակից

Բազմաղեաւ երգարանավ եղանակես և կաքաւես.

Հոմերական տաղիցն չափ քեւ ծանուցեալ լինի բազմաց.

Յոտանատր և ցուցական ըստ քերթողացըն տեսակի,

Կամ թէ ևս աւելագոյն, որպես թըսի ինձ դիտողիս.*)

Զի վարժումն և կրթութիւն ոչ ժամանէ առ բընութիւն:

Դժբախտաբար Հովհաննես Սարկավագից մեզ ուզիշ բանաստեղծություններ չեն հասել, որ տեսնեինք, թե ինքը իր այս ստեղծագործական տեսությունն ինչպես է կիրառել: Բայց մի բան պարզ է, որ այս հայացքը նրա ապրած էպոխայում հայ գորականության նկատմամբ առաջացած պահանջի արդյունքն էր. և շուտով նկատվում է, թե ինչպես հետագա գրողները կամաց կամաց թողնում են շինծու ձևերը, իրանաբան ճոռոմ ոճը, լեզուն և մոտենում իրականությանը: Այդ շրջանից սկսած պարզությունն ու իրական մտածությունն սկսում են իշխել գրականության մեջ:

Հովհաննես Սարկավագը գրել է նաև գիտական գործեր («Վասն շարժման երկրի»), ինչպես և խրատներ, աղոթքներ, ճառեր, դավանաբանական գրվածքներ, որոնցից մեծ մասամբ պա-

*) Ամփիոն թերացին և Արիոն Միթեմնացին,
թրակիացի Վորփեսուլ—մեծահամբավ երդիչներ են.
Սակայն նրանք բնականից օժանդաների մոտ նվազ են,
Որովհետեւ բնությունից այս արլեստի չնորհք չունեն:
Այստեղ իմ քով նստում ես դու, արլեստով ինձ երդակից,
Բազմալուր նվազաբանով երգում ես ու կտքավում:
Հոմերական տաղերը քո միջոցով են չատերին ծանոթ դարձել:
Ոտանավորն և երգը ըստ ատրեբը բանաստեղծների.
Կամ առավել ես, ինչպես ինձ դետովս է թվում:
Որովհետեւ վարժությունն ու կրթությունը չեն հասնի բնությանը:

Թառիկներ են հասել մեզ: Իր ժամանակաշրջանի անցքերի մասին նրա գրած պատմությունը, որի մասին հները մեծ հիացմունքով են արտահայտվել—անհետ կորել է:

Իր այս բոլոր աշխատություններով Հովհաննես Սարկավագը նախապատրաստողներից մեկն է XII դարում Հայաստանում ծավալված գրական կուլտուրական ուժեղ շարժման, որի ամենանշանավոր դեմքերն են արևմուտքում (Կիլիկիայում) Ներսես Շնորհալին, իսկ արևելյան Հայաստանում՝ Մխիթար Գոշը:

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Կյանքը եղ գրական Ներսես շնորհալին ծնվել է 1102 թվին, գործունեությունը սովորել է Կիլիկիայի Սև լեռների վրա գտնվող վանքերից մեկում: Շնորհալին դժունել է, որ հնարավորություն չի ունեցել Աթենք գնալու և այնուղիւն սովորելու: Այդ երևում է նրա առաջին պոեմներից մեկի նախերգանքից.

Զի հրահանգից վարժարանի
Չեմ տակավին ներկուու բանի:
Յաթենականըն քաղաքի,
Զանձն իմաստիք ոչ կրթեցի:
Ուր լըսարանն Պըղատոնի,
Եւ չափ ոտիւք Հոմերովնի:
Ուր ստորոգոյն Արիստոտել...
Ուր հոյլք ամէն հըռետորի
Ժողովարան ճարտասանի...:

Ներսես Շնորհալին, սակայն, սովորելով հայ դպրոցներում, կարողացել է ընդարձակ գիտելիքներ ձեռք բերել: Իրավացի է Կիրակոս Գանձակեցի պատմիչը, որ Շնորհալու մասին գրում է՝ «Այս Ներսեսը գիտությամբ շատ ավելի բարձր էր, քան շատերն իր ժամանակում, այն էլ ոչ միայն հայ գիտնականներից, այլև Հույն և ասորի տեսաբաններից, քանի որ նրա իմաստության համբավը տարածվեց բոլոր ազգերի մեջ»: Հետո նա պատմում է, համբավը տարածվեց բոլոր ազգերի մեջ: Հետո նա պատմում է, թե ինչպես նույնիսկ Կոստանդնուպոլիսից գիտում մարդիկ գալիս էին նրա մոտ մտքերի փոխանակություն ունենալու և վիճելու համար, ու զարմացած ետ էին դառնում: Շնորհալին երիտասարդ

Հասակում ձեռնադրվել է քահանա, հետո հասել է կաթողիկոսության աստիճանին: Նա Կիլիկիայի քաղաքական և եկեղեցական աշքի ընկնող գործիչներից մեկն է եղել: Վախճանվել է 1172 թվական:

Ներսես Շնորհալին բեղմնավոր և բազմաժանր ստեղծագործող է: Նա գրել է բազմաթիվ թղթեր, շարականներ, աղոթքներ, գանձեր, տաղեր, պոեմներ և հանելուկներ: Իր գրվածքների մեջ Շնորհալին ընդհանրապես արծարծում է դավանաբանական խընդիրներ և կրոնա-խրատական հարցեր: Սակայն նրա մի քանի գեղարվեստական գրվածքներն իրենց թեմատիկայով և ձևով նորություն էին և ուժեղ ազդեցություն գործեցին հայ գրականության հետագա աշխարհականացման վրա:

Ծնորհալու նորություն հանդիսացող ստեղծագործություններից մեկն է նրա առաջին գործը՝ «Եարադրութիւն» հոմերական վիպասանութեամբ սակա հայկազանց սեռի և արշակունիքանց զարմի ի սկզբանց մինչեւ ի վախճանք վերնագրով պոեմը: Խել Տեղինակն իր գործը վերնագրում «Հոմերական վիպասանություն» է համարում, բայց իրոք դա դյուցազներգություն չէ, այլ պարզապես հայոց պատմությունը՝ գրված ութ վանկանի տողերով: Ծնորհալին Պահապոնի իշխանների տոհմից էր, որոնք իրենց համարում էին Արշակունիների սերնդից: Ծնորհալին ցանկացել է այդ սերնդի պատմությունն անել մինչև իր օրերը և նա այդ արել է, օգտագործելով Մովսես Խորենացու պատմությունը:

Պոեմը բարձր գեղարվեստական արժեք չունի, բոլոր տողերը
վերջանում են «եալ» հանգով, որ իհարկե երաժշտական չէ և թու-
լացնում է տպավորությունը։ Բայց Շնորհալու այս պոեմը հայ-
դրականության մեջ առաջին էպիկական պոեմն էր, որի նյութը
կազմում է ոչ թե Ավետարանի բովանդակությունը, այլ Քաղա-
քական պատմական անցքերի և անձնավորությունների պատ-
մությունը։

Մի քայլ էր մնում պատմական հեռավոր դեպքերից անցնեալու ժամանակակից անցքերին, և Ծնորհալին այդ քայլն արեց իր՝ անդք եղեսիոյց, այս անգամ արդին գեղարվեստական բարձրարկեց պոեմով։ Ծնորհալու պոեմներից հետո հայ գրականության մեջ սովորական է դառնում շափածո ձևով պատմական անցքերի ժամանակաբրությունները, առանձին պատմական անձնավորու-

թյունների կենսապրականները և առհասարակ իրական անց ու դարձի մասին գրելը։ Այն երևույթը, որ հոգևորական և կրոնական գրողները կամաց-կամաց թողնում են Աստվածաշնչի և Առկան վետարանի թեմաները և անցնում իրական կյանքին, ինքնըստ ինքյան պետք է բացատրել ժողովրդական մասսաների՝ գրականության վրա ունեցած ազդեցության աճմամբ։ XII դարում նույնիսկ կաթողիկոս գրողներ, ինչպիսին Ներսես Շնորհալին էր, ստիպված էին հաշվի առնել ժողովրդի ճաշակն ու պահանջները, այդ երևում է նրա, դարձյալ ժամրով նորություն հանդիսացող «Առակք վասն ուղախութեան մարդկան» վերնագրով գրվածքից։ Ահա այս «Առակք»-ը և վերոհիշյալ երկու պոեմներն են Շնորհալու ստեղծագործությունների մեջ ամենաարժեքավորները։

«Ողբ Եղեսիոյ» օլղբ Եղեսիոյ» պովանդակությունը
պոեմը կազմում է 1144 թվականին Եղեսիա քա-
րի աղետալի կործանման և քրիստոնյա բնակիչների անգութ-
տորածի անցքը։ Հալեպի Զանկի ամիրան հանկարծակի պա-
րուսմ է Կիլիկիայի սահմաններին մոտ գտնվող ծաղկած քաղաք-
իսիան։ Քաղաքացիները թեպետ հերոսարար դիմադրում են,
ոյց ի վերջո Ամիրայի զորքերը կարողանում են պարիսպները
սնդել և քաղաք ներխուժել։ Շնորհալին իր պոեմում, որ գըր-
ած է 1145—46 թ., այս դեպքն իր բոլոր մանրամասնու-
ուններով ճշտությամբ նկարագրել է ուժեղ պատկերավորու-
ամբ և հորդաբուխ լիրիզմով։ Ահա մի հատվածու որ պատկե-
ռամ է կոտորածը։

... Աստանոր սիրա իմ ճըմլի
Երիկամունքըս գալարին.
Ցաւ Գարկանի որովայնիս,
Միտք և Հոգիս իմ այլայլին.
Մինչդեռ հիշեմ զօրն ահապին
Եւ զառաւութըն մըթագին...
Մարդադէմըն գաղանաց
Ըստայրասուրբըն քամէին.
Եւ որպես գայլք ի հօտ գառանց
Ի մէջ նոցումց անկան էին.
Առհասարակ կոտորէին.

Արեան վըտակը հոսէին.
 Զերիտասարդս և ըզմանկունս
 Անխնայապես խողխողէին,
 Յալիս ծերոց ոչ գթային,
 Եւ ոչ հասակըն տըղային...
 Դըստերքն ի մարց լային գրկին
 Եւ ընդ լալոյն նըւաղէին.
 Մարքն ըզտղայսըն գրկէին
 Ի միասին մեռանէին:*)

«Ողբ եղեսիոյ» պոեմի արժանիքը նրա ոեալիստական ոգին է, լեզվի և ոճի պարզությունը, սահուն, անկաշկանդ նկարագրությունները և դեպքերի ընթացքը: Ծնորհալու պոեմը այն ժամանակվա հայ գրականության մեջ առանձնապես նշանավոր էր նաև իր իդեական բովանդակությամբ: Բանաստեղծը խրախուսում է քաղաքի պաշտպանության համար կովողների քաջությունը և արտահայտում է հայրենասիրական գաղափարներ:

Ամբողջ պոեմի մեջ արտահայտված է հեղինակի անկեղծ, կարուտալից վիշտն ու թախիծը սեղուկների արշավանքի հետևանքով ժեն ու խաղաղ կյանքի կորստյան համար, բայց

*) Այստեղ իմ սիրու ճմլվում է,
 Երիկամներս զալարվում են,
 Որովայնիս ցալը բռնում է,
 Իմ միտքն ու հոգին այլայլվում են...
 Մարդակերպ գաղանները
 Սրբը հանում էին
 Ել՝ ինչպես գայլերը գառների հոտի մեջ՝
 Հարձակվում էին նրանց վրա,
 Բոլորին կոտրում էին.
 Արյան վտակները հոսում էին.
 Երիտասարդներին և մանուկներին
 Անխնա սրախողներ էին անում.
 Ծերերի սպիտակ մաղերին չեին զթում,
 Ոչ էլ երեխայի տարիքին...
 Աղջիկները մոր գրկում լալիս էին
 Եվ լալով նվազում էին.
 Մայրերը երեխաներին գրկում էին
 Եվ միասին մեռնում էին:)

Նա մեծ հույս է հայտնում, որ երկիրը նորից ազատություն կը ուտանա և ժողովրդի կյանքը կծաղկի:

Շնորհալու **Ներսես Ծնորհալին «Առակք»-ը փաստորեն հանելուկները գրել է, ինչպես Գանձակեցին է հայտնում ողի փոխանակ առասպելեաց՝ զայն ասացին ի գինարուս և ի հարսանիս: Ովեմն Ծնորհալին ցանկացել է, որ ժողովուրդը առասպելների փոխարեն, ինձուրքների և հարսանիքների ժամանակ զվարձանա հանելուկներով: «Առասպելա ասելով այն ժամանակ զվարձանա հանելուկներով: Ծնորհալու «Առասպելա այն ժամանակ էին առակներ, նովելներ, անեկդոտներ, հեքայաթներ և այլ ժողովրդական զրուցներ: Սա հետաքրքրական երաներ և այլ ժողովրդական զրուցներ: Սա հետաքրքրվում կրոնաբույթ է: Տեսնելով որ ժողովուրդը այլև չի հետաքրքրվում կրոնական բանաստեղծություններով, եկեղեցական գրողները քրիստոնեական հավատքի և բարոյականության քարոզության համար վերցնում էին ժողովուրդի սիրած բանաստեղծական ձևերը և աշխատում օգտագործել իրենց նպատակների համար: Ահա այսպիսի մի փորձ է արել Ծնորհալին իր շափածո հանելուկներով: Ծնորհալու «Վասն ուրախութեան մարդկան» ասված հանելուկների մեջ կան սըն ուրախութեան մարդկան» ասված հանելուկների մեջ կան այնպիսիները, որոնք ցույց են տալիս Աստվածաշնչի և Ավետարանի որևէ գործող անձ՝**

Կար պատանեակ մի խարտիշուկ
 Հայնշափի փոքրիկ քան ըզթզուկ,
 Խոսրովային առնոյր թմբուկ,
 Եսպան զհըսկայն հաստաբազուկ:

Այս ռպատանյակը Դավիթն է:
 Ծնորհալու հանելուկների մեջ հետ է մղված կրոնական ուսուցողական թեմատիկան: Աշխարհիկ բովանդակություն ունեցող հանելուկներն անհամեմատ ալելի սրամիտ են, իսկ կրոնացող բռնագրուիկ ու անհասկանալի: Այնուհետև, նրա կանները՝ բռնագրուիկ հապեցված են ժողովրդական նուրբ հուաշարհիկ հանելուկները հապեցված են ժողովրդական նորով:

Զորքուանի է զէտ ըզշուն
 Ու ծու ածէ զէտ ըզթուզուն.
 Խոտ նա ուտէ զէտ զանասուն.
 Ոմի մըզկիթ և ոսկրէ տուն:
 (Կրիա):

Մինն ի յանդումդ տառապէր,
Մինն ի երեսըն թըքանէր,
Գըլխովն ծափս հարկանէր,
Ըզկենարարն մեղ բերէր:
(Քրաղաց):

Ենորհալու Ներսես Շնորհալին, Նարեկացուց Հետո;
այուեսիկան X—XII դարերի հայ պոեզիայի երկրորդ
խոշոր վարպետն է։ Նրա ստեղծագործություններն աշքի են ընկ-
նում վառ պատկերավորությամբ։ Նույնիսկ կրոնական թեմա ու-
նեցող ոտանավորները համարյա միշտ վեր են շաբլոնից։ Դրանց
մեջ էլ հաճախ հանդիպում են այնպիսի հատվածներ, որոնք
դժված են «Ողբ Եղեսիոյ պոեմի նման ուժեղ ստեղծագործական
թափով և վառ երևակայությամբ։ Օրինակ՝ վերջին դատաստանի
սկզբի պատկերը նրա «Ողբերգութիւն վիպասանական» ընդարձակ
պոեմից։

Յորժամ տարելիքս դըղըրդին
Հաստատութիւնքն սասանին.
Իբրև ըզծովու կոհակք կուտին
Ի յեռանդանըն կաթսային.
Լայնատարած դողա գետին,
Ի թանձրութեանց հիմանց շարժին։
Լերինք հիմամբըք դարձուրին.
Եւ ուժգնակի բախմամբ թընդին.
Կարծր բնութիւնք վիմաց հալին
Եւ ամենայն նիմիթք հրդեհին.
Մինչ գետք հրեղենք յորդահոսին։
Իբր զհեղեղ ջուրց ծավալին*).

* Երբ տարերքը դպրում են,
Երկինքը և երկիրը սասանլում են.
Կաթսայում եռացող ջրի նման
Ծովի ալիքները կուտակվում են;
Լայնատարած գետինը դողում է։
Ամուր հիմքերից շարժվում է։
Լեռները հիմքով սարսում են

Ներսես Շնորհալին, որ իր ժամանակին հողակված է եղել
նաև իբրև երգիչ և երաժիշտ (կոմպոզիտոր), մի քանի նորություններ
է մտցրել նաև հայ բանաստեղծության տաղալափության մեջ։ Նա
իր շատ բանաստեղծությունները գրել է իր իսկ ստեղծագործած
եղանակներով երգվելու համար, ուստի նա առանձնապես ուշադիր
է եղել ոտանավորի ոիթմի և շափի երաժշտականության նկատ-
մամբ։ Շնորհալին ամենից շատ գործածել է ութ վանկանի տո-
ղերով ոտանավորի շափը, որ նրանից առաջ հայ բանաստեղծնե-
րը չէին գործածում, բայց նրանից հետո շատ գործածական դար-
ձավ։ Այս համեմատաբար կարճ տողերով ոտանավորը հետացնում
էր նրա ստեղծագործությունների ընթերցումը և բովանդակության
ըմբռնումը։ Սակայն Շնորհալին, հետևելով Մագիստրոսին, բա-
նաստեղծության տողերը վերցացնում է նույնահանգ, որ անշուշտ
թերություն է։ Օրինակ. «Ողբերգութիւն վիպասանական» պոեմի
ամբողջ շորս հազար տողը վերցանում է «ին» հանգով. «Յաղագս
երկնից և զարդուց նորա» պոեմի մոտ երկուհարյուր տողերը
վերցանում են առաջ հանգով և այլն։ Կան ի հարկե նաև պոեմ-
ներ և ոտանավորներ, որոնց հանգը Շնորհալին փոփոխում է։
Ռաման հավատոյա պոեմի մեջ խոսում է այն մասին, որ հանգերը
փոփոխել է ձանձրուկթ շպատճառելու համար։

Ոչ մի տառիւ վերջ յանգական,
Զի մի ծովից լուր ծանրանան.
Այլ խարաբար փոփոխական,
Զի ընթերցողք ոչ ձանձրանան։*

Բայց ինչպես երևում է, Շնորհալին այդ անում է ճճուկից
Ռամար— իբրև զիշողություն, որովհետև այն ժամանակ վարպե-
տական գործությունը առաջանաւ։

Եվ ուժգին բաղմումով թընդում,
Ժայռերի կարծր բնությունը հայվում է
Եվ բոլոր նյութերը հրեհելում են,
Կրակե գետեր են հոսում
Հեղեղի պես ծավալվում...

* Ոչ թե մեկ տառողջ հանգը վերջանա,
Թրպեզի ծույլերի լուղությունը չժանդրանա,
Այլ զանազանակերպ փոփոխելով,
Որ ընթերցողները չձանձրանան։

տության նշան՝ էր համարվում նույնահանգությունը։ Այդպես էլ այն ժամանակ վարպետություն է համարվել նաև ակրոստիքոս գրելը, ոտանավորի ամեն տողի կամ տնագլխի սկզբի բառը այս բուրենի տառերով սկսելը, յուրաքանչյուր նոր տող այն բառով սկսելը, որով վերջանում է նախորդ տողը։ Ծնորհալին այս բոլոր ձևերով էլ գոել է ոտանավորներ։

Եթե Ներսես Շնորհալին Գրիգոր Նարեկացուց և Հովհաննես Մարկարագից հետո աշխարհիկ թեմատիկան առաջ մղեց պիե-զիայի բնագավառում, ապա նրա ժամանակակից Մխիթար Գոշը, այդ կատարեց գեղարվեստական արձակի ասպարհողում:

ՄԻՒԹՅԱՆ ԳԱՅ

Այսպիս եվ գրական Մխիթար Գոշը հայ առաջին առակագիրն զործութեությունը է; Նա Գանձակ քաղաքիցն էր; Ծննդյան թիվը հայտնի չէ; Վախճանվել է 1213 թվին՝ Խորին ծերության հասակում:

Միակ գոշը ստացել է հոգևոր կրթություն և ծնողների ցանկությամբ ձեռնադրվել կուսակրոն քահանա։ Դրանից հետո էլ նա շարունակել է իր ուսումը գիտությամբ հոչակավոր վարդապետների մոտ։ Սակայն ստացած ուսումից շբավարարվելով, նա գնում է Կիլիկիա, Սև լեռան վանքերի գիտունների մոտ և սովորելու։ Կիլիկիայից վերադառնալով՝ Զաքարի իշխանի օժանդակությամբ Հաղպատի մոտ հիմնում է մի նոր վանք՝ Գետիկ անունով։ Շուտով այդ վանքը Գոշի շնորհիվ դառնում է Արևելյան Հայաստանի մտավոր կենտրոններից մեկը։ Նրա կենսագիր Կիշրակոս Գանձակեցին պատմում է. «Եատերն էին, որ Նրա մոտ աշակերտեցին... որովհետեւ նրա իմաստության համբավը տարածվել էր ամեն տեղ, և ամեն կողմից նրա մոտ էին գալիս»։ Կիրակոս Գանձակեցին ինքը հենց Միխիթար Գոշի աշակերտներիցն էր։

Գոշից մեղ հասած աշխատություններից ամենանշանավորը ներն են նրա «Դատաստանագիրքը» և «Առակները»: «Դատաստանագիրքը» խոշոր կուլտուրական երեսույթ էր: Դա զանազան հանցանքների պատճի շափը որոշող օրենքների մի մեծ ժողովածու է, որպիսին Գոշից առաջ հայ կյանքում գոյություն չի ունե-

Ենթադրությունը պահպանվելու համար առաջարկություն է տարածվեց և ըստ պահպանվեց համարյա ողջ Հայաստանում. հետագայում նաև խոշոր շափով օգտագործվեց Վրաստանի թագավորների կողմից՝ իրենց երկրի համար նույնանման ժողովածու կազմելիս:

Ճիշտ է, Գոշի Շնառաստանագիրքը հիմնականում ֆեոդալական հասարակության հիմքերի պաշտպանություն էր, բայց այնուամենայնիվ դրական երևույթ էր, որովհետև սահմանում էր օրենքներ, և որոշ չափով սահմանափակում էր ֆեոդալների կամաւականությունները ժողովրդի հանդեպ:

Միջնադարյան հայ գեղարվեստական գրա-
գութեակները կանության մեջ աշքի են ընկնում Գոշի
և Առակները։ Գոշից առաջ հայերն ի հարկե ծանոթ էին առա-
կային ժանրի ստեղծագործություններին։ Առակներ կային ժողո-
վլրդի բանավոր ստեղծագործության մեջ, բացի այդ, կային նաև
առակներ, որ թարգմանված էին Հունարենից։ Այսպես օրինակ,
XII դարում թարգմանվել էին Օլիմպիանու առակները, որ Եզո-
պոսի առակներիցն են՝ Հոետորական ոճով շարագրված։ Հավա-
նորեն VII—VIII դարերում թարգմանվել է նաև «Թարոյախոս»
(«Ֆիզիոլոգ») կոչվող առակների գիրքը, որի հովան հեղինակը
հայտնի չէ։ Գրիգոր Մագիստրոսի նամակներից երեսում է, որ Տ
դարում, դպրոցներում աշակերտներին քերականության և ճար-
տասանության հետ միասին սովորեցնում էին նաև «առասպելա-
վարժություն», այսինքն աշակերտներին գրել, անդիր անել և
մեկնել էին տալիս առակներ։

Սակայն մինչև XII դարը, մինչև Մխիթար Գողը, հայ հեղինակներից ոչ ոք գեռ փորձ էր արել թե՛ ժողովրդական ստեղծագործության մեջ եղած և թե՛ թարգմանաբար գոյություն ունեցող առակների հիման վրա գրել ինքնուրուցն առակներ։ Դրա համար դեռ հասարակական այն նախադրյալները չկային, որոնք ստեղծվեցին XII դարում Զաքարյանների տիրապետության տակ գտնված Հայաստանում և Կիլիկիայում։ Առակը որպես ժողովրդական ստեղծագործական ժանր, որպես աշխարհիկ բովանդակության գործ, արհամարհված էր եկեղեցական գրողների կողմից, և բնական է, որ այդ ժանրը առանց զժվարությունների չէ, որ Գողը մտցրել է գրականության մեջ։ Դա երեսմ է նրա գրքի

վերջաբանից, որտեղ ասում է, «Եվ այս կազմված առակները առ վարտվեցին Քրիստոսի փառքի համար...» Իսկ հիմա ոչ ոք թող մեզ շծաղրի, որովհետև աշխարհականների սովորությամբ վարպելու փոխարեն, հարմար համարեցինք այս առակներից վերցնել գրուցադրության և ասացվածների մեջ։ Ներք ոմանց համար հաճելի թվի, ուստի ասաւո՞ւ շնորհ համարվի, ապա թե ոչ թող նրա սիրով մեզ ներեն։ Ինչպես պարզվում է, Գոշը իմացել է ի հարկե, որ իրեն ծաղբողներ կլինեն այդ նորամուծության համար, բայց նա չենթարկվելով դրան, գնացել է առաջավոր գրականության շարժման հոմով։

Միիթար Գոշը սերտ կապված էր այն ժամանակներում իշտ խող ֆեոդալական իշխանների հետ։ Նա Զաքարի իշխանի խոսակովանահայրն էր, մեծ հեղինակություն էր վայելում նրա մոտ, ամեն կերպ օժանդակում էր նրա ձեռնարկումներին և ըմբռատ իշխաններին համոզում, որ ենթարկվեն նրան։ Այս հանգամանքն իր արտահայտությունն է գտել Գոշի ինչպես «Իտառստանապարում», այնպես էլ մի շարք առակներում։ Սակայն Գոշի քարոզ կենտրոնական իշխանության անհրաժեշտության և հեղինակավորության մասին, ժողովրդի անկախության պաշտպանության տեսակետից այն ժամանակիվ հանգամանքներում առաջադիմական էր։

Մի առակում պատմում է, թե ինչպես բանջարները տրացնելում են թագավորից, որ իրենց վրա իշխան է կարգել ճակնդեղին, որը պողով որովայնի է։ այս լսելով, թագավորը հրամայում է տանջել նրանց, ասելով. «Ինչո՞ւ եք հանդգնում ձեր իշխանի դեմ, որին պարտական եք հնազանդել, որ անկարգություն մինի, ոչ թե քննիչ լինել»։ Գոշը, այսպիսով, խրատում է անհնագանդ մինել, թագավորներին ու իշխաններին լքնադատել ու հավատարիմ լինել նրանց։

Գոշն իր առակների մեջ հաճախ տալիս է նաև մարդկանց համար օգտակար խրատներ, բայց այդ առակների արժեքը գերազանցապես պայմանավորվում է նրանց մեջ օբյեկտիվորեն առատացութած իրականությամբ և ժողովրդի տրամադրություններով։ Գոշի առակներից ամեն մեջը բաղկացած է երկու մասից, այն է՝ բուն պատմվածքից և բարոյա-խրատական եզրակացությունից։ Ի հարկե, իրոն կրոնական աշխարհայացքի տեր մարդ։

Գոշն ավելի ուշադրություն է դարձրել առակների վերջին մասի վրա, իսկ բուն պատմվածքները երբեմն սխեմատիկ են, բռնազբուսիկ բնույթ ունեն, — մանավանդ երբ Փարուղան ու այուժեն ինքն է ստեղծում։ Բայց հաճախ նա իր առակների պատմվածքային մասը կազմում է, օգտագործելով ժողովրդի մեջ եղած բանավոր առակները, անեկդոտները և գրույցները։ Այս դեպքում նրա առակները սրամիտ են, հյութեղ, և նրանց մեջ ցայտում կերպով երևան են գալիս իր ժամանակի հասարակական հարաբերությունները և տրամադրությունները։ այսպիսի առակների մեջնաբանական-խրատական մասը, բնականաբար, այնքան էլ չի համապատասխանում պատմվածքային մասի բուն բովանդակությանը։ Օրինակ։

«Զիներին մեղադրում էր իրենց թագավորը ասելով՝ թե ինչո՞ւ եք ուստում ձեզանից մանր կենդանիներին։ Նոքա համարձակվելով ասացին. «Թեզանից ենք սովորում, որովհետև շատերը գալիս են քեզ երկրպագելու, և դու կլանելով նրանց քեզ կերպով ես վեր առնում, ուստի մենք ևս քեզ տեսնելով, հանգստում ենք»։

Այս մի առակի ամբողջ պատմվածքային մասն է, որի մեջ, անկախ այն բանից, թե հեղինակն ինչպես է մեկնաբանել, պարզ երկում է իշխողների և շահագործողների դեմ ուղղված ժողովրդական սատիրան։

Մի ուրիշ առակի մեջ հրաշալի կերպով արտահայտված է աշխատավորի բարձր ինքնագիտակցությունը հետեւյալ այլաբանությամբ։ Շնորհին թագավորելու ժամանակ երկրպագություն էր պահանջում ամեն նյութերից։ թագավոր էր կոչում իրեն, որովհետև թագավորի պատկեր էր եղել, և նորանով անբարտավանանում էր արծաթագործների և ուրիշների վրա ևս։ Ամենքը եկան, բայց ցորյանն շեկալ, ասելով, ես կմնամ մինչեւ որ առաջ ինքն կդա ինձ կերպագեն»։

Այնուհետև, կան և շատ առակներ, որոնց գործող անձինք զանազան արհեստների ներկայացուցիչներ են. դրանց մեջ երկում է միշնադարյան հայ քաղաքների արհեստավորական արդյունագործության ունեցած հասարակական նշանակությունը և արժեքը։ Այն հագամանքը, որ այդ առակներում միշտ արհեստներից գերադասությունը տրվում է երկաթագործությանն, իրու ամենա-

օգտակար արհեստի, ցուց է տալիս, թե այն շրջանում ինչ մաս կարդակի վրա էր գտնվում քաղաքների արտադրական-տնտեսական կյանքը:

«Պղնձագործն ու երկաթագործը միմյանց խնամություն անելու ժամանակ յուրյանց արվեստով մեծ մեծ խոսում էին, այնպէս որ հակառակություն եղավ, և գնացին ծերերի ատյանը: Նորա մեծարգի ցուց տվին երկաթագործին, ասելով, թե հասարակաց օգտակարը՝ պատվական է»:

Առհասարակ Մխիթար Գոշի առակների գիրքը ճանաչողական մեծ արժեք ունեցող պատմական խոշոր փաստաթուղթ է:

Մխիթար Գոշը ցուցաբերել է առակագորի բարձր կուլտուրայի նրա առակների մեջ, որոնց թիվը 190-ի է հասնում, իբրև գործող անձինք ծրագրված հաջորդականությամբ հանդես են գալիս երկնական մարմինները, ծառերը, ծաղկները, հացաբույսերը, բանջարները, լեռները, գետերը, ջրային կենդանիները, ընտանիք վայրենի անասունները, միջատները, թռչունները, և, վերջապես, մարդիկ: Գոշը ընթերցողին զարմացնում է երկնային տարբեր մարմինների, բուսական և կենդանական աշխարհի բազմազան ներկայացուցիչների առանձին, բնորոշող հատկությունների ահագին գիտությամբ ու ճանաչողությամբ, և դրանց վարպետ օգտագործմամբ՝ իր առակների գործողության հյուավածքի համար:

Գոշի ստեղծագործական արժանիքներից մեկն էլ այն է, որ նա երկարաբան չէ, գրում է շատ սեղմ ու հղված ոճով. սովորաբար նրա առակների հենց առաջին նախադասությունը դիպուկ կերպով արտահայտում է տվյալ առակի երգիծական իմաստը. «Օխնակ՝ «Փիլը տվեց իր որդուն Պղատոնին, որ նրա մոտ ուսանի իմաստություն...», «Եշը գնաց սար՝ ճզնավոր լինելու...», «Գոմեշը կամեցավ երկրաշափ լինել...»:

Մխիթար Գոշից հետո՝ XIII դարից սկսած հայ առակագործությունը զարգացավ ուժեղ կերպով: Կազմվեցին առակների բազմաթիվ ժողովածուներ, որոնք դառնան ամենամասսայական, ամենասիրված գրքերից: Խսկապես, XIII դարից մի նոր էտապ է սկսվում հայ գրականության պատմության մեջ. դա գրականության լիակատար աշխարհականացման, վերածնության երկրորդ շրջանն է, որը նախապատրաստվեց և սկզբնավորվեց X—XII

դարերի ընթացքում: Եվ այդ վերածնության նախապատրաստող ների և սկզբնավորողների ամենախոշոր ներկայացուցիչներն էին Գրիգոր Նարեկացին, Հովհաննես Սարկավագը, Ներսես Շնորհակը և Մխիթար Գոշը:

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽIII—XVI ԴԱՐԵՐՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XIII—XVI դարերը հայ գրականության զարգացման ամենաշշանավոր շրջաններից են, երբ X դարից սկսած վերածնությունն ավելի խորանում է և առաջանում է աշխարհաբար լեզվով աշխարհիկ գրականությունը:

Արաբների, սելջուկների և բյուզանդացիների ավերածությունների հետքերը Հայաստանում դեռ մնում էին, երբ XIII դարի առաջին կեսին երկիրը ներխուժեցին մոնղոլական բանակները: Մոնղոլները գրավեցին Հայաստանը և մեծ հարված հասցրին ժողովրդի տնտեսական և քաղաքական կյանքին: Ժամանակակից հայ պատմիչները ցնցող մանրամասնություններով նկարագրել են ժողովրդին հասնող սոսկալի աղետները — մասսայական կոսորածները, ծանր հարկերը, կողոպուտն ու հափշտակությունները:

Մոնղոլների տիրապետության շրջանում քաղաքական և տրնտեսական տեսակետից համեմատաբար լավ վիճակի մեջ էին Կիլիկյան հայկական պետությունը և Հայաստանի արևմուտքում ու հարավում գտնվող մի շարք քաղաքները՝ Երզնկա, Սերամտիա, Ամիդ և այլն, քաղաքներ, որոնք գտնվում էին Միջերկրական ծովի Կիլիկյան ափերից ղեպի Պարսկաստան ու Հնդկաստան տանող առևտրական մեծ ճանապարհի վրա: Այդ բանին առանձնապես նպաստեց Կիլիկիայի Հեթում I թագավորի՝ մոնղոլների հետ կնքած դաշինքը, ըստ որի՝ երկու պետությունները պատերազմի դեպքում պարտավորվում էին իրար օգնելու:

Կիլիկյան հայկական պետականությունը ինչպես XII դարում, նույնպես էլ XIII—XIV դարերում խոշոր ազգակ հանդիսացավ Քայլական կուլտուրայի գարգացման բոլոր բնագավառներում:

XIV դարի վերջերին Եգիպտոսի մամելլուկների դեմ մղած երկարատև և անհավասար կոփների հետևանքով վերանում է Կիլիկիայի հայկական անկախ պետությունը: Հայ ժողովրդի վիճակն ավելի է ծանրանում: Լենկթեմուրի ավերածու արշավանքից հետո Հայաստանն ընկնում է Ակ-կոյոմլու, ապա Կարա-կոյոմլու թուրքմենական իշխանությունների տիրապետության ներքո. իսկ XV դարում Պարսկաստանը և Օսմանյան կայսրությունը Հայաստանը բաժանում են իրենց միջև: Այդ պետություններն անընդհատ իրար դեմ պատերազմներ էին մղում, որ մեծ մասմբ տեղի էին ունենում Հայաստանի տերիտորիայի վրա: Պատերազմների հետևանքով տեղի էին ունենում ավերածություններ, կոտորածներ և ժողովրդի մասսայական տեղահանումներ ու գաղթեր:

Այս ծանր վիճակը շարունակվեց ամբողջ միջնադարի ընաթացքում:

Հայ ժողովուրդը XIV—XVI դարերի աղետալի ժամանակաշրջանում շատ է տուժել, սակայն նրա մտավոր կուլտուրական կյանքը երբեք չի ընդհատվել: Բավական է ասել, որ այդ դարերում ուժեղ կերպով զարդանում են հայ աշխարհիկ քնարերգությունը և ժողովրդական բանահյուսությունը: Համաշխարհային կուլտուրայի համար մեծ արժեք ներկայացնող հայկական երկու տասնյակ հազարից ավել ձեռագրերի մեծ մասը մեղ հասել է հենց այդ ժամանակաշրջանից:

VIII—XVI դարերում հայ հասարակության ներսում ավելի է սրվում պայքարը եկեղեցու և առհասարակ ֆեոդալների (օտար թե տեղական) դեմ: Տեղի էին ունենում գյուղացիական ապստամբություններ: Իսկ Հայաստանի արևմուտքում ու Կիլիկյան պետության սահմաններում պայքար ֆեոդալների դեմ ծավալվում էր նաև քաղաքացի բնակչության մեջ: Հայ ֆեոդալականությունը գնում էր դեպի քայլացում:

XIII—XVI դարերում ժողովրդի քաղաքական ակտիվության աճումը գեղարվեստական գրականության զարգացման վրա խոշոր ազդեցություն թողեց: Այդ ազդեցությունը XIII դարից սկսած արտահայտվեց գրականության թե լեզվի և թե բովանդակության աշխարհականացմամբ: Այդ ժամանակաշրջանում եկեղեցա-

կան կրոնական բանաստեղծությունն, իհարկե, շընդհատվեց, բայց թուլացավ և բոլոր մեծ բանաստեղծներն սկսեցին գրել աշխարհիկ նյութի մասին, աշխարհիկ մոտիվներով ու ժողովրդի խոսակցական լեզվին մոտ նոր գրական լեզվով:

Ժողովրդական խոսակցական լեզվի՝ բարբառների տարրերը, Հայաստանի հասարակական կյանքի զարգացման ազդեցության շատակ, թափանցել էին գրաբարի մեջ դեռ հին շրջանում: Միտակ, թափանցել էին գրաբարի մեջ դեռ հին շրջաններու մասմբ անընդհատ իրար դեմ պատերազմներ էին մղում, որ մեծ մասմբ տեղի էին ունենում Հայաստանի տերիտորիայի վրա: Պատերազմների հետևանքով տեղի էին ունենում ավերածություններ, կոտորածներ և ժողովրդի մասսայական տեղահանումներ ու գաղթեր:

Դրական այդ նոր լեզվում, որով գրում էին բանաստեղծները, բարբառների և գրաբարի համադրությունն է: Այդ լեզվում կան բարբառային և գրաբարային ձևեր ու ոճավորումներ: Նա բոնում է բարբառների և գրաբարի միջին տեղը, որի համար և կոչվում է միջին հայերեն: Միջին հայերենի զարգացումով՝ գրաբարը դարձավ կաստայական լեզվ և իշխող մնաց միայն եկեղեցու սահմաններում: Միջին հայերենի զարգացումը հող ստեղծեց աշխարհաբար գրական նոր լեզվի համար:

XIII—XVI դարերում Հայաստանում ամենից ուժեղ զարգանում է գեղարվեստական գրականությունը:

Հիշյալ դարերում շարունակում է ծաղկել նաև ժողովրդական բանահյուսությունը: Ծաղկում են մասնավորապես քնարերգությունը և առակախոսությունը: Հայ միջնադարյան ժողովրդական առակներում մեծ մասամբ մերկացվում են հոգեոր և աշխարհիկ ֆեոդալները, եկեղեցին, տղիտությունը, ընշաքաղցությունը և այլն: Ժողովրդական քնարերգության թեմաներն են՝ սերը, նվիրվածությունը, հայրենի երկրի կարուր, պանդիստությունը: Ժողովրդությունը կերտել է հարսանիքի, ծննդյան, օրորոցի և մահվան հրաշալի երգեր:

Ժողովրդական քնարական երգերը մեղ են հասել «հայրենիներ» և «անտումիներ» անունով:

Կուլտուրայի մյուս բնագավառներում էլ շարունակում են երեան գալ շատ նշանավոր երևույթներ: Առանձնապես հարուստ է այդ դարերի հայկական մանրանկարչությունը: Արվեստի այդ

Ճյուղում, անդամ կրտնական գրականության նկարագարդման մեջ արտացոլվեցին իրական հյանքը, ժողովրդի աշխարհիկ ձգտումը ու այդ ևս հանդիսացավ հայ վերածնության արտահայտություններից մեկը։ Հայ մանրանկարչության այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Թորոս Ռոսլինը և Սարգիս Պիծակը, իրենց ստեղծագործությամբ մեծագույն նշանակություն ունեն։ Հայկական ճարտարապետության մի շարք գեղեցիկ հուշարձաններ (Այրիվանք-Գեղարդ) մնացել են նույնպես այդ դարերից։ Նույն դարերում են ապրել մեր պատմագրության մի շարք փայտն դեմքեր՝ Վարդանը, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելանը, Սմբատ Գունդստաբը, Հերումը, Թոմա Մեծոփեցին։

Պատմագիրները, ի տարբերություն գեղարվեստական գրողների, այդ դարերում գեռ շարումակում էին գրաբարով գրել։

XIII—XVI դարերի մեզ հայտնի հայ աշխարհիկ բանաստեղծների թիվը բավական մեծ է։ Հին ձեռագիրներից գեռ հայտաբերվում են նորանոր դեմքեր։ Բանաստեղծներից ամենահայտնին են՝ Ֆրիկը, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Երզնկացին, Առաքել Բաղիջեցին, Մկրտիչ Նաղաջը, Հովհաննես Թկուրանցին, Գրիգորիս Աղբամարցին, Նահապետ Գուշակը, Խաչառու Գնունյանցը, Հովհանի Սեբաստացին, Զաքարիա Կընունյանցը, Ստեփանոս Վարագեցին, Ներսես Մոկացին, Դավիթ Սալածորեցին, Մինաս Թոխարցին, Ղազար Սեբաստացին, Պետրոս Ղափանցին և ուրիշներ։ Այդ դարերի ամենախոշոր արձակագիրն է առակախոս Վարդան Այգեկցին։

Միջնադարյան հայ պոեզիային ուսանալոր բանաստեղծ և գրականագետ Վալերի Բրյուսովը հետևյալ գնահատականն է տվել. «Հայկական միջնադարյան լիրիկան, — ասում է նա, — հայ ժողովրդի բարձր և ամենաինքնուրույն կերտվածքն է պոետական ստեղծագործության ասպարիզում։ Հայկական միջնադարյան լիրիկան համարյա ոչ մի կախում չունի եվրոպական պոետիայից։ Արդարեւ, ի՞նչ կարող էր տաղ լիրիկական ստեղծագործությանը արևմտահելլոպական XIII—XIV դարերի պոեզիան, որը դեռ նոր էր սաղմնավորվում բռլոր երկրներում, ներառյալ նաև առաջավոր իտալիան։ Այնուհետև Բրյուսովը ճշմարտացի կերպով նշում է նաև, որ միանգամայն սխալ է կարծել, թե միջնադարյան հայ պոեզիայի վրա ուժեղ ազդեցություն են թողել իրա-

նական։ Ա արաբական պոեզիայի զարգացման պատմությանը իրանականին համարականին համահավասար նշանակություն է տալիս։ Միջնադարյան հայ պոեզիայի մասին Բրյուսովը շարունակում է։

«Միջնադարյան հայ քնարերգությունը, որ փայլում է ծիածանի յոթներանգ գույնով, որ կրում է բոլոր թանկագին քաղերի շողքը, որ դաշտային ծաղիկների դուրեկան ախորժ բույրն ունի, մերթ խոլոչում՝ անտառային առվակի նման, մերթ ամպագոռ՝ ինչպես լեռնային վտակ, որ ոմի քնքուց սիրո ախորժալուր բառեր և հաղթական տենչանքի այրող խոսքեր, որ գիտե առանձին մասերը հնագանդեցնել ընդհանուր միտումին — համաշխարհային գրականության մեջ՝ իսկապես որ հայկական ոգու հաղթանակն է»։

Ֆ Ր Ի Կ

Հայ առաջին բանաստեղծը, որ գրել է Պայտել աշխարհաբար լեզվով, այսպես կոչված՝ միջին հայերենով — Ֆրիկն է։ Ֆրիկն ապրել է XIII դարում։ Մեզ մի շարք ինքնակենսագրական տեղեկություններ են հասել նրա ոտանավորներից, որոնցից պարզում է, որ նա եղել է աշխարհական, որևէ կապ չի ունեցել եկեղեցու և հոգևորականության հետ։ Նրա կյանքը խաղաղ չի անցել։ Մոնղոլական տիրապետության ժամանակ հարկանաներից կեղեքվելով, կորցրել է իր ամբողջ ոնեցվածքը և ծայրահեղ վրագորության դուռն ընկել։ Մի ոտանավորի մեջ նա գրում է։

Զինչ մեծամեծ վաստակ արի,
Այն դարձավ հողվակ փոշի,
Ժողովեցի շատ մի բարի,
Էռպակ արի զնա թաթարի։

Ֆրիկը ոչ միայն իր ունեցվածքն է կորցրել, այլև իր հարազատներին։ Անհուն վշտով նա պատմում է, թե ինչպես շարուցացավ վճարել պահանջվող հարկը, որի հետևանքով իր որդու գրավ վերցրին դաժան հարկանաները։

Տուն ու տեղ կորցրած բանաստեղծը թողել է իր բնակավայրը, պանդստության գավազանը բռնած, որդու գտնելու հույսով

ზოგელ է զանագան վայրեր; Ճիշտ հայտնի չէ, թե որտեղ է ծնվել
և ուր վախճանվել Ֆրիկը: Հայտնի է միայն, որ նա պանդխտու-
թյան ընթացքում երկար տարիներ ապրել ու աշխատել է Կիլի-
կիայի Հարդա քաղաքում:

Ֆրիկը մեղ հասել է բավական հարուստ գրական ժառան-
չական գույն— մոտ 45 լիրիկական բանաստեղծություն:

Ֆրիկի ստեղծագործությունը հիմնականում ուղղված է մոն-
ղոլական լծի և փեռալական կարգերի դեմ. Ֆրիկը խոր զգաց-
մանքով՝ երգել է կեղեգվող ժողովրդի վիշտը և բուռն պաթոսով
արտահայտել նրա բողոքն ու ցասումը:

Երիկի բարոյախորա-
սական ուսանավոր-
ունեցել: Սկզբում նա դժգոհելով իրակա-
րունա-բարոյականությանը: Այս շրջանում նրա մեջ ուժեղ է հան-
գերձյալ կյանքում երջանկություն դանելու հավատքը: Մի շարք
տատանավորներում նա կրկնել է հին եկեղեցական-կրոնական բա-
նաստեղծության հիմնական մոտիվները, թե՛ աշխարհն ունայն է:
մարդիկ շպետք է մարմնական վայելքների մասին մտածեն, այլ
գետք է բարեգործություն անեն, աղոթեն, իրենց մարմինը զբր-
կանքների ենթարկեն՝ վերջին դատաստանին հոգիները փրկելու
համար:

Սակայն այդ բանաստեղծությունների մեջ հաճախ հանդի-
պում են ժամանակի սոցիալական իրականության մասին բողո-
քի սուր արտահայտություններ: Ֆրիկի դեմոկրատիզմը երևում է
նրա առաջին շրջանի ստեղծագործությունների մեջ էլ: «Տաղ
Ֆրկան ասացեալ» տատանավորում նա զարգացնում է այն միտքը,
թե մեռնողն աշխարհից ոչինչ չի տանում իր հետ: Այդ կապակ-
ցությամբ նա մերկացնում է հարուստների անասնական եսակա-
նությունը և ագահությունը:

Իսկի տեսել չե՞ս, կամ լսել
Խել մեծատուն մարդ ի մեռել,
Իսկի դեկան հետ չի տարել:
Խեն է ժողվել, ինքն է կերել;
Հաց մի չիշխեաց յիւրմէն ուտել
Թէ չէ ոռճիկս իւրն արարել,
Զբոցն ու կրակն ես քեզ վառել:

Աշխատավորության քրաինքով ապրող մեծատունների, աղ-
նըլվականների նկատմամբ տածած ատելության ավելի քան ուժեղ
արտահայտություն կա Շնորին Ֆրկանն ասացեալ բան մեկնու-
թեան ոտանավորում: Նա մերկացնում է ազնվականի հղիացած
կյանքի պատկերը, ցուց է տալիս նրա գործած անիրավու-
թյունները.

Է՛ր ես հազել գու նասին ու նստել զինչ մէկ ի նմին,
Ճորտերն են կանգնած յառչել զըռավաշ գինին լընգին,
Տառապելքն են ի դուռն եկել, որ յիւրեանց կըտոր
մուրային:
Կանշեր թէ ի զատ հանէք, երեսէս որ իրք շուտէին:
Յորդամ դատաստան լիներ, որ ըզքեզ յառաջ կոշէին,
Ինչ ես դու տվել նոցա, որ ի քո դուռըն կու գային,
Ուր է քո ոսկի կապայն, որ ծառային ի թեն առնուին,
Ուր է փափուկ անկողինդ, որ գիշերըն քեզ փոէին:
Այսօր ոչ կապայ ունես, ոչ անկողին ի մեջն ի հողին,
Ցեղուց հուր ուր բոց ածեն, ի բերան ըռավաշ խմողին:

Սացիալական եվ Ֆրիկի ստեղծագործության առաջին շրջա-
բաղաբական մոտիվ- նում արտահայտված սոցիալական բողո-
եները Երիկի ուսեղ- քի ոգին ու քաղաքական մոտիվները երկա-
ծագործության մեջ ըրբդ շրջանում ավելի են ուժեղանում:
Ֆրիկը թողնում է երկնային կյանքով միսիթարելու գաղափարը:
Նա ուժեղ կերպով արտահայտում է իրական աշխարհի պաշտա-
մունքը. մարդկանց խաղաղ ու երջանիկ կյանքն ուզում է այդ
աշխարհում տեսնել, ուստի բուռն թափով հարձակվում է մոն-
ղոլական լծի ու ֆեռդալական կարգերի վրա և ցուց տալիս
այդ կարգերի անարդարությունը:

Ֆրիկն այս շրջանի իր բանաստեղծություններում հանդես է
գալիս որպես խոշոր դեմոկրատ հումանիստ ու հայրենասեր:
Նա մտածում է ոչ միայն հայ ժողովրդի, այլև մյուս ժողովուրդ-
ների մասին: Ժողովուրդների երջանկությունը նա փնտրում է
նրանց ազատության, իրավահավասարության և համերաշխու-
թյան մեջ:

Ֆրիկի երկրորդ շրջանի ստեղծագործությունը ուսալիստական
է և ունի ճանաչողական մեծ արժեք: Նա իր երգերում կարողա-

ցել է լայն ընդհանրացումներ՝ անելու Որքա՞ն բնորոշ է «Վասն Արդուա Դանին և Բուղալին» բանաստեղծության մեջ գծված պատկերը XIII դարի հայ աշխատավորության ծանր կյանքի համար:

Որքա՞ն բնորոշ է մոնղոլական տիրապետության շրջանի զբանահատականը «Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծության մեջ:

Հիմիկ դժբարեց բաներու,
Որ թաթարն եղաւ թագաւոր.
Զրկեց զամենայն աշխարհս,
Ու զգողերն եղեր մեծաւոր:

Որքան խոր և հարազատորեն է պատկերացրել Ֆրիկն աշխատավորության վիճակը, նույնքան էլ խոր և հարազատորեն է արտահայտել նա աշխատավորության տրամադրությունները, մտքերն ու զգացմունքները: Նույն այդ «Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծությունը ցույց է տալիս, որ Ֆրիկը չի հաշտվել իր ժամանակի իրականության հետ: Վեճի բռնվելով ֆալաքի-ճակատագրի հետ, նա ցույց է տալիս կյանքում մարդկանց մեջ գոյություն ունեցող բոլոր անիրավացիությունները: Նա ճակատագրին «Ճուռ դատավոր» է անվանում, որովհետև սա մարդկանց հավասար աշքով չի նայում և նրանց կյանքը տնորինում է հակառակ նրանց արժանիքների:

Էյ շարխ, ըզվատին տունըն
Կու լեցնես ակով դու բոլոր,
Զաղէկն ի յերկիր ի վար
Վտարես որ ժողովէ կտոր:
Զայն որ խողարած շվայլէ
Կու զուգես ահեղ ձիաւոր,
Եւ զղորդ մարդկանց ըզտոմըն
Կու քակես առանց բահաւոր:

Ֆալաքն իր հերթին գայրանում է բանաստեղծի վրա, նրան առնենա հալելուր է անվանում, ասելով՝ «Գզիսես, թե արարչէն լինի...»: Ամեն ինչ արարչի կամքով է լինում: Ինքն էլ նրա կամքով է գործում: Այսպիսով, Ֆրիկը նրամտորեն ֆալաքին տրված «Ճուռ դատավոր» կոչումը փոխանցում է «արարշին»:

«Վասն թալեհի և Պոճի ի Ֆրիկ երգչէծ բանաստեղծության մեջ նա նորից կանգ է առնում իրեն խոր հուզող և մտածում: Ների տեղիք տվող երկույթների վրա: Նա ու մի կերպ չի հաշտվում մարդկանց տաղբեր վիճակների հետ, այն բանի հետ, որ մեկը թագավոր է, մյուսը՝ մոխրի վրա պառկած աղքատ, մեկը ամեն բարիք վայելելով՝ ծերության է հասնում, մյուսը՝ գերության մեջ է տանջվում: Ֆրիկը խոստովանում է, որ ինքը երկար ժամանակ է, ինչ մտածում է այդ հարցերի պատասխան գտնելու մասին:

Մտօքս այս բանիս վերա,
Շատ մի ժուկ ի հոգս եմ անդած,
Կասեմ թէ այս է՞ր լինի,
Որ զամէն հավասար չէ զուգած...

XIII դարում ապրող բանաստեղծը, ի հարկե, չեր կարող դատնել իրեն տանջող հարցերի պատասխանը: Բավական է, որ նա իր ժամանակվա հասարակական կարգերը համարել է անարդար, որ անհանդուրժելի է գտել մարդկանց միջև գոյություն ունեցող ամեն անհավասարություն: Իսկ այս Ֆրիկին դասում է իր էպութայի Արևելքի և Արևմուտքի ամենաառաջավոր մտածողների շարքը:

Ֆրիկի ստեղծագործության բովանդակութան ի Ֆրիկ գրքոյն» թյան լավագույն գծերն ամենացայտուն, բանաստեղծությունը ամենաամբողջական արտահայտություն էն գտել նրա վերջին գրվածքներից մեկի՝ «Բան ի Ֆրիկ գրքոյն» ընդարձակ լիրիկական բանաստեղծության մեջ, որ անշուշտ պատկանում է հայ կուլտուրայի ամենախոշոր հուշարձանների թվին:

«Բան ի Ֆրիկ գրքոյն» բանաստեղծության մեջ Ֆրիկը վիճի կանչելով աստծոն՝ նախ և առաջ լուրջ կասկածի է ենթարկում Աստվածաշնչում նկարագրված արարշագործության ճշմարիտ լինելը: Ֆրիկը չի հավատում Աղամ Եվայի լեզենդին: Նա սուր հեգանանքով իր զարմանքն է հայտնում այն բանի մասին, որ իբր թի, աշխարհիս բոլոր ժողովուրդները կարող էին երկու մարդուց առաջացած լինել:

Գէմ մէկ Աղամ էր ի դրախտին,
Եւ մեկն Եւայ իւր նմանին.

Եւ մէկ քարեառ համազգալին,
Մինչև կերեալ պտղոյ ծառին:

Սրդ այս բանս է հիանալի,
Եւ առաւել զարմանալի.
Թէ մէկ Ադամ և յեւայէ,
Որքա՞ն ազգեր ծնան յերկրի:

Այնուհետև թվելով երկրի վրա եղած տարբեր ազգությունները, Ֆրիկը զարմանում է նրանց վիճակների մէջ եղած տարբերությունների համար և իր բողոքն է հայտնում: Նա կողմնակից է ազգերի համերաշխ կեցության, խաղաղության և իրավահավասարության: Նկատի ունենալով հայ ժողովրդի այն ժամանակի պատկերը, մոնղոլ իշխանավորների կողմից ժողովրդի զլիին անընդհատ թափվող աղետները, նա հաշիվ է պահանջում աստծուց. Կթե աստված ռարդար է և յիրավի», հապահնչո՞ւ է թույլ տալիս երկրի վրա այդքան անիրավություններ.

Քանի՞ կանայս առնեն այրի,
Եւ որքա՞ն որբ քրիստոնէի
Որքա՞ն արին հեղան յ' երկրի,
Քանի՞ առնեն բան խոտելի:
Որքա՞ն տանջին զմեղ յաշխարհի,
Եւ կեղեքն զկեանս մեր յայտնի.
Եւ դու ներե՞ս յամենայնի,
Ու անտես առնես զմեղ ի վշտի:

Ֆրիկի այս ուսանավորից փաստորեն ստացվում է այն եղակացությունը, թե աստված ռարդար և հիրավի» չէ, հետևաբար, նա իբրև աստված դոյություն էլ շունի: Այսպիսով, Ֆրիկը ծառանում է քրիստոնեական փիլիսոփայության դեմ, որովհետեւ ըստ այդ փիլիսոփայության՝ աստծու հիմնական հատկանիւը արդար, բարի, բարերար և իրավացի լինելն է. որից բղխում է այն, թե եղածի դեմ շպետք է տրտնջալ, շպետք է ըմբոստանալ, այլ պետք է համակերպել, որովհետեւ ամեն ինչ արարի կամքով է լինում: Ֆեոդալ շահագործողների աշխարհայացքն էր այս եկեղեցականությունը, որպես միաժամանակ ֆեոդալականության խոշոր ներկայացուցիչ, դարձրով այդ էր քարոզում:

Լինելով դեմոկրատ, աշխատավորության հարազատ տրամադրությունների արտահայտիչ, Ֆրիկն իր լավագույն ստեղծագործության մեջ զարդ ու փշուր է անում կղերականության ստեղծած ուսակցիոն գաղափարները: Նա ոչ միայն մոնղոլական լծի դեմ է բողոքում, բոլորովին անբնական համարելով այն, այլև ըմբոստանում է ֆեոդալական հասարակական հարաբերությունների դեմ: Ինչպես մի քանի բանաստեղծություններում, այնպես էլ այստեղ Ֆրիկը միանգամայն անարդար բան է համարում մարդկանց միջև գոյություն ունեցող սոցիալական անհավասարությունը:

Այս ամենայն թո՛ղ գա անցնի,
Զոր ասացի վասն իմ ազգի.
Եւ ա՞յս էր բան քո հրամանի,
Արդար իրաւ դատաւորի:
Որ մէկն ապրի տասն տարի,
Մէկն հարիւր այլ ամելի.
Մէկն ո՛չ ի տասն հասանի,
Երկու երեք ամսոց մեռնի...
Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի.
Մէկին հազար ձի և զորի,
Մէկին ո՛չ ուզ մի, ոչ մաքի...:

Խոր կերպով արտացոլելով իրականությունը՝ Ֆրիկի բանաւութեղծությունները ճնշվողների և շահագործվողների մեջ զարթեցրել են պայքարի ողի ճնշողների և շահագործողների դեմ: Ֆրիկի ստեղծագործությունն իր էությամբ ժողովրդացին է:

Առաջավոր գաղափարներով հագեցված իր ստեղծագործությամբ Ֆրիկը հայ գրականության վերածնության ծաղկման շրջանի ամենացայտում արտահայտին է հանդիսանում:

Ֆրիկի պոեզիայի Ֆրիկի ստեղծագործության գեղարվեստապատճերավորությունը կան արժանիքը ոչ միայն այն է, որ հագեցված է իրականության խոր ըմբռնումով, այլև այն, որ ինքնատիպ է, ունի վառ և գունագեղ պատկերավորություն, ուժեղ կանոնավոր ոիթմ և երաժշտականություն:

Ֆրիկն ստեղծագործել է ժողովրդի համար, ուստի նա պիտակցաբար գրել է պարզ և հստակ լեզվով ու ոճով:

Ֆրիկը հանցեղ պարզ է խոսել,
Որ ամենայն մարդ իմանա:

Նա վարպետորեն օգտագործել է ժողովրդական բանահյուռ սության բազմերանգ, հյութեղ, պատկերավոր արտահայտությունները և համեմատությունները, որոնք նրան լայն հնարավորություններ են տվել իր հարուստ և խոր խոհերն ու գգացմունքներն արտահայտելու Այսպիս օրինակ, մի տեղ Ֆրիկն իրեն համեմատում է ծերու անկարող բոված սերմի հետ, ցուց տալու համար կյանքի ծանր պայմանների ազդեցությունն իր վրա։

Ոչ ծիմ, ոչ բուսանիմ
Զերդ աղնձած սերմ եմ գերիս...

Պարտքերի պատճառով կրած սարսափները ցուց տալու համար, նա իրեն համեմատում է քամուց դողացող ուռենու հետ։

Ուսկա ի պարտուց հալում,
Կու դողամ զինչ ուռն ի քամուն...

Խոսելով այն մասին, որ աշխարհում հարստանալու ծարավ է ունեցել և պատժել է դրա համար՝ Ֆրիկն իրեն համեմատում է արծվի հետ, որ բարձր է թոշում, պարծենում է, բայց հետո նետով խոցվում է։

Նըմանեցար արծվին ու թռար խիստ շփացար,
Նետով դու հանց խոցեցար, որ զինչ ըգկրակ վառեցար։

Ֆրիկի բանաստեղծություններին առանձնապես գեղեցկություն են տալիս բազմաթիվ հիպերբոլիկ արտահայտություններ, որոնք սքանչելի պատկերավորում են պատմական իրականությունը, բանաստեղծի հորդաբուխ լիրիզմը, նրա ուժեղ բնավորությունը, նրա խոհերի մեծությունն ու մարտական թափը։ Արտահայտական որբա՛ն ուժ կա, օրինակ, հետևյալ տողերի մեջ։

Հեղեկիմ արտասուն ու զիս լուանամ...
Վառեցաւ սիրո ի յիս զերդ հուր կու եռամ...
Զմոխիրն ես ինչ զհաց կերայ, զարտասւաց զուրըն խմեցիե

Ֆրիկը գործածել է բազմազան չափեր։ Ամենից շատ նա սիւել է «Հայրենը» կամ «Հայերենը», ինչպես նաև ութ և տասնմեկ վանկանի տողերով ոտանավորի չափեր։

«Հայրեն» ոտանավորները, որոնց առաջին տողը կազմված է յոթ, երկրորդն ութ վանկից (կամ հաճախ երկու տողը վերածավում է մեկի՝ տասնհինգ վանկից), ունեն ուժեղ ոիթմ և երածըշատականություն և շատ հարմար են խոհական, խրատական բռնվանդակությամբ ստեղծագործությունների համար։ Ֆրիկը մեծ վարպետություն է հանդես բերել այդ չափով գրելիս։ Ֆրիկը ոճ պակաս վարպետությամբ գրել է և իր ութ կամ տասնմեկ վանականի տողերով ոտանավորները։

Ֆրիկը խոշոր ազդեցություն է թողել հետագա դարերի աշախարհիկ բանաստեղծների վրա։ Շատերն են ներշնչվել և սովորել են նրանից։ Ֆրիկից հետո արդեն սովորական են գառնում այնպիսի բանաստեղծություններ, որոնց մեջ հեղինակը քննադատում է իր շրջանի իրականությունը և խոսում է իրեն հուզող սոցիալական երևությունների մասին։

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԳՆԿԱՅԻ

Կոստանդին Երգնկացին Ֆրիկի հետ միայնեք ասին Քանդիսանում է հայ աշխարհաբառ բանաստեղծության հիմնադիրը։ Եթե Ֆրիկը հայ լիրիկայի պատմության մեջ առաջինն էր, որ ուժգին երգեց քաղաքական ու սոցիալական մոտիվներ, ապա Երգնկացին առաջինն է, որ սկիզբ դրեց սիրային լիրիկային։ Բացի այդ, Կոստանդին Երգնկացին Նարեկացուց սկսող պանթեիստական տրամադրություններն ավելի ուժեղացրեց և խորացրեց։

Կոստանդին Երգնկացին ծնվել է 1250—60 թվերին Երգնկա քաղաքում, որ միջազգային առևտորի նշանավոր կենտրոններից մեկն էր։ Երգնկացու կյանքը տեսել է մինչև XIV դարի առաջին կեսի վերջերը, 1336 թվին նա դեռ կենդանի էր, ծերումի հասակում։ Մահվան թվականը հայտնի չէ։ Պատանի հասակից Եր-

զընկացին մտել է ծննդավայրի շուրջը գտնվող բազմաթիվ վաճառքերից մեկը և գարձել վանական։ Բանաստեղծություններ սկսել է գրել ըստ երևութին տասնհինգ տարեկան հասակից։ Այդ երեսում է նրա մի ոտանավորի վերնագրից, որ հետեւալն է։ «Եւ մանք նախանձից շարախոսում են իմ մասին, թե իբր նա այսպես է խոսում, որովհետև վարդապետի շատ չի աշակերտել։ Սակայն ուրիշ բան է աշակերտելը և ուրիշ բան՝ հոգու շնորհքը։ Ահա այն, ինչ որ ես ձեզ պատմում եմ իմ զարմանալի տեսլիքի մասին, որ ես տեսա, երբ տասնհինգ տարեկան ժամանակ վաճառքում էի, տեսա արեգակնագիստ և լույսով լի մի մարդ։ Այս ոտանավորի բովանդակությունից պարզվում է նաև, որ բանաստեղծություններ գրելու պատճառով երգնկացուն վատարանեւ հալածել են, որի հետեւանքով նա ստիպված է եղել իր ստեղծագործական շնորհքը ներկայացնել որպես իր տեսած աստվածային երևութիւն ներշնչման արդյունք։

Ուրիշ բանաստեղծություններից էլ է երեսում, որ հոգևորականությունը երգնկացուն հանդիսաւ չի թողել։ Բանաստեղծը գեղացիկ կերպով բացատրել է, թե ինչն է իր դեմ եղած հալածանքի պատճառը։

Ոմանք չար են հետ ինձ, ու նախանձով են յիմ վերայ։ Վասն իմ գրեալ բանիս՝ որ առ մարդիկ երեւայ։

Ասեն թէ ո՞նց գրէ բան քաղցրահամ ու մեզ կարդայ։ Որ ի մեր մէջիս ընգեր կամ համեմատ իւր լրկա։

Ուրեմն վանականները շարություն, նախանձ են տածում դեպի երգնկացին, որովհետև նա իրենց նման չէ և գրում է աշխարհիկ մարդկանց համար քաղցրահամ բաներ», այսինքն՝ աշխարհիկ բանաստեղծություններ։ Ճիշտ է, եղել են վայրկյաններ, երբ երգնկացին խավարամիտ հոգևորականների հարուցած հալածանքների պատճառով համակվել է ծանր ու մռայլ թախիծով։ Բայց և այսպես գրել է բազմաթիվ կենսաթրթիւր բանաստեղծություններ, որոնց համար անշուշտ սիրվել է ժողովրդի կողմից։

Կոստանդին երգնկացին, որ իբրև խոշոր նորություն աշխարհիկ սիրո թեման է մտցրել հայ լիրիկայի մեջ, անշուշտ ունեցել է իր սոցիալական հենարանը հանձին հասարակության այն մասի, որի սրտին մռայլ չի եղել եկեղեցին և քրիստոնեական աշխարհ։

Հայեցողությունը։ Իր մի բանաստեղծության վերջում երգնկացին դրում է։

Եղբարք մի կան մեզ հետ սիրով,
Աշխարհի բան ուզեն գրով։
Նայ ես վասն այն յայտնի ձայնով
Սիրու բաներս ասցի յոլով։

Երգնկացին ընթացել է իր էպոխայի առաջավոր հոսանքի շնուր։ Հակառակ հոգևորականության կաշկանդումների ռաշխարհի բան»-եր գրելով, նա ընդառաջն է ժողովրդի մեջ հասումացած նոր տրամադրություններին։ Ի հարկե, միանգամից չէ, որ Օրդընկացին գրել է աշխարհիկ մոտիվներով։ Նա էլ Ֆրիկի նման ունեցել է հակասական ապրումներ և ստեղծագործական զարգացման ընթացք։ Այդ մասին պարզ պատկերացում են տալիս նախ և առաջ նրա խոհական բանաստեղծությունները։

Երգնկացու խոհականություններից մինչև հիմա հայտարերվել են մոտ քսանվեց բանաստեղծություն, որոնց մեծ մասը խոհական բնույթումին։ Մնացած ները սիրո երգեր են։ Երգնկացին իր գրական գործունեության որոշ շրջանում կրոնական աշխարհայացքի ազդեցության տակ է եղել։ Նա գրել է քրիստոնեական ոգով բարոյա-խրատական ուսանավորներ, որոնց մեջ հորդորել է մարդկանց հանդերձալ կյանքում երջանկություն ձեռք բերելու համար հեռու մնալ փառքից ու վայելքներից։ Այս թեման ոմի, օրինակ, մանք յաղագս անցավոր մեծութեան...» ընդարձակ ուսանավորը, որ գրված է Ֆիրադուառու «Ծահնամեի» շափով։

Սակայն կրոնա-բարոյական բանաստեղծությունները երգընկացու համար բնորոշ չեն և շատ փոքր թիվ են կազմում։ Նա իր ստեղծագործության էտիկան մասում արտահայտել է ֆեոդալական եկեղեցու բարոյախոսությանը հակառակ այնպիսի գաղափարներ, որոնք կապված են եղել աշխատավոր ժողովրդի հետ, թեև երբեմն էլ ընկել է երկընտրանքի մեջ և ունեցել է տանջող տատանումներ, ինչպես այդ երեսում է նրա մի քանի ուսանավորներից։

Զերդ ի ծով կամ տատանել
Ցեղակ ծփիմ յալիս խաւար...»

Այս գեղեցիկ համեմատությամբ Երզնկացին պատկերում է իր ներքին ալեկոծությունը:

Բանաստեղծի հայացքների մեջ եղած հակասությունները, ի հարկե, վերջ ի վերջո լուծվել են: Նա շուտով դադարել է օրանից, իմաստնոց լսել, այսինքն կրոնական գրքերի քարոզության հետևել, և դարձել է իր ժամանակի առաջավոր հայացքների առատահայտիչը: Այդ հումանիզմն էր և դրա հետ կապված պանթեալզմը, բնապաշտությունը:

Կոստանտին Երզնկացին էլ Ֆրիկի նման խոշոր հումանիստ է: Պետք է նկատել, որ հայ վերածնության շրջանի այս Երկու բառնաստեղծները միշտգային գրականության մեջ ժամանակով ավելի շուտ են հանդես եկել, քան ելքովական երկրների վերածնության շրջանի հումանիստ բանաստեղծները: Հակադրվելով ֆեոդալական-եկեղեցական աշխարհայցողության, Երզնկացին իր բանաստեղծություններից մեծ մասի մեջ այն միտքն է զարգացնում, թե մարդիկ պետք է ուրախ ու երշանիկ ապրեն: Իսկ այդ պետք է և հնարավոր է միայն իրական աշխարհում, և ոչ թե քրիստոնեության խոստացած երեակայական կյանքում: Հենց այստեղից էլ ծագում է իրական աշխարհի — բնության պաշտամունքը Երզնկացու մոտ:

Երզնկացու պանթեիստական ոտանավորներում սովորաբար հակադրվում է ձմեռն ու գարունը: Նրա պատկերացմամբ ձմեռը՝ մարդկանց համար օրանտ է և խավարության մարդկանց համար օրանտը՝ մարդկանց ամպը, և երկնի վրա ծիածանը՝ կամար է կապում: Փշում է հարավային քամին, այն ժամանակ տրտմությունը շքանում է երկրից, և ամենքը բարությամբ են լցում:

Երբ որ հնչեց հողմն հարաւ՝
Զինչ արտմութիւն յ' երկրէ տարաւ,
Հանց որ շկայ տեղ մի ծարաւ,
Ամենն են բարութեամբ լցել:

Երզնկացին փառաբանում է երկիրը, արեւը, յուրացը, որոնք կենդանության աղբյուր են: Նրա պատկերացմամբ օրարինը առաջանում է արեւը, երկրից, և ոչ թե աստծուց, ինչպես քրիստոնեությունն է քարոզում:

Երկիրս է մայր աննմանի,
Զինչ գեղեցիկ իրք՝ ծնանի,
Շատ բարութիւնք յինք սնանի,
Հանց որ փոփն գեղեցկացել:

Որպես հումանիստ, Երզնկացին բնականաբար պետք է լիներ հետամնացության ու խավարամտության հակառակորդ և գիտության շատագով: Նա լցված է խիստ ատելությամբ գեղի տգետներն ու սխոլաստիկ մտածողները, որոնց նա մարդկության շարիք է համարում:

Իմաստունն է առաւօտ, աւետարո և ցնծալով,
Իսկ անմիտն ի խավարի կայ թանձրացեալ երազ քնով...
Իմաստունն պտուղ բարի, անմահութեան ճաշակ տալով,
Իսկ անմիտն է անպտուղ, դատարկացեալ և լի փուզ...

Երզնկացին իր ոտանավորներում խրախուսում է գիտուններին, իմաստուններին հաստատուն շարունակելու իրենց օգտակար գործը և շենթարկվելու տպետների զրպարտիշ բամբասանքներին:

Երգեկացու սիրո Ինչպես իր խոհական պանթեիստական տաղերը ոտանավորներով, այնպես էլ սիրո տաղերով Երզնկացին արտահայտել է իր ժամանակի դեմոկրատիայի, տրամադրությունները: Երզնկացու մոտ սիրո փիլիսոփայությունը սերտ կապված է պանթեիզմի հետ. մեկը պայմանավորվում է մյուսով, մեկը լրացնում է մյուսին: Մարդը պետք է սիրե աշխարհը, բնությունը: Բայց բնությունն ինքն էլ սեր է և սեր է զարթեցնում մարդու մեջ: Ամբողջ տիեզերքը լցված է սիրով: Սիրուց է առաջանում կյանքն ու գեղեցկությունը:

Թէ սէր է ծառն ու սէր ծաղիկն, ու սէր հաւուն
Ճայնն ի ծառին
Սէր է վարդն ու սէր բլբուն, սիրով նստել ի
Վերայ վարդին
Սիրով են գոյն ու գոյն ու գեղեցիկ այն ծաղկընին.
Վասն սիրոյ փոքրիկ հաւերն ի ծաղկնում վերայ նըստին:

Երզնկացու սիրո երգերը շնչում են բուռն լավատեսությամբ: Կենսուրախությամբ: Նա անկաշանդ երգում է կնոջ գեղեցկու-

թյումը և սիրո հաճույքը։ Սա պրօգրեսիվ երևույթ է հայ բանաւոտեղծության մեջ, որովհետև դա եկեղեցու քարոզած հետագեմ սկզբունքների ժխտումն է։ Քրիստոնյա եկեղեցականությունը կը նոշը համարում էր մի արարած, որ մարդկանց մեջ աշխարհիկ զգացմունքներ է առաջացնում, նրանց կտրում է հավատքից ու հեռացնում աստծուց։ Խորակելով այս տրադիցիան, հետեւ լով ժողովրդին, Երզնկացին ժողովրդական ստեղծագործությունների օրինակով երգել է կնոջ սերը, նրա գեղեցկությունը։ Բանաստեղծը լուսնի նման բոլոր, պայծառ ու լուսատես սուրաթով սիրուհուն անվանում է իր հոգու տաճար։ Այս շատ բնորոշ է Նշանակում է, աստծու տաճարը, եկեղեցին, նրա աշքում ամեն համարում կորցրել է։

Երզնկացին սովորաբար սիրո զգացմունքը երգում է կապված գարնան նկարագրության հետ, միանդամայն ուրախ և զբարթ ոգով։ Այս պատճառով էլ հաճախ նրա սիրո երգերը վերածվում են ուրախության երգերի։

Ահա հուն գար գարնան՝
Իւր տեսն երեւի խնդման,
Զինչ, որ կայ պաղայ, պօստան՝
Մաղկունք ամենայն բացուան...

Պլպո՞ւ իմաստոն սախի,
Սախի լուսեղին մեղ կան,
Կանդնին ու գինի մեղ տան՝
Որ ես խմեմ տօստ օքան։

Մըտրուա դու սազէ զշաշտան,
Որ մորճըն խաղայ մօյտան.
Ա՞յ մորճ ու բարակ 'երկան,
Քո տեսն ի լուսին նման...»

Երգեկացու բանաւոտեղծությունների պատկերափորությունը ներն առանձնապես աշքի են ընկնում նաև իրենց վառ պատկերավորությամբ։ Օգտագործելով ժողովրդական բանահյուսությունը, նա ստեղծել է շատ ինքնատիպ, նուրբ ու

ճաշակավոր համեմատողւթյուններ, նմանություններ և ընտրել գեղեցիկ էպիտետներ։ Որպես պանթեիստ, Երզնկացին սիրում է իր խոհերն ու հոգեկան ապրումները պատկերելիս դիմել բնական աշխարհի առարկաներին և երկույթներին։

Իր խոհական ոտանավորներից մեկում խոսելով այն մասին, թե իմաստում մարդը շպետք է լսի գիտության հակառակորդների բամբասանքները և չպիտի հուսահատվի, Երզնկացին իմաստուանին համեմատում է արեգակի հետ, իսկ այն մարդկանց, որոնք խանգարում ու վատաբանում են նրան՝ արեգակը ծածկող ամպերի հետ։

Գէմ բարձր է արեգակն,
Ու լուսատու է աշխարհի,
Ի՞նչ մեղ կա իր լուսոյն,
Որ երբ ամպով ինքըն ծածկի։

Մի ուրիշ ոտանավորում, որտեղ բանաստեղծն իր հոգեկան ուրախ տրամադրությունը և ստեղծագործական բարձր ոգևորությունն է արտահայտում, նա իրեն նմանեցնում է գարնան հողմին, որը հալածում է ձմրան ցուրտը և ծաղկեցնում բուրաւտանները։

Այսօր եղայ հողմըն գարնան
Սիրով հնչեմ ի բուրաստան,
Զինչ սառն ու պաղ ցուրտ ձմրան՝
Ի մեր տեսուս հալածեցան։

Սիրո կարութը պատկերացնելու համար Երզնկացին իրեն համեմատում է անձրեին և գարնան անուշ քամուն ծարավող երկրի հետ։

Ես եմ կարութ ի իւր սիրուն՝
Զինչ ծարաւած յերկիր ցողոյն,
Կամ զինչ գարնան անուշ քամուն,
Թէ երբ հնչէ հողմն հարաւաւ

Սիրուհու արտաքին գեղեցկությունը նկարագրելիս Երզնկացին սովորաբար ընտրում է այսպիսի էպիտետներ։ սիրուհու գեմքը բոլոր լուսինն է, ունքերը՝ կամար կամ լարված աղեղ,

Ճայնը՝ քաղցր, շրթումքները՝ շաբար ու շիրին, հասակը՝ թարակ ու երկայն մորճիկ: Այս և նման ուրիշ բազմաթիվ էպիտետներ, Երզնկացու լեզվին տալիս են նաև վառ երանգավորում:

Թե՛ խոհերի փիլիսոփայական խորությունը, թե՛ արտահայտած տրամադրությունների ուսալականությունը և թե՛ պոետիկական բարձր կուլտուրան պայմանավորում են Երզնկացու ստեղծագործության գեղարվեստական խոշոր արժեքը: Երզնկացուցատ բան են սովորել հետագա հայ աշխարհիկ լիրիկայի նշանավոր ներկայացուցիչները:

Կոստանդին Երզնկացուն ժամանակակից բանաստեղծներից է Հովհաննես Երզնկացին: Նրա մեզ հասած գրվածքներից առանձնապես հետաքրքրական է «Տաղ Երզնկացի Յովհաննիս» ասացեալ վերնագրով բանաստեղծությունը: Այս բանաստեղծության մեջ նկարագրվում է, թե ինչպես մի տերտերի տղա և մի մոլախի աղջիկ բուռն կերպով սիրում են իրար: Իմանալով իր տղայի սիրահարության մասին, նայրը զգուշացնում է նրան, որ եթե հայրը իմանա, կրարկանա և կրոնանա: Բայց տղան մորը վաստահ պատասխանում է.

Հայ իմ մարիկ, ես քեզ ծառալ,
Թէ իմ տէրտէրս զիս ճորա,
Նա ես զԱշան ցցնեմ նորա,
Քան զիս ու այլ խե կու լինա:

Մոլան էլ իր աղջկան՝ Աշային ծեծում է այն բանի համար, որ նա հայ տերտերի տղային է սիրում: Սակայն սերը հաղթում է բոլոր տեսակի արգելքները, առանձնապես կրոնական արգելքները, որ տվյալ դեպքում կարմոր է: Սիրահարները որոշում են ամուսնանալ: Այսպիսով բանաստեղծն արտահայտում է սիրությունի կրոնական հավատքից ուժեղ լինելու տեսակետը, մի գացմունքի կրոնական հավատքից ուժեղ լինելի որոշակի են արտահայտում: Այս են ապացուցում օրինակ՝ Թէկուրանցու, Աղթամարցու ու Քոչակի բանաստեղծությունները, ինչպես և այդ դարերից մեզ հասած արձակ գեղարվեստական գործերը՝ առակները, անեկուունները, առածները և նովելները. վերջիններս ձեռագրերում սուլորաբար վերագրում են Վարդան Այգեկցուն:

ՎԱՐԴԱՆ Ս. ՅԱԳԵԿՑԻ

Հայկական միջնադարյան առակները և անեկադուտները հիմա մեզ ծանոթ են գլխավորապես շնորհիվ ակադեմիկ Մարի գործադրած բեղմնավոր աշխատանքի: Մեծ գիտնականը XIX դարի վերջում խոշոր ծառայություն մատուցեց Հայկուլուրային: Մի քանի տարի շարունակ նա ամբողջապես ըգերազից միջնադարյան հայ գրականության ուսումնասիրման ու վերհանման գործով: 1899 թվին Մարի հրատարակեց «Сборники притч Вардана» վերնագրով երկու հատորանոց աշխատությունը, որոնցից առաջինը մի գիտական խոշոր հետազոտություն էր XIII—XVII դարերի հայ ձեռագրերում հայտնաբերած առակների, նովելների և անեկուունների, երկրորդը՝ առակների տեքստի գիտական հրատարակությունը:

Այաճք

Վարդան Այգեկցին, որի անունով են մեզ հասել հայկական առակների ձեռագիր ժողովածուներից շատերը, ապրել է XII դարի վերջերին և XIII դարի սկզբներին Կիլիկիայում: Կյանքի որոշ մասը անց է կացրել Այգեկի վանրում, որտեղից ստացել է իր մականունը: Լինելով քարոզիչ, Այգեկցին իր աշխատությունների մեջ — իբրև նորություն — օգտագործել է առակների ժանրը: Բարոյականության որևէ սկզբունք արծարծելուց հետո նա, իբրև օրինակ, պատմում է մի առակ: Սուակների նման օգտագործումը շատ է դուր գալիս ժամանակակիցներին:

Հաշվի առնելով այս, Այգեկցին քարոզների համար իր օգատագործած առակներից հետո կազմում է մի առանձին ժողովագույն նույրը ճաշակով, մեծ վարպետությամբ նա իր այդ ժողովածուի համար մշակում է հայկական ժողովրդական առակները գրում է՝ ինքնուրույն առակներ, և միաժամանակ օգտագործում օտար լեզուներից փոխադրվածները: Այդ ժամանակ արդեն հաշյերեն կազին ծղոպուի առակները, հույն անհայտ հեղինակի՝ Ճիշդիլովահի առակները և այլն:

Զնայած վանական լինելուն, Այգեկցին ֆեոդալականության և Հոգևոր բնակալների նկատմամբ ցուցաբերել է սուր քննադաւ-

տական վերաբերմումք; Այդ ցայտուն կերպով արտահայտվել է նրա առակներում:

Հետագայում շատերը, որոնց անունները անհայտ են, Այդ գեկցու կազմած ժողովածովի վրա ավելացնում են նոր նյութեր, կամ հետևելով նրա օրինակին՝ կազմում են առակների նոր ժողովածումեր: Առակների, անեկդոտների և նովելների ժողովածուները (կրծատվել կամ ընդարձակվել) ամբողջ XIII—XVII դարերի ընթացքում: Այդ ժողովածուների ձեռագրերից մի մասը տրադիցիայով վերագրվել է Վարդան Այգեկցուն, մի մասը մեղ հասել է առանց որևէ հեղինակի հիշատակության, իսկ մյուս մասը «Աղվեսագիրք» վերնագրով: «Աղվեսագիրքը» հնում թարգմանվել է արաբերեն, վրացերեն և այլ լեզուներով:

Փարզան Սյակեկցու Միջնադարից մեղ հասած բոլոր առակները, նովել- րի, նովելների և անեկդոտների թիվը մոտ 600-ի է հասնում: Այս հակայական նյութը ներք 400-ի է հասնում: Այս հակայական նյութը ճեռագիր ժողովածուների մեջ է մտել զանազան աղբյուրներից:

Այս բոլորից առանձնապես հետաքրքրական են բուն ժողովադական ծագում ունեցող և Այգեկցու կողմից գրական մշակման ենթարկված ստեղծագործությունները, որոնց մեջ արտացոլվել են միջնադարյան հասարակական հարաբերությունները և ցայտում կերպով արտահայտվել ֆեռագալական հասարակության պայմաններում ժողովրդի տրամադրություններն ու առաջավոր հայցքները:

Ժողովրդական ստեղծագործությունները գրական մշակման ենթարկելիս Այգեկցին, ինչպես և իր հաջորդները, ժողովածուների մեջ խառն կերպով օգտագործել են առակները, նովելներն ու անեկդոտները՝ առանց դրանց ժանրային տարրերությունը գիտակցելուս Առակների պատմողական մասը փոփոխության մեջ առաջարկելի է ավելացված են կրոնա-բարոյական մեկնաբանություններ: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել՝ ցուց տալու համար, թե ինչպես առակների և նովելների պատմողական մասի բուն բովանդակությունը և դրան կցված կրոնա-բարոյական եղբակացությունը բնակվեն համապատասխանում իրար:

Ահա մի նմուշ.

«Կին մի այրի ունէր կով մի. և խորթ նորայ ունէր էշ մի. և զկերակուր կովոյն գողանար խորթն և տար իշուն. և կին աղաշեր զաստուած. զի մեռցի էշն. և մեռաւ կովն. լար կին և ասէր. վաշ ինձ, զի հակառակ եղի աղօթս իմ. ո՞վ աստուած, մի՞թե ու կարացիր ընտրել զեշն ու զկովն ի միմեանց:

Ցուցանէ առակս, թե, շատ աղօթք կա, աստուած ընդ հակառակ կատարեթ զնա. որ ոչ լինի ի կամս աստուծոյ. քանզի նա զիտէ զօգուտն անձանց մերոց»:

Ինչպես պարզ երևում է, մեկնաբանությունը միանգամայն բնագրուսիկ է: Ժողովուրդը ծաղրում է աստծուն, որ էշը կովից շի կարողանում ջոկեւ, հետևաբար նրա գոյությունը կասկածի տակ է առնում, իսկ զրի առնողը ասում է, թե աստված ամեն ինչ առնում է մեր անձի օգտի համար:

Այգեկցու կազմած և մշակած հայ ժողովրդական առակների, նովելների և անեկդոտների մեջ երգիծանքի են ենթարկված կրովագորները, ճգնավորները, հաճախ նաև քրիստոնեական վարդապետությունը: Այսպես, օրինակ, «Միայնակեաց և զամբոցավորները» նովելլայում պատմված է, թե ինչպես մի ճգնավոր զիշերը շուն է հջոսամ և «զնանում» է: Մի անգամ նրա վրա մի գամբոց յուղն է հարձակվում և կծոտում: Ճգնավորը փախչում է զյուղից և, երբ հասնում է իր խուցը, զղզում է իր արարմունքը և լալով ասում է. «Տէր իմ և աստուած իմ, որ այս բազում ժամանակ է, որ ոչ երկեայ և ոչ զարհուրեցայ ի քէն՝ ի սպանալեաց և ի տանջանաց դժոխոց, և այս օր ի գամբո շանէն վախեցայ և երկեայ և փախուցեալ ոչ կարացի շնալ...»: Այսպիսով շուն պետի աղբեցիկ է գտնվում, քան քրիստոնեական ուսմունքը:

Որ առհասարակ ժողովուրդը հաճախ սուտ է համարել քրիստոնեությունը, ավետարանի մեջ գրածները, դա ցայտուն կերպով երևում է «Աղքատ և երէց և աւետարան» նովելլայից: Մի մերկ ու քաղցած աղքատ, անձրսից թրշված, ցրտից զողալով մտնում է եկեղեցին: Երեցը գալիս է և ժամ ասում: Նա բաց է անում Աղքատարանը և կարգում այն տեղը, որ ասում է. «Նտարէ էի, ժողովեցէք զիս, մերկ էի և զգեցուցէք զիս, քաղցեալ էի և կերակրեցէք զիս»: Լսելով այդ, աղքատը շատ է ուրախանում, քանի որ կարդացածը հենց իրեն է վերաբերում, նա կարծում է

Հայ. գր. պատմ. | գիրք—5

Ռը երեցը իբեն կտանի, ապաստարան կտա և կկերակրի: Սակայն երբ երեցը ժամասացությունը վերջացնելուց հետո քար անտարբերությամբ աղքատին թողնում հեռանում է, վերջինս վերցնում է Ավետարանը և տանում դնում ջրի մեջ, մի քար էլ դնում է վըրան: Դալիս է երեցը և չի գտնում Ավետարանը: Աղքատն ասում է «Ավետարանն ի՞նչ անես. սուտ բաներ կա մեջն, նա տարի ի շուրջն դրի»: Հասկանալով աղքատի ակնարկը, երեցը ամոթահար հեռանում է:

Հասկանալի է, որ քրիստոնեության սկզբունքները ծաղրող ժողովուրդը ալիւի քան ուժեղ կերպով պետք է ծաղրեր այդ կրոնի սպասավորներին— Հոգևորականությանը:

Բազմաթիվ նովելլաներում և առակներում մերկացված է Հոգեգերականության ընշաքաղցությունը և ապականված բարքերը: «Գող քահանայ և այրի» նովելլայում մի տերտեր գողանում է մի այրի կնոջ միակ կովը: Կինն իմանում է այդ: Տերտերը շրբոնվելու համար կովը տեղից տեղ է տեղափոխում և վերջը թագցնում է եկեղեցու բեմում: Խոստովանելու պատրվակով կինը գնում է եկեղեցի և բեմի վարագուրը քաշելով տեսնում է իր կովը և սուր հեգնանքով ասում. «Ո՞վ գարշելի, զքեզ կով գիտէի. և արդ զքեզ պատարագող ո՞վ արար, ասա ինձ...»:

Առակներում և նովելլաներում նույնպիսի սրամտությամբ ծաղրված են աշխարհիկ ֆեռալականության ներկայացուցիչները, ժամանակի բռնակալական պետությունների կաշառակեր պաշտոնյաները և այլ տեսակի շահագործողները: «Իշխան և այրի» նովելլայում պատմվում է, թե ինչպես մի ցյոյժ շար և անիրաւ իշխանի համար մի այրի կին անընդհատ աղոթում է, որ շմեռնի: Իշխանն այդ լսելով՝ զարմանում է և մարդ է ուղարկում կնոջ մոտ պատճառն իմանալու, քանի որ ինքը նրան բացի վատությունից ոչ մի լավություն չեր արել: Կինն իշխանի մարդկանց ասում է, որ իշխանին հաղորդեն, թե նրա «հայրն վատ մարդ էր. ես անիծեցի, նա մեռաւ. զու նստար նորա տեղն այլ խիստ շար. կու վախեմ թէ մեռանիս, նա քո որդին այլ խիստ լինի շար»: Այստեղ սրամտորեն այն հիշտ միտքն է հայտնված, որ շահագործող ֆեռգալները սերնդից սերունդ ավելի դաժան են դառնում և ձգտում են ավելի կեղեքի աշխատավորության:

Ժողովուրդն օպտիմիստ է: Չնայած այն ծանր վիճակին, որի մեջ գտնվում էր հայ աշխատավորությունը, այնուամենայնիվ նա երբեք չի հուսահատվել, միշտ հավատացել է իր վերջնական Հաղթանակին. այդ սքանչելի կերպով արտահայտվել է նաև առակների և նովելլաների մեջ:

Հայ ժողովրդական առակներում և նովելլաներում շահագործուրդի պատկերը միշտ տրվում է ծաղրական և բացասական գծերով: Նա թեպետ չար է, ագաճ և համբաւակող, բայց սովորաբար բուժ է և տիմար, որի համար էլ միշտ պարտվում ու ուղնշանում է: Իբրև օրինակ կարելի է վերցնել «Օձ և հողագործ», «Գայլ և աղվէս և զորի», «Արծիւ և կաքաւ և բզեզ» և այլ բազմաթիվ նման առակներ: Վերջին առակում պատմված է հետևյալը: Արծիվը հալածում է կաքավին: Կաքավն ապավինում է բզեզին և օգնություն խնդրում: Բզեզն արծիվին աղաշում է՝ կաքավին հանգիստ թողնել: Արծիվը չի լսում նրան: Բզեզն արծիվին պատժելու համար մտնում է նրա բունը և ածած ձվերը գլորելով ցած, զցում, ջարդում՝ թողնելով նրան առանց ձագ: Հուսահատված արծիվն այս անգամ ձուն ածում է թագավորի գոգում: Բզեզը գնում է կծում թագավորին, որը ցալից վեր է թոշում տեղից, իսկ ձուն գոգուց ընկնելով ջարդվում է: Այսպիսով անմեղ կաքավին հալածող արծիվը պարտվում է ու պատժվում:

Առակներում և նովելլաներում արտահայտվել են նաև աշխատավորի այն բարձր գիտակցությունը, թե իր հաշվին են ապրում շահագործողները: Ցայտուն օրինակներ են «Եղն եւ ձի» և «Եկեղեցին ու զրադաց» առակները: Զին պարծենում է եղան մոտ, որ իր վրա իշխաններ են նստում: Եզն ասում է. եթե ես շահատեմ, դու էլ, քո իշխանն էլ քաղցից կսատկեք: Եկեղեցին պարծենում է, որ ինքը շենքերից ամենագերազանցն է: Հրաղացն առարկում է, ասելով, որ ինքը զիշեր ցերեկ դատում է, մարդիկ ուտում են, նոր են զնում եկեղեցի աղոթելու:

Այս բոլորով, ի հարկե, միջնադարյան հայ առակների, նովելլաների, անեկդոտների թեմաները և իդեական բովանդակության գծերը զեռ չեն սպառվում: Դրանց մեջ լայն ու բազմակողմանի արտահայտություն են գտել ժողովրդի սոցիալական կյանքի ու կենցաղի համարյա բոլոր կողմերը: Հակառակ լիրի-

կայի, որի մեջ շատ թուզլ է կենցաղի երանգավորությունը, առաջակում այն բավական ուժեղ է:

Կենցաղական անեկդոտների, նովելլաների, պատկերի մեջ առանձնապես երևան է գալիս միջնադարի կող ծանր վիճակը: Կին այն ժամանակ էր առաքինի համարվում, երբ հլու հնագանդ էր տան մեծավորներին, անխոս կատարում էր նրանց ասածները: Այդպիսի մի դրական կող պատկեր տրված է «Հարսն և սկեսով և սկեսրայր» փոքրիկ նովելլայում: Սկեսովը և սկեսրայրը նորեկ հարսի խոնարհությունը և համեստությունը փորձելու համար հետևյալ հնարքն են գործադրում: Սկեսովը նրան ասում է, թե սենյակում ծուխ է, դուռը բաց արա: Սկեսրայրն ասում է՝ ցուրտ է, դուռը փակիր, և այսպես մի քանի անգամ: Հարսը անխոս երկուսի ասածն էլ կատարում է, դուռը բաց է անում և փակում:

Կան այնպիսի նովելլաներ, որոնց մեջ պատկերացում են գտել առևտրական դասակարգի կյանքն ու կենցաղային հարաբերությունները. այդ նովելլաների մեջ մերկացված է առևտրական աշխարհում տիրող կեղծիքն ու խաբեությունը, ընտանիքներում տիրող անբարոյականությունը:

Գրական ժանրերի գարգացման պատմությունները թյունից հայտնի է, որ նովելլան առաջացել է առակներից և անեկդոտներից, իսկ վեպը՝ նովելլայից: Վարդան Այգեկցուց մեզ հասած գրական հարուստ նյութերից երեսում է, որ հայ իրականության մեջ XIII դարից սկսել էր անեկդոտների և առակների՝ նովելլայի ժանրի փոխարկվելու ընթացքը:

Բայց ինչ որ սկսվել էր, միջնադարում մինչև վերջ շզարդացավ: Հանդես չեկան առանձին նովելլիստները: Այդ ժանրի ըստեղծագործությունները ձեռագրերում միշտ մնացել են առակների և անեկդոտների հետ խառն՝ մինչև նոր գրականության մեծ ուղղությունների կազմակերպությանը, որ առակների և նովելլաների ժամանակուր Աբովյանը, որ առակների և նովելլաների ժանրերը բաժանեց իրարից և օգտագործեց առանձին առանձին: Մինչև նոր շրջանը հայ գրականության մեջ վիպական ժանրի գործեր ևս չեն հայտաբերվել: Նովելլան վեպի փոխարկվելու միայն շատ թուզլ նշաններ երևացին («Վասն խարող աղվեսու և շարութեան նորա») և ուրիշ ոչինչ:

Վարդան Այգեկցու անունով միջնադարից մեզ մնացած գրական ժառանգության մեջ գեղարվեստական մշակվածության տեսակետից ամենաբարձր աստիճանի վրա գտնվում են առակները: Վարդան Այգեկցին և մյուս գրի առնողներն ու մշակողները պահպանել են առակների ոչ միայն ժողովրդական բովանդակությունը, այլև ոճը. որևէ դեպքի մասին պատմվում է կլասիկ սեղմությամբ, առանց ավելորդաբանությունների, բայց և զերծ սիսկմատիզմից, մի բան, որ նկատվում էր Մխիթար Գոշի առակներում: Հայկական առակները սատիրայի փայլուն նմուշներ են: Դրանց սյուժետային կառուցվածքի նրբությունը և սրամտությունը հիացմունք է առաջացնում ընթերցողի մեջ: Հայկական առակները, ինչպես և անեկդոտներն ու նովելլաները, բարձրարժեք գեղարվեստական գործեր են, որոնք համաշխարհային գրականությանը մեջ հավասար տեղ են բռնում այդ ժանրի ամենահընչալված ստեղծագործությունների կողմին:

Վարդան Այգեկցու առակները, նովելլաները և անեկդոտները հայ նոր գրականության մեջ մշակել ու օգտագործել են Խաչատուր Աբովյանը («Պարապական կամացակարգ»), Հովհաննես Թումանյանը («Մի կաթիլ մեղը», «Անբուն կկոմ» և այլն), Աթաբեկ Խնկոյանը և ուրիշներ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

Կոստանդին Երզնկացուց հետո XIV դարի վաճեմը քնարերգուներից ամենանշանավորը Հովհաննես Թլկուրանցին է:

Հովհաննես Թլկուրանցին ծնվել է Թուրկուրան կամ Թուլկուրան գյուղաքաղաքում, որ Կիլիկիային մոտ էր գտնվում: Բանաստեղծի կյանքի մասին ուրիշ ոչինչ հայտնի չէ: Նրա անունը և տաղերը ամենից վաղ հանդիպում են 1371 և 1394 թվերին գըրպահություն է եղակացվում, որ նա ապրել և ստեղծագործել է XIV դարում: Թլկուրանցին այնքան ժողովրդականություն է վայելել, որ 1512 թվին Վենետիկում տպագրված առաջին հայերեն գրքերից մեկում՝ «Տաղարանում» տեղ են գտել առաջին հայերեն գրքերից մեկում՝ «Տաղարանում» տեղ են գտել սրբաթեան նորա»:

Թլկուրանցին գերազանցապես սիրու և
Թլկուրանցու բա- գարնան երգիչ է: Ոմի նաև խոհական բա-
նաստեղծությունները նաև ստեղծություններ, որոնք երբեմն կրոնա-
խրատական բովանդակություն ունեն: Թլկուրանցու միտքն ու զգաց-
մումները համարյա թե ազատ են աշխարհիկ և կրոնական ըմ-
բռնուածների հակադրությունից առաջացող երկրնարանքից, մի
բան, որ նկատելի էր Երզնկացու մոտ: Նա համարձակ կերպով
երգում է աշխարհի գեղեցկությունը, կյանքի ու սիրու վայելքը և
նույնիսկ այն միտքն է զարդացնում, թե Երկիրը մարդուն պատ-
ճառած վայելքներով գերազանց է քրիստոնեական կրոնի խոս-
տացած դրախտից: Իրական դրախտալինը Թլկուրանցին տես-
նում է գարնան զարթնող հոյակապ բնության, կանացի գեղեց-
կության և սիրու հաճույքի մեջ:

Բանաստեղծի պատկերացմամբ սերը մի այնպիսի հույզ է,
որի հմայքից ոչ ոք չի կարող ազատ մնալ: Նա իր սիրու տաղերի
մեծ մասի մեջ հատկապես նշում է այն բանը, որ կնոջ թուշան-
քի և սիրու առաջ անզոր են նույնիսկ եկեղեցու սպասավորները:
Անգամ հարյուր տարեկան արեղաները, որոնց մազերը սպիտա-
կելուց հետո սկսել են դեղնել, խաչի առաջ աղոթելիս գեղեցիկ
կին են տենչում: Կինը միակյացների խելքն է տանում, երեցնե-
րին, սարկավագներին իրենց կարգից գցում, վարդապետներին
կտրում գրչից և ուսումնից ու առհասարակ մարդկանց մոռացնել
տալիս աստված, աղոթք, եկեղեցի:

Մարդ որ սիրոյ կու հանդիպի,
Նա քան զկրակ կու լինի վառ.
Այլ ոչ աղօթք ի միտ կուգայ,
Ոչ յայսմատուր կարդայ ու ճառ:

Այս դեռ բոլորը չեն: Կնոջ գեղեցկությունը և սերը այնպիսի
զորավոր ուժ են, որ գրանց ներգործությամբ վիմեր են խորտակ-
վում, լեռներ են հալցում և բերդեր են քանդում: Թլկուրանցին
ավելի հեռուն է զնում. նրա կարծիքով գեղեցկությունը և սերը
կարող են մարդուն հավերժ երիտասարդ պահել ու անմահ
դարձնել.

Ով զքեղ սիրէ, ո՞նց մեռանի
Կամ երեսուին դառնայ դեղին...

Թլկուրանցու սիրու երգի մեջ թախիծ չկա. զրանց մեջ խայ-
տում է մի որախ ու կայտառ ոպի, Ժպտում է կենսաթեր գարու-
նը: Այդ երգերի բանաստեղծական պատկերները զարմանալի
գունագեղ են, արևի պայցծառ լույսով ողողված. ոչ մի վառ նըր-
բերանգ աշքաթող չի արված կանացի գեղեցկությունը նկարե-
լիս: Ահա՝ Թլկուրանցու գեղեցկության իդեալը.

Յանկարծակի մէկ մի տեսայ որ կու ցողայր գոյն երեսէն.
Թալցայ անկեայ ի տեսլեանէն, շողայր կաթէր
լոյսն ի վզէն:
Աշքերն է ծով, ունքն է թուխ ամպ, մազն է դեղձան
ոսկի թելէն,
Զինքն ճոհար՝ զէտ զուռի Ճեղ, Հրով այրէր զերկիր ամէն:

Սիրուհու գեղեցկության պատկերը գծագրելիս Թլկուրանցին,
ինչպես առհասարակ միջնադարյան մյուս հայ բանաստեղծները,
լայն օգտագործել է ժողովրդական բանահյուսության կովտու-
րան: Անհրաժեշտ է նշել, որ միջնադարյան բանաստեղծների
ստեղծագործությունների մեջ հանդիպող որոշ նմանությունները
ոչ այնքան իրարից կրած աղեցությունն են, որքան նույն ա-
կունքից՝ ժողովրդական բանահյուսությունից օգտվելու հետե-
վանք: Թլկուրանցին ժողովրդական պատկերներով է նկարագրում
սերը և սիրած կնոջ արտաքինը. սիրուհու դեմքը արև է կամ
բոլորած լուսին, մազերը՝ ոսկեհյուս թելեր, շրթունքները՝ լուսե-
ղեն շող, ծոցը՝ վարդով լի բախչա, մարմինը՝ փարթամ չինար:
Ժողովրդական բանահյուսության վարպետ օգտագործման հան-
գամանքը մեծապես նպաստել է Թլկուրանցու, ինչպես և աշխար-
հիկ մյուս բանաստեղծների, ստեղծագործության գեղարվեստա-
կանությանը:

Հովհաննես Թլկուրանցին իր խրատական բանաստեղծու-
թյունների մեջ մարդկանց զանազան բարի խորհուրդներ է տա-
լիս. Հորդորում է հեռու մնալ հարբեցովությունից և անառակ
կյանքից, զգուշանալ սուս սիրելիներից, որոնք երեսանց քաղց-
րախոս են, բայց ներքուստ շարամիտ: Իսկ խոհական ոտանա-
վորներում նա սովորաբար փիլիսոփայում է մահվան մասին:
Որպես լավատես գրող, Թլկուրանցին ատում է մահը, այն հա-
մարում է ամենագառն և ամենասարսափելի բանը աշխարհիս ե-

ըեսին, որովհետեւ, ըստ բանաստեղծի, մարդու մշտական՝ ձըգւ-
տումն ու երջանկությունն է՝ անընդհատ աշխատել և ստեղծա-
գործել, իսկ մահն ընդհատում է մարդու այդ օգտակար գործու-
նեությունը։ Բանաստեղծը ոտանակորներից մեկում խոր վշտով
զբում է։

թե մահն չէր ու կամ մեռնել,
ես ունեիի շատ բան հոգալու...

Հովհաննես Թղկուրանցու ստեղծագործության մեջ առանձին տեղ է գրավում «Տաղ քաջի Լիպարիտին» էպիկական պոեմը՝ XIII—XVI դարերի հայ գրականությունից էպիկական ժանրի բատեղծագործություններ քիչ են հասել մեղ. դրանցից լավագույնը Թղկուրանցու գրածն է։ Բանաստեղծն իր այդ ստեղծագործության մեջ մեծ զգացմունքով պատմում է ժամանակակից մի անցքի մասին։ Տարսոնի Մանշակ ամիրան վաթսոն հազար զորքով հարձակվում է Կիլիկիայի Հայկական պետության Սիս մայրաքաղաքի վրա։ Կոստանդին III թագավորը նրա դեմն է ուղարկում զորապետ քաջ Լիպարիտին, որը զարդում է թշնամուն և երկրի սահմաններից դուրս քչում։ Պարտությունից կատաղած Մանշակը մեծ բանակ հավաքելով կրկին անդամ (1369 թ.) նորոգում է իր արշավանքը։ Այս անդամ ևս քաջ Լիպարիտը, սրտառուշ հրաժեշտ տալով իր հարազատներին, դուրս է գալիս թշնամուն զիմագրավելու Լիպարիտը դեպի Սիս տանող կամրջի պահպանությունը թողնում է թագավորին, իսկ ինքը փոքրաթիվ զորքով հեռուսաբար խիզախում է թշնամու վրա և սոսկալի կոտորած անում։

Լաշկ արավ դիզան դիզան
Հանդ որ արիւն գետեր ելան...

Սակայն Մանշակի հեծելազորը գրավում է Սիս տանող կամուրջը, որ թափավորը չէր կարողացել պաշտպանել: Եվ երբ էլիպարիտը վերադառնում է Սիս, անսպասելի կերպով հանդիպում է թշնամու գնդերին: Բոլոր կողմերից պաշարվելով, անօդական մնացած հերոսն ընկնում է անհավասար կովում: Նրա զլուխը կտրում տանում են, իսկ մարմինը թողնում կամուրջի վրա: Այնուհետև բանաստեղծը պատմում է, թե ինչպես քաջ կի-

պարիտն իր անձնութաց հերոսությամբ անմոռանալի մնաց հայ յերի մեջ:

«Տաղ քաջի կիպարիտին» պոեմը մի գեղեցիկ հայրածառերա
կան ստեղծագործություն է: Կիպարիտի քաջությունը գովելով և
նրա տրափիկական մահը սպալով, Թէկուրանցին արտահայտել է
հայունիքի պաշտպանության վեհ գաղափարը:

ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇ

Միջնադարում, Ֆրիկից հետո, հայ գրա-
ւանաբը կանության մեջ սոցիալական մոտեվները
ուժին չեն, են Մկրտիչ երգերում:

ուժեղ հնակել են ս զբարչ օմալաւ ։ Եւ այս պատճառ-
նադաշը (այսպիս է կոչվել նաև նկարիչ լինելու պատճառ-
ով) եղել է Հոգևորական, Նա ծնվել է Բաղեշ քաղաքի մոտ
գտնվող Պոռ գյուղում՝ XV դարի սկզբներին։ Նրա կյանքը տևել
է մինչև նույն դարի 70-ական թվականները։ Վերջին բանաստեղ-
ծություններից մեկը գրված է 1469 թվին։

Մկրտիչ Նաղաշն իր ժամանակի կրթված անձնավորություն-
ներից և հայտնի հասարակական գործիչներից մեկն է եղել: Նա
ամեն կերպ աշխատել է մեղմել օտարերկրյա բռնակալ իշխան-
ների կամայականությունները և բռնությունները ժողովրդի նկատ-
մամբ: Ինքն էլ հալածվելով այդ իշխաններից երկար տարիներ
շրջել է զանազան վայրեր, ապրել է Պոլսում և Ղրիմի Կաֆա
(Ֆեոդոսիա) քաղաքում: Այդ ժամանակվա ընթացքնում նա շատ
լավ ծանոթացել է զանազան արհավիրքների հետևանքով մայր
երկրից պանդխտած հայ աշխատավորների ծանր վիճակին:

Նաղաշի ստեղծագործությունները հիմա հրատարակվել է մոտ 12 բանակտեղծություն, գրանք միջնադարյան հայության մասին:

Միրիկայի ամենագեղցիկ նսուշամբը առ
Մկրտիչ Նաղաշը Ֆրիկի նման փիլիսոփայող բանաստեղծ է:
Իր գրվածքներում նա միծ մասամբ խորհրդածում է մարդկա-
ցին և հասարակական կյանքի գանազան երևույթների մասին,

ուժեղ քննադատության է ենթարկում փողի, հարստության կուտակման տեսչով բռնվածներին, որոնք մեծամեծ շարիքների պատճառ են դառնում: Քննադատական ոգու համարձակության և ուժի տեսակետից նշանավոր է Նաղաջի օվասն ագահութեան» բանաստեղծությունը: Բանաստեղծի կարծիքով մարդկանց պատահած բոլոր վնասների պատճառը ագահությունն է: ագահներն են՝

Ի սկզբանէ մինչ ի վախճան ամէն վնաս որ գործեցան,
Ագահութիւնն եղեւ պատճառ, որ ի բարեացն զրկեցան...

Այսուհետև Նաղաջը սուր և ճիշտ կերպով բնութագրում է ագահներին, ասելով՝

Ագահն գայլ է պատառող և ծարաւի արեան մարդկան,
Խլէ, զրկէ, յափշտակէ, ոչ յագենայ արեամբ մարդկան,
Թէպէտ հարուստ է և փարթամ և տէր ընչից և
մեծութեան,

Բնութեամբն ագահ է և անյագ, ջանայ զրկել
զամենեսեան:

Նաղաջի պատկերացմամբ այդ ագահները նախ և առաջ թագավորներն ու իշխաններն են. նրանք բոլորն էլ արյունահեղ կոփիվներ են մզում, երկիրներ ավերում՝ ագահությունից մզված: Այսուհետև ագահներ են հոգևորականները: Այսպիսով, Մկրտիչ Նաղաջի քննադատությունը ուղղված է ֆեոդալականության թե՛աշխարհիկ և թե՛ Հոգմոր ներկայացուցիչների դեմ: Հետաքրքրական է, որ Նաղաջն անխտիր մերկացնում է հոգևորականության բոլոր խավերում էլ տիրող բարքերի ապականությունը և բարչյական անկումը՝ սկսած կաթողիկոսներից մինչև երեցները:

Կաթողիկոսքն շատացան անօրինացն բռնութեան,
Եպիսկոպոս օրհնեն անբան, ամէնն վասն ագահութեանն
Եպիսկոպոսքն զկանոնն անցան, որ պոռնկաց

կուտան հրաման,
Կաշառ առնեն կարմիր դեկան՝ ամէնն վասն ագահութեանն
Վարդապետերս որ նոր ելան, բանին եղեն վաճառական,
Եւ քարողեն զհաճոյս մարդկան, ամէնն վասն
ագահութեանն

Մկրտիչ Նաղաջն էլ պատկանում է միջնադարյան հայ հումանիստ բանաստեղծների թվին: Դատապարտելով ագահներին, թագավորներին, իշխաններին, հոգևորականներին ու հարուստեաթագործներին, նա մեծ համակրանքով և շերմ զգացմունքով լի տաղեր է նվիրել դրանց զոհերին— զարիպներին:

Նաղաջի զարիպների (պանդուխտների) կյանքը պատկերող բանաստեղծությունները սոցիալական խորը բովանդակություն ունեն: Դրանք միաժամանակ հայրենասիրական բնույթ ունեն, հիշտ այնպես, ինչպես նման թեմա ունեցող ժողովրդական ճիշտ այնպես, ինչպես նման թեմա ունեցող ժողովրդագործութիրիկան երգերը: Պետք է ասել, որ Նաղաջի ստեղծագործության հատկապես այդ մասը սերտ կապված է ժողովրդական բանահյուսության ոգու և արվեստի հետ:

Զարիպության թեմայով հայրենասիրական տրամադրություններ արտահայտող բանաստեղծները միջնադարում նույնքան շատ եղել, որքան և սիրո երգիչները: Դրանց մեջ ամենանշանական վորը Մկրտիչ Նաղաջն է: Զարիպների կյանքը պատկերող և նըստանց զգացմունքներն արտահայտող տաղերը լավագույնն են նրա ստեղծագործության մեջ:

Նաղաջի երգած զարիպը ֆեոդալների և օտարերկրյա բռնակողմից կեղեքված աշխատավորն է, որ աղքատություններ ստիպված թողնում է հայրենիքը և գնում հեռու երկրներ ապրուստ ճեռք բերելու, բայց մենում է թշվառության մեջ, հարազատների և հայրենիքի կարոտը սրտում: «Վասն զարիպի» վաղարշաբեր երկու տաղերից մեկում Նաղաջը նկարագրում է օվերնագրված երկու տաղերից մեկում հայրենիքը զարիպները և նրանց հուզիչ վախճանը.

Զարիպին կեանքն է լալի ողբերգական,
Դառն ու լեղի լի տրտմութեամբ ի նեղ զնտան,
Յորժամ լինի յօտար երկիր թափառական,
Զարիպն օտար ոչ ճանաշեն, և ոչ գիտենան...

Զարիպին վայն է եկեր, երբ քաղցենայր,
Երես ի քաշ ի փողոցերն կու մուրար,
Շատ ոք փակէր զդուռն ի դիմաց, նստէր ու լալր:
Թէ կաթ մի ջուր ուղէր գերին, մէկ մի շտալր...

Ղարիպին եկեալ էհաս օրն մահուան.

Դառն հեծէր և արտասուօք զհոգին էհան.

Եւ կայր անկեալ մեջ փողցին անտիրական,

Մէկ մի շեկաւ տես զարիպին և ոչ լալկան:

Մկրտիչ Նաղաշը գտնում է, որ մարդկային վշտերից ամեանադար, ամենածանրը զարիպների ունեցած վիշտն է.

Նաղաշն ասաց թէ զարիպին կեանքն է հարամ.

Զղարիպին հալն գիտեմ, օր վա՞յ կուտամ,

Թեկետ տեսայ զամեն մարդոց լութի ու քարամ,

Զղարիպութիւն յորժամ յիշեմ քան զուռ դողոմ:

Բանաստեղծի ազնիվ զգացմունքները հորդում են զարիպների մասին գրած տաղերի ամեն մի տողից:

«Կասն զարիպի» վերնագրով մեղ հասած երկրորդ տաղում Նաղաշը նույնքան գեղցիկ և ուժեղ պատկերով զարձյալ արտահայտում է իր անկեղծ սերը դեպի զարիպները:

Հոգի՛ մի ասեր զարիպ, թէ չէ իմ սիրոս կարումի,

Զարիպն ի յօտար երկիր դեմ խիստ դիժար կու լինի...

Բայց նա հալվատացած է, որ դժվար օրերը կանցնեն և լավ մլրճակ կստեղծվի.

Ղարիպ՝ սիրոտ մի՛ նեղիր, այս դժար օրերս անցնի...

Ֆրիկի նման Նաղաշն էլ այն ժամանակ չէր կարող իհարկե որոշակի պատկերացում ունենալ, թե այդ դժվար օրերը ինչպես պիտի անցնեն և լավ օրեր գան: Իրական ելք չգտնելով դժվար օրերից գուրս գալու համար, նա երբեմն ընկնում է հուսահատության մեջ և քրիստոնեական կրոնի ազդեցությամբ փարում է հանդերձյալ կյանքում երշանկության հասնելու գաղափարին: Ծյուղիսի դեպքերում Նաղաշը գրում է ուտանուվորներ, որոնց մեջ արտահայտում է աշխարհի «սուս երազ», անցողիկ և ունայն լինելու տեսակետը ու խորհուրդ է տալիս մարդկանց կյանքում իրար ոչ թե վատություն անել, այլ բարություն, որովհետև նրա կարծիքով—

Զինչ բարի գործեցիր նա զայն տի տանես...

Անկախ այս հանդամանքից, Մկրտիչ Նաղաշի ստեղծագործ

ծությունն ընդհանրապէս ոեալիստական է, նաղաշը ոեալ ընդհանրացումներով պատկերացրել է իր ժամանակաշրջանի հասարակական կյանքի որոշ կողմերը,— մի բան, որ նրա բանաստեղծություններին տալիս է գեղարվեստական ու ճանաշողական բարձր արժեք:

ԳՐԻԳՈՐԻԱՆ ԱՂԹԱՄԱՐՅԱՆԻ

Գրիգորիս Աղթամարցու ծննդյան և մահավան թվականները հայտնի չեն, նա Աղթամարցի է կոչվել Աղթամար կղզում կրոնավորելու պատճառով: Եղել է կրթված անձնավորություն, զբաղվել է և նկարչությամբ: Բանաստեղծություններում հիշատակված մի քանի թվականներից (1515, 1519 և 1523) երեսն է, որ Աղթամարցին ստեղծարձել է XVI դարի առաջին կիսում:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒ Աղթամարցու ստեղծագործություններից քյունքը մինչև հիմա հրատարակված են մոտ տասնըհինգ տաղ և բավական թվով քառյակներ (կաֆաներ): Աղթամարցու գրվածքները պահպանվել են բազմաթիվ ձեռագիր տաղարաններում, մի բան, որ ցուց է տալիս նրա ճանաշված և սիրված բանաստեղծ լինելը:

Աղթամարցու ստեղծագործությունների մեծ մասը սիրության արքան երգեր են: Գրել է նաև խոհական-խրատական ոտանագարնան երգեր են: Գրել է նաև կյանքական-խրատական ոտանագարնան երգեր, որոնց մեջ նա իր նախորդների՝ Ֆրիկի, Նաղաշի և ուղորներ, որոնց մեջ նա իր նախորդների՝ Ֆրիկի, Նաղաշի և ուղորների նման, խորհրդածում է կյանքի անցողիկության մասին բարձրական մասին: Աղթամարցին այս մոտիվին արտահայտել է գերազանցապէս իր քառյակների մեջ, որոնք առնասարակ գրված են մեծ վարպետությամբ:

Այսպես, օրինակ, դրանցից մեկում ինքնատիպ և գեղեցիկ համեմատություններ անելով, նա ասում է.

Մեր կեանքն է գետոց նման, անդադար կա ի գնացման. Կամ արեգական ընթացք, որ շափէն զտարին ի լման. Քան զայս այլ փութով զնամք և լինիմք մենք անհետական,

Անալոյ ճարակ չունիմք, պատառիմք գերպ
սարպի ընտալէ

Աղթամարցու գարնան և սիրո երգերի մեջ ուժեղ արտահայտություն է գտել, քրիստոնեական քարոզության հակառակ, իրական աշխարհի ու կյանքի պաշտամունքը: Նա թվագրանցուցական աշխարհի է խտացնում և շլացուցիչ դարձնում գույները, երբ նկատվելի է խտացնում և շլացուցիչ դարձնում գույները, սեր Արհամարհերագործ է կնոջ գեղեցկությունը և երգում է սերը: Արհամարհերագործ է լով կրոնական երկյուղածությունը, նա սիրուհուն համարում է կրոնական երկյուղածությունը, նա սիրուհուն համարում է գրեշտակներից ավելի գեղեցիկ և «զորավար խաչից» ավելի գրեշտակներից ավելի գեղեցիկ և «զորավար խաչից» ավելի գրեշտակներից: Կնոջ գեղեցկությունը և սերը կարող է մարդուն սքանչելափորձ: Կնոջ գեղեցկությունը և սերը կարող է մարդուն հարթեցնել կամ հնոցի նման այրել ու բորբոքել.

Սիրով լափեցիր ու արիր սիրտս խոց,

Կուտապիմ 'և այրիմ որպէս զհնոց,

Արտէս կու թափի յոլով հով ու բոց,

Զայդ աստուածազիծ պատկերդ քո ինձ ցոյց:

Աղթամարցին, ինչպես և իր նախորդ սիրո երգիներից հատկապես թվականցին, ստեղծագործությունների մեջ կնոջը նկապես բարձրում է գլխավորապես արտաքին գեղեցկությամբ:

Աղթամարցու սիրո երգերի պատկերավորովյունը պայմանավորվում է նրանց այս առանձնահատկությամբ։ Ունենալով ստեղծագործական վառ ֆանտազիա և լայնորեն օգտագործելով ժողովրդական բանահյուսությունը, Աղթամարցին կարողացել է կունաքեղ էպիտետներով ու համեմատություններով նկարել կոչ գունագեղ, արտահայտել սիրո ուժը։ Այսպես, օրինակ, գեղեցկությունը և արտահայտել սիրո ուժը։ Այսպես, «Ենգի», սիրուհին՝ «Արեգակնախալլ գեղով լի լուսին ի տասն ու հնգե», «իալլուն մարգարիտ ի մեջ սատափին», «գարուն գեղեցիկ», «լալ ակն ու գոհար», «ծիրանի ծաղիկ գույն մանուշակին», «որպես քափուր վարդ պայծառ և գոնով», «աստղ վառ ի վառ, ցող առավոտու»։ Սիրուհու հոնքերը՝ «քաշած կամար զինչ գարնան աղեղն ի յամպէն», աշքերը՝ «պայծառ որպես զծովակ», մեջքը՝ դեղն ի յամպէն», աշքերը՝ «պայծառ որպես զլար», լեզուն՝ «շիրին որպարակ քան զուտի վարոց», շրթունքները՝ «լար», լեզուն՝ «շիրին գմսրա շաքար», ատամները՝ «բյուրեղ քանդակեալ», «մարդարտե շարոց» և այլն։

Գրիգորիս Ալթամարցին հաճախ թողնելով կանացի զպոց-
կության նկարագրությունը՝ մի առանձին ոգևորությամբ երգում է

Մի էջ միջնադարյան ձեռագրից

Վարսմէը, վարդի և բլբուկի սերը: Նրա լավագույն, սքանչելի ըստ տեղծագործությունը, «Կասն վարդի և պիւպիւլ» վերնագրով, հետագա այդպիսի թեմա ունի: Սա իրոք մի պոեմ է, որի մեջ ավելի շատ սիրո հոգեբանություն կա, քան մյուս բանաստեղծություններում.

Ետ վեալոյ վարդին եկ պիւպիւլ յայգին
Ետեն թափուր զգրանն, քաղեցաւ հոգին.
Երջէր և հարցանէր ըզիւր սիրելին.
Կանչէր զար և ֆիղան ի մէջ գիշերին:

Վարդը կորցրած սոխակը կսկիծով հարցնում է այգուն, թե ինչո՞ւ չի պահել իր պատվական վարդը, որը գեղեցիկ գույն ուներ, անմահական հոտ և ամեն ծաղիկների թագավորն էր: Ապա նա ուղղում է իմանալ, թե ո՞վ եղավ արդյոք այդ թշվառության պատճառը.

Իինի՞ թէ այգեգործն արար զայս ընդ իս,
Տարեալ զվարդն յինէն, ցավեցոյց զհոգիս...
Վախեմ, հողմն սաստիկ ելաւ ահագին,
Վասն այն թոթափեցաւ տերեւն վարդին.
Եւ կամ խորշակահար տապն արկին,
Եհար թարշամեցոյց զգեղն վարդին...
Կարծեմ, եթէ ծաղկունքն արին հետ ինձ քէն...
Եւ կամ կարկուտ եկավ սաստիկ ի յամպէն,
Եհար զնա անողորմ, կտրեաց ի թփէն:

Սոխակի այս հարցերին միայն ծաղիկներին են պատասխան տալիս, թե վարդից ոչ մի տեղեկություն չունեն: Սոխակը նույն հարցումը անում է թոշուններին, սրանք էլ վարդի անհայտանալու պատճառը չեն կարողանում ասել: Այստեղ սոխակի վիշտն ուժեղանում է, նա կանչում, աղաղակում է, աշխարհը նրան խավար է թվում. վախենում է հանկարծ մեռնի առանց վարդին տեսնելու ու նրանից իր կարոտն առնելու: Սոխակի հուսահատության վերջ է տալիս այցեգործը. նա գիտե բնության օրենքները և հաստատ հավատացած է, որ իր այգին նորից կանաչելու է. նա տեսել է արդեն գարնան կարապետին՝ նորածիլ սիրուն մանուշակին, ուստի շտապում է ուրախացնել սոխակին- ասելով.

... «Մի լա՛ր, պլանու, քո վարդն կուգայ, եկեալ է մանուշակն վարդին փիատայ...»

Վարդի երգիչը շտապում է իր սիրելուն մի նամակ գրել: Վարդը նամակն ստանալով, կանչում է ծաղիկներին, որ սոխակին միսիթարելու համար գնան լեռները, դաշտերն ու այգիները զարդարեն և հայտնեն նրան, որ քիչ էլ համբերի և սպասի իր մոտալուտ գալստյան: Եղ ահա.

Ամպն ի վերուստ ցօղով յանկարծ որոտաց,
Բուսան ծաղկունք երկրի հազարք հազարց...

Իսկ սոխակը փնտոելով, բացված ծաղիկների մեջ վերջապես կտնում է իր այնքան փափագած սիրելուն: Պոեմի ընթացքը և վերջը ցուց են տալիս, որ Աղթամարցին լավատես բանաստեղծ է: Արհավիրքների այն ծանր տարիներին, ինչպես ինքն Աղթամարցին է գրել երգերից մեկի վերջում, ակնարկելով սովորական երի ու շահերի սարգած կոտորածները՝

Հագարացիք օրինօք թիւր,
Ճազգս խանձեն որպէս զհուր...

Ահա այդ ժամանակ իր ստեղծագործությունը վերջացնում է գարնան գալստյամբ: Սոխակի և վարդի սիրո մասին Աղթամարցու գրած երգերը այլաբանական են. նրանք ոչ միայն ակնարկում են բնության հավերժական նորոգումը, այլ և արտահայտում են բանաստեղծի սերը զեպի հայրենիքը և հավատը դեպի նրա վերծնուղը: Սրանով պետք է բացատրել, որ այն ժամանակ շատ սիրված ու տարածված են եղել վարդի և բլբուկի սիրո մասին զրված բանաստեղծությունները և որ Աղթամարցին ունեցել է բազմաթիվ ընդօրինակողներ:

Գրիգորիս Աղթամարցու, ինչպես և իր նախորդ երգիչների, ստեղծագործություններում արտահայտված իրական աշխարհի գովքը անկասկած մատերիալիստական մտածողության արտահայտություն է հայ վերածնության երկրորդ շրջանի գեղարվեստական գրականության մեջ:

Հակառակ եկեղեցական գրողների, որոնք քարոզում էին մարդկանց փակել իրենց հինգ զգայարանքները աշխարհի հանգեպ, կտրվել իրական կյանքից, Աղթամարցին իր «Տաղ գեղե-

ցիկ ի վերայ այգոյ, հոգոյ և մարմնոյց բանաստեղծության մեջ տրագեդիա է ապրում և ափսոսանք է հայտնում, որ մարդու կյանքը սահման ունի, որ մահը վերջ ի վերջո զրկում է մարդուն աշխարհի բարիքների ու հաճույքների վայելքից:

Բանաստեղծի համար աշխարհը միակ ռեալ գոյություն ունեցող «ուրախարար» տեղն է, որ մարդիկ կերտում են իրենց կյանքը ծանր, բայց հաճելի աշխատանքով: Մարդն անհագ կարու ու ցանկություն ունի շարունակ ստեղծել, կառուցել ու իր աշխատանքի արդյունքները վայելել, ուստի նրա համար շատ մեծ ցալ է թողնել հեռանալ աշխարհից:

Ահա՝ այդեզրծը տեսնում է իր այգու մեջ քաղցր դաշլալո՞՛ սովխակին, տեսնում է իր նորատոնկ այգին գույն-գույն ծալիկ-սովխակին, տեսնում է իր այգի գեղեցիկ վայրը պատսպարելու, ներով զարդարված: Նա այդ գեղեցիկ վայրը պատսպարելու, ցանկապատելու համար գետերից քարեր է բերել, սարերից փուշ, այգում նոր տներ է շինել, ավազան ու առվակներ հարդարել, այգում նոր տներ է շինել, ավազան ու առվակներ հարդարել, հաղողի տունկեր աճեցրել, հնձան է շինել և մեջը նոր կարասներ խաղողի տունկեր աճեցրել, հնձան է շինել և մեջը նոր կարասներ յելե, բայց մահը խանդարում է: Այդեզրծը սրտակեղեք ճիշեր կամակում, նա ոչ մի կերպ չի ուզում հաշտվել իր այգուց դուրս գալու մտքի հետ.

Քար եմ բերեր գետերոյս,
Փուշ եմ բերեր սարերոյս,
Ցանկ եմ շիներ այս այգույս,
Կասեն թ'արե'կ ել այգույս:

Չեմ ելներ ես այս այգույս,
Այս իմ նորատոնկ այգույս.
Յայս ուրախարար տեղոյս,
Եւ այս նորաշեն տներոյս:

Դրիգորիս Աղթամարցու այս հանճարեղ բանաստեղծությունը, որի մոտիվը հավիտենական է ու համամարդկային, միջնադարյան հայ աշխարհիկ գրականության մեջ մատերիալիստական մտածողության և հումանիզմի ամենացայտուն արտահայտություններից է:

Աղթամարցին շատ լավ տիրապետել է և գրաբարին, և ժո-

ղովրդական խոսակցական լեզվին: Նա լայն կերպով ծանոթ է եւ զել իրանական գրականությանը: Հավանաբար իմացել է նաև հումարեն և կարդացել է Հոմերոսի անմահ ստեղծագործությունները: Իր բանաստեղծություններից մեկում, նկարագրելով սրուշուն, նա ասում է.

Ցանկամ տեսնել զքեզ, իմ պսակ փառաց լուսեղեն,
Վ' հյուսեցից երգս տաղից, զքեզ գովեմ հոմերոսօրեն:

ՆՍՃԱՊԵՏ ՔՈՒԶԱԿ

ԱՅԱՅՔ

Նահապետ Քուչակը հայ լիրիկական բառապետության ամենափայլուն դեմքեւիցն է: Քուչակն ապրել է XVI դարում: Ծնվել է Վանի մոտ գտնվող Խառակոնիս գյուղում: Եղել է աշխարհական: Նրա մասին մեզ հասել են միայն մի գրավոր հիշատակություն և համապատասխան մեջ պահպանված մի քանի ավանդություններ: Այն փառաթուղթը, որի մեջ խոսվում է մեծ բանաստեղծի մասին, մի ձեռագիր ավետարանի հիշատակարան է, գրված 1637 թվին: Այդ հիշատակարանում, որ գրել է Քուչակի թոռը, նմանապես բանաստեղծ Քուչակ մականունով, ասված է: Ճիշեցէք գեուշակ և միւս կենակից Թարձեալ յիշեցէք գեուշակ և զմեծ պապն իր Նահապետ վարպետն, որ մականուն Աշըդ Քուչակ ասիս: Այս շափազանց ժլատ տեղեկությունից իմացվում է միայն, որ Քուչակը եղել է վարպետ տաղերգու, իսկ նրա կյանքի հանդամանքները մնում են մեզ համար զեռ անհայտ: Քուչակն այնքան է սիրվել գյուղացիներից, որ մահվանից հետո նրա գերեզմանը դարձել է ուխտատեղի:

Քուչակից մեզ հասած բոլոր բանաստեղծությունները քառականեր են, որոնց մեծ մասը հայտաբերվել է 1583 թվին գրված մի ձեռագրից: Քուչակի քայլակները, բովանդակության նայելով, բաժանվում են երեք մասի՝ սիրային, փիլիսոփայական-խրատական ու պանդիտական:

ՔՈՒՅԱԿ ԻՐԵՎԱՆ Իրբու սիրո երգիշ Քուչակը հանճարեղ է: սիրո երգիշ Համաշխարհային գրականության մեջ քիչ են այն լիրիկները, որոնք սիրո հույզն այնքան խոր, գեղեցիկ,

վառ ու բազմազան պատկերներով արտահայտած լինեին, ինչ-
պես Քուշակը:

Քուշակը հայ վերածնության շրջանի գրականության գագաթն
է; Նրա ստեղծագործության մեջ ֆեռդալականությանը հակադիր
հումանիզմն իր լրիվ և բարձրագույն արտահայտությունն է գր-
տել; Բացի այդ, Քուշակն ամենախոշոր ռեալիստն է; Նա կնոշ
պատկերում է ոչ միայն արտաքինով, այլև ներքին հոգեկան
ապրումներով; Քուշակի քառյակներում կինը տղամարդու նման
հանդես է գալիս որպես գործող անձ, նկարագրված կոնկրետ
սոցիալական և կենցաղային միջավայրում; Այս բոլորը նաևս և
առաջ պայմանավորում են նրա սիրո երգերի գեղարվեստական
բարձր արժանիքները:

Քուշակի փիլիսոփայությամբ՝ սերն աշխարհիս ամենաքաղցր դպացմունքն է,

Քան զսէրն այլ քաղցրիկ պտուղ ի յաշխարհս
չառամ թէ լինի,

Շէքէրն նշով շաւղած՝ մոտ ի սէրն է դառն ու լեղի...

Բանաստեղծին այնպես է թվում, թե երբ սերը աշխարհում ծնվել է, առաջին անգամ ինքն է զգացել այն, հետո իր սրտիցն է դուրս թափվել և երկրից երկիր տարածվել.

Սէրն երբ ի յաշխարհս եկաւ, եկաւ իմ սիրոս թառեցաւ.
Հասա իմ սրտէս ի դուրս՝ երկրէ երկիր թափեցաւ...:

Քուշակն այնքան ուժեղ է ապրում սիրո զգացմունքը, այնքան մեծ թափով է արտահայտում այն, որ իրոք նրա քառյակները կարդալով՝ մարդ տրամադրվում է սիրել՝ սիրել աշխարհը, սիրել կյանքը, սիրել մարդուն։ Հենց այս էլ պայմանավորում է Քուշակի ստեղծագործության ժողովրդայնությունը։

Լինելով աշխատավորության տրամադրությունների արտահայտիչ՝ Քուշակն իր զգվանքն ու արհամարհանքն է հայտնում հոգկորականության և նրանց հետագիմական քարոզլության նըկատմամբ։ Նա միանդամայն աներկիմիտ ու համարձակ կերպով սիրո աշխարհիկ զգացմունքը հակադրում է կրոնական հավատալիքներին։ Այսպես, օրինակ, մի քառյակում ասում է.

Քանի մարն զիս բերեր, քահանի չեմ խոստովաներ,
Ուրտեղ քահանայ տեսեր նա ծոեր ճամփուս ու ելեր.
Ուրտեղ մեկ աղլոր տեսեր, գիրկ ու ծոց 'կի

Դեմ գնացելու

Քուշակը ոչ միայն ժխտական վերաբերմունք է ցուց տվել ֆեռական եկեղեցուն, այլև առհասարակ ֆեռդալական հասարակության այն բոլոր տրադիցիաներին ու բարոյական ըմբոնում-ներին, որոնք կաշկանդում էին մարդու ազատությունը և անհատականությունը: Ազատ սիրո ուժգին պոռթկումները հենց այդ ժխտման արտահայտություններն են: Այսպես, Քուշակը կողմնակից է տղամարդու և կնոջ հավասարության: Նրա համոզմունքով, ինչպես տղամարդը, այնպես էլ կինը, պետք է միանգամայն ինքնուրույն լինեն սիրո և ամուսնության ինդրում: Նա ատելությամբ ու զայլություն է լցված կնոջը բոնի կամ փողով ամուսնացնողների նկատմամբ: Քառյակներից մեկում այս մոտիվը երևան է գալիս սքանչելի կերպով.

Երէկ ցորեկով բարով տանէին մեկ եար մի ճորով.
Ընա ճորով է տարած կամ խաբած է զինք դրամով.
Սէրն որ դրամով լինի, զինք էրել պիտի կրակով,
Սէրն խնձորով պիտի ու տրհէմ տրհէմ շէքերով:

Սերը պետք է ազատ, անշահախնդիր լինի, ինչպես հնում
էին ասում՝ սերը պետք է լինի խնձորով և ոչ թե զրամով գըն-
ված։ Քուշակը հաճախ բողոքում է սոցիալական հանգամանքնե-
րով պայմանավորված այն երևույթի դեմ, որ հարուստ ծնողները
արգելում են իրենց աղջկիներին աղքատ տղաների հետ ամուս-
նանալ։ Նա, ինչպես իրենից առաջ Ֆրիկը, անբնական է համա-
րում մարդկանց մեջ գոյություն ունեցող սոցիալական տաղբե-
րություններն ու խորականությունը։

Քուշակը երբեք կրկնություն չի անում. Նրա ամեն մի քառակը հոգեկան նուրբ ու քնքուշ մի տարբեր վիճակի ու ցանկության արտահայտություն է: Այսպես օրինակ, մի քայլակում բանաստեղծն իր սիրուհուն գունեղ կերպով հաղորդում է իր սիրութը, ասելով.

Ես աշք ու գու լուս, հոգի', առանց լուս՝ աշքն խաւարի,
Ես ձուկ ու դու ջուր, հոգի', առանց ջուր ձուկն մեռասի:
Երբ ձուկն ի ջրէն հանեն, ջուր մըն ալ ձգեն նա ապրի.
Երբ զիս ի քենէ զատեն, ջանց մեռնիլ այլ ճար չի լինի:

Մի ուրիշ քառյակում նա երանի է տալիս այն մարդուն,
որ հնարավորություն է ունենում սիրել ազատության և ապահո-
վության մեջ՝ անտեսելով կենցաղի կաշկանդումները.

Երնէկ ես անոր կոտամ, որ առեր է իւր եարն է փախեր,
Ոնց որ զկամուրջն անցեր, ջուրն էլեր զկամուրջն է
տարեր:

Զնիկ, եղեմնիկ եկեր զոտւրնուն հետքն է կորուսեր,
Առեր ի պաղչան մտեր, ցորեկով զդնչիկն է պագեր:

Մի այլ քառյակում Քուշակը ներկայացնում է մի սիրահար
աղջիկ, որ իր սիրած տղային հաճելի տանշանքի ենթարկելու
համար որոշել է նրան թողնել անորոշության մեջ.

Այդ ո՞վ է որ երդիկս եկել որ օտար հողն կու սորայ,
Թէ իմն ես նէ վար արի, թէ օտար ծաղիկ նա գնա՛:
— Ո՛չ քուկն եմ ի վար գալու, ո՛չ լերան ծաղիկ գնալու.
Եկել եմ սիրուդ առեր, ո՛չ գալու եմ, ո՛չ գնալու:

Քուշակի սիրո քառյակները մարդկային հոգու խոր ապրում-
ների ցայտուն արտահայտություններ են:

Քուշակի սիրո քառյակների գեղեցկությունը պայմանավորվում է
նաև այն հանգամանքով, որ դրանք հարուստ են իրական կյանքի
զանազան դրություններով ու գործողություններով, ժողովրդական
սովորություններով ու բարքերով, որոնք ստեղծում են վառ կո-
լորիտ: Ահա տղան մանում է ծով գիշերն ի բուն, հանկարծ յարը
միտն է ընկնում, ճախարակը մի կողմ է դնում, մի փարչ անուշ
գինի առնում, գնում յարի դուռը կանգնում ու կանչում.

— Խոշ եար, ա՛մ, զդուուն բաց, ծիմ եկեր ոտիս կու մսի:

Քուշակի այն քառյակները, որոնք խոսում
Քուշակի խոհական-
Խրատական եվ դա-
րիպության մասին կամ խոհական-
խրատական բնույթ ունեն, գեղարվեստա-
գրած քառյակները կան արժեքով նույնքան բարձր են, որքան
սիրո երգերը: Այդ քառյակներում էլ ցայ-
տուն կերպով երևան է գալիս որ դեմոկրատիզմը և հումա-
նիզմը:

Քուշակը հայրենասերի մեծ վշտով է խոսում աշխատավոր
զարիպների մասին, զարիպներ, որոնք իրենց գոյությունը պա-
հանու համար ստիպված հեռանում են հայրենի հարազատ միջա-
վայրից ու տանչվում օտարության մեջ: Նրա կարծիքով ամենա-
մեծ դժբախտությունը, որ կարող է մարդուն հասնել, ոտ զարի-
պությունն է: Ահա զարիպություն գնացողը հրաժեշտ է տալիս իր
հարազատներին և հանձնարարություններ անում: Անջատման
վայրկյանը շատ դառն է, որովհետեւ նա հույս չունի նույնիսկ,
թե կենդանի կվերադառնա.

Զիմ եարն էմանէթ կուտամ, ի վարդին մէջ պահեցէք.
Թէ երթամ ու շուտով դառնամ, զամանաթս ի տէր
Հասուցէք.
Թէ երթամ խարիպուկ մեռնիմ, վարդն ձեզ՝
զտէրն հիշեցէք:

Ղարիպության մեջ գտնվողն ամեն վայրկյան հիշում է իր
վիճակը և լաց լինում, նրա համար ոչ մի ուրախություն չկատ:
Նրա կյանքը երերուն է ու անհաստատ, ապագան՝ անորոշ.

Ժամ ժամ զիմ զարիպութիւնս ես յիշեմ նստիմ ու լամ:
Ճապղել եմ զրիդ նման, ես օտար երկիր կու գնամ...
Ցորեկն եմ նետիդ նման, ուր նետեն՝ ես ի հոն կու կենամ.
Գիշերն աղեղան նման, ես լարթափ ի վայր կու գնամ:

Քուշակն իր խոհական-խրատական քառյակներից ամեն մեկի
մեջ վարպետորեն արտահայտում է մի ամբողջական գաղափար:
Բանաստեղծը հետևողական հակառակորդ լինելով միշնադարյան
ֆեոդալական զահագործման և քրիստոնեական խավարամու-
թյան, իր քառյակներում զարգացնում է աղնիվ աշխատանքի
ուսման և գիտության կուտը: Նա անում է.

Գանգատ եմ ու խոց, եղբարք, սիրոս ի վեր
արիւն կու բերէ,
ի մանկութենէ ի վեր զիս ուսման հոգն կու մաշէ...

Քուշակը խրատում է բոլորին գիտությունը սիրել, գիտունների հետ ընկերություն ու բարեկամություն անել և ոչ թե տգետների; Տգետ մարդը վնաս է պատճառում, իսկ գիտունը ջրի նըման է՝ ուր գնում է, կանաչ է բուսնում.

Արե՛կ որ խրատ մի տամ, խելք ու միտք ունիս նա լսէ՛,
Հետ անդէտին մի՛ դատիր, թէ հազար որ զքեզ կու սիրէ.
Անդէտն՝ ի հուր նման, ուր ընկնի զտեղն կու էրէ,
Գիտուն ի շուր նման, ուր երթայ՝ կանանչ բուսեր է:

Այսպիսի խոհեր ունենալով, բանաստեղծը բնականաբար պիտք է ժխտական վերաբերմունք ունենար դեպի կրոնի պատկերացումը մարդու և աշխարհի մասին,— մի բան, որ պարզ արտահայտված էր նրա սիրո երգերի մեջ: Քայլակներից մեկում նա հարց է տալիս. Հողեղեն մարմնի՝ ձայնը պիտք է լսել, թե՛ հոգու, — և նուրբ հեղնանքով պատասխանում է:

Հետ հոգյն, ա՞մ, ո՞վ թռչի, երբ նրա տունն հեռի է...

Քուշակն իր խոհական-խրատական քայլակներում շահեկան խորհուրդներ է տալիս մարդկանց իրենց առորյա կյանքի և կենցաղավարության վերաբերյալ: Հատկապես զգուշացվում է հեռու մնալ ամեն տեսակի զրաբարիչներից, երկերեսանիներից, անըգգամներից, շատախոսներից, որոնց պատճառած շարիքները նա մեկ առ մեկ մերկացնում է:

Քուշակի կարծիքով խոսքի վարպետը նա Քուշակի ստեղծագործությունն իր մասերի գործուրյան պոետի-է, ում ստեղծագործությունն իր մասերի կական արժանիքն համաշխատությամբ նման է բնության:

Ենքը ինչպես բնության բոլոր տարրերը հավասարակշռված են, չկա ոչինչ ավելի կամ պակաս, այնպես էլ գեղարվեստական գործի մեջ չպիտի լինի որևէ ավելորդ կամ պակաս բան: Ինքը Քուշակը հենց այդպիսի մի վարպետ է. նրա քայլակները բանաստեղծական շափի զգացման կատարյալ նըմուշներ են:

Քուշակի ստեղծագործական ոճը խորապես կապված է ժու

զովովական բանահյուսության հետ: Այսպիս, նա իր քառյակները սովորաբար կառուցում է ժողովովական երգին հատուկ ձևերով: Այդ ձևերից է, օրինակ, երբ քայլակն ոկտում է գործողության ժամանակի հիշատակությամբ («Այն առավոտում լուսուն այն գար գարնան ձագերում...», «Այս ծովական գիշերս ի բռն ես երկու շրջան մանեցի...», «Երեկ ցորեկով բարով տանելին մեկ յար մի ճորով...»): Քուշակի լեզուն հարուստ է ժողովրդական գունագեղ դարձվածներով, (ամիս շունեմ զուկորքս է մնացել...», «Լսեցի, լեզու կապեցավ...», «պագնեմ, աշերուս դընեմ...», «մայրն օրհնած, որ քեզ բերեր է...»), նվազական փաղաքական բառերով (հոգիկ, դնշիկ, ծոցիկ, ձայնիկ, պագիկ, խարիպուկ, բարակիկ թղթիկ), էպիտետներով (թուփ ամպ, պաղացրյուր, բոլոր լուահն, կամար ունքեր), համեմատություններով («Կանգնել էր սելվի նման...», «գուր հազրեվարդի նման», «քոմեջքը քան զուր բարակ» և այլն):

Ժողովրդական բանահյուսությունը հիմք ունենալով՝ Քուշակը բազմաթիվ հանձարեղ բանաստեղծական գյուտեր է արել, ուրոնք նրա ստեղծագործությունը դարձել են միանգամայն ինքնատիպ: Ինչպես բովանդակությամբ, այնպես էլ արտահայտչական պատկերներով, Քուշակն ինքն իրեն բնավ չի կրնում: Զաճախ նրա նույն քայլակի ամեն մի տողը զգացմունքի նրբությունն ու քնքություն արտահայտող մի սքանչելի բանաստեղծական համեմատություն է, օրինակ՝

Այս աստնորիս վերայ, զու մատնի, ես ակն ի վերայ.

Դոր որ պաղ աղբյուր մի կայ, զու կանանշ,

ես ցօղն ի վերայ,

Խնծոր ես ծառի ճղին, ես կանանշ թփիկ ի վերայ,

Վախեմ թէ աշուն գա, զքեզ քաղեն թուփս չորանայ:

Սակայն Քուշակի ստեղծագործության գեղարվեստական ամենախոշոր արժանիքն այն է, որ նա չի բավականացել միայն էպիտետներով ու համեմատություններով, այլ և պատկերներ է ստեղծել որևէ զրության, գործողության նկարագրությամբ, մի քան, որ միայն նրան է հատուկ: Այսպես օրինակ՝

Լուսին, պարծենաս, ասեն, «կուս կուտամ աստնորիս».

Ահա հողեղին լուահն ի գրկիս 'ւ երեսն երեսիս.

Թէ շես աւտալ այս գերուս, ետ տանիմ զփէշ կապացիս
Վախեմ սիրոյ տէր լինիս, լուս պակաս տաս աստնորիս:

Քուշակի բոլոր քառյակներն էլ գրված են վերին աստիճանի
ոիթմական շափով՝ «Հայրենով» (15 վանկանի տողերով): Այս
շափը միջնադարում շատ սիրված և տարածված էր թե՛ գրակա-
նության (գործածել են Ֆրիկը, Սկրտիչ Նաղաշը, Աղթամարցին և
ուրիշներ) և թե՛ ժողովրդական բանահյուսության մեջ: Որովհետև
«Հայրենով» սովորաբար քառյակներ էին հորինվում, ուստի «Հայ-
րեն» ասել նշանակել է քառյակներ ասել: Հենց Քուշակի քառ-
յակներում այդ իմաստով՝ ասված բազմաթիվ արտահայտություն-
ներ կան, օրինակ՝ «կու խմե ու հայրեն կասե», «Հայրեն մի կա-
միմ ասել», «անշափ հայրենի ասի», «կասեմ թե հայրեն ասա»,
«գիտեմք որ շատ հայրեն գիտես, լավ ընտրե մեկիկ մի ասա»:

Քուշակը «Հայրեն» ասող ամենամեծ վարպետն է: Իր քառ-
յակներից մեկում Քուշակը գրում է.

Լավ մարդ ես նրան կասեմ, որ բանայ զբերանն համու, —
Հանցգուն գեղեցիկ լեզու, որ լնու տուն մի ջուհարով...

Այս տողերով մեծ բանաստեղծը հրաշալի կերպով գնահա-
տել է հենց ինքն իրեն. նա այնպիսի համուլ բացվող բերան և
գեղեցիկ լեզու ունի, որ իրոք հայ գրականությունը լցրել է գե-
ղարվեստական ստեղծագործության գոհարներով:

XVI ԴԱՐԻ ՄՅՈՒՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

XVI դարը հայ լիրիկական բանաստեղծության զարգացման
փայլում շրջաններից մեկն է: Բացի Գրիգորիս Աղթամարցուց և
Նահապետ Քուշակից, այդ շրջանում հանդես են եկել տասնյակ
շնորհալի բանաստեղծներ, ինչպես օրինակ, Հովհաննեսի Սեբաս-
տացին, Ղազար Սեբաստացին, Մինաս Թոլխաթյին, Ներսես Սո-
կացին և ուրիշները: Այդ բանաստեղծների ստեղծագործության
մոտիվներն ու թեմաները հիմնականում մնում են սերը, բնու-
թյունը և պանդխությունը: Բայց հանդիպում են նաև հետաքրք-
րական նորություններ: Այսպես՝ Հովհաննեսի Սեբաստացին Թու-
կուրանցու ազդեցությամբ մի շարք սիրո գողտրիկ երգեր և Մո-

կըրտիչ Նաղաշի ազդեցությամբ՝ խոհական քառյակներ գրելաց
բացի, գրել է նաև պատմական անցյալի և իր ժամանակաշրջանի
քաղաքական ծանր իրադրությունը պատկերող բանաստեղծու-
թյուններ: Պատմական այդ շափածո գրվածքներում Հովհաննի
Սեբաստացին գլխավորապես երգում է Մուշեղ Մամիկոնյանի
քաջազրությունները՝ ըստ Փավստոս Բյուզանդի պատմության:
Ժամանակակից անցքերին նվիրված գրվածքներում նա պատ-
մում է այն սարսափի և աղետների մասին, որոնք հասնում էին
ժողովրդին օսմանյան և պարսկական պետությունների իրար դեմ
մղած անընդհատ կոփիներից: Մի բանաստեղծության մեջ Հովհա-
սափը գրել է.

Վասն մեղաց մեր մահացու,
Սոֆին եղաւ մեղ ահարկու,
Զօրն կանցնենք մենք ի յահու,
Պահըս պահու կուտանք մահու:

Ի մէջ վշտաց ենք տագնապու
Սարսեա գողա երկիր նորու,
Լսենք զամերն Էսպերու,
Խնուզ, Բասեն, յԱրզումու...

Բանաստեղծի տված այս նկարագիրը միանգամայն բնորոշ է
իր ժամանակաշրջանի համար:

Այս շրջանի հետաքրքրական երկությներից է նաև այն, որ
ավելի հաճախ են երևան գալիս երգիծական բանաստեղծու-
թյուններ: Սակայն պետք է նկատել, որ նույնիսկ երգիծական
բանաստեղծության աշքի ընկնող գեմքի՝ Մինաս Թոփիաթցու
գրվածքների մեջ (օրինակ՝ «Վասն հերիսի»), չեն շոշափված քա-
ղաքական խնդիրներ: Ինչպես Թոփիաթցու, այնպես էլ նրա ժամա-
նակակիցների երգիծաղան բանաստեղծությունները գերազանցա-
պես կենցաղագրական բնույթ ունեն: Պրանց մեջ հեղինակները
որևէ առիթով նկարագրում ու գովարանում են համեղ ուտելիք-
ներ ու կերպարներ և այլն: Այս հանգամանքը անշուշտ թուլաց-
նում է այդ երգիծական գրվածքների արժեքը:

Համեմատաբար ավելի արժեքավոր են մեղ հասած այն ըս-
տեղծագործությունները, որոնք ունեն բնապաշտական բնույթ,

կամ որոնց մեջ նկարագրվում է բնության գեղեցկությունները (օրինակ՝ Դավիթ Սալածորեցու «Գովասանք ծաղկանց», Հովհաննեսի «Վասն թռչնոց» և այլն): Բնապաշտական գործերից չափազանց բնորոշ է XVI դարու գրող Ներսես Մոկացու «Վիճաբանություն երկնի և երկրի» վերնագրով բանաստեղծությունը: Սա մի գեղեցիկ գրվածք է, որ ցույց է տալիս, թե հակառակ իշխող քրիստոնեական իդեալիզմի, հայ հասարակության մեջ մատերիալիստական մտածողության արտահայտություններն ինչ ամերիցանի էին հասել:

Մոկացին իր այս բանաստեղծության սկզբում հարցնում է.

Երկինք և գետինք եղբարք,
Աճապ ո՞ր քան զորն ավելի...

Ապա սկզբում է երկու եղբայրների՝ երկնքի և երկրի միջև նրամիտ դատողություններով հարուստ մի հետաքրքիր վիճաբանություն: Վիճող կողմերից ամեն մեկն աշխատում է մյուսի նըկատմամբ իր առավելությունն ապացուցել՝ թվելով ունեցած արժանիքները: Այսպես, երկինքն ասում է — ես պայծառագույն աստղեր ունեմ: Գետինն ասում է — ես էլ վեց հազարակուն ծաղկներ ունեմ: Երկինքը հակառակում է, եթե ես իմ անձրես կտրեմ, քո՝ ծաղկները որտեղից կլինեն: Երկիրը խոսքի տակ մնում: դու անձրւն իմ ծովերից ես առնում, եթե ես ծովերի ակը ինձ քաշեմ, քո անձրւը որտեղից կլինի....: Վերջ ի վերջո առաջնության համար մզկող այս պայքարում երկինքը պարտություն է կրում: Բանաստեղծը վարպետորեն օգտագործելով հորիզոնի պատկերը՝ հանդիսավոր կերպով ասում է.

Ահա ցածացաւ երկինքն
Ու զգուխ եղիր գետնի...
Դուք այլ ցնծացէք, մանկտիք,
Գլուխ զրէք գետընի:

Քան զերկին ինչ բարձր կայ,
Որ զլուխ եղիր գետընի:
Այսօր վերան կու քայլենք
Վաղն տի մտնունք ներքն հողի:

Այսպիսով, Ներսես Մոկացին հրավիրում է խոնարհվել ունաւարհին, երկրին և ոչ թե երկնքին, որտեղ իբր թե գտնվում է արքայությունը և նստած է աստվածը, որովհետեւ մարդու համար ինչ որ կա՝ երկիրն է:

XVI դարի ձեռագրերից մեզ հասել են բավական թվով բանաստեղծություններ, որոնց հեղինակներն անհայտ են: Պետք է ենթադրել, որ դրանցից մի մասը գրի առնված ժողովրդական բանահյուսության նմուշներ են. այդ պարզ երկում է նրանց ոգուց և ձեռից:

XVI դարի հայ բանաստեղծության գեղարվեստական բարձր մակարդակը ցույց է տալիս, որ միջնադարում ծաղկած է եղել ժողովրդական լիրիկան, որի ամբողջության մասին, սակայն, քիչ բան է հայտնի: Այսպես, օրինակ, գրի շեն առնվել և մեզ շեն հասել աշխատանքի երգեր: Միայն «Մանուկն ու ջուր» վերնագրով հասել աշխատանքի երգեր: Միայն «Մանուկն ու ջուր» վերնագրով գեղեցիկ ոտանավորում աշխատանքի մի պատկեր կա: Վայրի կեռներից հոսող զրերին մի թուխ մանուկ հարցնում է.

— Ջուր, դու յո՞ր այգի կերթաս:

Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:

— Ես ի յայն այգին կերթամ,

Որ տէրն ի մէջն է այգեպան:

Ժողովրդական բանահյուսությունից մեզ հասած նմուշները գերազանցապես պանդիստության երգեր են և երգիծական բանաստեղծություններ, որոնք առհասարակ գեղարվեստական մեծ նըրառությամբ ստեղծված գործեր են: Պանդիստական երգերի մեջ ամենալավերն են «Ծաղ վասն ղարիպության»: Սրանցից առաջնորդ լցված է ժողովրդի հայրենասիրական նմուշները: Օտարության մեջ տանջվող դարիպը կարող է հարցնում է թոշող կոռունկին, թե մեր աշխարհից մի լուր չունե՞ս, հետո պատմում է իր անհուն վշտի մասին.

Ղարիպին սիրան է խոց, ճիկերն է վերեմ.

Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ...

Երկրորդը, կարելի է ասել, զարիպության վիճակի, զարիպների զգացած ապրումների ժողովրդական փիլիսոփայության ցայտում արտահայտություն է: Ղարիպը պատկերացվում է որպես նեղ վանակակի մեջ փակված մի վայրի թռչուն: Նա տիսուր է, որ անշատ-

վել է իր ընկերների երամից և ոչինչ չի կարող նրան ուրախացնել — ո՛չ հարստություն, ո՛չ փառք, ո՛չ իշխանություն։ Նա միայն մի տեսչ ունի — դուրս գալ վանդակից ու միանալ իր երամին։

Եթէ հնար ու ճարակ լինէր ինձ ելնել ի նեղ զընդանէս
Եթէ լինէր որ թոշի, բարձրանայի, տեսնի զիմ երամս,
Խաղալով, ճախրտելով ու կարկաշելով խառնել
յիմ երամս,

Յայն ժամ ուրախանալը սիրտ բաժանելոյս։

Երդիծական բանաստեղծություններից հետաքրքրական են «Տաղ վասն ագռավի» և «Ի վերա աղվեսի»։ Առաջինը սատիրական բնույթ ունի։ Ագռավի կերպարով ծաղրված են հպարտ և ամբարտավան հարուստները, աղնվականները, որոնք էլությամբ շնչին լինելով, արտաքուստ աշխատում են տպավորություն գործել։ Երկրորդը՝ հումորական է։ Բանաստեղծության հերոսը ժողովրդական առակներում համախ հանդիպող խորամանկ աղվեսն է։

Աղուէսն կու գար լեռնէն ի վայր,
Եւ գայր իշնոյր երդիքն ի վայր,
Ինձ մեծ մեծ հաւ պիտի ու գէր,
Սիրուն աղուէսն, ագին ծաղիկ։

Հետո կոմիկական ձեռվ նկարագրվում է այն վախը և անհանգստությունը, որ պատճառում է մարդկանց ագին նաղիկ սիրուն աղվեսը։

Միջնադարյան հայ ժողովրդական բանահյուսության մի քանի նմուշներ մանուկների համար զեղեցիկ կերպով մշակել է Հովհաննես Թումանյանը։

ԶՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XVII—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XVII—XVIII դարերում Հայաստանը դեռ գտնվում էր Թյուրքիայի և իրանի լծի տակ։ Այս բռնակալական պետություններն անխնա հարստահարում էին հայ ժողովրդին և երբեմն էլ բռնի-

կերպով տեղահան անում։ Այսպես, Իրանի շահերից մեկը, Շահ Աբասը 1603 թվին Թյուրքիայի դեմ մղած կոփվների ժամանակ Հրամայեց Արարատյան գաշտի հայ աղգաբնակշությանը Իրան գաղթեցնել, որ մի մեծ աղետ եղավ երկրի և ժողովրդի համար։ Օտար կեղեգիչներից իրենց դաժանությամբ այնքան էլ ետ չէին մնում հայ աշխարհիկ ու հոգեոր ֆեոդալները, որոնց ընչափաղցությունը և այլասերումն սկսել էր անցնել ամեն շափ ու սահման։

Տնտեսական և քաղաքական ծանր պայմանների հետևանքով Հայաստանից վաղուց արդեն ծայր առած գաղթականությունը XVII դարում ավելի ուժեղանում է։ Երկրից հեռանում էին գլխավորապես վաճառականները և արհեստավորները, որոնք հայ գաղութներ են հիմնում Հնդկաստանում և այլ երկրներում։ Բայց ժողովրդին իր մեծամասնությամբ մնում է երկրում և առանց ընկերվելու շարունակում է անհավասար կոկվ մղել տիրողների դեմ։ Այդ ժամանակաշրջանում էլ առաջանում են աղգային աղատագրական ուժեղ շարժումներ պարսկական և թյուրքական տիրապետության դեմ։ Այսպես, 1722 թվին Սյունիքում բռնկվում է ժողովրդական մի մեծ ապստամբություն, որ պլիսավորում էր նըշանավոր զորավար ու հերոս Դավիթ բեկը։

Այդ շարժումների ընթացքում հայերն իրենց հայացքն ուղղում են դեպի հզորացող Ռուսաստանը՝ հայկական պետականությունը վերականգնելու համար օգնություն ստանալու ակնկալությամբ։ Նշանավոր քաղաքական գործիլ հսրայի Օրին և ուրիշները գնում են Ռուսաստան, դիմում են կառավարությանը և օգնություն խնդրում։ Պետրոս մեծը, հետո՝ Եկատերինա II-ը խոստանում են զինված ուժեր ուղարկել Հայաստան, բայց զանազան հանգամանքներ արգելք են հանդիսանում այդ խոստանմերի կատարման։


Քաղաքական ծանր պայմանների պատճառով հայ կուտուրայի և գրականության զարգացումը, մանավանդ XVII դարի առաջին կեսին, շատ է տուժում։ Նույն դարի երկրորդ կեսից մըտավոր կյանքը թեպետ նորից սկսում է աշխուժանալ՝ կենտրոնում կենալով գլխավորապես Տաթելի և Գանձասարի վանքերը, սակայն գրվում են մեծ մասամբ կրոնական-դավանաբանական գրքեր։

Հայ տպագրությունը, որ սկիզբ էր առել 1512 թվից՝ XVII—XVIII դարերում արդեն բավական ծաղկել էր։ Մեծ մասամբ Եփոպայի կովարփական կենտրոններում՝ Վենետիկում, Հռոմում, Պարիզում, Ամստերդամում, Փետերբուրգում, Լվովում և այլ քաղաքներում զանազան ժամանակներում հիմնվել էին տպարաններ, բայց գեղարվեստական աշքի ընկնող գրվածքներ շատ քիչ էին տպագրվում։ Հայ տպագրիչները սովորաբար տպագրում էին գրաբար լեզվով կրոնական գրվածքներ և մեր պատմիչների աշխատությունները։ XVI—XVIII դարերում լույս տեսած գեղարվեստական գրքերից ամենաարժեքավորներն էին «Տաղարանը» (1518 թվին) և «Աղվեսագիրը» (1668 թ.)։ Խարգմանական գեղարվեստական գրականությունը ևս այդ շրջանում քիչ տեղ է բննում տպագրված գրքերի շարքում։

1717 թվին Վենետիկում հաստատվեց Մխիթարյան կրոնական միաբանությունը, որի անդամները զբաղվում էին գեղարվանցապես բանասիրությամբ, պատմագրությամբ և լեզվագիտությամբ։ Այս բնագավառներում նրանք բազմաթիվ արժեքավոր աշխատանքներից մեկն է հայ լեզվի ընդարձակ բառարանը։ Սակայն Մխիթարյանները իրենց գործունեությամբ XVIII դարում գեղարվեստական գրականության զարգացման չնպաստեցին։ Նրանք դեմ էին աշխարհաբարի գործածության և ձգտում էին վաղուց մեռած գրաբարը խոսակցական լեզու դարձնել։ Այս հետազիմական տեսակետներին խորհրդակիչ հարված հասցրին XIX դարի առաջին կիսում հաշատուր Արույանը և մասամբ Մխիթարյան միաբանությունից՝ Կելոնդ Ալիշանը։

Գեղարվեստական գործեր շէին տպագրում հայկական մյուս պաղությներում ևս, ուր կային տպարաններ, և ուր կար զգալի զփում եվրոպական հասարակական մտքի հետ։ Այսպես, օրինակ, Հնդկաստանի Մադրաս և Կալկաթա քաղաքների հայ գաղութում աշքի ընկնող զարգացման հասավ միայն քաղաքական գրականությունը (Մովսես Բաղրամյանի «Տետրակ», որ կոչի Հորդորակ), Շահամիրյանի «Որոգայթ փառաց» և այլն)։ Մադրասում լույս տեսավ հայերեն առաջին պարբերական հանդեսը «Աղդարար» վերնագրով (1794 թ.)։

XVII—XVIII դարերի հայ պատմիչներից նշանավոր են՝ Ա-



«Աղդարար»-ի անվանաբերք

ուաքել Դավթիմեցին, Զաքարիա Սարկավագը, Երեմիա Քյոմուրճյանը, Աբրահամ Երեմանցին և Աբրահամ Կրետացին, իսկ բանաստեղծներից՝ աշուներ Նաղաշ Հովնաթանը, Բաղդասար Դավիրը, Սայաթ-Նովան և Շամշի Մելքոն։ Սրանց ստեղծագործությունները, ինչպես առհասարակ միջնադարյան աշխարհիկ գրականության մյուս գործերը, մինչև XIX դարը, մինչև Սրվանձտյանի, Ախվերդյանի, Կոստանյանցի, Տելլանցի, Պոտուրյանի և ուրիշ բանասերների կատարած հրատարակությունները, մեծ մասմբ մնացին ձեռագիր վլաճակում։

ՆԱՐԱԾ ՀՈՎՆԱԹԱՆ

Կանոն Նաղաշ Հովնաթանը ծնվել է 1661 թվին պատմական Սիսվանի Շոռոթ ավանում։ Կրթությունն ստացել է Ագուլիսի Թովմա առաքյալի վանքի դպրոցում։ Սովորել է գրաբար, գերականություն, պարսկերեն, աստվածաբանություն, երգեցողություն։ Ուսումն ավարտելուց հետո կարգվել է նույն դպրոցի ուսուցիչ։ Նաղաշի ստեղծագործությունները երեան են գալիս XVII դարի 80-ական թվականների սկզբներից։ Նա գրում է երգիծական բանաստեղծություններ, սիրո և ուրախության տաղեր։ Պարապում է նմանապես մանրանկարչությամբ։ Շուտով Հովնաթանը թողնում է եկեղեցական կոչումը ու դառնում։ Նաղաշ (նկարիչ) և աշուղ։ Նրա հոչակը տարածվում է իր շրջանի սահմաններից հեռու։ Անցնելով բերանից-բերան՝ նրա երգերը տեղ են գտնում ժամանակի ձեռագիր տաղարաններում։

Նաղաշ Հովնաթանը թե՛ իբրև նկարիչ, թե՛ իբրև աշուղ, հըշրավիրվել է շատ քաղաքներ, Երկար ապրել է Երևանում և Թիֆլիսում, որտեղ Վրաստանի թագավոր Վախտանգ VI-ը նրան ընդունում է պալատ՝ իբրև արքունի երաժիշտ-երգիչ։ Մինչև Վրաստան գնալը Հովնաթանը ճանապարհորդել էր Իրանում և արևմբռտական լոռուական երկրներում։ Որքա՞ն ժամանակ է մնացել Նաղաշը Թիֆլիսում, հայտնի չէ։ 1722 թվին նա արդեն վերադարձել էր իր ծննդավայրը՝ Շոռոթ, ուր և վախճանվել է նույն թվի նոյեմբեր ամսին։

Նաղաշ Հովնաթանի որդին՝ Զակոբը և թոռը՝ Հովնաթան Հովնաթանյանը նույնական նշանավոր նկարիչներ են եղել։ Վերա-

շինը՝ ուշ միջնադարի ամենախոշոր նկարիչներից մեկն է։ Նաղաշ Հովնաթանը հավանաբար ինքն է իր ձեռքով սեփական երգերի ձեռագիր-ժողովածումներ կազմել։ Այդ երեսում է նրա տաղերից մեկում եղած հետևյալ ակարգից։

Ասել ես՝ Տետրեր գրէ տաղով,
Մաղկէ լաշվարդ ոսկի վարադով,
Գրել եմ կատել բաւթայ բաղով,
Կուղարկեմ, զա՛լում, զա՛լում,
Փափաք եմ զա՛լում, զա՛լում։

Իսկ այն ձեռագիր տաղարանները, որոնց մեջ պահպանվել են Նաղաշի բանաստեղծությունները, գրված են նրա մահվանից հետո։ Դրանցից մեկը համարյա նրա գործերի լրիվ ժողովածուն է։ Այդ ձեռագրում Նաղաշի տաղերը երկու խմբի են բաժանված։ Մի մասը վերնագրված է՝ «Ճանդարձ Նաղաշ Հովնաթան» ասացյալ մեջիսի կամ սիրո ուրախության տաղերի», մյուս մասը վերնագրված է՝ «Ճանդարձ վասն ուրախական և ծիծաղական ուտանագորի ասացյալ ի Նաղաշ Հովնաթանէ»։ Հենց այս վերնագրերում ցուց են տրված Հովնաթանի ստեղծագործության գլխավոր մոտիվները։ Նա ուրախության, խնճույքի և սիրո երգի է ու երգիծաբան։ Նաղաշ Հովնաթանն իր տաղերով ներշնչում է ուրախության եվ կենսուրախ տրամադրություն, սեր դեպի սիրո տաղերը իրական կյանքը։ Նա սիրում է խնճույքի նստել այն պահին, երբ գարում է, երբ բացվում են այգիների ծառերի բուրավետ ծաղիկները, կանաչին է տալիս դաշտագեղ խոտը, խոխոչում են աղբյուրների սառնորակ ջրերը։

Յաւուս գարնան ժամանակին՝
Փթթեալ ծաղկեցաւ այգին,
Հնչէ քաղցր ձայն տատրակին,
Ելե՛ք, եղբա՛յրք իմ, ցնծալով,
Ուրախութեամբ և պարելով...

Հովնաթանը ուրախությունը դիտում է որպես հաջողությամբ վերշացրած արժեքավոր գործի, հաջող աշխատանքի արդյունք։ Այս բանի ցայտուն օրինակ է նրա «Տաղ ի վերա Այվազին ջրա-

զացին» բանաստեղծությունը։ Նոր շինված ջրաղացը կանգնած է նախկին ապառաժ, վայրի և խոպան վայրում։ Նոր փորված ջրանցքից հոսում է սփրինչագոլ պաղպաջունակ» ջուրը և գործի գում ջրաղացը։ Ահա այս պահին բանաստեղծը գոչում է։

Ծնծութեամբ և խնդութեամբ խմե՛ք սիրով միաբանական
Եղբա՛յրք պատվական։

Նաղաշ Հովնաթանը մարդկային ուրախության աղբյուր է Համարում նաև գեղեցկությունն ու սերը։

Նաղաշ Հովնաթանի բանաստեղծությունների նշանակալից մասը՝ ուրախության և սիրո տաղերը՝ երգեր են, ուստի գրված են այնպիսի ձևով, որ երգելու համար հեշտ ու հարմար լինեն։ Նա լայնորեն օգտագործել է ժողովրդական-աշուղական բանահյուսության կուլտուրան։ Հատուկ ուշագրություն է դարձրել շեշտադրության ճշտության, ոտանավորի սահունության, ոիթմի ու երաժշտականության վրա։ Նրա բանաստեղծությունները առանձնապես երաժշտական են դարձնում վարպետորեն կառուցված կրկնակները։

Առաւօտուց վարդ կու քաղես,
Ինձ լաց կանես՝ դու ծիծաղես,
Թէ մեր տուն գաս՝ ինձ զօնաղ եռէ
Հազա՛ր բարի, ինձ մօտ արի,
Բարե շես տալ, խարար շեմ քե բեզ ի՞նչ արի։

Նաղաշ Հովնաթանի սիրո տաղերն աշքի են ընկնում նաև Հարուստ պատկերներով և վառ երանգավորությամբ։ Նաղաշը Քուշակի նման պահպանում է կենցաղային, տեղական միջավայրի պատկերները։ Նա գովում է պատվական թիֆլիս քաղաքը և Վրաստանա գողակներին, որոնց տաշերը շամսի-զամար», «լեզուն՝ քաղցր, խոսքն համով», «վարսերն՝ դաստա ուլորած, երեսն՝ լուաին է բոլորած»։ Նրանք քայլում են սիրամարդի նման և փայլում են աստղի նման։ Ահա և հայ գեղուհիների պատկերը՝ սիհաճ ծամերն ընկած թիկունքին և ուսին, «զալամ ունքերը՝ Քրեղին կամար», «լեզոն՝ քաղցրախոս, հազարան բլրով»։

Նաղաշ Հովնաթանի ստեղծագործության վարերեվ Երգիծաբան մեջ խոշոր արժեք ունեն երգիծական բարերեվ Երգիծաբան նաստեղծությունները։ Հովնաթանը միջնադարի հայության ուժեղ երգիծաբարաններից մեկն է։ Նրա դարի հայ գրականության ուժեղ երգիծաբարան (սարկաստիկ) բնույթ երգիծանքը գերազանցապես սատիրական (սարկաստիկ) բնույթ ունի և սուր ծայրով ուղղված է հոգևորականության դեմ։ Հովնաթանը ժողովրդական սատիրացով ծաղրի է ենթարկում հոգևորականության՝ տփիտության, շահամոլության և այլ բազմաթիվ բարատների համար։ Այսպիս օրինակ, «վարք հավասար մոնթեսին» բանաստեղծության մեջ ասում է։

Էժան են քանց շամիչ, փշտո,
Տիրացուն քանց ժողովուրդն շատ.
Չեն ճանաշիլ գրած գիրն,
Հէնց էն որ Քոնու նախիրըն:
Աղքատ մեռելնէն խոռվին:
Հարստին վրայ ժողովին...

Եկեղեցու սպասավորներն այսպիսի խորտակիչ ծաղրի են ենթարկված նաև «Օրհնություն գեղացի երեցի», «Պատասխանի թղթոյն խակակիրթ արեղայի միո» և այլ ոտանավորներում։ Վասն Վարդանի ժամհարին» բանաստեղծության մեջ հեղիանակը երգիծանքն ավելի զգալի դարձնելու նպատակով նկարագրում է նաև ծաղրողի արտաքինը։

Պոյդ նման է ծուռ նետի,
Զեռքդ ու ոտքդ խուշկած փետի,
Աշքդ ու բերանդ է նման
Կատվի, մկան ու առնետի:
Մեջքդ է տնտուզ որպէս սամար,
Ունքերդ է քանդած կամար...

Նաղաշ Հովնաթանը ծաղրել է նաև իր ժամանակի կենցաղացասական երեւությունները և միջավայրի հետամնացություննը։ Բնորոշ է օրինակ՝ «Գովկասանություն երեանա քաղաքին» վերնագրով ոտանավոր։ Այսեղ բանաստեղծը ունալ գերեզվ ներկայացնուած է հին ԽVIII դարի երեանը և բնակիչների սովորությունները։ Հովնաթանի երգիծական գրվածքների որոշ մասն էլ հոման

բական, զավեշտական բնույթ ունեն: Զվարճալի, ուրախ կատականեր են, օրինակ՝ «Տաղ ի վերա մածունին զոր ընծա բերին նազաշ Հովնաթանին», «Ռտանավոր ասացյալ Նաղաշ Հովնաթանի ի վերա կատվին և մկանց», «Տաղ ի վերա կանանց զոր նեղություն կրեն ի ձեռաց մեծ պասին» և այլն:

Նաղաշ Հովնաթանը տարբեր բովանդակությամբ ստեղծագործությունների համար տարբեր լեզու է գործածել: Այսպես նրա կրոնական բանաստեղծությունները՝ (որոնք շատ քիչ են) գրված են գրաբար, երդիծականները՝ ժողովրդական առօրյա խոսակցական բարբառով, իսկ սիրո և ուրախության տաղերը մի այնպիսի գրական լեզվով, որ ավելի մոտ է մեր նոր աշխարհաբարին, քան թե միջին հայերենին: Հովնաթանի այդ տաղերն ապացուցում են, որ աշխարհաբարն արդեն սկսել էր մասնակի գործածության մեջ մտնել XVII—XVIII դարերում:

ՍՍՅԱԹ-ՆՈՎԱ

Կյանքը Միջնադարի վերջի հայ ամենախոշոր բանաստեղծը Սայաթ-Նովան է (Հարություն Սայադյան): Նա ծնվել է 1712 թվին Թիֆլիս քաղաքում: Տասներկու տարեկան հասակում հայրը նրան տալիս է ջուշակի մոտ աշեկերտ: Խետա աշքաբաց լինելով՝ Հարությունը կարճ ժամանակում այնքան է վարպետանում, որ ինքն իր համար մի մեքենա է հնարում, որով կտավը փողոցում հինելու փոխարեն հինում և գործում է իր սենյակում: Սրհեստով զբաղվելու հետ միասին նա մեծ հետաքրքրություն է ցուց տալիս գեղի աշուղների արվեստը, որ առանձնահետ զարդացած եր այդ շշանում: Սովորում է երգել ու նվագել: Շուտով նա թողնում է ջուշակությունը և նըմիրվում երգին ու երաժշտության՝ կրելով Սայաթ-Նովա մականումը: Գրել սկսել է հավանաբար 1742 թվից:

Իբրև աշուղ, Սայաթ-Նովան իսկույն հոշակուում է: Վրաստանի թագավոր երակի Ա-ը նրան ընդունում է պալատ որպես երգիչ: Բայց ժողովրդի ծոցից դուրս եկած աշուղը երկար չի մնում այդ վիճակում: Նա ընդհարվում է թագավորի ու ազնվականության հետ և արտաքսվում պալատից: Սայաթ-Նովան երակի Ա-ի ժամանակ ճորտագրված էր արքայազն Գիորգի իշխանի մոտ

և համարվում էր նրա սեփականությունը: Թագավորը չի բավարար կանանում ճորտ բանաստեղծին պալատից հեռացնելով և, ըստ երևույթին իրբեկ պատիժ, ստիպում է նրան թողնել իր արվեստը և դառնալ քահանա:

Զնայած իր գլուխ կախված մահվան սպառնալիքին, Սայաթ-Նովան բոլորովին չի ընկճվում ու հեռանում է արքունիքից՝ լըցված իր արժանապատվության բարձր գիտակցությամբ: Այդ երեսում է վրացերեն գրված մի քանի բանաստեղծություններից: Արհամարհանքով ու ատելությամբ լցված դեպի պալատական ու ազնվական միջավայրը, Սայաթ-Նովան համարձակորեն ասում է:

Ռամիկ եմ, իշխան դառնալ չեմ ուզում:

Նա սուր հեգնանքի է ենթարկում թագավորին, հասկացնում է նրան, որ իր նկատմամբ գործադրած տմարդի բռնությունը ոչ մի նշանակություն չի կարող ունենալ: Նա համեմատելով իր արվեստի ուժը բնության ուժերի հետ, ասում է, որ ծովը չի ցամաքի աստղի ճաճանչով, կամ Կուրը չի կարելի չափել քարմաղով, քամին ոչինչ չի կարող անել քար ու կիր պատին, թեկուզ անվերջ փշի վրայով: Նա զայրացած սպառնում է թագավորին այնպիսի խոսք ասելով, որ երկինքը գոռո:

Իր կնոջ վախճանվելուց հետո (1768 թվին) Սայաթ-Նովան ստիպված է լինում գնալ Հաղպատի վանքը և դառնալ կուսակըք բոն: Մի շաբաթ փաստերից և ավանդություններից պարզվում է, որ նա երգեք չի հաշտվել վանական կյանքի հետ և միշտ մնաշել է դժգոհ իր այդ վիճակից:

1795 թվին, աշնան սկզբներին Իրանի շահ Աղա Մահմեդ խանի բանակը մոտենում է Վրաստանի սահմաններին: Սայաթ-Նովան Հախպատում այդ տագնապալի լուրին առնելով՝ շտապում է Թիֆլիս և իր զավակներին ուղարկում Մողդոկ, իսկ ինքը մնում քաղաքում: Աղա Մահմեդ խանի զորքերը մտնում են Թիֆլիս և սկսում կողոպուտն ու կոտորածը: Այդ օրը, ուրիշ շատերի թվում, սպառնվում է մեծ բանաստեղծ՝ աշուղ Սայաթ-Նովան:

Սայաթ-Նովան գրել ու երգել է հայերեն, վրացերեն և աղբարեղաներեն լեզումներով: Այս երեք լեզուներն ել նրան հավասարաշատ սիրելի ու մատչելի են եղել: Երեք լեզուներով ել նա ըստ

անդեմ է լիրիկական սքանչելի երգեր: Սայաթ-Նովան, իր ստեղծածագործությամբ, որով փակվում է միջնադարի հայ լիրիկան ամփոփել ու ընդհանրացրել է XVII—XVIII դարերի բանաստեղծության կուլտուրան ու փորձը:

Սայաթ-Նովայի հայերեն բանաստեղծությունների ժողովածուն առաջին անգամ լույս է տեսել 1852 թվին՝ ականավոր բանասեր Գեվորգ Ախվերդյանի հմուտ խմբագրությամբ, ընդարձակ առաջարանով ու ծանոթություններով:

Սայաթ-Նովայի Սայաթ-Նովայի ապրած ժամանակաշրջանուն բանական բանաստեղծությունները նում Վրաստանում և առհասարակ Անդրբանական կովկասում աշխատավորության դրույունը նր շատ էր ծանրացել. նրան կեղեքում էին մի կողմից՝ ֆեոդալները, մյուս կողմից՝ վաշխառուներն ու առետրականները:

Սայաթ-Նովան դժոհել է իր ժամանակի հասարակական կարգերից, չի հանդուրժել մարդկանց միջև եղած անհավասարությունը, ատել է ձրիակեր ազնվականությանը և մերկացնել է նրա բարոյական ապականությունը, կեղծիքն ու ստորությունը:

Սայաթ-Նովան բուռն սիրել է «խալխին», աշխատավոր ժողովքրդին, որին և ծառայել է իր երգ ու նվագով, իր կախարդիչ բանաստեղծություններով: Նա Ֆրիկի նման որոշակի կերպով արտահայտել է արվեստը ժողովրդի համար սկզբունքը: Այս ցայտում կերպով երկում է նախ այն բանաստեղծություններից, ուրինց մեջ նա խորհրդածում է մարդկանց և աշխարհի մասին:

Սայաթ-Նովան շատ լավ հասկացել ու պատկերացրել է իր իրեն բանաստեղծի-աշուղի դերն ու նշանակությունը հասարակության մեջ: Նա երգում ու ստեղծագործում է, ոհամով զովուղի է անում, որպեսզի «նաշաղը» մարդկանց տիտոր սրտերը խնդացնի և հուսագրի նրանց:

Ո՞քան բնորոշ է, օրինակ, օքամանշաճ բանաստեղծությունը, որի մեջ աշուղի դիմելով իր քամանշային, ասում է:

Եատ տըխութ սիրու կու խընդացնիս, կու կըտրիս
հիվրնդի դուղըն.

իամ

Դաստ արա՝ Ել լաւ օրերում եղի՛վըն հասնիս,
քամանշաճ

Սայաթ-Նովան հումանիստ է: Նրա համար ֆեոդալական կարգերը նեղ են, անձուկ ու տանջալից: Բանաստեղծը շատ անգամ թախծում է. աշխարհը նա համեմատում է մի նեղ պատուածանի հետ, որից ներս նայողը խոցվում է: Ազատասեր բանաստեղծի հոգին չի համակերպվում այդ մոռայլ իրականության հետ, ուր շատացել է սուտն ու կեղծիքը, շարախոսությունն ու հալածանքը, և նա դառնացած ու ձանձրացած ըղձում է բլբուկի պիս թռչել, հեռանալ:

Գուզիմ թըռչի բլբուկի պես, բաղերումն բեզարիլ իմ...

Սայաթ-Նովայի վիշտն ու թախիծը բղխում է կյանքի կարուտից: Նա սիրում է կյանքը և մարդկանց: Նա ուզում է մարդկանց լավ վիճակում տեսնել: Իսկ ֆեոդալական հասարակությունն այն հասարակությունը չէր, ուր մարդը իբրև մարդ գնահատվեր և նրա կյանքը երշանիկ անցներ: Մարդկանց նկատմամբ տածած սերն է անշուշտ դրդել բանաստեղծին շատագութելու լուսավորությունը և հորդոր կարդալու, որ սիրեն գիտությունը, գիրն ու գրականությունը.

Գիր սիրե, զալամ սիրե, դավթար սիրե...

Սայաթ-Նովայի Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ սիրութեքերը միծ տեղ են բռնում սիրութեքերը: Սյդ երգերը բովանդակությամբ հարուստ են և բազմազան, հագեցված են ազնիվ ու կենդանի զգացմունքով: Սայաթ-Նովան Քուշակի նման իր երգերի մեջ կնոցը նայում է որպես իրավահավասարիչ նա եսական չէ, ընդունում է սիրած կնոց ինքնուրաւությունը և նրա երշանկության համար պատրաստ է շատ փորձանքների: Ենթարկվել, դառնություններ կրել: Միշտ այսպես է զիտվել կինը մենթարկվել, դառնություններ մեջ: Սայաթ-Նովայի համար սիրուհին աշխարհում ամենաթանկագին բանն է, որից ոչինչ, անգամ մահը, ոչ ոք, անդամ շահը չի կարող իրեն բաժանել:

Թեգուզ քու քաշըն մարքրիտ տան բրոյի, բրոյի,
Թեգուզ քու քաշըն ալմաստ տան բրոյի բրոյի,
Յա՛ր, չիմ տա, չիմ հեռացնի քիզ քու յարեմնն,
բարերարեմնն

Զիմ քաշվի եկած մահեմեն,
 Թաղիփի տված ահեմեն,
 Թեգուզ բաղմ գա Շահեմեն՝
 Յա՛ր, չիմ տա, չիմ հեռացնի քիզ քու յարեմեն,
 բարեբարեմեն։

Սայաթ-Նովան երգում է մաքուր և ազնիվ սերը, սիրո գեղցկություն ու հրապուլը, անպատճախան մնացած սիրո տանաշանքը։ Ահա բանաստեղծը փնտռում է իր իդեալ-գեղեցկութուն։

Ուստի՞ գու գաս, զարիբ բըլրով,
 Դու մի՛ լաց ՚ի, ես իմ լալու.
 Դու վարթ պըտու, ես գողալին, —
 Դու մի՛ լաց ՚ի, ես իմ լալու։

Երբ գտնում է՝ ձգուում է հասնել նրան, բայց չի հասնում։ Բանաստեղծի սերը չի հագենում։ Նա գանգատվում է գողալից, որ իր սերը թողել է անպատճախան։

Աշխարհս աշխարհով կշտացավ, իս քեզանից սով,
 աշքի լուս

Նրան չի վիճակվում հանդիպել մեկին, որ հասկանար և փոխադարձաբար սիրեր իրեն։ Նա գանգատվում է բախտից և իր կյանքը համարում է ապարդյուն անցկացրած երազ։

Ով տեսնում է, է՛ս է ասում. «Կա՞յ քու դարին»,
 Սայաթ-Նովան

«Համաշաք քիզ պիտինք տեսնի՝ աշկըդ արին»,
 Սայաթ-Նովան

«Ինչո՞վ չելավ, լըռաստ էկա՞ր մե լա՞վ յարին»,
 Սայաթ-Նովան

Ոմքըս էրազի պես գընաց՝ ծառըս չի խերած գիտենաք։
 Սայաթ-Նովան

Սայաթ-Նովան իր անձնական ապրումների մեջ հասարակական խորն ընդհանրացումներ է կատարել, սիրո վիշտը երգելով՝ նա էապես երգել է ժողովրդի վիշտը։ Ինչպես ժողովրդի, այնպես էլ Սայաթ-Նովայի տիրությունը առողջ է։ Սիրո փիլիսոփայությունը

Ղավատեսական։ Նրա համար սերը հզոր ուժ և ստեղծագործական կան ոգևորության աղբյուր է։ Որքան բնորոշ է, երբ տաղերից մեկում, սիրուհին ասում է երգչին՝ «Խաղի դավթար իմ քեզ ամայ»։ Լավ է, երբ մարդ սիրում է և սիրվում։ Քանի սիրուհին աշանա է բանաստեղծի համար, ապա նա աշխարհում այլև հոգս ու դարդ չի կարող ունենալ։

Աշխարհումը ա՛խ չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա։
 Անմահական զըրով լիքըն ոսկե փընջան իս ինձ ամա..

Բանաստեղծի պատկերացումով սերը ոսկի թասում լցված չուր. է, որը կարող է խմողին անմահացնել, որա համար էլ նա դիմում է գեղեցկուհուն և խնդրում, որ իրեն շզրկի կյանքը հավերժացնող ըմպելիքից։

Սայաթ-Նովայի սիրո երգերի փիլիսոփայությունն իր էությամբ կապված է նրա հումանիստական վեհ ու ազնիվ գաղափարների հետ։

Սայաթ-Նովայի սիրո երգերում արտահայտված հումանիզմն է նկատի ունեցել թումանյանը, երբ գրել է, «... Մեր վիթխարի Սայաթ-Նովան մի հոյակապ սիրահար է, բռնըված ու բռնկված սիրո հրդեհով, նրա լուսի տակ էլ նկատում է աշխարֆն ու իրերը, զգում է, որ էրվում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անշար ու անշառ, վեհ ու վսեմ, որպես աշխարիքի մարդու մեծ բարեկամ..»։ Սրանով է նախ և առաջ պայմանավորվում Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդայնությունը և գեղարվեստական մեծությունը, սրանով և նա դասիւմ համաշխարհային հանճարեղ լիրիկաների շարքը։

Սայաթ-Նովան Անդրկովկասյան ժողովուրդների բանաստեղծն է թե իր ստեղծագործության էությամբ և թե նրանով, որ գրել է երեք ժողովուրդների լեզուներով։ Սայաթ-Նովան մեծ ազեցություն է թողել հետագայի հայկական, վրացական և աղբեշշանական լիրիկական բանաստեղծության վրա։ Նա ունեցել է բազմաթիվ աշուղ հետևողներ։

Սայաթ-Նովայի Սայաթ-Նովան իրապես յուրացրել է հայ և արվեստը անդրկովկասյան ժողովուրդների բանավոր և գրավոր կուլտուրան ընդհանրապես և աշխարհական արվեստի

Թողոր նրբությունները մասնավորապես: Նա գրել է բանաստեղծ ծովառններ, որոնք շատ հարուստ են իրենց պատկերավորությամբ և վառ կոլորիտով:

Սայաթ-Նովան գործածել է աշուղական տարրեր տաղաշափական ձևեր, որոնցից ամենից շատ սիրել է «մուկամմազը»: Օրինակ մուխամմազի շափով են հորինված «Ես մի զարիք բըլբուկի պես», «Աշխարհում ախ շիմ քաշի», «Ինձ սիրեցիր էշնըն նընդար» և շատ ուրիշ բանաստեղծություններ:

Սայաթ-Նովան մեծ ուշադրություն է դարձրել իր երգերի հանդերի ու բառերի հնչականության, ինչպես և ոտքերի, հատկանիւնների, շեշտադրության ճշտության ու կանոնավորության վրա: Ահա նրա «Թանի վոր ջան իմ» երգը, որ բովանդակության համապատասխան շափով ու ոիթմով մի կատարյալ գլուխ գործոց է.

Քանի, վոր ջան իմ՝ յա՛ր, քի դուրբան իմ.

աբա ի՞նչ անիմ,
Արտասունք հանիմ, շատ հոքուց հանիմ,—
յա՛ր զադեդ տանիմ,
Ասիր «Չեյրան իմ», թո՛ղ քի սեյր անիմ, յար մըտիկ անիմ,
Մո՛ւտ բաղեն նազով, քիզ գովիմ սազով, յար
իլթիմազով:

Սայաթ-Նովան գրել է Թիֆլիսի բարբառով: Նա նուրբ հաշկով ընտրել և օգտագործել է ժողովրդական բարբառի համով-Յոտով դարձվածքները և պատկերավոր արտահայտությունները: Երբնց միացնելով նաև վրացերենից, աղբբեշաներենից ու պարսկերենից վերցրած բավական թվով ոճեր ու բառեր՝ իր բանաստեղծությունների լեզուն դարձրել է հյութեղ ու ճկում և խոր խոճեր ու զգացմունքներ՝ արտահայտելու միանդամայն ընդունակ:

Սայաթ-Նովան խոսքի մեծ վարպետ է: Նրա ստեղծած պատկերները միշտ հոյակապ են, ինքնատիպ և հրաշալի բացահայտում են բանաստեղծության բովանդակության բոլոր նրբություններն ու առաջացնում են անմիշական ուժեղ տպավորություն: Պատկերավորությամբ առանձնապես աշքի են ընկնում նրա սիրո երգերը: Բանաստեղծի նկարագրած գեղեցկությունն իր արտաքիւնով և սիրո հմայքով մի հատ է աշխարհում, նրա մոտ նստող

հարբում է, նա ինչին դիպչում, նախշ ու նկար է դարձնում: Նրա արեգակի նման շողջողուն անձը տեսնողը հիանում և այրվում է սիրո անմար կրակով.

Յա՛ր, մըտիլ իս բաղչի մեշըն, աշայիք սեյրան իս անում.

Շուլզեդ արեգակի նըման է՝ տեսնողին հեյրան իս անում.

Զիգարիս կըրակ իս տվի, էրվում իմ՝ բիրյան իս անում.

Վո՛նց մե գողալ չէ ունեցի՝ էդ քու արած նազի նըման:

Գողալ՝ կրակ է, ծովիմեն դուրս էկած ուաշ չեյրան է, Նրա մեշը՝ սալբու շինար, դեմքը՝ նորալուսին, առավտվան արև, հովին բացված մանուշակ, աշքերը՝ ուկի փնջան, մազերը՝ ուեհան է փաթաթված վարդին:

Սայաթ-Նովան բոլոր մեծ գրողների նման հիանալի կերպով զիտակցել է գեղարվեստական խոսքի՝ «մարիկաթով քաղցր լեզվի» ուժն ու արժեքը: Ոչ ոք չի կարող դեղարվեստական խոսքը մեռնել, իսկական բանաստեղծին սպանել, որովհետև նա միշտ լավն է ցանկանում մարդկության համար:

Աշուղի լեզուն բըլբուկ է, օրհնանք ունե, նալաթ չկա,

Շահի մոտ խոսկն անց կու կենա, սըպանելու շալլաթ
չկա...

Հանձարեղ բանաստեղծը պարզ պատկերացրել է իր ստեղծագործության անմահությունը, եթե գոկի է:

Ամեն մարթ չի' կանա խըմի իմ ջուրըն՝ ուրիշ չըրեն է,

Ամեն մարթ չի' կանա կարթա իմ գիրըն՝ ուրիշ գըրեն է:

Բունիաթիս ալվազ չիմանաս՝ Քարափ է քարուկրեն է,

Իրոք Սայաթ-Նովան անմահ է: Գեղեցիկ ձեկ մեջ մի մշտավառ հուր հոգի է նա, մի ազնիվ և լիքը սիրո, մի հարազատ հզոր շուն: Ոչ միայն հայ, այլև ամեն մի ժողովուրդ պետք է սիրի շուն: Ոչ միայն հայ, այլև ամեն մի ժողովուրդ պետք է սիրի շուն: Սայաթ-Նովայի նման բանաստեղծները թումանյանը:

Սայաթ-Նովայի, ինչպես և առհասարակ հայ աշխարհիկ գըրողների ստեղծագործությունները մեզ մնացած կուտարական մեծ ժառանգություն են: Միշնադարի հայ գրականությունը հսկայական նշանակություն է ունեցել նոր շրջանի գրականության զարգացման համար:

Միշնադարյան հայ պոեզիան մարդկության պատմության ընթացքում ստեղծված գեղարվեստական բարձր արժեքներից է:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ
XX ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԻՍՆԱՄՅԱԿՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռուս-պարսկական 1826 թվին Հայաստանի սահմանների վրա պատերազմը պատերազմ ծագեց ցարական Ռուսաստանի և Պարսկաստանի միջև: Ռուսաստանը, վոր արդեն նվաճել էր Սնդրկովկասի մեծ մասը, նպատակ ուներ գրավել նաև Հայաստանի այն մասը, որ այդ ժամանակ գտնվում էր պարսկական խանության ձեռին: 1827 թվի աշնանը՝ պատերազմը վերջացավ Ռուսաստանի հաղթանակով: 1828 թվին կնքվեց Թյուրքիանշայի դաշնագրությունը, որով Ռուսաստանին անցավ Արևելյան Հայաստանը:

Ինչես պատերազմի ժամանակ, այնպես էլ Երևանը նվաճելուց հետո, — գրում է պատմաբան Պոտտոն, — Հայերը «գրկաբաց» ուրախությամբ դիմավորեցին ուսուներին, որպես իրենց ազատագրողների: Հայ գյուղացու վիճակը պարսկական լծի տակ անտանելի ծանր էր: Գյուղացին իր ունեցվածքի ու վաստակի տերը չէր, նրա վրա էր ընկած պարսկական բռնակալության հարկացին ամբողջ ծանրությունը:

Ժողովրդի մեջ այն հաստատ համոզումը կար, թե Հայաստանի միակ փրկությունը Ռուսաստանն է: Պետք է օգնել, որ ուսունեը նվաճեն Երևանը, Արարատյան դաշտավայրը:

Հայերը հին ազգություն էին: Հնում այդ ժողովուրդն ստեղծել էր Հարուստ գրականություն և մեծ կուտուրա (Ճարտարապետություն, մանրանկարչություն, պատմագրություն, փիլիսոփայություն, երաժշտություն և այլն): Պարսկական բռնակալ լծի տակ հայերը ոչ միայն իրենց կուլտուրայի անկումն ու վայրեցքն էին ապրում, այլ և ենթակա էին ֆիզիկական բնաջնշման վտանգին:

Պատմական-քաղաքական հանգամանքները գտավորվել էին այնպես, որ Հայաստան անելանելի վիճակի առաջ էր կանգնած: նա կամ պետք է մնար պարսկց տերության լծի տակ և հետզհետե կու գնար, ոչնչանար, կամ պետք է անցներ Ռուսաստանի գերիշխանության տակ:

Պարսկաստանի համեմատությամբ Ռուսաստանը լուսավոր ու քաղաքակրթված երկիր էր, մի երկիր, որի հովանավորության տակ Անդրկովկասի ժողովուրդները կարող էին համեմատաբար ավելի առաջադիմել տնտեսության և կուլտուրայի բնադավառներում:

Թայրոցներ եվ Տպարաններ Դեռ Հայաստանի նվաճումից էլ առաջ մտավոր կուլտուրական կյանքը բավական աշխուժացել էր:

Ռուսաստանում և Անդրկովկասում մեկը մյուսի ետևից բացվել էին հայկական դպրոցներ: Աստրախանում Աղաբարյան բնակչության հզբայրները հիմնադրել էին մի դպրոց (1810), 1815 թվն Մոսկվայի հզբայրները հիմնադրել էին մի դպրոց: 1815 թվն Մոսկվայի կուլտուրայի պատմության մեջ հզբակի դեր խաղաց: Ժողովրդի կուլտուրայի պատմության մեջ հզբակի դեր խաղաց: 1824 թվին Ներսիս Աշտարակեցու նախաձեռնությամբ Թիֆլիսում հիմնվեց Ներսիսյան հոգևոր դպրոցը: Մի փոքր ավելի ուշ զբացվեցին նաև Շուշում, Նոր Նախիչևնում, Երևանում և բոցներ բացվեցին նաև Շուշում, Նոր Նախիչևնում, Երևանում և այլ տեղեր: Այդ ժամանակները դպրոցներ են բացվում նաև արտասահմանում: օրինակ, Կալկաթայում (Մարդասիրական հեմարանը, 1821), Պոլսում (Խոկյուտարի հեմարանը, 1838) և այլն:

Այս զպրոցները գրեթե միակ կուլտուրական օճախներն էին: Այս պատեղ էին պատրաստվում ապագա հայ գործիչները՝ Ալամբարյան, Թաղիադյան, Աբովյան, Նալբարյան և շատ ուրիշ նշանավոր գեմքեր:

Ռուսաստանում վաղուց գոյություն ունեին հայկական տպարաններ: Այսպես, օրինակ, դեռ 1783 թվին Պետերբուրգում, 1787

թվին՝ Նոր-Նախիջևանում, 1796 թվին՝ Աստրախանում հիմնվել էին Հայկական տպարաններ:

Անդրկովկասում հայկական տպարաններ սկսեցին գործել միայն Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո (բացառություն է կազմում եղմիածնի տպարանը, որի հիմքը գրվել է 1771 թվին). այսպես, օրինակ, 1823 թվին Թիֆլիսում բացվեց մի տպարան, 1832 թվին՝ Շուշում և ուրիշ տեղեր:

Պարբերական մաս՝ Դարասկզբից առանձին թափ է ստանում մուլ. Իրատարակու. Հայ պարբերական մամուլի գործը: Պարբերութեան բականներ և լրագրեր մեծ մասամբ լույս

են տեսնում արտասահմանում. Վենետիկում՝ 1803 թվից՝ «Եղանական պիտանի գիտելյաց», 1839 թվից՝ «Ծտեմարան պիտանի գիտելյաց», 1840 թվին «Հայրենասեր», «Արշալույս Արարատյան», Վենետիկում 1843 թվից՝ «Բազմավեպ» ամսագիրը, Կալկաթայում 1845 թվից՝ Մեսրոպ Թաղիադյանի «Աղգասերը», որ հետո վերանվանվեց «Աղգասեր Արարատյան» և այլն:

Իսկ Թիֆլիսում, 1846 թվից սկսում է լույս տեսնել ոռւսերեն լրագիր «Կավկազ» անունով, որին մի երկու հոդվածով աշխատակցել է նաև Աբովյանը: Նույն տարուց Թիֆլիսում սկսում է լույս տեսնել «Կովկաս» լրագիրը նաև Հայերեն լեզվով, Հակոբ Կարինյանի և Միքայել Պատկանյանի խմբագրությամբ: «Կովկասը», որ ոռւսերենի պատճենն էր, մի առանձին գեր շատաց հայ հասարակական մտքի պատմության մեջ և շատ շուտ դադարեց:

Բացի Միխիթարյան միաբանությունից, այդ շրջանում հրատարակություններ ունեցան նաև Լազարյան ճեմարանը և Ներսիսյան գպրոցը: Վերջինս Հրատարակեց «Երեխայրիք Ներսիսյան գպրոցի» (1828) անոմով մի ժողովածու, որի հեղինակները դըպրոցի առաջին շրջանավարտներն էին: «Մուզայք Արարատյան» վերնագրով մի ժողովածու էլ Հրատարակեց Լազարյան ճեմարանը: Նույնանման մի ժողովածու էլ 40-ական թվականներին հրատարակեց Կալկաթայի մարդասիրական գպրոցը:

30—40-ական թ. թ. լույս են տեսնում բառարաններ, ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, պատմասիրական աշխատությունները, — բոլորն էլ, իհարկե, գրաբար լեզվով: Ժողովրդի ընդհանուր քաղաքական ու կուլտուրական այս

վերելքի պայմաններում զարգացման նոր շրջանն է մտնում նաև գեղարվեստական գրականությունը:

Կլասիցիզմ՝ կլասիցիզմն էր:

Սկզբում Ֆրանսիայում (XVII—XVIII դ. դ.), ապա նաև Իռլանդաստանում (XVIII դ.) և մեզ մոտ (XVIII դարի վերջը և XIX դարի սկիզբը) կլասիցիզմը տիրող ուղղություն էր գրականության մեջ: Դա մի շրջան էր, երբ հույն և լատին հեղինակների երկերը նորից հատուկ հետաքրքրության առարկա դարձան՝ որպես գեղեցկի օրինակելի նմուշներ:

Ֆրանսական կլասիցիզմի տեսության ամենախոշոր և բնորոշ ներկայացուցիչը Բուալոն է (1636—1711): Բուալոն կլասիցիզմի սկզբունքներն ու օրենքները շարադրել է «Բանաստեղծական արվեստ» շափածո գրված տեսական աշխատության մեջ՝ կլասիցիզմի տեսաբանները և առաջին հերթին Բուալոն ձգտում էին գեղեցկի մշտնշնչական կանոններ սահմանել՝ աշքի առաջ ունենալով անտիկ գրականության գույք գործոցները: Կլասիցիզմի առաջանական գաշվի ընստելով կյանքի բազմազանության և առանձնապես մարդու հոգիբանության բարդության հետ՝ գրականության համար վերացական սխեմաներ և կանոններ սահմանեցին: Կլասիցիզմի տեսությունը յուրաքանչյուր գրական ժանրի համար մշակել էր առանձին կանոններ, որոնցից շեղվելը հանցագործություն էր համարվում: Սրինակ, նմուշ ունենալով հին հունական ողբերգուներ՝ Սոփոկլեսի, Եվլիպիդեսի ողբերգությունները, Արիստոֆանի կատակերգությունները և հուն հուշակավոր փիլիսոփա Արիստոտելի առաջական աշխատությունը («Պոետիկա») նրանց երկերի մասին, դրամատիկական գրվածքի համար սահմանվեց երեք միասնության, տեղի, ժամանակի, գործողության միասնության, քարացած կանոնը: Համաձայն այդ կանոնի՝ բոլոր գործողությունները պետք է կատարվեին միևնույն սենյակում, դրամատիկական հանգույցը պետք է լուծվեր մի օր ու գիշերի ընթացքում և գրվածքի հիմքը պիտի կազմեր մի միասնական գործողություն:

Քարացած կանոնների մեջ էին դրված նաև գրականության մյուս ժանրերը: Յուրահատուկ սկզբունքներ ուներ բանաստեղծությունը: Վերջինիս առաջին պայմանն էր խոհականությունը, դա

տողականությունը, միտքը։ Բանաստեղծության «ոփիմը միշտ պետք է ենթարկեք մտքին», — ասում էր Բուալոն բանաստեղծներին։ Բանաստեղծությունը չի հանդուրժում գոեհիկ, կոպիտ բառեր ու դարձվածքներ, լեզուն պետք է լինի հարուստ, բառերն ընտրովի, ոճը բարձր, վերամբարձ։ Չափածո ժամրերից շատ հարգված էր օդան (ներբողը), ուր հատուկ պլանված լեզվով, իրար հետ մըցող ածականներով և մակդիրներով սովորաբար գովերգվում է որևէ պատմական անձ։ Դիցաբանական պատկերների և անոմաների գործածությունը շատ սովորական էր կլասիցիզմի ներկայացուցիչների համար։ Այդ հանդամանքն առանձնապես դժվար հասկանալի էր դարձնում գրվածքը դիցաբանությանն անծանոթ ընթերցողի համար։

Բայց, եթե նկատի ունենանք այն պատմական հանդամանքը, որ կլասիցիզմը հայ գրականության մեջ զարգացավ այն ժամանակ, երբ Ֆրանսիայում կլասիցիզմը իրեն գրական ուղղություն արդեն տեղի էր տվել, և ֆրանսական գրականության մեջ իշխում էին այլ, թե՛ կլասիցիզմին, թե՛ իրար հակոտնյա ուղղություններ (ոռմանտիզմ և ուելիզմ), ապա հասկանալի կլինի, թե ինչո՞ւ, ինչպես ոռուսական, այնպես էլ հայկական կլասիցիզմի ներկայացուցիչների մոտ նկատելի են զգալի շեղումներ այն կանոններից, որ գեռ XVII դարում ֆրանսական կլասիցիզմի տեսարաններն էին մշակել։

Հայկական կլասիցիզմի ոգեշնչողը Մխիթարյան միաբանությունն էր։ Մխիթարյաններն իրենց երեսը դարձրին դեպի կլասիկ գրականության հայրենիքը — անտիկ աշխարհը, իրենց թարգմանությունների համար նյութ քաղելով հույն և լատին բանաստեղծների գրվածքներից։ Ինքնուրույն երկեր հորինելիս նրանք ընդօրինակում, նմանվում էին կլասիկներին։ Հոմերոս, Սոփոկլես, Վիրդիլիոս — ահա՛ նրանց սիրելի հեղինակները։ Թարգմանում էին նաև ֆրանսական կլասիցիզմի ներկայացուցիչներին՝ Ռասինին, Կորնելին։ Լազարյան ճեմարանը 1832 թ. լույս ընծայեց Ռասինի «Գոթողիա»-ն՝ գրաբար թարգմանությամբ, Ս. Տիգրանյանի մի ընդարձակ առաջարանով, որը կլասիցիզմի էության պարզաբանումն էր։

Հայկական կլասիցիզմի ներկայացուցիչների միջոցով հայ գրականությունը հարստացավ Հոմերոսի «հլիականի» մի քանի

արժեքավոր թարգմանություններով (Բարդատունի, Թովմանյան և Թարգմանվեցին Սոփոկլեսի լավագույն ողբերգությունները («Էդիպի արքա», «Անտիկոնե» և այլն), Վիրդիլիոսի «Հնեականը» և ուրիշ գործեր)։

Արևել Բագրատունի Հայկական կլասիցիզմի ամենացայտուն (1790—1866) արտահայտին Արսեն Բագրատունին է։ Մխիթարյան միաբանության նշանավոր դեմքերից մեկը։

Արսեն Բագրատունին ծնվել է 1790 թվին, Պոլսում, մանուկ հասակից սովորել է Վենետիկում։ Հենց առաջին տարիներից հմտանում է հույն և լատին լեզուների մեջ։

Ինքնուրույն երկեր ստեղծագործելուց առաջ Բագրատունին զբաղվել է թարգմանություններով։ Նրա թարգմանություններից առանձնապես նշանավոր են Վիրդիլիոսի, Միլտոնի գործերը, մանավանդ Հոմերոսի «Հլիականը», որի հաջողված թարգմանությունը տարածեց Բագրատունու համբավը։

Բագրատունու ինքնուրույն ստեղծագործության գլուխ գործոցը «Հայկ ոյուցազն» մեծ պոեմն է։ Այդ պոեմը գրելիս նա նյութ է ունեցել Խորենացու «Պատմություն հայոց» գրքում եղած Հայկ և Բելի ավանդավեպը։

Պոեմի համառոտ բովանդակությունը հետևյալն է։

Հայկը և Բելը մշտական կոիվների մեջ են։ Բելն ուզում է իր իշխանության տակ ունենալ Հայկին։ Հայկը չի կամենում նըսրան հնազանդվել։ Վերջիվերջո Բելը պատգամավորի միջոցով հաշտություն է առաջարկում ներկայացնելով երեք պայման։ Հըսնազանդ մնալ, երկրպագել իրեն իրը աստծու և Հայկի գստեր՝ Հայկանուշին տալ իրեն։

Հայկը պահանջներից ոչ մեկը չի ընդունում։

Բելը նորից կովի է ենում, բայց ապարդյուն։ Նա մի նոր պատգամավոր է ուղարկում, բայց այս անդամ արդեն երկու պահանջով։ Հնազանդել և Հայկանուշին տալ իրեն կնության։ Հայկը նորից մերժում է։ Ահեղ կովի մեջ Հայկը վիրավորվում է։ Հոբետ քաջարար սկսում է մարտ մղել Հայկանուշը։ Բելի զորքերը Հայկանուշին գերի են վերցնում։ Բելին ոչ մի կերպ չի հաջողված հրապուրել Հայկի աղջկան։ Բելը նորից պատգամավոր է ուղարկում Հայկի մոտ՝ առաջարկելով հաշտություն, փոխարենը ինդրելով միայն Հայկանուշի ձեռքը։ Հայկը գերադասում է իր

աղջկա մահը տեսնել, քան նրան իր թշնամու կինը դարձած։ Մի նոր մեծ կովկ է սկսվում։ Հայկը նետում է իրեն թշնամու բանակը և ճակատագրական մենամարտի կանգնում Բելի դեմ։ Հայկի կը աղեղից արձակված նետը գետին է գլորում Բելին։ Դրանով էլ պատերազմը վերջանում է։

Բագրատունու այս դյուցազնավեպը գրված է Հոմերոսի «Իլիականի» նմանությամբ։ Ճիշտ այնպես, ինչպես «Իլիականում» աքայեցիների և տրոյացիների պատերազմը վարում էին աստվածաքայեցիների, որոյացիների պատերազմը վարում էին աստվածաքայեցիների, որինակ, Զեփը, Թետիսը, Հերան աքայեցիների կողմն էին, Աֆրոդիտեն և մյուսները՝ տրոյացիների, այդպես էլ այսուեղ. դժոխքը Բելի կողմն է, երկինքը՝ Հայկի։ Ինչպես որ «Իլիականի» մեջ Պատրոկլեսի մահվան առթիվ Հոմերոսը մանրամասն նկատում է յուրայինների սուպը, մեռելահացի խնճուքը, այնպես բագրում է Յայկակի՝ Հայկ դյուցազնի որդու մահը առիթ էլ Բագրատունին Հայկակի՝ Հայկ դյուցազնի որդու մահը առիթ ծառայեցնելով, նկարագրել է սպի, Հուղարկավորության և մեռելահացի բոլոր մանրամասները։

Բագրատունու «Հայկ դյուցազնը» ամենամեծ շափածո գործն է հայ գրականության մեջ։ Բաղկացած է մոտ քսաններկու հազար տողից։ Գրված է հայկական շափով։ Պետք է նկատել, որ մինչև Բագրատունին այդ գրեթե հայտարերված չէր։ Նա էր, որ հայկական տաղարանների և շարականների ուսումնասիրությամբ վերականգնեց հայկական շափը, մշակեց՝ առավել ճկունություն հաղորդելով նրան։ Բագրատունին հայկական շափը կիրառեց սկզբում իր թարգմանությունների մեջ, ապա նաև այս դյուցազնավեպում։ Բագրատունուց հետո հայկական շափը ժառանգություն մնաց հաջորդ սերնդի բանաստեղծներին։

Բագրատունու «Հայկ դյուցազն» պոեմը գրված է խոթին գրաբարով։ Ահա մի նմուշ այդ պոեմից։

Հայկեանց ցրուեալ ի մայրին յայսկոյս, յայնկոյս
յառաջս առաջս.

Ի հաջել հետազոտել շանց՝ ի դղորդից ասպատակին
Գոստուցեալ բոյլք երէոց վագեն վարդին ի վեր ի վայր։
Անդ քառատրոփի գոյցի, անդ գոռ, անդ ոտն ի դոփի,
մկունք ի կոփի,

Թունդ առ անտառ, բոմբ ի բոմբիւմ թումբ ի թմբիւմ
գանգք արձանաց։*)

Հին հայերենը, այսինքն գրաբարը Բագրատունու այս պոեմում հանդիս է գալիս ոչ միայն բառապաշտարի անկրկնելի ճոխությամբ, այլ և արտահայտչական ձևերի բազմազանությամբ։ Մի կողմից հնչում նմանաձայնություններով հարուստ երաժշտականիցին առաջականությամբ է առաջականությունը հանդիսավոր շափ—ահա՛ պոեմից ստացվող առաջին տպավորությունը։

Բացի «Հայկ դյուցազն» պոեմից, Բագրատունին գրել է նաև մանր բանաստեղծություններ։ Այդ բոլորի հետ միասին նա միաժամանակ քառասում տարի աշխատել է գրաբարի քերականության վրա։

Բագրատունին վախճանվել է 1866 թվին։

Ինչպես գրանսական, ուսուական, այնպես էլ հայ գրականության մեջ կլասիցիզմն իր տեղն սկսեց զիշել ոռմանտիզմին։ Դա միանգամբ է հանկարծ չկատարվեց, այլ աստիճանաբար, հետողհետեւ, պատմական-հասարակական իրադարձությունների ազդեցության ներքո։

Ժամանակի այրող հարցերը գրվեցին գրականության առաջ Սկսվել էր ազգային-ազատագրական շարժման նոր փուլը։ Կարսկզբից ժողովորդը կանգնել էր ազգային ինքնաճանաշության ձանապարհին։

Հայ գրականության զարգացման այս շրջանում մեղանում նշանակալից դեր խաղաց ուստի գրականությունը։

Ուստի գրականությանը հայ երիտասարդությունն սկսել էր ծանոթանալ դեռ 20-ական թվականներից։

30-ական թվականներին Աբովյանը ծանոթանում է Ժուկովսկու հետ, թարգմանում Կարամզինի գործերը։ Նույն տարիներին

*) Հայկյանները ցրվում են անտառներում այս կողմ, այն կողմ առաջ առաջ Հետախույզների հաջոցից և ասպատակողների գլուրոցից Ցնցված երենները երամները վազում, վազվզում են վեր ու վայր։ Այստեղ քառատրոփի գրու, այնտեղ աղմուկ, այնտեղ ոտն է դոփում, նիզակը ճոճում։

Անտառն է թնդում, ժայռերը տալիս են բոմբյուն ու թնդյուն։

Մոսկվայի Լազարյան ճեմարանի աշակերտները Մկրտիչ էմինի միջոցով ծանոթանում են ոռուսական պոեզիայի լավագույն նմուշներին, հատկապես Պուշկինի պոեմներին: Իսկ 40-ական թվականներին Լազարյան ճեմարանը Համազասպյանի թարգմանությամբ գրաբար լույս ընծայեց Պուշկինի, Լերմոնտովի, Ժոկովի և ուրիշ ոռուս բանաստեղծների գրածքների ժողովածուն «Թարգմանութիւնք արձակ և ոտանաւոր ի ոռուսաց լեզուէ» վերնագրով: Բացի այդ, Մոսկվայում լույս տեսավ, գարձյալ գրաբար, Կեռուցանցի գիրքը «Ծաղկաքաղ յառակացն Քրիլովի, Տմիթորեվի և Խեմնիցերի»: Այս երկու ժողովածուների միջոցով հայ ընթերցողը ծանոթացավ ոռուսական պոեզիայի ոչ միայն երկու մեծ բանաստեղծների՝ Պուշկինի ու Լերմոնտովի երկերին, այլ և նախապուշկինյան (Կոլով, Խեմնիցեր և Դմիտրի) և պուշկինյան դարաշրջանի մյուս բանաստեղծներին (Ժոկովսկի, Յաղիկով, Բայյուզկով և այլն):

Դեռ 20-ական թվականներից մեր իրականության մեջ մի նոր ու թարմ հոսանք առաջացավ, որը նախնական մի փորձ էր ոռուս և ելրոպական գրականության, ֆրանսական լուսավորիչների գաղափարների ազդեցության տակ ճեղքելու կլասիցիզմի կաշականդիչ սահմանները և գրականությունը լույս բերելու դեպի կյանք, դեպի մարդը, դեպի լուսավոր երազների աշխարհը:

Այդ շարժման առաջին երկու ներկայացուցիչներն են Հարություն Ս. լամ- Հարություն Ս. լամ- թարյան թ. Աստրախանում: Կրթությունն ստացել է (17. 6—1834) Աղաբարյան դպրոցում, հայտնի հայկաբան Սերովի Պատկանյանի ձեռքի տակ:

1814 թվից Աղամդարյանը ճենադրվում է քահանա, ապա վարդապետ: Աղամդարյանն Աստրախանից տեղափոխվում է Մոսկվա, ուր Լազարյան ճեմարանում մանկավարժական աշխատանք է վարում: Ներսես Աշտարակեցին Մոսկվայից Թիֆլիս է հրավիրում Աղամդարյանին և նրան հանձնում իր դպրոցի տեսչությունը:

Աղամդարյանը փորձված և գիտուն մանկավարժ էր: Նրա ձեռքի տակ աճեց ու զարգացավ նոր բացված դպրոցը: Ներսիսյան դպրոցում նա մնաց մինչև 1830 թիվը: Նրա ձեռքի տակ

Կրթություն են ստացել այնպիսի մարդիկ որոնք հետո հայ գրականության փառքը կազմեցին, օրինակ՝ Արովյանը, Նազարյանը և ուրիշները:

Աղամդարյանը 1833 թվին նշանակվում է Նոր-Նախիջևանի Սուրբ Խաչի վանական ժողովում կազմակերպություն- ների շարքը երեք տասնյակից շի այստեղ զբաղվում է գրական ստեղծագործական աշխատանքով:

Աղամդարյանը վախճանվեց 1834 թվի մայիսի 15-ին:

Աղամդարյանը շատ շի գրել: Նրա գրած բանաստեղծությունների շարքը երեք տասնյակից շի անցնում: Ունի նաև թարգմանություններ:

Թե Աղամդարյանը երբ է սկսել գրել, հայտնի չէ: Ճեղինակն իր երկերը շի հրատարակել: Բանաստեղծի մահից հետո միայն հետզհետե սկսեցին լույս տեսնել նրա ոտանավորները: Առաջին բանաստեղծությունը լույս է տեսել նույնիսկ իրեւ անհայտ բանաստեղծի գործ: Աղամդարյանի ժողովածուն, որտեղ հավաքված են նրա տաղերը, լույս տեսավ միայն 1884 թվին Պետերբուրգում: «Զափիաբերականք» վերնագրով: Ամենավաղ շրջանի բանաստեղծությունն այդ ժողովածույում վերաբերում է 1821 թվի ամռանը:

Աղամդարյանի բանաստեղծությունները թեմատիկայով հիմնականում բաժանվում են երկու խմբի: Մի շարք բանաստեղծություններ, որ նրա ստեղծագործության մի զգալի մասն են կազմում: Նվիրված են Հայաստանի պատմական անցյալին, լուսավորչական եկեղեցուն ու կրոնական հայտնի գործիչներին: Այս գրվածքներում բանաստեղծը հանդես է գալիս որպես կլասիցիզմի արտահայտիչ, իր աշխարհայցքով կաշկանդված քրիստոնեական կրոնին ու եկեղեցուն: Սակայն Աղամդարյանը գրել է նաև աշխարհիկ թեմատիկայով բանաստեղծություններ, որոնք նրա ստեղծագործությունն ամենաարժեքավոր մասն են կազմում: Այդ գրվածքներում բանաստեղծը փորձում է գուրս գալ կրոնական աշխարհայցքի սահմաններից ու երգել իրական կյանքը:

Աղամդարյանի աշխարհիկ թեմատիկայով գրած բանաստեղծությունները գերազանցապես քնարական բնույթ ունեն:

Նրա երգերի առանցքը մարդն է, մարդու հոգեկան աշխարհը, նրա հույզերի ու ապրումների գրսեվորումը: Աղամդարյանի

բանաստեղծությունների մեջ ընթերցողի առաջ կանգնում է բանաստեղծն իր խնդություններով, վշտերով և տառապանքներով:

Ալամդարյանի երգած զգացմունքների մեջ իշխողը սերն է: Այս իմաստով շատ արժեքավոր է նրա «Պարերգությունը»:

Երկու ձեռին երկու մոմ

Ինձ ընդ առաջ յել յուր տան.

Մի՛ հարցանեք ո՛վ էր նա,

Հրեշտակ, թե կույս լուսագեղ:

Ամոթն զնա վարդ արար,

Ես հիացյալ դարձա քար.

Այն զի՞նչ օր էր և զի՞նչ ժամ,

Հորում տեսի ես կեանք նոր:

Լիաճրագ հայնմիկ տան

Ի մարդաշատ բազմության

Ի մեջ աղջկանց և հարսանց

Հոտին կայր վոմն անդ հանկյան:

Այն օրիորդն եր պարկեշտ

Ինձ պատահյալ առ դրամբ տան.

Զորիս զրավաց հյուր ի սեր,

Ի նմատեսի յես կյանք նոր:

Բանաստեղծը խոսք չի գտնում արտահայտելու իր զմայլանքու: Դյութիւնած իր սիրով՝ նա անքուն գիշերներ է լուսացնում, ուրախության արցունք թափում: Կյանքի իմաստը նա սիրո մեջ է տեսնում: Այդ տեսակետից շատ ավելի արժեքավոր է նրա մի ուրիշ բանաստեղծությունը, որ կոչվում է «Դավ երևակայության»: Այստեղ բանաստեղծն այն միտքն է արտահայտել, թե սերը տիեզերական զգացում է, նա արտահայտվում է ամեն տեղ, ոչ միայն մարդկանց, այլ և բնության մեջ: Նա ցույց է տալիս, որ բնության մեջ ամեն ինչ ձգտում են մոտենալ իրար:

Որպես ծուփն ի վեր բնապես ձգի,

Որպես նետն առ յուր նպատակ բերի:

• • • • •

Նույնպես սիրտ, մարմին, իմ բոլոր հոգի:

Քեզ բաղձա, սէր իմ, քեզ վառի, մաշի:

Բանաստեղծի կարծիքով կյանքի խորհուրդը սերն է: այն բերկրությունը, որ բերում է նա՝ մարդու զգացումների մեջ՝ ամենաազնիվն է, ամենանվիրականը:

Ալամդարյանի բանաստեղծությունների մեջ, սակայն, կան և ուրիշ հաջողված կտորներ Քնարական բանաստեղծության սքանչելի նմուշ է «Գարուն»-ը: Այստեղ բանաստեղծը նկարագրում է բնության գարնանային զարթոնքը, նրա հմայքն ու հրապուցքը և այդ բոլորին հակադրում է իր հոգեկան խոռվարը, զերությունը վանքի մուայլ պատերի մեջ: «Գարունը» Ալամդարյանը գրել է 1831 թվի ապրիլի 22-ին, Հաղպատում, ուր նա միայնության մատնված աքսորական էր:

Ալամդարյանը իր աշխարհիկ քնարական բանաստեղծություններում կյանքի մեծագույն խորհուրդը տեսնում է վայելքի և հրապուցքի մեջ: Կնոջ գեղեցկությունը նկարագրելիս Ալամդարյանը երբեմն, հետեւելով մեր միջնադարյան բանաստեղծներին, չի կաշկանդում իրեն ավելորդ պարկեշտությամբ: Ճիշտ է, նրա երգերի մի մասի վրա նկատելի են միստիկական խորհրդածությունների հետքեր, բայց այդ չի որոշում նրա բանաստեղծական ինքնությունը:

Ալամդարյանը քնքուշ քնարերգու է: Նրա երգերն անկեղծ են, սրտաբուղիս, անմիջական: Մի նույր թախիծով են համակված նրա տաղերը: Տիրության շեշտ կա ամեն մի տողում:

Չնայած աշխարհիկ կյանքը պատկերագրելուն, Ալամդարյանն անկարող եղավ իր դարաշրջանի մյուս կարեռ պահանջն ըմբռոնելու, այսինքն՝ զրելու ժողովրդին հասկանալի աշխարհաբար լեզվով: Նրա բանաստեղծությունները գրված են զրաբար: Բագրատունու համեմատությամբ Ալամդարյանի երգերը գրված են հասկանալի զրաբարով, բայց այնուամենայնիվ նյութի և լեզվի հակասությունը կազմում է նրա ստեղծագործության գլխավոր թուղթյունը: Նա իբրև բանաստեղծ՝ նյութով, զգացմունքներով մտքերով կապվում է գալիք զրաբարի պատկերայն հետ, գառնալով այդ գրականության վաղագույն նախորդներից մեկը, մինչդեռ լեզվով կապված է մնում ժամանակի տիրապետող զրական ոճի՝ կլասիսիզմի հետ: Բանաստեղծության ձևական որոշ հատկություններով նա կապված է հայկական միջնադարյան պեղպահյան:

Չնայած զրաբարին՝ Ալամդարյանի մի քանի բանաստեղծու-

բյուները («Պարերգություն», «Դարուն») ժողովրդականություն են ձեռք բերել, հաճախ նույնիսկ երգին են մեր գյուղերում:

Սեսրոպ Թաղիաց. Այս շրջանի մյուս խոշոր դեմքը Մեսրոպ լան Թաղիացյանն է: Թաղիացյանը ծնվել է

(1803 – 1858) 1803 թվին, Երևանում: Եատ շուտ զրկվելով հորից՝ որրացած մանուկը մնում է տատի մոտ, ապա 1816 թվին ընկնում է Էջմիածին: Թաղիացյանը շրջել է Հայաստանի բոլոր կողմերը, եղել է նաև Շուշի, Գանձակ և Թիֆլիս: Շրջագայություններն օգնեցին նրան ծանոթանալ երկրին, ճանաչել ժողովրդի կյանքը, հոգեբանությունը: Այդ ժամանակ Հայաստանը պարսկական լծի տակ էր: Թաղիացյանը վկա եղավ պարսկական բռնություններին, շարքաշ ժողովրդի տառապալից կյանքին՝ հարկահանների և ֆառաշների ձեռքում:

1822 թվին Թաղիացյանը որոշեց Ելբոպա գնալ սովորելու նույն տարին նա ճանապարհ ընկավ, բայց Ելբոպայի փոխարեն հասավ արևելք, հեռավոր Հնդկաստան: Նա հաստատվեց Կալկաթայում: Այստեղ նա ծանոթացավ անգլիացի գիտուն Ռիջնալդ Հիբրիի հետ: Վերջինս վճռական դեր խաղաց պատանու կյանքում: Հիբրիի միջոցով 1826 թվին Թաղիացյանն սկսում է սովորել Կալկաթայի անգլիական բարձրագույն հոգևոր դպրոցում: Այստեղ նա մնաց շուրջ շորս տարի: Կարելի է ասել, որ այս շորս տարիների կյանքը միանգամայն վերափոխեցին էջմիածնական սարկավագին: Ընդարձակվեց նրա մտքի հորիզոնը, նա զանազան գիտելիքներ ձեռք բերեց և, որ գլխավորն է, սովորեց պարսկերեն, հունարեն, լատիներեն և անգլերեն: Նա սկսեց Կալկաթայում թարգմանություններ անել, ինչպես լատիներենից, այնպես էլ անգլերենից: Առաջին հերթին նա թարգմանեց Ռիջնալդ Հիբրիի «Պաղեստին» գրվածքը:

1828 թվին, երբ ոռու գործք գրավեց Երևանը, Թաղիացյանը մի ընդարձակ նամակ ուղարկեց իր համաքաղաքացիներին, երեվանցիներին: Այդ նամակը կարևոր փաստաթուղթ է: Այն ցուց է տալիս Թաղիացյանի ոռուական օրիենտացիան, այն մեծ հույսերն ու ակնկալությունները, որ նա կապում էր Հայաստանի նվաճման հետ Ռուսաստանի կողմից: Ողջունելով Երևանի բնակիչներին և պատմական մեծ դեպքի առիթով իր անսահման ուրախությունը իր համար կամ է միացնում նրանց խնդությանը:

Այդ նամակը միաժամանակ լուսավորության քարոզ է. «ԱՌԻ, իմ լավ քաղաքացիք, ա՛խ, հոգիս հարա է կանչում, հին խմորն թողեք, նոր ազգի լուսավորության և պայծառության հետևցեցք»:

Թաղիացյանն իր համաքաղաքացիներին խորհուրդ է տալիս Երևանում մի դպրոց բանալ, որ երեխաները «դատարկ քուշեքումը» ման շգանե նա ասում է, որ պետք է հետեւ ֆրանսացիներին ու անգլիացիներին: Թաղիացյանն առաջարկում է աղջիկներին նույնպես կրթություն տալ: Անգլիացի ու ֆրանսացի կանայք, — ասում է նա, — վեց, յոթ լեզու գրել-կարդալ գիտեն, մեծ-մեծ գրքեր են շարադրում, տպում և այն; Եթե բացվի այդ դպրոցը, — ասում է Թաղիացյանը, — ինքը պատրաստ է թողնել Կալկաթան և նորից դառնալ հայրենի երկիր ուսուցչություն անհետ:

Թաղիացյանի նամակը մնաց անուշադիր:

1831 թվին նա վերադառնում է Էջմիածնում Թաղիացյանը հանձն է առնում վանքի ժառանգավորաց դպրոցի ղեկավարությունը: Սակայն, այստեղ երկար չի մնում: Միքայել Նալբանդյանի ասելով, կարճ ժամանակամիջոցում նրա դեմքնանց ամի ահազին բազմություն թշնամիներից: Տգիտությունը, դավերն ու ինտրիգները, Թաղիացյանի դեմ ուղղված զրաբրություններն ու հալածանքները պատճառ են դառնում, որ նա պարզապես փախչի վանքից: Մի օր նա մտնում է վեհարանը և նկատում, որ թանաքամանը գործածվում է թքամանի տեղ: Զայրացած այս փաստի վրա՝ նա մի թղթի վրա գրում է:

Երբ թքաման թանաքամանն

Գարձել ետես յայս վեհարան,

Զի՞նչ այլ քեզ յոյս երշանկութեան

Փախիր փութով Մեսրովլ Դավթեան:

Գրածը նա թղթնում է սեղանի վրա, իսկ ինքն անհետանում:

Կրկին հաստատվելով Կալկաթայում՝ նա իրեն ամբողջապես նվիրում է գրականությանը. թարգմանություններ է անում, կազմում է գասագրքեր, այլ և այլ ձեռնարկներ, գրում է շափածողրածքներ, վեպեր, սկսում է հրատարակել սկզբում «Ազգասեր», ապա՝ «Ազգասեր Արարատյան» լրագիրը:

1857 թվին նա նորից ճանապարհ է ընկնում գեղի Պարսկաստան, Նոր Ջուղայում ուսուցչություն անելու ջհասած Նոր Ջուղա՝ ճանապարհին, Շիրազ քաղաքում 1858 թվին նա վախճանվում է:

Թաղիադյանը, ինչպես և այս շրջանի գործիչների ու գրողների մեծ մասը, բարի իսկական իմաստով լուսավորիչ է: Նրա ողջ գործունեությունը միայն մի նպատակ էր հետապնդում— լուսավորել հայ ժողովուրդը, դպրոցներ բանալ, լրագիր հրատարակել, գրքեր տպագրել, գիտություն տարածել:

Իինելով մանկավարժ, նա երեխաների համար կազմել ու գըրել է իր ժամանակի համար շատ արժեքավոր այբբենարան՝ օՄերոպյան այբբենարանա անունով: Բացի այդ՝ նա պատմագիր է, Թաղիադյանը գրել է Հնդկաստանի պատմության նվիրված մի հատոր, և «Ճանապարհորդութիւն» ի հայոց գիրքը, որ նրա թողած ժառանգության մեջ մի առանձին արժեք ունի: Բացի այն առատ նյութից, որ դա տալիս է ազգագրական ուսումնասիրությունների համար, Թաղիադյանի հուշերությունն ունի մեծ արժեք նաև պատմագրության համար: Դա ժամանակակցի վկայությունն է գարաշրջանի մասին: Թաղիադյանը տվել է ոչ միայն ժողովրդի վարքն ու բարքը, այլ և պարսկական բռնությունների ու շարաշահումների նկարագրը, գյուղացիության ճորտական վիճակը: «Նրանք ցանում էին,— ասում է Թաղիադյանը գյուղացիների մասին,— և հունձի ժամանակ (պարսիկ բռնակալը, խմբը,) ուղարկում էր նրանց կալը մեջտեղից կես բաժին անելու. ապա մնացածից կտրում էր արքունի տուրքը, այնպես որ նրանց բան չէր մնում ծախսերի համար: Եթե պատահում էր, որ երկնառաք պատուհասի պատճառով արտերը ստերջանում և բերք չէին տալիս, նա այդ վնասը ժողովրդի զանցառությանը վերագրելով՝ առնում և գուավում էր, ինչ որ նրանց տանը գտնում էր՝ կահույք և կարասիք, իսկ երբ այդպիսիք չկային, նրանց կանանց և երեխաներին՝ որպես վճար իրեն հասանելիք բաժնի: Նրանցից ծեծելով քամում էր ոսկիները տառապլաների տանջանքից իր հղվացման համար: Ամբողջ երկիրը կեղեքելով մաշում էր և նրանց քրտինքով Ղաղբինում դաստակերտներ էր շինում և իր գանձը ճուխացնում»:

Բացի այդ, ճանապարհորդության մեջ նկարագրված է եղմիւ

ածինը, նրա ներքին կյանքը, միաբանության անդամների հարաբերությունները, դավելն ու ինտրիկներն իրար դեմք: Այս գրքի մեջ է, որ Թաղիադյանը հանդես է գալիս ճորտատիրության դեմ:

Թաղիադյանը հայտնի է նաև իբրև բանաստեղծ և վիպասան:

Թաղիադյանի մանր բանաստեղծությունները մի առանձին արժեք չունեն: Ալամդարյանի սրտաբուխ երկերի համեմատությամբ՝ սրանք արվեստական են և չոր: Բայց Թաղիադյանի մանր երկերի մեջ նկատելի են գծեր, որոնք նորություն են Ալամդարյանի գործերի համեմատությամբ: Այսպես, օրինակ, շատ ուժեղ է նրա մոտ հայրենասիրական զգացումը, որի մի քանի արտահայտությունները Թաղիադյանի անունով են հայտնի մեր գրականության մեջ: Որպես օրինակ՝ կարելի է հիշել Նալբանդյանի շատ հալանած «Տեր Կեցոյ»— ազգասիրական օրհներգը: Երկրորդ նորությունը— երգիծական գիծն է: Թաղիադյանը հորինել է մի քանի երգիծական ուսանալորներ: Հիշատակության արժանի են վեհարանի «Թքաման թանաքաղաքանը» հանգատրաստից գրված մի քառատողը և «Ճուցակ ստացեալ աղլից», ուր նկարագրված են այն «Հարմարությունները», որ Թաղիադյանն ստացել էր եզմիածնում Հնդկաստանից վերադառնալուց հետո: Երրորդ հատկությունը՝ դա ժողովրդական լեզվով գրված նրա ուսանալորների փոքրաթիվ շարքն է: Այս արդեն մի փորձ էր գրաբարից աշխարհաբարին անցնելու:

Թաղիադյանի շափածո գրվածքների մեջ մեծ հոչակ է ձեռքբերել «Սոս և Սոնդիպի» պոեմը:

Պոեմի համառոտ բռվանդակությունը հետևյալն է:

Սոսը հայ երիտասարդ է, Սոնդիպիին՝ Հնդկական ուազայի աղջիկ: Ռաջան մտադիր է իր աղջկան զոհել կուռքերին: Սոսը, որ սիրում էր Ռաջայի աղջկան, փախցնում է նրան Հայաստան: Հնդկական ուազան՝ Սուրաջը սկսում է որոնել իր աղջկան և գտնում է նրան այն ժամանակ, երբ նա հայ աղջիկների հետ դաշտում ծաղիկ հավաքելիս է լինում: Հափշտակելով Սոնդիպին, Սուրաջը զոհում է նրան կուռքերին:

Սոս և Սոնդիպիի դժբախտ սիրո պատմության վրա կառուցված պոեմը բաղկացած է հինգ մասից: Նախերգան քում, Սոսը

Սոնդիպիի գերեզմանի վրա ընկած ողբում է իր կորցրած սերը։ Աստղիկը հարցնում է Սոսին նրա լացի պատճառը։ Սոսն անում, է իր և Սոնդիպիի սիրո պատմությունը, որ նկարագրված է մնացած երգերի մեջ։

Ոչ միայն լեզվով, այլ և կառուցվածքի առանձնահատկություններով պոեմը հորինված է դասական գրվածքների հետևողությամբ։ Այդ իմաստով նրան պետք է դասել հայկական կլասիցիզմի արտահայտությունների շարքը։ Սակայն կա մի ուրիշ կողմ, որ թույլ չի տալիս այդ գործն ամբողջությամբ կլասիցիզմի արտահայտություն համարել։ Դա բովանդակությունն է և այն հարցերը, որ արծարծված են պոեմում։ Պատուելով կլասիցիզմի կաշկանդիչ ձևերը՝ բովանդակությունը մոտենում է այն նոր գրականությանը, որ մենք ունեցանք հետագա տասնամյակներում։

«Սոս և Սոնդիպիի նյութը սերն է։ Թաղիադյանն այն համոզումն ունի, թե սերը ազգության և կրոնի տարբերություն չի ճանաչում։ Այդ գաղափարը նա արտահայտել է այն տողերում, ուր ասված է, թե՝ երբ սերը շաղկապում է սրտերը, ոչ ազգը, ոչ էլ աղանդը չեն կարող այդ սրտերն իրարից բաժանել։

Պահպանելով գրաբարը՝ Թաղիադյանն ստեղծել է երկու վեպ՝ աշխարհիկ բովանդակությամբ։ Մեկը կոչվում է «Վեպ Վարսենկան»։ Երկուսն էլ տպագրվել են Կալակաթյում, առաջինը՝ 1846 թվին, երկրորդը՝ մի տարի հետոք 1847 թվին։

Հեղինակը հրատարակել է «Վեպ Վարսենկան»-ի միայն առաջին գիրքը, որի համառոտ բովանդակությունը հետևյալն է։

Աղվանից թագավոր Վաշագանը սովորություն ուներ ծպտած շրջելու քաղաքը և լսելու իր ժողովրդի խոսակցությունները։ Մի գիշեր նա լսում է երեք մշակի գրուցը։ Մեկը նրանցից ցանկություն է հայտնում երկրի գորավարը դառնալու, երկրորդը՝ թագավորի խոստովանահայրը, երրորդն էլ, որի անունը Գուրգեն էր, ասում է, որ ինքը կուղենար ամուսնանալ թագավորի աղջկա հետ, եթե նույնիսկ բոլորովին օժիտ չստանար և անդամ վորնդավեր երկրից։ Մյուս օրը թագավորը երեքի ցանկությունն էլ կատարում է։ Գուրգենը և Վարսենիկն ամուսնանում են և վտարվում Աղվանից։ Հեռու իրենց հայրենիքից՝ մի քաղաքում նրանք հաստատվում են ապրելու։ Գուրգենը մշակությամբ է պարապում։

իսկ Վարսենիկը՝ ձեռագործով։ Աղքատ էր ու դառն նրանց կյանքը. հազիվ էին օրվա հաց ճարում, բայց երջանիկ էին նրանք փոխադարձ սիրով։ Մի օր Գուրգենն անհայտանում է։ Պարզվում է, որ նա ընկել է դեմքի որոգայթը։ Վալեթ թագավորի օգնությամբ Գուրգենն աղատվում է և տեր կանգնում կործանված դևրի հսկա հարստությանը։

Թաղիադյանի այս վեպը հիշեցնում է Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքյալը։ Նյութն, ինչպես երկում է, երկու դեպքում էլ վերցված է արևելյան շրջիկ հեքյալներից։ Վեպի հիմնական գաղափարն այն է, թե երջանիկ սերը ոչ թե հարստության վրա է հիմնված, այլ փոխադարձ սիրո, իսկ ճշմարիտ երջանկությունը համեստությունն է և սեփական վաստակի վայելումը։

Աշխարհիկ բովանդակություն ունի նաև Թաղիադյանի մյուս վեպը։ Այստեղ նկարագրված է, թե ինչպես մի երիտասարդ, Աբեղենի անվան տակ թագնված, ավազակների գլուխն անցած ահաբեկում է ողջ քաղաքը։ Մի անգամ էլ զնում է թագավորին սպանելու, բայց տեսնելով նրա գեղեցիկ գործը, Զայկանդուխտին, մտադրությունը փոխում է։ Այս անգամ էլ ծպտված, Զուրան անվան տակ նա մտնում է արքունիք ծառայության։ Նա մատնում է թագավորի ղեմ խոռվություն պատրաստող ավազակներին և խոստովանում թագավորին իր ով լինելու։ Ամուսնանում է Հայկանդուխտի հետ և մի քանի մեծ նահանգների բղեշի դառնում։

Այս գործով հայ գրականության մեջ սկիզբ դրվեց արկածաց յին վեպի ժամանին, որի հետագա զարգացումը գտնում ենք Իաֆա ֆու մոտ (օրինակ՝ «Խաչագողի հիշատակարանը»)։ Բայց ժամանակ յին նորություն լինելուց բացի, այս վեպը նշանակալից է նաև իր համարձակ հայացքներով, ֆեոդալական կարգերի և կղերական դասի քննադատությամբ։

Ինչպես նրա գործերի մեծ մասը, այնպես էլ այս վեպը գործ կած է գրաբար։ Նպատակ ունենալով լուսավորել ժողովուրդը՝ Թաղիադյանը գտավ միայն գրականության աշխարհիկ բովանդակությունը, բայց անկարող եղավ հաղթահարելու գրաբարը, որը գրականությունը ժողովուրդի սեփականությունը դարձնելու, նրա շահերին ծառայեցնելու տեսակետից՝ ամենամեծ խոշնդուն էր։ Ժամանակի այդ մեծ պահանջը Թաղիադյանը լումբունեց։

Թաղիադյանի ստեղծագործության թույլ կողմն է այդ: 'Իրավուանձին ուշագրություն է դարձրել նաև Միքայել Նալբանդյանը, որը մեծ կարծիքի էր Թաղիադյանի մասին: Նալբանդյանը զարմանում էր, որ եվրոպական կրթություն ստացած Թաղիադյանը, լուսավոր գաղափարների տեր մարդը, գործածելով «Հին և մեռած լեզուն»՝ չի հասկացել, որ «խոսելու կամ գրելու խորհուրդը այն է, որ ժողովովորդը կարդա և բան հասկանա»:

Ինչպես Ալամդարյանը, այնպես էլ Թաղիադյանը, երբեմն միայն անդրադառնալով ժողովրդական լեզվին՝ միշտ հարազատ մնացին գրաբարին: Օրինակ, Թաղիադյանը Կալկաթայում իր լրագիրն սկզբում սկսեց հրատարակել աշխարհաբար լեզվով, իսկ հետո անցավ գրաբարին: Բայց պետք է նկատել, որ Ալամդարյանի և Թաղիադյանի գրաբարը միմիթարյանների գործածած խօրթին լեզուն չէր: Միմիթարյանների ձգտումն էր վերականգնել Հինգերորդ դարի ոսկեղենիկ գրաբարը: Այդպիսի մի փորձ արավ նաև Թաղիադյանը «Սոս և Սոնդիպի» պոեմում: Բայց ընդհանուր առմամբ վերցրած՝ Ալամդարյանը և Թաղիադյանը հեռու էին այդ խրթնաբանությունից: Նրանց գրաբարը համեմատաբար պարզ է, մատշելի: Աշխարհաբարի տարրերն արդեն մուտք ունեն նրանց լեզվի մեջ:

Բայց այն, ինչ շհաջողվեց վճռապես լուծել թե՛ մեկին, թե՛ մյուսին, լուծեց այդ շրջանում հաշատուր Աբովյանը, որի անվան հետ էլ կապված է հայ նոր գրականության հիմնադրումը:

ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

(1809—1848)

Խաչատուր Աբովյանը, հավանական ենթասությունը եղանական պրոլետյամբ պետք է ծնված լինի 1809 թը-ուսումնառությունը վին Քանաքեռում, հարուստ գյուղացու հարկի տակ: Աբովյանի նախորդները հայտնի են եղել իրենց նահապետական առաքինություններով: Օրինակ, Աբովյանը պատմում է, թե ինչպես իր պապը, Ապովը իր սեփական ձեռովը մի մեծ այգի էր գցել, որ առաջ կենողը՝ մտնի, նրա բարությունը վայելի: «Էս մեշա իքուցը,— պատմում է Աբովյանը,— մեկ պը-



տուղ, մեկ թաս գինի իրանց տանը չէին բանեցնի: Զոկ կպահեցին ու աղքատ գեղցցոցը կը բաժանեին:

Աբովյանի ժամանակ Աբովյանների տոհմը այլևս իր նախնիների դիրքն ու կարուղությունը չուներ: Աբովյանն իր հորը՝ Ավետիսին և Հորեղբորը՝ Հարությունին, որ գերդաստանի մեջ ամենատարեցն էր, շատ էր սիրում: Վերջինս մի հաղթանամ գուղացի էր, անվախ սրտի տեր, զարմանալի քաջ, խստաբարո, բայց բարի ու առաքինի: Դաշտից տուն դառնալով, Հարությունը գերդաստանը հավաքում էր շուրջը և զրուցում շարի ու բարու մասին: Նրա մարդասիրական զրուցներն ու խրատները Աբովյանի վրա սեծ տպավորություն են թողել: Անջնջելի ազդեցություն է ունեցել Աբովյանի վրա իր գեղեցիկ ծննդավայրը, ուր անցել է մեծ գրողի մանկությունը:

Բայց այս քայլը հուշերի հետ Աբովյանը մանկուց հետը բերեց մի դառն հիշողություն պարսկական բռնության մասին: Աբովյանն աշքը բացեց և տեսավ, թե ինչպես Հայաստանը հեծում է պարսից տերության ձեռքին:

Հենց որ Աբովյանի տասը տարին բոլորեց, Հայրը նրան էջմիածին տարավ ուսման: Աբովյանն էջմիածնում մնաց մոտ հինգ տարի: Նա շդիմացավ վանքի դաժան կարգ ու կանոնին, մոռալ շրջապատին: Գյուղական պարզամիտ երեխան ընկել էր վանքի մոռալ մինուլութը: Կյանքն այստեղ ամեն ինչով գյուղականի հակապատկերն էր: Մի քանի անգամ փախուստի փորձեր արեց, բայց անհաջող: Փախչողների հետ, ինչպես պատմում էր Թաղիազյանը, շատ խիստ էին վարփում. կախում էին մի բարձր տեղից և անողորմ հարվածներ թափում ոտքի եղունգներին: Այնքան անտանելի են եղել այդ տարիներից մնացած տպավորությունները, որ հետագայում վանք ոտք դնելիս, Աբովյանին թվացել է, թե սառը ջուր են մաղում իր վկանին:

Տանհինգ տարեկան հասակում նա կարդում է մի շարք գրքեր, որոնք հայրենասիրական զգացմունք են ներշնչում նրան:

Հինգ տարի էջմիածնում մնալուց հետո Աբովյանն անցնում է Հաղպատ, այնտեղից էլ Թիֆլիս՝ ուսման մեջ կատարելագործվելու Թիֆլիսն այն ժամանակ քիչ թե շատ լուրջ ուսումնական հաստատություններ չուներ: Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը և մի խումբ այլ հայ պատանիներ մոտ մի տարի ուսում են ցու-

տանում Պողոս Դարաբաղցու ձեռքի տակ: Ներսիսյան դպրոցն բացվելուն պես Պողոս վարդապետն իր աշակերտներով տեղափոխվեց նոր կրթարանը: Ներսիսյան դպրոցի տեսուչը Հարություն Ալամդարյանն էր:

Աբովյանը Ներսիսյան դպրոցի առաջին շրջանավարտներից եղավ: Ավարտական վկայական ստանալով՝ Աբովյանն անցավ Հաղպատ՝ Եփրեմ կաթողիկոսից Վենետիկ ուսման գնալու թուլությունն ստանալու համար: Բայց պարսիկների ու ուսաների միջև ծագած անակնկալ պատերազմն արգելք եղավ այդ մտադրությանը:

1828 թվին Աբովյանը կարգվեց կաթողիկոսի թարգման և գրագիր: Բոլորը նրան բախտավոր էին համարում: Ուներ կշիռ միաբանության մեջ: Չնայած այդ բոլորին՝ նա իրեն խիստ դժբախտ էր համարում: Վանքը մի կատարյալ հաճիճ էր: Աբովյանին հոգնեցրել էր վանքի անբովանդակ շրջապատը, որ լի էր վանականների իրար գեմ ունեցած դավերով, որովայթներով: Նա ուզում էր գնալ սովորելու, բայց ընդառաջող շկար:

1829 թվի ամռան վերջերին էջմիածին եկավ Պորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարբոտը: Նա Հայաստան էր եկել Արարատի գագաթը բարձրանալու: Աբովյանը՝ իբրև միակը վանականների մեջ ուսւերեն իմացող՝ նշանակվեց գիտնական հանապարհորդի թարգման: Պատանու դեպի գիտությունն ունեցած ծարավը, կամքի կայունությունը, պարզ բնակորությունը գրավում են Պարբոտի ուշադրությունը:

Մեծ դժվարություններ հաղթահարելով՝ սեպտեմբերի 25-ին Պարբոտի խոսքը բարձրացավ Արարատի կատարը: Աբովյանը, որ թախանձելով Պարբոտին՝ ստացել էր նրա թուլությունը մասնակցելու վերելքին, Մասիսի գագաթին անվանի գիտնականին հայտնում է իր իղձը՝ սովորել գնալու մասին: Պարբոտը խոսք է տալիս օգնել նրան:

Աբովյանն անհամբեր սպասում էր Պարբոտից տեղեկության: Տեղեկությունն ուշանում էր: Բոլորը վանքում սկսեցին Աբովյանին հորդորել հրաժարվելու Դորպատ գնալու մաքից: Սկսեցին ծաղրել, զրաքարտել, նույնիսկ հալածել: Նրան մեղաղորում էին սրբապղծության մեջ: Աբովյանը խիզախել էր բարձրանակ կեռան գագաթը, ուր շատ հետակոր ժամանակներում, ըստ Աստ-

վածաշնչի, զրհելեղի ժամանակ կանգ էր առել Նոյ նահապետը իր տապանով։ Աստվածավախ կրոնավորների համար դա մի անսովոր և հանգույն քայլ էր։ Այդպիսին, նրանց կարծիքով, անպատճի չպետք է մնար։ Բոլորը նրանից երես դարձրին։ «Աւ որ միայն գնում եմ, վիշտը և խոռովովունը ստվերի նման գալիս է իմ եռեկց», — գանգատվում է Աբովյանն իր մի նամակում։

1830 թվի գարնանամտին Պարրոտի նամակն ստացվեց։ Պարրոտը հայտնում էր, որ Աբովյանի վիճակը որոշված է։

Ուսումնածարավ պատանին անուշադիր թողեց նույնիսկ ծընողների պաղատանքը։ Նա այլևս չէր ուզում առիթը ձեռքից բաց թողնել։ Մեկնելիս՝ մի խոռոք հոգևորականներ հարձակվում են նրա վրա, խում շորերը, ճամբի պաշարը, վիրավորում։

Աբովյանը 1830 թվի սեպտեմբերի սկզբներին Աբովյանն արդեն Պորպատումն էր։ Դորպատը մի նոր և անծանոթ աշխարհ էր նրա համար։ Պարրոտի խորհրդով Աբովյանը համալսարան շնորհվեց, թեև մենքնել էր այդ նպատակով։ Նրա կարծիքով Աբովյանը մասնագիտական կրթություն շներք է ստանար։ Նա խորհուրդ էր տալիս սովորել այն ամենը, ինչ կարող էր պետք գալ մի մարդու, որ պիտի վերադառնար հաշընիք, ժողովրդի մեջ գրադիտություն, լուսավորություն տարածելու Պարրոտի բարեկամներն ու ծանոթները, որ մեծ մասամբ Դորպատի համալսարանի պրոֆեսորներից էին, սիրով հանձն առան օգնելու Հայաստանից եկած պատանուն։ Պարրոտը նրա հետ պարապում էր գերմաներեն և այլ առարկաներ։ Պրոֆեսոր Բլյումբերգը նրա հետ անցնում էր պատմության դասընթացը, պրոֆեսոր Ֆրիդլինդերը՝ թվաբանության, Գրասը՝ աշխարհագրության։ Ուրիշներն էլ պարապում էին բնագիտություն, փիլիսոփայություն և այլ առարկաներ։ Աբովյանը զարմանալի ընդունակ էր լեզուներ սովորելու։ Շատ շուտ սովորում է գերմաներեն։ Դորպատի պրոֆեսորների վկայությամբ՝ նա գերմաներենին տիրում է գերմանացու հմտությամբ։ Սկսում է սովորել քրանսերեն, լատիներեն և կատարելագործում է ուսաերենը։

Տիրելով գերմաներենին՝ Աբովյանը գիշերներ է լուսացնում Քյոթեյի և Շիլերի գրքերի վրա։ Կարդում է Լիսսինգին ու Հերդերին։ Կարդում է Ռուսացին, ոգորչվում նրա մանկավարժա-

կան գաղափարներով։ Դորպատում մոտեկից ծանոթանում է անտիկ աշխարհի գրականությանը. կարգում է Հռմերուսի, Սոֆոկլեսի, Վիրաբիլոսի, Հորացիոսի, Դանտեյի, Պետրարկայի, Կառլամպինի, Ժուլիոսի երկերը։ Փիլիսոփաներից նա ծանոթ էր Հեղելին, Լայբնիցին և ուրիշներին։

Դորպատի միջավայրն իր կնիքը դրեց Աբովյանի քաղաքաւ կան հայացքների վրա։ Նրա հայրենասիրությունն այժմ մի նոր եռանդ ստացավ՝ իր ակունքն առնելով երրորդական լուսավորական շարժման դադարիաբներից։ Աբովյանի աչքի առաջ անցավ Բուրջենշաբտ կոչվող գաղտնի ուսանողական ընկերության գաղտը։ Չեր կարող նրա վրա ցնցող ազդեցություն շթողնել այն դաժան կարգն ու կանոնը, որի կը նկի տակ տրորվեցին երիտասարդ դորպատականների ազգային-լուսավորական ծգտումները։

Բայց այն մարդիկ, որ անմիջապես շրջապատում էին Դորպատում Աբովյանին, հեռու էին կանգնած այդ շարժումներից։ Չի կարելի ասել, թե նրանց խորթ էր ազատության գաղափարը։ «Յազատութենէ յառաջանան ամենայն բարիք», — ասել է պրոֆեսորներից մեկը Աբովյանին։ Բայց ժանդարմական կրոնների անխղճորեն ճզմել էր ամեն մի հանգույն միտք։ Պարրոտը, որի հարդիրները լսում էր Աբովյանը, զգուշացնում էր հեռու մնալ խոռվարը երիտասարդներից։ Պրոֆեսոր Բուրդերը և ուրիշ պրոֆեսորներ լուսավերության մեջ էին տեսնում հայրենիքի վրկությունը, արթնացնել ազգային ուղին, լուսավորել ժողովրդին, զըրանից հետո ամացածն ինքն իրեն կլինի։ Եթե մի ժողովուրդ լուսավորված է, դժվար է նրան քաղաքական սարկացման ենթարկել, երբ, վերջապես, մի այգափսի ժողովուրդ կունենա ազգային արժանապատվություն, թույլ չի տա իրեն լծի տակ պահել։ Պետք է լուսավորություն տարածել ժողովրդի մեջ, քաղաքակրթել երկիրը, ապա նոր, մի ընդհանուր և միասնական հայրենիքի մասին մտածել։

Ահա այս քաղաքական մտացնությունը ներշնչեց նրան Դորպատի միջավայրը։

Աբովյանը 1836 թվին Աբովյանը վերադարձավ հայք Թիֆլիսում րենիք։ Նա մտափիր էր էջմիածնում եվրոպական հիմունքներով գալուց հիմնել, ժողովրդական ուսուցիչներ պատրաստել։ Թիֆլիսում նա հանդիպեց Հովհաննես Կարբեցի

Դամբողիկոսին, որին հավատացրել էին, թե Արովյանը Պորապառ տում հավատից, եկեղեցուց շեղվել է, լուսերական է դարձել: «Դու լաւ խմորել կարես զմիտ անմեղաց, այլ կրթել զնոցա չէ քո գործ», — այս խոսքերով կաթողիկոսը մերժեց Արովյանի մուտքն էջմիածնի ժառանգավորաց դպրոցը:

Արովյանը մենակ մնաց և անօգնական: Երկար ժամանակ նա գեղերեց Թիֆլիսում՝ անգործ, «կարոտ ավուրն պարենի»: Զքափորությունից ստիպված Արովյանը մտնում է արքունական ծառայության: 1837 թվի փետրվարի 12-ին նա ստանձնում է Թիֆլիսի գավառական ուսումնարանի տեսչի պարտականությունը: Այստեղ ի միջի այլոց նա ծանոթանում է ադրբեջանական երկու նշանավոր գրողներ Միրզա Ֆաթալի Ախումզովի և Միրզա Շաֆու Հետ: Երկուսի հետ էլ Արովյանը բարեկամական անխախտ կապերի մեջ է եղել: Բացի այդ դպրոցից՝ Արովյանն իր մասնավոր միջոցներով մի պանսիոն է հիմնում, որտեղ սովորում էին հայ, ադրբեջանցի, գերմանացի և վրացի երեխաներ:

Գերմանացի ճանապարհորդ և գիտնական Մորից Վագները, որ այցելել է Արովյանի դպրոցը, հիացած է մնացել նրա աշակերտների առաջադիմության վրա:

1838 թվին Արովյանը դիմում է էջմիածնի սինոդին և խընդում իրեն ազատ արձակել Հոգևոր կողովամից: Նույն տարին նա ծանոթանում է գերմանուհի Էմիլիա Լոովեյի հետ: Հաջորդ տարի աշնան սինոդի վճիռն ստանալուց հետո, Արովյանն ամունանում է Էմիլիայի հետ:

Թիֆլիսում, Հաշված հատ ու կենտ մարդկանց, Արովյանը շրջապատված էր պահպանողական մանկավարժներով և տղետ շինովնիկներով: Շրջապատի նախանձն ու շարակամությունը խանսկարում էր նրան իր ողջ եռանդը դպրոցական գործի մեջ դնելու, եվրոպական հիմունքներով վերակառուցելու կրթական աշխատանքը: Արովյանը դիմում է ակադեմիկ Ֆրենին և խնդրում նրա օգնությունը: Ֆրենը Կազանի համալսարանի հայոց լեզվի և զրականության ամբիոնի պլրոքսորության համար առաջ է քաշում Արովյանի թեկնածությունը: Արովյանը պետք է դիմուտացիա ներկայացներ: Ժամկետի կարճ լինելու պատճառով, նա ուղարկում է իր երկու պատրաստ աշխատությունները՝ «Նախաշառվիդը» և «Թուռ տեսական և գործնական քառակարար սպանել են ու դիմակը նետել գետը: Մի երրորդ հնթաղրությունն էլ այն է, որ «Արովյանը մի խավար լուսկել մեջ մահու է տվել յուր անձը», այսինքն անձնա-

1841 թվին Արովյանը ետ ստացավ իր աշխատություններն այն պատճառաբանությամբ, թե ներկայացված գործերը գիտական չեն: Հավանաբար Արովյանի դիմուկատական հայացքները նույնպես արգելվ եղան, որ նոր բացվող ամբիոնը վստահեին նրան: Արովյանը Երեվան 1843 թվին Արովյանը տեղափոխվեց Երեւան: Երա անհայտ վան: Նրան հանձնված էր Երևանի գավառացումը ու ական ուսումնարանի տեսչի պաշտոնը:

Երևանում Արովյանը հաջողության շհանդիպեց: Տեղափոխվելուց հետո նա շատ շուտ գտնվեց շրջապատի հետ: Դպրոցում այնպիսի մարդիկ էին նշանակված ուսուցիչ, որ տարրական մանկավարժական պատրաստություն անգամ չունեին: Արովյանն ուղեց մաքրել դպրոցն այդպիսիներից, փոխարինել նրանց նոր, թարմ և կարող ուժերով: Թույլ շտվին: Փորձեց Գերմանիայից բերել տալ բնագիտական գործիքներ, գյուղատնտեսական մեքենաներ գնել: Դարձյալ թույլ շտվին: Խավարամուների միջավայրում Արովյանի ամեն մի քայլ, ամեն մի ձեռնարկություն հանդիպում էր ուժեղ դիմադրության: Նա ընդհանուր լեզու շփառվ տեղական իշխանության հետ: Բլավատցին, որ Երևանի նահանգապետն էր, հալածական վիճակի մեջ պահեց Արովյանին: Արովյանի միակ միսիթարությունը գպրոցի աշակերտներն էին: Սիբիր քշվելու ահը միշտ աշքի առաջն էր: Արովյանն ուղում էր թողնել Երևանը, գնալ Ռուսաստան կամ Գերմանիա: Նրան հաջողվեց վերցնել կաթողիկոսի համաձայնությունը նորից Թիֆլիս տեղափոխվելու և Ներսիսյան դպրոցում պաշտոն ստանալու: Մարտի վերջերին ուն Տուրկեստանով նշանակվեց Արովյանի տեղը Երևանի գավառական ուսումնարանի տեսուչ: Դեռ շեր ավարտել դպրոցական գործերի հանձնումը նոր տեսչին, որ 1848 թ. ապրիլի 2-ին Երևանում տարածվեց Արովյանի անհետանալու լուրը:

Զանազան և իրարից տարբեր հնթաղրությունների տեղիք է տալիս պատահած խորհրդավոր դեպքը: Ժողովուրդը նույնիսկ առասպեկներ է հյուսել Արովյանի անհայտացման շուրջը: Ծնթագրություններից մեկն այն է, որ ցարական իշխանությունը «սկզ կարետով» Արովյանին տարել է Սիբիր: Մի ուրիշ ենթաղրությամբ, Արովյանին գաղանաբար սպանել են ու դիմակը նետել գետը: Մի երրորդ հնթաղրությունն էլ այն է, որ «Արովյանը մի խավար լուսկել մեջ մահու է տվել յուր անձը», այսինքն անձնա-

Նպանություն է գործել: Միքայել Նալբանդյանը ենթադրում էր, որ նա եղել է Ներսես կաթողիկոսի զոհը:

Այս բոլորն էլ ենթադրություններ են: Մինչև Հիմա էլ Աբովյանի անհայտացումը մնում է մի առեղծված: Ենթադրություններից ո՞ր մեկն էլ ճիշտ դուրս կա, պարզ է միայն մի բան— նա խավար ժամանակների զոհն է:

Աբովյանն իր կյանքի վերջին տարիները հոգեկան խոռվի մեջ է անց կացրել: Մի խոր հուսախաբությամբ պաշարված՝ նա ողբում էր իր վարդապույն հույսերի կործանումը: Խուս պետականությունն այլև չէր ներշնչում այն հույսն ու հավատը, որ ուներ տարիներ առաջ: Այլև Հայաստանի համար քաղաքական ազատ ու անկախ ուղի չէր տեսնում նա: Երեանը գրավելուց հետո կազմակերպված «Հայկական մարզը», որ ինքնավարության պատրանք էր ներշնչում շատերին, լուծարփ ենթարկվեց: Հայկական գավառները հեղեղվեցին շինովնիկներով: Խուսական դահը նոր շղթաներ էր դրել հայ ժողովով ոտներին: Էջմիածինը նույնպես հալածում էր Աբովյանին: Պաշտոնյաները դավեր էին սարքում նրա դեմ: Իշխանության աշխում Աբովյանը մի կասկածի դորպատական էր: «Կարծում էի, թե ամեն սհաթ Սիբիրն է իմ վերջը»,— ասամ է իր մասին Աբովյանը:

Պարզ է սակայն, որ նա ընկավ հայ նոր գրականության համար մղած հանդուղն, բայց անհավասար կովի մեջ՝ շկարուդանալով դուրս գալ կյանքի տառապնալից հակասություններից:

Աբովյանը Այն պատմական իրականությունը, որի մեջ լուսավորիչ միհակվեց Աբովյանին իր գործունեությունը նըն սկսել, նրան ստիպեց ձեռք զարկելու ամեն ինչի: Ինչպես ամենուրեք լուսավորիչը, այնպես էլ մեղանում Աբովյանը մի կենդանի հանրագիտարան է եղել: Այդպես են եղել բոլոր լուսավորիչները. կեսսինքը Գերմանիայում, Խուսան, Դիզուն և ուրիշները Ֆրանսիայում, Գերմիշևսկին, Գորքոլյուտովը և ուրիշները Խուսաստանում: Լուսավորական շարժումը, ինչպես Եվրոպայում, այնպես էլ մեղանում ծնունդ առավ այն ժամանակ, երբ երկրում պատմական մի նոր փուլ սկսվեց, այսինքն ֆեոդալական հասարակության մեջ ուժեղացավ բորժուական հարաբերությունների զարգացումը: Լուսավորական շարժումը հանդիսավագ հենց այդ դարձակետի արտացոլումը, այսինքն այն գաղա-

փարական պայքարը, որ ժողովուրդը և դարաշրջանի առաջավոր մարդիկ մղեցին ֆեոդալականության դեմ:

Աբովյանի լուսավորական գործունեության էությունը ժողովագրությունն էր և նրա կուլտուրական վերածնունդը: Առաջավոր գաղափարներով զինված՝ վերադառնալով հայրեանիք՝ նա բազմապիսի գործունեություն ծավալեց, որ լուսավորություն տարածի իր ժողովրդի մեջ:

Բացի գրող լինելուց՝ Աբովյանը գործել է նաև որպես մանկավարժ, ազգագրագետ, բանահավաք: Աբովյանի լուսավորական գործունեության մեջ վիալուն էջ է կազմում մանկավարժությունը:

Ճանապարհորդ Մորից Վագներն իր ուղեգործությունների մեջ սքանչացած նկարագրում է այն բոլորը, ինչ տեսել է Աբովյանի դպրոցում, Թիֆլիսում: Նույնը պատմում են և ուրիշները. «Մինչև չե այժմ,— վկայում է նրա ժամանակակիցներից մեկը՝ Կարլ Կուլը,— Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, որը նման սիրով և այնպիսի զոհաբերությամբ նվիրված լիներ մանուկների դաստիարակության գործին... Սակայն, դժբախտաբար, Աբովյանին ցուց չեն տալիս արժանի վերաբերմունք: Զինովյանիների նելսությունը հաճախ ու շատ է խանդարում նրան առաջ տանելու իր ազնիվ ու բուռն ձգուամները»:

Աբովյանը հմուտ մանկավարժ էր: Բայց նբա մեծությունը միայն լավ և հմուտ ուսուցիչ լինելու մեջ չէ, այլև այն բուռն ձգտման, որով նա փորձեց ոեփորմների ենթարկել հայկական դպրոցը: Նրա մեծությունը այն եռանդուն պատերազմի մեջ էր, որ նա հայտարարեց միջնադարյան սխոլաստիկային:

Դպրոցական գործի գլուխ անցնելով, Աբովյանն իր աշակերտների համար կազմեց լեզվի, քերականության, աշխարհագրության, պատմության դասարարքեր ու ձեռնարկներ: Նա նույնիսկ կազմեց ուսաց լեզվի տեսական և գոբծնական քերականություն հայ պատանիների համար:

Աբովյանը եղել է ուսուաց լեզվի և ընդհանրապես ուսուական կուլտուրայի եռանդուն պրապագանդիստը: Նա շատ մեծ նշանակ կություն էր տալիս ուսուաց լեզվի տարածմանը հայերի մեջ: Վերոհիշյալ քերականության առաջարանում նա զրում է, որ շատ քիչ հայեր գիտեն և տիրում են ուսուաց լեզվին: Աբովյանն ա-

ողով է, որ արևելյան և արևմտյան լեզուներից ոչ մեկն այնքան օգտակար լինել չի կարող հայ ժողովրդին, որքան ոռուաց լեզուն, որի հարստությանը լուսավորված ազգերն ևս կնախանձեն: Ոռուաց լեզուն սովորելով, + նկատում է Աբովյանը, — ամենք կարող կլինենք միանալ ոռու մեծ ազգին, նրա ոգուն, որի միայն անունն ամենքին, մինչև իսկ օտարին, ներշնչում է սեր և անձնվիրություն»:

Աբովյանի կազմած ձեռնարկների մեջ ամենանշանակորը «Նախաշավիդ»-ը մի կատարված հեղաշրջում էր հայ մանկավարժական աշխարհում: «Նախաշավիդ»-ը եղավ դեմոկրատական սկզբունքների պաշտպանությունը մանկավարժության մեջ՝ ընդդեմ կղերա-ֆեոդալական միջնադարյան մտայնության:

«Նախաշավիդ»-ը այբբենարան է իր ընթերցարանով: Այդ գիրքը եկավ փոխարինելու սաղմոսին, կտակարանին և ժամագրին, որոնք անգիր սերտելու համար հայ մանուկներն օր ու գիշեր գլուխ էին ջարդում: Աբովյանը պահանջում էր ճանաչել մանկան հոգին, նրա միտքը շծանրաբեռնել ժամագրիի խրթին գրվածքներով, որոնք ինչպես Աբովյանն է ասում, միանգամայն օտար և անսովոր են դեռահաս մանուկների սովորական լեզվին, հոգեկան կարողության և բնական հետաքրքրություններին: Աբովյանը «Նախաշավիդ»-ով պահանջում է մեկ ընդմիշտ հրաժարվել «գրերի անունները» տալու, այբ, բեն, զիմ դասավանդման միջնադարյան եղանակից: Նա փոխարենն առաջ է քաշում հնչական մեթոդ՝ ա, թ, գ, այսինքն տառերի բնական արտասանության ձեր: Աբովյանի այս մեթոդական առաջարկը, որ այժմ շատ սովորական բան է թվում, իր կիրառումը գտավ 60-ական թվականների վերջերին միայն: «Վերք Հայաստանի»-ից հետո «Նախաշավիդ»-ը գրաբարի դեմ մղած պայքարի ամենացայտուն արտահայտություններից էր: Գրաբարի խրթնաբանությունը — ասում է Աբովյանը, — պատճառ է, որ ուսումը երեխաներին սոսկալի պատիժ թվա, դպրոցը՝ տանջարան: «Նախաշավիդ»-ի մեջ Աբովյանը գրաբարը փոխարինում է ոչ թե արարատյան գավառաբարբառով, ինչպես «Վերք Հայաստանի»-ի մեջ, այլ գրեթե մաքուր գրական լեզվով: Հայ նոր գրական լեզվի ստեղծման գործում «Վերք

Հայաստանի»-ի համեմատությամբ սա արդեն մի մեծ քայլ էր դեպի առաջ:

«Նախաշավիդ»-ը Աբովյանի միակ գրվածքն է, որ հեղինակի կենդանության օրոք տպագրվել է: Բայց լույս չտեսած՝ գիրքը հայ կղերականության գոհը դարձավ — արգելվեց: Գրքի հատ ու կենտ օրինակները միայն տարածվեցին:

Աբովյանի վրա մեծ է եղել ֆրանսական լուսավորիչների, օրինակ, Ժան-Ժակ Ռուսոյի ազդեցությունը: Բացի այն, որ Աբովյանի մանկավարժական հայացքները կազմավորվել են Ռուսոյի գաղափարների ազդեցության տակ, այլև Աբովյանը ձեռնարկել է նրա մի վիպական նամականիկ՝ «Նոր Ելոիզի» թարգմանությանը, որը, գժբախտաբար, անավարտ է թողել: Զարմանալի չէ, որ Աբովյանը կամեցել է հայ ժողովրդին ծանոթացնել Ռուսոյի այն գրվածքին, որը ֆրանսական մեծ լուսավորիչը հանդես է գալիս իբրև մարդու ազատության և երջանկության պաշտպան:

Ռուսոյն վիպական ձևով «Էմիլի» մեջ արտահայտել է իր մտքերն ու համոզումները երեխայի դաստիարակության մասին: Նույն է և Աբովյանի «Տիգրանի պատմությունը»: Աբովյանն էլ Ռուսոյի նման իր մանկավարժական հայացքները երեխայի դաստիարակության և նրա բարոյական կրթության մասին շարպերէ՝ վիպական բնույթ տալով իր գրվածքին, գործող անձեր դուրս բերելով և նրանց օրինակի վրա՝ զանազան դեպքերի միջոցով արտահայտելով այս կամ այն մանկավարժական սկզբունքը:

«Էմիլի» մեջ Ռուսոյն քարոզում է երեխային բնության մեջ դաստիարակելու, բնության երևութների կենդանի ծանոթության միջոցով կրթելու անհրաժեշտությունը: Մանկան մտքի և հոգու դաստիարակության հետ Ռուսոյն ընդգծում է նաև ֆիզիկական դաստիարակության կարևորությունը և երեխային մանկուց մարդասիրական գաղափարներ ներշնչելու հարկավորությունը: «Պատմություն Տիգրանի» մանկավարժական վեպում Աբովյանը նույն մտքերն ու հայացքներն է զարգացրել:

Այս վեպը, որ «Վերք Հայաստանի»-ից հետո Աբովյանի անհնարնդարձակ գործն է, գժբախտ ճակատագիր ունեցավ. զբրութած լինելով 40-ական թվականներին՝ մինչև վերջին ժամանակա-

Ները անտիպ մնաց, և մոտ Հարյուր տարուց հետո միայն լույս սշխարհ եկավ:

Աբովյանի համարձակ միտքը դպրոցների և ընդհանրապես կրթական գործի բարեշրջման հանդուգն ծրագիր առաջադրեց: Բացի այն առաջարկներից, որ բղսում էին դպրոցը և ընդհանրապես ուսումնական կյանքը հիմքավական հիմունքներով՝ կազմակերպելու գաղափարից, Աբովյանն այն խավար ժամանակներում պահանջում էր մի որոշ հասակի համար (7—8 տարեկանից մինչև 14 տարեկան հասակը) ուսուցումը պարտադիր դարձնել և տմեն տարի, բոլոր դասակարգերից անխտիր, լավագույն աշակերտներին ուղարկել բարձրագույն ուսումնական հաստատությունները, առևտրական, տեխնիկական, գյուղատնտեսական ինստիտուտները, որպեսզի դրանով ապահովի աշակերտների ապագան և հաստատուն դառնա երկրի հետագա զարգացումը:

Աբովյանն ամբողջ Կովկասում և տեղական իշխանություններին հայտնի էր իրեն Հայաստանի պատմությանն ու նրա հետաքրքիր վայրերին հմտութ ու քաջ ծանոթ մարդ: Հենց որ եվրոպացի գիտնականներ ու ճանապարհորդներ էին գալիս, Աբովյանն ազատվում էր պաշտոնի պարտականություններից և նշանակվում նրանց ուղեկից: Նա շրջապայել է Մորից Վագների, Հաքստհաուզենի, Ֆրիդրիխ Բողենշտետի, Արիխի, Սեյմուրի և ուրիշների հետ: Բոլոր ճանապարհորդներն էլ իրենց ուղեգործությունների մեջ ոչ միայն հիշում են Աբովյանին, այլև առանձին գլուխ հատկացնում նրան:

Բացի այն, որ Աբովյանն իր շրջապայություններն օրագրել է, այլև Արարատի գագաթը բարձրանալու կապակցությամբ գրել է երկու հոդված՝ մեկը գերմաներեն, մյուսը՝ ռուսերեն: Սուազին հոդվածը նա գրել է 1834 թվին և տպագրել Պետերբուրգի գերմանական լրագրում: Այդ հոդվածի առիթը դիտական աշխարհում բարձրացած այն վեճն էր, որը կամկածի տակ էր առել Պարուտի վերելքն Արարատ: Աբովյանի հոդվածը՝ որպես վկայություն հոգուտ Պարուտի միանգամ ընդմիշտ վերց դրեց սկսված վեճին:

Երեկով երկիրը՝ Աբովյանը մոտիկից ծանոթանում էր ժողովրդի սոցիալական տնտեսական վիճակին, նիստ ու կացին, սովորություններին, կենցաղին: Գյուղական կյանքի վարք ու

բարքի հմուտ նկարագրությունը նա տվել է «Վերք Հայաստանի» վեպում: Բայց նրա ազգագրական ուսումնասիրություններից լավագույնը «Քրոնիկ» հոդվածն է, որ նա գրել է ուսաերեն լեզվով: «Քրոնիկ»-ը տպագրվել է Աբովյանի անհայտացման տարին, 1848 թվին, «Կավկազ» թերթում: Բացի այն պատմական տվյալներից, սովորութիւնը ու կենցաղի նկարագրերից, որ հաղորդում է Աբովյանը, հոդվածն ընթերցողին համակում է շերմ սիրով դեպի բողոքությը, նրա բանաստեղծական հոգին: Հայ գրականության մեջ քրոնիկի մասին եղած հոդվածների մեջ մինչև այժմ էլ լավագույնը մնում է Աբովյանի գրածը:

Աբովյանը հավաքում էր նաև ժողովրդական ստեղծագործությունը: Բացի այն, որ Աբովյանի բոլոր գործերի մեջ առատ կերպով օգտագործված է ֆոլկորը, ժողովրդական բառն ու բանը, այլև նա երազում էր հավաքել այդ բոլորը, որ չկորչի: «Վերք Հայաստանի»-ի առաջաբանում նա ասում է, թե կուգենար հանդիպել մի հարստի, որ ապահովեր իր կյանքը, իսկ ինքը գյուղեցուղ ընկներ և հավաքեր ժողովրդի միջից դարերի ընթացքում ստեղծված նրա հոգեոր գանձերը: «Առակ, մասալա, սուր-սուր խոսքեր՝ որ ուզենաս հո են հետին ուամիկ մարդը՝ մեկի տեղակ հազարը կասի», — ասում է Աբովյանը:

Գերմանացի բանաստեղծ Բողենշտետի խնդրանքով Աբովյանը հավաքել է նաև քրդական և աղբեշշանական ժողովրդական երգեր: Առաջին մարդը հայ իրականության մեջ, որ սկսել է հայագել և գրի առնել ֆոլկորը, եղել է Աբովյանը:

Աբովյանի սեեղծագործությունը Աբովյանի բազմազան գործունեության առավել կարևոր օղակը գեղարվեստական գործությունն է: Աբովյանը ոչ միայն պատերազմ մղեց լուսավորության գաղափարների համար, այլև եռանդուն կերպով նախաձեռնեց նոր գրականության ստեղծմանը:

Աբովյանի գրական վաստակը նույնքան բազմազան է, որքան և նրա գործունեությունը: Աբովյանը բազմաժանը հեղինակ է: Գրականության հիմքը դնելով, նա մշակել է գրեթե բոլոր գրական ժանրերը: Երկեր է ստեղծել ոչ միայն արձակ և շափածո, այլև դրամատիկական: Գրեթե ոչ մի ժանրը չի գրիպել նրա աշքից, վիպ, պատմվածք, բանաստեղծություն, երգ, քառյակ, պիես,

առակ, մանկական ոտանավորներ, հոգված, ուղեղություն և այլն՝ նա արել է նաև թարգմանություններ։ Աբովյանը հատվածներ է թարգմանել Հոմերոսի «Իլիականից», բանաստեղծություններ՝ Գյոթեից, Շիլերից, Կարամզինից, առակներ՝ Կոփլուից և ուրիշներից։ Միանգամայն հասկանալի է այդ. կյանքն էր այդպիս պահանջում։ Նա պիես էր գրում, որ գպրոցում աշակերտները խաղան, մանկական ոտանավորներ էր գրում, զվարճալի պատմություն հորինում, որ լեզվի դասագրքերը նյութ ունենան, բայաթիներ ու երգեր էր գրում, որ հայն իր լեզվով երգելու երգ ունենա. վեպ ու պատմվածք էր գրում, որ ժողովորդը կարդալու փոք ունենա։

Բանասեղծությունների առաջին գրվածքը՝ չափածո է։ Թի ընդհանրապես ե՛րբ է նա սկսել գրել,
Ենր եվ առակներ հայտնի չէ, թվակիր բանաստեղծությունների մեջ ամենավաղը երկուսն են, որ գրվել են 1824 թվին, այսինքն այն ժամանակ, երբ Աբովյանն ընդամենը տասնհինգ տարեկան էր։

Հայրենիքին ծառալելը, ժողովորդին օգտակար լինելը, նրա համար կյանք զոհաբերելը Աբովյանի ինչպես գործունեության, այնպես էլ բանաստեղծության հիմնական գաղափարն է։

Իմ էն քաշած շոմն էլ մահ էր աշքիս,
Երբ չէի կարում պետք գալ ազգիս, —

անում է Աբովյանը «Աղգասեր մարդը իր մեռնելու վախտը» ոտանավորում։ Դժբախտաբար Աբովյանի չափածոյի մեծ մասը գրաբար է։ Աշխարհաբար է գրել նա մեծ մասամբ այն բանաստեղծությունները, որոնց ուղեցել է երգի բնույթ տալ։ Ահա դրա համար էլ, բացի հայրենի վշտին նվիրված բանաստեղծություններից, նա հյուսել է նաև սիրային երգեր։

Առանձնապես հետաքրքրական են նրա բայաթիները, որոնք ժողովրդական շանգյուղումների նմանությամբ հյուսված քառյակներ են; Նյութը գեղջկական սերն է։ Հույզի զարմանալի շերմությամբ գրված քառատողերի մեջ բանաստեղծն արտահայտել է սիրուց այրված հոգու անկեղծ հառաջը։

Կանաչ են սար ու ձոր,
Զենս բարակ, սիրոս խոր.
Հոգիս էլ տամ, չես լսի,
Ի՞նչ ես ընկել սար ու ձոր։

Սիրո մրմունչը հոգում՝ բանաստեղծը մտորում է նաև աշխարհի շարի ու բարու մասին, բողոքում է բանության, ու սոցիալական անարգարության դեմ։ Եթե հարուստ ես՝ «ամենքի աշքի լիսն ես», աղքատ ես՝ «ով է նայողը։ Աշխարհը նրանն է, ով ուժ ունի, ձեռքին էլ թուր։

Տա՛ր էդ հավին՝ ա՛յ ուրուր,
Աշխարքս դանակ ա ու սուր:
Ջոռ մարդի թուրն ա կտուր,
Խեղճն ո՞ւր կորչի, ա՛խ, ո՞ւր, ո՞ւր։

Թրուլանի բայաթիներում արտահայտվել է նաև հայրենասիրական մոտիվը («Անի»): Ժողովրդական երգերի ոգում հարազատմնուով՝ Աբովյանը հյուսել է իր բայաթիները, որոնք թումանյանի բայականերից շատերի հեռավոր նախատիպն են։

Հետաքրքիր կառուցվածք ունեն բայաթիները։ Ինչպես բոլոր գրածքների, այնպես էլ բայաթիների հիմնական շաղախը հույզն է, հուզականությունը։ Ժողովրդական ոճն ու զարձվածքը արևելյան գոնագեղություն, հյութեղություն են հաղորդել երգերին։ Հանգավորումը ոչ միշտ, բայց մեծ մասամբ կառուցված է բառխաղերի վրա, որ մի առանձին աշխատություն է մտցնում։

Ահա մի երկու օրինակ։

Ի՞նչ էս տանջվում՝ ա՛յ նաշար
Հալբաթ վատ է ու նա շար։

Էս օր գնացինք բաննարի,
Խելք ունես, մեկ քան նարի։

Ընկել եմ ա՛խ՝ սարեսար,
Առաջ ծով սա՛ր է սար և այլն։

Աբովյանի մշակած ժանրերի մեջ աշքի ընկնող տեղ է բլունում երգիծականը։ Առակների մի մեծ շարք է մշակել նա, որ հայտնի է «Պարապ վախտի խաղալիք» ընդհանուր վերնագրով։ Առակներից շատերը նա վերցրել է ժողովրդից։ Մեծ մասը,

ինչպես օրինակ, Մոլա Նասրեդիքինի հետ կապված զրուցները, թափառաշրջիկ սյուժեներից է, որ պատմվում են արևելյան բոլոր ժողովուրդների մեջ: Աբովյանը ժողովրդի, կամ ինչպես ինքն է, ասում, «խաղաղի խոսած բաներն է հավաքելու»: Բացի այդ, նա թարգմանել է եկողութական (Հաֆոնտեն) և ոռաական նշանավոր տուակախոսների (Խեմնիցեր, Կոփլով) գործերից, բայց, իհարկե, զրանք ավելի շուտ փոխադրություններ են: «Պարապ վախտի խաղալիք»-ի առաջաբանում ինքն էլ է ասում, «Թարգմանածներս էլ էնպես եմ դուրս ենթել, որ մեր խալսի սրտովն ըլնիս»:

Աբովյանի ամեն մի առակի հիմքում ընկած է որոշ բարոյախոսություն, նա ծաղրում է տպիտությունը, միամտությունը, համառությունը, խորամանկությունը, շարաշահությունը և այլն: Աբովյանի առակների մեջ քիչ չեն և այնպիսիները, որ մերեցնում են սոցիալական անհավասարությունը.

«Ով զոռ ունի, հենց անձարի գլխին
է քացի տալիս, հանում աշքը, հողին»:

Կենդանական աշխարհի բոլոր ներկայացուցիչները, ինչպիս լրնդանրապես առակներում, այնպես էլ Աբովյանի առակներում, անձնավորում են որեն հատկություն՝ համառություն (էշ), խորամանկություն (աղվես), միամտություն (գառ) և այլն: Բայց այն, որ պատմված զետքից ընթերցողը կարող է հանել համապատասխան բարոյախոսական եղբակացություն, Աբովյանը ըստ զրգբից կամ վերջից մի քանի տողով ամփոփում է առակի գըլ-խավոր իմաստը: Մի օրինակ.

«Մարդի առջին քանի որ կուշ գաս,
Գըլիսիդ կընստի, թե լավ իմանաս»:

Փրկությունը լուսավորությունն է, ուղղում ես շարիքից ազատվել, պետք է կրթված լինեմ, գիտուն: Այս գաղափարը, որով տոգորված է Աբովյանի ողջ գործունեությունը, նա անց է կացրել նաև առակների մեջ.

Ով էս աշխարքումն որդու լավությունն
Կուզի, թող տա նրան շնորք, կրթություն:
Խաղինա, գովլաթ կերթան, կիշանան,
Մարդիս իր ուսումն կմնա միայն:

Աբովյանի երգիծական դործերից է նաև «Հազարփեշեն» չափածությունը:

Աբովյանը նկարագրել է մի չինովնիկի, որը կովկաս է գտնիս խարելու, տեղացիների հաշվին հարստանալու, որին, սակայն, կովկասցիները պատասխանում են արևելյան հարուստ կայս, կովկասցիները պատասխանում, մի լավ ձեռ հյուրասիրությամբ, ունի խմեցնում, հարբեցնում, մի լավ ձեռ առնում և ճամբար ցցում:

Աբովյանն այս գրվածքով ծաղրել է ոչ միայն մայրաքաղաքացիքի բարձր դասի շռայլ կյանքը, այլև նրա արհամարհական վերաբերմունքը գեպի կովկասյան ժողովուրդները:

Ասիացի մարդն զակոն ի՞նչ գիտի,
Որ քեզ հետ խոսա կամ համարձակվի:
Գլխին տո՛ւր, զրադին կանգնի՛ր, քեզ արա՛,
Զերդ լցրո՛ւ, քո եղկիր զնա՛:

Այդ բոլորին Աբովյանը հակադրում է կովկասյան ժողովուրդների միասնությունը, «Հայի մուշտին և վրացու քացին»:

Աբովյանի արձակի մեջ աշքի է ընկնում ժողուրդի աղջիկը «Յուրքի աղջիկը» պատմվածքը:

«Յուրքի աղջիկը» պատմվածքում Աբովյանը պատմում է, թե ինչպես ինքը հեղինակը ամրան մի օր, երբ «երկնքից կրակ էր վեր թափում», փողոցներն ընկած ուզում է մի հով տեղ գլուխը զնի ու մի քիչ շունչ առնի: Քաղաքի ծայրն հասնելով՝ մտնում է մի այգի: Նա վկա է գանում թուրքական թաղման տիսուր տեսարանին: Երբ թաղումը վերջանում է, պատմողի ականջին աղեկտուր լացի ձայն է հասնում: Գնում տեսնում է՝ մի թուրք աղջիկ գառն արցունք թափելիս: Հարց ու փորձ է առնում: Զահել աղջիկն ասում է, թե ինքը գերի է տգետ ու բռնակալ հոր ձեռքին, բանտարկված է տանը աշխարհից ու մարդկանցից կտրված: Տեսնելով, որ աղջկա հայրը գալիս է, երիտասարդը թրուշու աղերսով հեռանում է, որ փորձանք շպատահի:

Ինչպես այս, այնպես էլ հեղինակի մյուս գործերը, գրված են միայն Աբովյանին հատուկ չերմ հուզականությամբ:

«Թուրքի աղջկա» մեջ Աբովյանը, կարծես, նպատակ մի ուշ նեցել որևէ սյուժե զարգացնել, ինչպես այդ լինում է, սովորաբար, ամեն մի պատմվածքում։ Իր կյանքից մի դեպք վեր առնելով, նա մի սրտառուշ գործ է կառուցել։ Նրա համար, կարծես, այդ հիշողությունը միայն առիթ է, որ նա բացվի ընթերցողի առաջ ու պատմի իրեն հուզող, իր միտքը զբաղեցնող հարցերի ու խնդիրների մասին։

«Թուրքի աղջկա» գաղափարական առանցքը մարդասիրությունն է։ Այդ հիմնական գաղափարի շուրջն էլ խմբվում են մյուս հարցերը, ինչպես, օրինակ, բնության, ազգերի փոխարաբերության, կրոնի խնդիրները։

Բնությունը Աբովյանին հմայում է ոչ միայն իր զարմանամերաշ գեղեցկությամբ, այլ ամենից առաջ իրեւ տիեզերական տարերք, որ ստեղծագործության և բարիքի անսպառ աղբյուր է հանդիսանում մարդու համար։ Անսահման սերը գեղի բնությունը, կամ, ավելի ճիշտ, բնապաշտությունը, կամ այն, ինչ փիլիսոփայության մեջ պանթեիզմ է կոչվում, Աբովյանի աշխարհըմբռնման գծերից է։

Բնությունը նա դիտում է իրեւ կենսական հաճույքի ակունք և այն հակադրում է միջնադարյան-կղերական քարացած մտաշնությանը, որի հիմքը կազմում է ասկետիզմը, ճգնավորական կյանքը։

Երբեմն Աբովյանի պանթեիզմն այնքան է խորանում, որ նա աստծուն նույնացնում է բնության հետ և տարերքը համարում տիեզերքի ամենազոր արարշագործության աղբյուր։

Մարդը բնության մի արտահայտությունն է, իսկ աստված՝ դա ինքը մարդն է, մարդու էությունը՝ արտահայտության բազում ձևերով։ Բնությունը հավասար ու նման է ստեղծել մարդկանց, որ նրանք «աստվածային սիրով վառված» իրենց նմանին սիրեն, նրա բարին կամենան։

Աբովյանը խտրություն չի դրել մարդկանց մեջ՝ չնայած նըրանց տարբեր հավատին ու ազդությանը։ Տարբեր կրոնի ու ազդության պատկանելով, միևնույն է, Աբովյանի կարծիքով, մարդը նոնամ է մարդ՝ իրեւ բնության ստեղծագործությունը։

«Թուրքի աղջկա» մեջ Աբովյանը վկա լինելով թուրքական թաղմանը, ասում է.

«Խաղաղություն հոգուդ՝ հանգուցյալ մարմին, այ իմ պատշերակից հողածին։ Հավատներս մեկ չի, սիրտներս հո մեկ ա, մեր ժամը չեիր գալիս՝ մեկ երկնքի տակի, մեկ երկրի երեսի էիր հո ինձ հետ կենում, ման գալիս, լեզուդ իմը չէր, պատկերդ, հոգիդ հո իմիցն էր։ Տերտեր չի քեզ թաղում, մոլլեն էլ հո աղոթք անում, չի հայհոյում։ Խաչ, ավետարան չկա վրեդ, միւնույն հուղի տակը չես մտնում, ուր որ ես էլ պիտի մտնեմ։ Խոսնկ ու մոռ չեն վառում, չեն ծխում, մկամ աշք չի, որ վրեդ լալիս ա, սիրտ չի, որ քեզ համար էրվում ա։ Բայ ես քարի պես պիտի նայեմ, որ քրիստոնյա եմ, ու աշք շխիեմ»։

Մահով մարդը վերստին բնությանն է դառնում։ «Երկնքի վարձքն ու փառքը մարդոց համար ա»։ Ո՞չ թե ի՞նչ ազգի ես պատկանել, կամ ի՞նչ հավատի եղել, այլ ի՞նչպիսի մարդ ես եղել։ «Թե բարի էիր, չես կորչիլ», — այս է Աբովյանի եղանակացությունը. կշռաշափը մարդն է, նրա գործը։

Աբովյանը թշնամի էր ազգայնականության։ Նա ժողովուրդների եղանակացության քարոզիչն էր։

Աբովյանի գրական փառքը «Վերք Հայաստանի» տանիք պատմական վեպն է։ Այդ վեպը այն եղանակի գիրքն է, որ հայ նոր գրականության հիմնաքարը հանդիսացավ։

«Վերք Հայաստանի»-ն Աբովյանն սկսել է գրել դեռ 1838 թվից։ Ավարտել է 1840 թվին։ Հեղինակի կենդանության օրով շի տպագրվել։ «Ո՞վ գիտի՝ բարի թե մեկ աստվածասեր մարդ իր հոգու խաթեր տպիլ տա», — հույս է հայտնում Աբովյանը մի տեղ։ Աբովյանի մահից հետո, 50-ական թվականներին, «Վերք Հայաստանի»-ն արտագրված ձեռքից-ձեռք անցավ։ Վեպի ձեռագիրը օրինակը նույնիսկ Դորպատ հասավ։ Դորպատի հայ ուսանողները գիշերներ են լուսացրել վեպի վրա, արցունքով թրչել նրա էջերը։ Շատերի համար «Վերք Հայաստանի»-ն հայրենասիրական ներշնչումների աղբյուր դարձավ։ Վեպի առաջին տարածողները եղան Աբովյանի աշակերտները, որոնց մոտ դեռ 1838 թվին նա մի քանի հատված կարդացել էր։

1858 թվին «Վերք Հայաստանի»-ն լույս տեսավ Թիֆլիսում, իրավաբան Հ. Փոնդոյանի և Աբովյանի պանսիոնի սան Գ. Աքիմյանի ջանքերով։ Վեպը մեծ հաջողություն ունեցավ։ Պերճ Պոլշ-

Դանը պատմում է այն մեծ տպավորությունը, որ գործել է իռ Աբովյանի երկը: Պողոցանն այնքան է կլանվում վեպով, որ մի անգամ կարդալուց հետո նույն գիշերը երկրորդ անգամն է սկսում: «Վերք Հայաստանի»-ի ազդեցության տակ նա սկսում է գրել իր անդրանիկ վեպը՝ «Սոս և Վարդիթեր» վերնագրով: Միայն Պողոցանը չէր հափշտակված Աբովյանի վեպով: «Վերք Հայաստանի»-ն մեծ ազդեցություն թողեց բոլորի վրա: 1859 թվին «Հյուսիսափայլ»-ի էջերում Միքայել Նալբանդյանը բարձր գնահատական է տալիս Աբովյանի գրվածքին՝ այն համարելով մեր առաջին ազգային վեպը:

Հազիվ թե կարելի լինի ցույց տալ մի հայ գրողի, որ հիացմունքով խոսած վկինի «Վերք Հայաստանի»-ի մասին. Ախվերդյան, Նազարյան, Աղայան, Շահազիզ, Իսֆիի, Փափազյան, Հովհաննիսյան, Թումանյան, Շատորյան, Տերյան, Խաչակյան և շատ ուրիշներ: Հիացմունքով է խոսել «Վերքի» մասին նաև մեծ ուսուցիչներ Ստեփան Շահումյանը:

Վեպի բովանդակությունը բարեկենդան է: Բոլորն ու Կուրյունը բախության մեջ են: Մի տեղ զուտնան էր փշում, մի ուրիշ տեղ ճժամանակի էին խաղում, մի երրորդ տեղ փահլեաններ էին կոխ բռնում: Մանր տղեղքն էլ ձնագնդի էին խաղում, աշբակապուկ... Մի խոսքով՝ դափ ու զուտնի ձենն ու հարայշոցը աշխարհ էր բռնել: Մարդիկ տներում, փողոցում, կտուրներին քեֆ էին անում, ուրախանում,

Ուրախությունը հանկարծ փոխվում է սպի:

Մարդարի հրամանով ֆարաշները գլուղ էին եկել «աղջկաշելուա: Եկել էին տանելու թագուհուն, գլուղի ամենասիրուն աղջկան: Ով կարող էր ձայն-ծպտուն հանել— սարդարի հրամանն էր: Վախկոտները փախել, տներն էին մտել: Սրտունները՝ մնացել էին նայելու, թե ինչպես են տանում խեղճ աղջկան: Միշտ շամտող շկար: Միայն աղջկա մայրն էր, որ ֆարաշների ձեռն ու տաներն ընկած՝ չեր թողնում աղջկան տանել:

Լաց ու կոծի մեջ հանկարծ երեսում է Աղասին իր ընկերներով: «Քանի էս կուտը վրես ա, դուք էստեղանց թել չեք կարող գուրս տանիլ» ասելով՝ Աղասին թոցրեց ֆարաշներից մի երկուսի գլուխը: Մյուաներն այս որ տեսան, թողին փախան: Բոլորը գիշելին, որ սարդարը դրա համար խիստ պատիժներ կտա:

Աղասին ընկերներով փախչում է լեռները, որ անցնի «ոռուսի հողը»:

Ֆարաշները նորից գյուղ լցվեցին. տուն էր, որ քանդում է-ին: Փախածներին էին որոնում. նրանց հերն ու մերը, օղուշաղը թրի տակ առած՝ մեկ սհաթի միջումը, որի շլինքը թոկ գցած, որի ձեռները ետևին կապած՝ ոշխարի պես առաջ արին, որ տանեն սարդարի գուրը:

Աղասին իր ընկերների հետ հաստատվում է Անիում: Ճինակուրց քաղաքի ամեն մի քարը նրա համար դիրք էր, ամեն մի ապառաժը, ավերակը՝ պատմություն, որ բացում էին Աղասու առաջ հայ ժողովրդի երբեմնի փառահեղ անցյալը:

Աղասու խոմքը հաստատվելով Անու ավերակներում, մի շարք սիրազործություններ է կատարում: Սկզբում նրանք գուրդ ավաղակների ձեռքից աղատում են մի խումբ հայ կանանց և տղամարդկանց, հետո էլ նազի խանի ու Օքյուզ աղայի ձեռից փրկում են մի քանի հարյուր հայ գերիների, որոնց Ղարսից տանում էին երեսն հավատափոխության: Աղասու խոմքը Հասան խանի ձեռից աղատում է զերի ընկած հայերի մի մեծ բազմություն:

Այդ նույն ժամանակները Խըլդարաքիլսին ոտի էր կանդնել և այլս չեր ուզում գլուխ թեքել պարսկական տերության առաջ: Իմանալով այդ, Հասան խանը իր զորքի գլուխն անցյած, հասնում է տեղ՝ և փորձում ընկծել խըլդարաքիլսիցիների հանդգանությունը: Հասան խանին օգնության են հապնում Օքյուզ աղեն, նազի խանը և ուրիշները: Բայց ուինչ չի օգնում: Չի օգնում անգամ երեսնցի Սահակը, որին Հասան խանը ուզարկել էր խրատելու ապստամբներին: Հասան խանը կատաղի գրոհի է անցնում: Անհավասար կտիվը խըլդարաքիլսիցիների պարտությամբ կվերջանար, եթե լիներ Աղասու խմբի անակնկալ միջամտությունը:

Սկսվում է ուսու-պարսկական պատերազմը:

Հայկական գյուղերը մատնվում են հրի ու սրի: Ժողովուրդը կոտորվում է: Մի մասը փախչում է լեռները, ձորերը: Ակսում են գաղթել դեպի ուսուների կողմը: Ահա այդ ժամանակ Աղասին ներկայանում է իշխան Մադաթովին: Հայտնելով, որ փափագ

ունի Երևանը «զվարացներից» ազատված տեսնել, ուզում է ծառացել ուսաց բանակին՝ պատերազմի ժամանակ:

Ուսաց զորքերը մտնում են Երևան, պաշարում բերդը: Նըրանց մեջ է Կտրիճ Աղասին, որ պատերազմում աշքի էր ընկել իր քաշագործությամբ: Նա շտապում է բերդ՝ ազատելու հորը, որ իր փոխարեն պատմվել էր սարդարի ձեռով: Աղասին գտնում է հորը, փաթաթվում է նրան իր կարուն առնելու, բայց հյուծված ծերունին մեռնում է որդու գրկում: Դարան մտած թշնամիները, որ վրեժով էին լցված Աղասու դեմ, դաշունահար են անում նրան: Հոր կողքին փովում է նաև որդու՝ Աղասու դիակը:

Պետի Աբովյանի վեպը վերածնության շոշանի «Հառաջաբանը» երկերի նմանությամբ «Հառաջաբանով» է բացվում: Այդպես է, օրինակ, Բոկաչիոյի «Դեկամերոնը», Սերվանտեսի «Իոն-Կիխոտը» և շատ ուրիշ նշանավոր երկեր համաշխարհային գրականության մեջ: Հեղինակներն իրենց առաջարաններով պարզաբանում են, թե ի՞նչը պատճառ եղավ, որ գրեցին այդ գործը, և ինչ գլխավոր միտք և նպատակ են հետապնդել գրվածքը հորինելիս: Այս տրադիցիային հետևելով՝ Աբովյանն էլ է «Հառաջաբան» գրել «Վերք Հայաստանի»-ի համար: «Վերքի» «Հառաջաբան»-ը գրված է ստեղծագործական ոգևորության գրեթե նմանը չունեցող բռնկումով: Դա ազնիվ զգացումների պոռթկումըն է, վեհ, բարձր մտքերի դարթոնքը, մեծ գործի հանդիսավոր սկիզբը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում այդ «Հառաջաբան»-ը: Աբովյանը պատմում է, թե ինչու «Վերքը» գրեց, նա պարզապես անում է հայ նոր գրականության հիմնադրման պատմությունը: Աբովյանը պատմում է, թե ինչպես իրեն համառ կերպով հետապնդել է, գրեթե իրեն հանդիսատ չի տվել «Հարիր Հազարին», այսինքն՝ ժողովրդին թե՛ լիզվով, թե՛ նյութով հասկանալի ու հետաքրիր գրերը ստեղծելու գաղափարը:

Բացի այդ, «Հառաջաբան»-ը կարեոր և հետաքրիրական է այն տեսակետից, որ այստեղ ըստ ամենայնի տեղ են գտել Աբովյանի հայացքները գրականության դերի և նշանակության մասին: Այսպիսով, Աբովյանի «Հառաջաբան»-ը փաստորեն եղել է հայ նոր գրականության հրովարտակը, նրա հետագա ընթացքի ու գարգացման ուղինիշ՝ ծրագիրը:

Այն բոլոր հարցերը, որ շոշափվում են Աբովյանի «Հառաջաբան»-ում, վկայում են նրա խոր ժողովրդասիրությունը:

Ի՞նչ էր պահանջում նա: —

Գրել ոչ թե կղերական, այլ աշխարհիկ կյանքի մասին, ժողովրդի վարք ու բարքից, նրա պատմությունից:

Բարձր գաղափարներ շոշափել գրվածքներում, մարդասիրություն ներշնչել ընթերցողին, սեր գարգացնել դեպի սեփական ժողովուրդն ու հայրենիքը, դեպի նրա պատմությունը, անցած ուղին:

Գրել պարզ հասկանալի լեզվով, այնպես, որ ժողովուրդն առանց դժվարանալու կարդա և հասկանա:

Գրողը միշտ պետք է մոտ կանգնի ժողովրդին, ուսումնասիրություն միայն նրա կյանքը, այլև նրա ստեղծագործությունը՝ հարի ոչ միայն նրա կյանքը, այլև նրա ստեղծագործությունը՝ հարի վարդապետական խոսքն ու զրուցը և հենվի ժողովրդական հանճարի վրա:

Այս բղորը բղխում էր ժողովրդայնության սկզբունքից, որի պաշտպանն է եղել հայ գրականության մեջ Աբովյանը: Ազգային պատմականություն ստեղծել և այն գարձնել ամբողջ ժողովրդի սեփականությունը, այդ գրականության միջոցով մարդասիրության և հայրենասիրության բարձր գաղափարներ տանել դեպի ժողովրդը, — այս էր ամենից ավելի Աբովյանին հուզում:

Աբովյանը գիտեր, որ իր համարձակ առաքելությունը թշնամաբար է ընդունվելու զրաբարը սրբագործող պահպանողական կղերական բանակի կողմից:

Եվ հայ նոր գրականության հակատագրի համար սկսված կովում Աբովյանին հուսադրողը աննկուն հավատն էր դեպի ժողովուրդը, դեպի վաղվա լուսավոր օրը, անընկճելի հավատը դեպի հջմարտության վերջնական հաղթանակը:

«Թո՛ղ ինձ այսուհետև տգետ կանչեն. լեզուս բաց ա էլե՛ի՛մ ընտիր, ազիզ, ի՛մ սրտի սիրեկան ազգ: Թո՛ղ տրամաբանություն գիտցողը իրան համբարի համար գրի, քո կորած, շվարած որդին՝ քեզ համար»:

Եվ Աբովյանը շսխալվեց: Գրելու օրից մոտ երկու տասնամյակ գլերք Հայաստանի»-ն մնաց փոշիների մեջ կորած: 50-ական թ., երբ արդեն թվով շատ էին Աբովյանի պես մտածող մար-

գիկ, նրա վեպը հրատարակվեց; Վեպը մտավ ժողովրդի մեջ և նվաճեց ժողովրդի հաստատուն սերը:

Վեպի ռեկր Հայաստանի-ն առաջին հայ ազգագիրը գային վեպն է, այսինքն մի գրվածք, որի մեջ պատկերագրված է հայ ժողովրդի կյանքը: Առաջինն այդ բանի վրա, ինչպես ասվեց, ուշադրություն է դարձրել Միքայել Նալբանդյանը: Նա ասում է, որ այդ վեպում նկարագրված են «Հայ ազգի ընտանեկան կյանքի անշուք և անմխիթար պատկեր-ները»: Իրոք, վիպագրով բացում է ձնշված ժողովրդի վերքը, նրա ողբերգական վիճակը պարսից տերության դաժան լծի տակ, «Փամանակն էնպիս էր ծովել, որ մարդ էր գլուխը չըր կարում պահի», — ասում է Աբովյանի գյուղացին: Հայ գյուղացին դժուն էր. «ոչ տունն էր իրանը, ոչ մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ոչ օղուշաղը»: Գյուղացոց խլել են ամեն ինչ: Խլել են ոչ միայն ինչը, այլև պատիվը, մարդկային արժանապատվությունը: Սարդարի չնչն պաշտոնյաների, հարկածանների և ֆարազների կը-ընկի տակ տրորվում է նրա մարդկային կոչումը:

Վայ է՞ն ազգին՝ որ աշխարքումս անտեր ա,
Վայ է՞ն երկրին՝ որ թշնամու գերի ա,
Վայ է՞ն խալխին՝ որ ինքն իր կյանքն, աշխարքը
Չի՛ պահպանիլ, ու հարամու ձեռ կտա:

Բայց թշվառությունն էլ սահման ունի: Տառապած ժողովուրդը ծնունդ է հանդուն, ինիցախ մարդիկ, որ արյուն թափեն նրա ազատության համար, հայրենիքի համար: Դա ժողովրդի ազատատենչ հայրենասեր ունի է, որ Աղասու անունն ու կերպա-րանքն առած, կովում է բռնությունից երկիրն ազատելու համար:

Այն քաղաքական մտախնությունը, որի վրա Աբովյանը կառուցել է իր վեպը, արտացոլում է իր էպոխայի գլխավոր ձգտու-մը — ազգային ազատագրական շարժումը: Աղասու ըմբոստացու-մը պարսկական տիրապետության դեմ ազգային ազատագրական կովի ազդանշանն էր:

Ուստ զարդերի հաղթությամբ Հայաստանը ուտք դրեց կյանքի մի նոր շրջան: Վեպի մեջ Ռուսաստանը հանդիս է գալիս իրեւ Հայաստանի փրկիչ: «Օքհնվի են սհաթը, — զրում է Աբովյանը ռեկր Հայաստանի-ի մեջ, — որ սի օրհնած ուտք հայոց վիս աշխարհը մտավ ու դվերաշի (այսինքն պարսիկների) անհծած

չոր շունչը մեր երկրից հալածեց: Քանի որ մեր քերնումը շոմէ կա, պիտք է զիշեր ցերեկ մեր քաշած օրերը մըտքներս բերենք, ու ոսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք, աստծուն փառք տանք...»: Հայաստանը քայլայված և ուժասպառ եղած երկիր տանք...»: Հայաստանը քայլայված և ուժասպառ եղած երկիր էր: Նրան պիտք էր մի ուժեղ հենարան, եթե նա մնար Պարս-կաստանի լծի տակ, կուլ էր զնալու, կորչելու էր որպես ազգ: Եթե միանար Ռուսաստանին, չնայած դրանով նա միանգամայն չէր ազատագրվելու, բայց գործ էր ունենալու համեմատաբար քաղաքակարթված և լուսավորված երկրի հետ: Մեկը կամ մյուսը պիտք է ընտրեր նա, ուրիշ ելք չկար: Պատմական հեռատեսությունը պահանջում էր նախապատվություն տալ Ռուսաստանին միանալու գաղափարին: Դա շարիքի փոքրագույնն էր: Աբովյանի կարծիքով, Ռուսաստանի կողմն անցնել նշանակում էր ուժեղ կովան ունենալ և ազգը վրկել վերահաս կորսափից:

Բայց ռեկր Հայաստանի-ի քաղաքական մտախնությունն այս կետի վրա կանգ չի առնում: Աբովյանն այն մտքին է, որ այդ բոլորը վերջին հաշվով ծառայելու է մի գաղափարի, որ գա-րեր անընդհատ կազմել է ամեն մի ժողովրդի երազանքը՝ ունենալ ազատ և քաղաքականապես անկախ հայրենիք: Բայց այս գաղա-փարը նա իր վեպի մեջ բացահայտ ձևով չի գրել, այլ մի հեռա-վոր ու մութ ակնարկի ձևով ասել ու անցել է:

Դրա համար ժողովուրդը պիտք է լուսավորվի, կուլառա-կանանա: «Ո՞վ չգիտի, — զրում է Աբովյանն իր մի պոեմի առա-ջարանում, — որ տեղից վեր կենողը հենց մեր խեղճ խալխի վրա առողջ բարձրացնում, թե աստված կը տա՝ մեր ասիացիք էլ քիչ քիչ աշքները բաց կանեն, էն ժամանակ չեն թողալ, որ ամեն հայվարա մարդ իրանց վրա բերան բաց անիք»:

Մի խոսքով, Աբովյանը պատմելով անցյալի մի տիսոր դըր-ի վագը, և հայերի ազատագրումը պարսկական բռնակալությունից ուղաների ձեռքով, նպատակ ուներ հանել ժողովրդին մտավոր խավարից, լուավորել նրան և տանել տնտեսական-կուլտուրա-կան զարգացման նոր ճանապարհով:

Աբովյանը ռեկր Հայաստանի-ի մեջ կերպարները դուրս է բերել մի շարք գեմքեր: Բայց մեծ մասին նա նկարագրել է հարկանցիրեն, կենտրոնում ունենալով վեպի գլխավոր հերոսին՝ Աղասու:



Վեպի կենտրոնական դեմքը Աղասին է, նրա շուրջն են ծառ վալվում գրվածքի սյուժեն ու նրանից բղխող բոլոր դեմքերն ու դեպքերը:

Աղասին հերոսական դեմք է: Մի քանի մարդկային, տիպական գծեր հաղորդելով նրա պատկերին, Արովյանը հերոսացրել, արտասովոր կերպարանք է տվել նրան: Աղասին սովորական քաջ գյուղացի չէ, այլ հերոս, որի նմանը ամբողջ գյուղում չի կարելի գտնել: Արովյանը Աղասուն նկարագրել է այնպիս, ինչպիս որ ժողովուրդը հեքյաթների ու առասպելների մեջ պատմում է իր սիրած հերոսների մասին: Դրանք ժողովրդի հեքյաթներում մեծ մասամբ բարու ներկայացուցիչներն են: Այստեղ, Արովյանի վեպում, Աղասին իդեալականի խտացումն է: Աղասու պատկերը գծելիս Արովյանն իրականությունը գունավորել է ցանկալիով: Արովյանի կարծիքով, Աղասին պետք է օրինակ ծառայեր հայ երիտասարդներին՝ վառելով նրանց մեջ հայրենասիրության ըզգացմունքները:

Գյուղում և ամենուրեք Աղասուն սիրում են. այդ ոչ միայն նրա համար, որ նա գեղեցիկ երիտասարդ է կամ զարմանալի աւրի ու քաջ, այլ որովհետև նա ճշմարտության պաշտպանն է, միշտ արդարության կողմը, ժողովրդի շահերի համար գլուխը սրի տակ դնող: Առասպելական դյուցազների նման Աղասին սիրելի է ու լավ, գեղեցիկ, քաջ, ընկերասեր, անձնազո՞չ, խելոք, արդարադատ, հայրենասեր: «Ախ» ո՞րն ասեմ. մեկ Աղասի էր, մեկ քյուլ Երևան, ով ասես՝ նրա անունովն էր օրթում ուսում, ով ասես՝ նրա արելովն էր խնդում՝ նրա գլխովն էր ուզում պըտիտ գա», — ասում է Արովյանը:

Աղասու բնավորության բնորոշ կողմերից մեկն էլ եկեղեցու և հոգևորականության նկատմամբ ունեցած քննադատական վերաբերմունքն է: Աղասու միշոցով Արովյանը քննադատում է եկեղեցին, տփետ հոգևորականությունը և փառաբանում ազատ ու պայծառ բնությունը:

Առասպելական պատկեր ունի վեպի հերոսներից նաև Հովակիմը: Հովակիմը կարծես պոկված լինի հայկական հին գրուցներից, ուր նկարագրված է Տորք Անդեղը կամ մեկ ուրիշ դյուցազուն: Ահա թե ինչպիս է նկարագրում Արովյանը Հովակիմին. «Էս Հովակիմը, էս կոու ձորերի աստվածը, էս սարերի արծիվը,

էս մեշեքանց ասլանը՝ մենակ հերիք է՝ որ մեկ քարի քամակից ձեն տալիս, մեկ շողով ուսաս գալիս՝ հարյուր թուրքի լեղին չուր կտրի, աշքերը սևանա»:

Ինչպիս Հովակիմի, այնպիս էլ մանավանդ Աղասու պատկերավորման մեջ հեքյաթային գծեր կան. ամեն ինչ շափազանցված է, գունավորված:

Աղասու միշոցով Արովյանն արտահայտել է իր էությունը, իր գաղափարները:

Վեպի երկրորդական գործող անձերի դեմքը Արովյանը մեծ մասով գծել է ոեալիստորեն. տանուտերը, տերտերը, գգիր Կոտանը: Սրանք կենդանի մարդիկ են, որ գրվածքի մեջ հանդես են գալիս միմիայն այս կամ այն վեպի կապակցությամբ, գրեթե ընդհանուր ոչինչ շունենալով վեպի սյուժետային հիմնական գծի հետ: Սրանք նկարագրված են գլխավորապես վեպի առաջին մասում, բարիկենդանի առիթով տանուտեր Օհաննեսի մոտ հավաքված ժամանակի:

Հայրենասիրությունը, որ Արովյանի վեպի ոգին է, ոռմանտիկական շռման է ստացել գրվածքում: Ազնիվ, բարձրացնող ոռմանտիզմն է դա, որ վարակում է ընթերցողին, հուզում, ոգևորում:

Վեպի կառուցվածքը «Վերք Հայաստանի»-ն առաջին պատմական վեպուրվեսական կան վեպն է հայ գրականության մեջ: Անգ գեղարվեստական վելին, ընդհանրապես մեր առաջին վեպն առանձնահատկություն է և իր նախորդը շռնի: Թերևս որոշ վերապահումներով կարելի է Ավարայրի պատերազմին նվիրված եղիշեի էպոպեյը համարել Արովյանի վեպի միակ և հեռավոր նախորդը:

Մինչև «Վերք Հայաստանի»-ն հայ գրականության մեջ զարգացած է եղել բանաստեղծությունը: Այդ տեսակետից անհասանելի բարձրության հասցրին հայ բանաստեղծական խոսքը մեր միջնադարյան տաղասացները: Միջնադարյան գրականությունն ստեղծեց նաև իր գեղարվեստական արձակը. դրանք Միխար Գոշի և Վարդան Այգեկցու առակներն են և այն անհայտ հեղինակների փոքրիկ նովելլաները, որ ցրված են մեր միջնադարյան ձեռագրերում: Սակայն միջնադարը, որքան հայտնի է, ոչ մի վեպ չստեղծեց:

Այսպիսով, վեպը՝ իր ժանր մեզնում սկսվում է Աբովյանից, նրա «Վերք Հայաստանի»-ից: «Վերք Հայաստանի»-ն գրվել է այն ժամանակ, երբ ելքոպական և ոռոսական գրականության մեջ արդեն ստեղծվել էին մի շարք վեպեր: Չունենալով իր նախորդը մայրենի գրականության մեջ, «Վերքը» գրական-ստեղծագործական տեսակետով բնականաբար պետք է կազմավորվեր արդեն գոյություն ունեցող ոռու և ելքոպական վեպերի աղջեցության տակ: Հետեապես, «Վերքի» վիպական մի շարք առանձնահատկություններ հասկանալի կարող են լինել միայն այն ժամանակվա վեպի զարգացման աստիճանով:

Աբովյանն իր վեպը գրելու շրջանում առանձնապես հետաքրքրություն էր ժողովրդական բանահյուսությամբ և աշուղական արվեստով: Այդ մասին նա խոսում է նաև վեպի առաջաբանում: Աբովյանին դրավում էին աշուղական երգերի պարզությունը, ժողովրդական լեզուն ու խորն, իմաստալից պատկերները: Աշուղական երգերի նյութն էլ աշխարհիկ կյանքն էր. սեր, ուրախություն, կարոտ, մահ կամ որևէ հասարակական դեպք՝ պատհապմ, աղետ և այլն:

Բարձր գնահատելով աշուղական արվեստի այս կողմը՝ Աբովյանն այն հակադրում է վանքերի խցերում ստեղծված զբարբարականությունը:

«Եատ անգամ տեսնում էի, — պատմում է նա իր վեպի հառաջաբանում, — որ մեյդանում, փողոցում մեկ քոռ աշըդի էնպես են հայիլ մայիլ մընացել ու կանգնել՝ անկաջ դնում, փող բաշխում նրան, որ բերնըների ջուրը գնում էր: Մ'եշլիս ու հարսանիք հո՝ առանց սազանդարի ե՞րբ հացը կուլ կերպար: Ասածները թուրքենն էր, շատը մեկ բառ էլա չեր հասկանում, ամա լսողի, տեսնողի հոգին գնում էր զրախար, եղ գալիս: Մ'իտք արի, միտք արի, մեկ օր էլ ասեցի ինձ ու ինձ, արի քո քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ծալիր, զրադ զիր ու մեկ աշըդ էլ դու դառ, ինչ կըլի, կըլի, խանչալիդ քարը հո վեր չի ընկնիլ, զառ վարադդ հո չի գնալ»:

Բացի այդ, իր վեպը գրելիս Աբովյանը լայնորեն օգտագործել է ժողովրդական խոսքն ու զրուցը:

Վերցնենք թեկուզ Աղասում, վեպի գլխավոր հերոսին: Աղասու պատկերը դժելիս Աբովյանի մոտ խաչաձևել և մի հետա-

քըլլքրական համադրության են եկել եվրոպական վիպագրության և հայկական, ավելի ճիշտ կլինի ասել՝ արևելյան ժողովրդական ստեղծագործության առանձնահատկությունները: Աղասին իր սիրագործություններով արևելյան հեքյաթի կամ լեգենդի տիպիկ հերոս է, իսկական մի Քյոռ-օղլի: Իսկ դատօղությունների, մտուրումների ու հոգեկան ապրումների մեջ նա նման է լուավորության շրջանի ելքոպական վեպի դրական հերոսներին: Գեղարվեստական հնարների նմանօրինակ կիրառումը Աբովյանի մոտ վեստական հնարների նմանօրինակ կիրառումը Սրբագրականի մոտ է զիտակցված ծրագիր: Իսկ այդ ծրագիրը բղիկն է այն հետացքից, որ ունեցել է նպ նոր ստեղծվող գրականության դերի և նշանակության մասին:

Հայ ժողովրդի ձեռքը պետք էր տալ այնպիսի գործ, որ համապատասխան լիներ նրա մտավոր կարողություններին, հարազարդում՝ հոգուն, համահնչյուն նրա զգացմունքներին: Բայց այդ մեջ նշանակում, թե պետք էր նրա ձեռքը ժողովրդական նազըլ տալք նշանակում, թե պետք բայց այժմ հարկավոր էր վեպ, մի այնպիսի Այդ էլ էր պետք, բայց այժմ հարկավոր էր վեպ, մի այնպիսի Անդարձակալ գործ, որ ոչ միայն հայ ժողովրդի կյանքն ընդդրեր, այլև շոշափեր հազար ու մի հուզող հարց, որ անհնար էր առաջապահ և լուծել արևելյան սովորական հեքյաթում: Ուրեմն, հարկավոր էր ստեղծել վեպ: Աբովյանը հասկանում էր, որ շպետք է հրաժարվել ելքոպական հնարներից: Բնդհակառակն, անհրաժեշտ էր օգտագործել այդ բոլորը, միայն այնպիս, որ հայ գյուղացուն խորթ վիճին գիրքը, գեղարվեստական երկը:

«Վերքի» գլխավոր առանձնահատկություններիցն է նրա հուզական հագեցվածությունը:

Հույզը՝ իրեն տիրող տարր անցնում է ամբողջ վեպի միջով. լինի այն բնության նկարագրություն, դատողություն կամ խոհությունը հարցի շուրջը, հերոսի արտաքին նկարագիրը, թե մի ուրիշ որևէ հարաբեկություն է պատմում, ասում, բան, — Աբովյանն այնպիսի հուզմունքով է պատմում, ասում, որ մի առանձին գրավչություն և թափ է հազորդում գրվածքին:

Ահա մի քանի տող այն հատվածից, որը Աբովյանը նկարագրում է թագուհուն՝ ֆարազների կողմից նրան փախցնելու պահին.

«Թագուհին, թագուհին. աշխարքի աշք թագուհին, երկնքի տակին, զետնի երեսին անթառամ ծաղիկ թագուհին, դրախտ մանիշակ, անդին, անհատ, աննման թագուհին, ի՞նչ լեզու պետք

է ըլի, որ նրա գովասանությունը պատմի, ի՞նչ աշք, որ նրա տեսքն ու կերպարանքը մեկ բանի նմանեցնի: Շարմաղ, լուսաթաթախ երեսը, որ արեգակի պես լիս էր տալիս, ու վարդի պես փայլում, դառել էր սպիտակ քաթան, սառել, սպրինել: Էն երկնանման աշքերը, որ տեսնողի հոգին վառում, կրակում էին, ընկել էին խոր, փակվել, կուլ գնացել: Թագուհին, զիվան թագուհին, մորը մեկ թագուհին, որ հրեշտակի նման, ում որ մտիկ էր տալիս, հոգին անմահական խնդությունով լցնում էր, սառել, փետացել, անշումչ, անլեզու մնացել էր գիտնի վրա ընկած, երեսը երկինքը քցած, հենց գիտես՝ թե էլ էս աշխարքումը չի, հրեշտակաց մեջն ա համբարձել, դրախտումն ըլի իր անմեղությունը վայելում: Նրա թուխ թուխ ունքերը, նրա շալ շալ աշքերը, նրա նուան հատ թշերը, նրա բարակ բարակ՝ դալամքաշ պողոները, նրա լուսեղեն ճակատը, նրա մարմար, նուրբ քիթը, նրա բըլքուկի լեզուն, նրա ոսկեցնցող բուգը, բոլոր բոլոր սառել, քարացել, պապանձվել էր»:

Թվում է թե Աբովյանի գործի տակից տողերը հորդում են լրվեժի պես և այն էլ այնպիսի ուժգնությամբ, որ առաջն առնել մի կարելի: Հգացումների անկանգ հեղեղը Աբովյանի գրածին շատ անգամ պարզապես շափածո ձև է տալիս, թեն կարծես, Աբովյանը չի կամեցել այդ անել: Վեպում բազմաթիվ հատվածներ և էջեր, որ Աբովյանը շարադրել է արձակ, ստեղծագործական ոգեկորության ազդեցությամբ տաղաշափական ձև ու կերպարանք են առել:

Ահա վեպից մի արձակ կտոր, որ շափածո ձևով է մեջ բեր վում.

Տան կտրներին,
Հայաթի միջին,
Դաշտի երեսին,
Հողի բաց դոշին,
Երկնից առաջին,
Աստղերի տակին
Նրանք շոքեցին,
Նրանք կանգնեցին:

«Երբ Հայաստանի»-ն իր յուրահատուկ կառուցվածքն ունի

Ամենից առաջ աշքի է ընկնում այն անհամաշափությունը, որ կակա վիշտական սյուժեյի և հեղինակի գեղումների միջև: Շատ հաճախ Աբովյանը ընդհատում է պատմվող դեպքը, նկարագրությունը և այս կամ այն առթիվ գատողություն անում որևէ հարցումը: Այսպիս օրինակ, վեպի երկրորդ գլուխը սկսվում է ցի շուրջը: Այսպիս օրինակ, վեպի մի էջ նկարագրելով երեանի բերդը՝ Աբովյանը բաց չի թողնում առիթը և այդ կապակցությամբ մի քանի էջի վրա պատմական հարցեր է շոշափում: Այսպիսի օրինակներ կարելի է շատ բերել:

Այս հանգամանքի վրա ինքը Աբովյանն էլ է ուշագրություն գարձրել: Օրինակ, մի տեղ վեպի սյուժեն մի կողմ թողած, նա բացատրում է, թե ի՞նչ է լուսավորությունը և թե ի՞նչ օգուտ բացատրում է, թե ի՞նչ է լուսավորությունը և թե ի՞նչ օգուտ բառների նրան և հանկարծ ընդհակունենական ժայ ժողովորդը, որ հետեւ նրան և հանկարծ ընդհակունենական առաջարկը և դառնում ընթերցողին, ներողություն խնդրում: Տառը է խոսքը և դառնում ընթերցողին, ներողություն խնդրում: Այսպիս չի սպասած բանը թողնել ու էսպես քարոզ ասել, ես էլ գիտ տեմ, ամա սիրտս չի դիմանում, ի՞նչ անիմ»:

Երբ վեպում պատահում է որևէ պատմական անում, կամ հերոսն ընկնում է որևէ պատմական վայր, ասենք, Անու ավերակները, ապա հեղինակի, այսինքն Աբովյանի միտքը սլանում է ետ, դեպի մեր ժողովորդի անցյալը, և նրա վառ երեակայությունը վերակենդանացնում է ավերակները, ընթերցողի առաջ բացելով հինավորց քաղաքի փառահեղ պատկերը:

Մի կողմ թողած հերոսին, գործողությունը՝ նա իր զեղումներով ցույց է տալիս վեպի ընթերցողին, թե այժմ ստրկացած, իսկեղացած հայ ժողովուրդը մի ժամանակ, դարեր առաջ եղել է խոսքում նպատակ ունի ընթերցողի մեջ բորբոքելու անկախության գաղափարը, հայրենասիրության ոգին:

Աբովյանի բերանով «Ակերքի» մեջ խոսում է դառնացած հայ Ժողովուրդը: «Վերբք» հայ ժողովորդի զարթոնքի զողանշն է, որ հնչել է գալիք սերունդների համար:

Այսպիսի հանգամանքը չէր կարող շանդադառնալ երկի վիպական կառուցվածքի վրա: Աբովյանի հույզն այնքան ուժեղ էր, որ հեղեղի պես ներխուժելով ամրով կառուցվածքի մեջ, կերպար հայությունը այն, տալով նրան մի յուրահատուկ և այլիս անկրկնելի ձև:

Բացի այդ, պետք է նշել նաև այն, որ սուս և եվրոպական վեպերը, որոնք որոշ չափով ազդել են Հայկական առաջին վեպի վրա, ոսմեն մասերի, այուժեի և գեղումների զարմանալի անհամաշափություն։ Այն վեպերը, որոնք ստեղծվել են Եվրոպայում և Խոսաստանում այն ժամանակ, երբ ուժեղ էր սենտիմենտալիստական ուղղությունը, լին են հեղինակի լիրիկական և, երբեմն էլ՝ խոհական զեղումներով, մի հանգամանք, որ չէր կարող որոշ չափով բացասաբար չանդրադառնալ վիպական գործողության վրա։ Վիպական գործողության մացիկ զարգացման բացակայությունը նկատելի է Խոսանդի («Նոր ելուից»), Գյոթեի («Վերթեր»), Կարամզինի («Թշվառ կիզա») և ուղիշների գրվածքներում։ Վիպական այդ առանձնահատկությունը, որ նկատելի է Առովանի «Վերթ»-ում, բնորոշ է եղել այն ժամանակվա գրեթե բուրու վեպերի համար։

Անգլան

«Վերթ Հայաստանի»-ի «Հառաջարան»-ի կենտրոնական հարցերից մեկն է աշխարհաբարը։ Արովյանը փափակում է իր ժողովուրդը տեսնել լուսավորված, քաղաքակրթված։ Պարզ է, որ նա իբրև լուսավորիչ՝ իր գործունեության սկզբից պետք է պայտարեր գրաբարի գեմ, որ մի արգելափիթ պատնեշ էր լուսավորության առաջ։ Որպեսզի ժողովուրդը գիրք կարդա, պետք է գրել ոչ միայն նրան հետաքրքրող, հուզող նյութերի ու հարցերի մասին, այլև այդ բոլորը նրան հասկանալի լեզվով, այն լեզվով, որով նա խոսում է, արտահայտում է իր մտքերը։

Արովյանն իր վեպը գրեց Քանաքենի բարբառով։ Նա դիտե մամբ շգրից մաքուր գրական լեզվով։ Արովյանը շատ լավ հասկանում էր, որ նոր ստեղծվող գրական լեզուն ժողովրդի համար այն ժամանակ կարող էր այնքան էլ մատշելի լինել։ Հետեւապես պետք էր գրել ժողովրդական լեզվով։ Իրավացի է Մ. Նալբանդյանը, երբ ասում է, թե վեպը գրված է այնպես, կարծես գյուղացին ինքն է պատմում։ Ժողովրդի համար գրողը պետք է գրել ժողովրդի լեզվով։ Բայց այդ Մի նշանակում, իհարկե, որ Արովյանը, կովելով մի այնպիսի հարուստ լեզվի գեմ, ինչպիսին է գրաբարը, գավառաբարբառն ընդուներ իբրև հայ նոր գրական լեզու։ Վեպի «Հառաջարան»-ում Արովյանն իր լեզուն համարում է խակ և նմանեցնում է մանկան կմկմալուն։ Քիչ հետո նա ավելացնում է»

«Երբ որ կմեծանամ, խրթին լեզվով էլ կխոսանք»։ Այս ասելով, Արովյանը նկատի ուներ, որ բարբառային գծերը, ինչպես և օտարամուտ բառերը հետզհետե պետք է տեղի տան, որից հետո միայն կստեղծվի մաքուր գրական լեզու։ Բայց, իհարկե, նա այն հաստատ համոզմանն էր, որ ստեղծվող գրական լեզվի հիմքը լինելու է ժողովրդականը։ Իր մյուս գրվածքներում («Եսախաշավիզ», «Պատմություն Տիգրանի», «Նոր ելուից») թարգմանություն և այլն) նա ստեղծեց մաքուր գրական լեզու, որով այժմ մենք խոսում ենք։

Մինչև «Վերթ Հայաստանի»-ն՝ ուրիշներն էլ են փորձ արել գրել ժողովրդական լեզվով։ Բայց այդ բոլորը միայն փորձեր են եղել։ Զկարողանալով հետևողականորեն պայքարել գրաբարը ժողովրդական լեզվով փոխարինելու գործի համար, նրանք առաջին իսկ անհաջողությունից ընկճել, զիջման ուղին են բռնել, շարունակելով վերստին գրվածքներ հորինել գրաբար լեզվով։ Աբովյանը շզիեց։ Բայց վեպից, նա շատ ուրիշ գործեր էլ՝ ինչպես շափածո, այնպես էլ արձակ՝ գրեց աշխարհաբար լեզվով։ Բացի այդ, ինչպես իր վեպի առաջաբանում, այնպես էլ մի քանի այլ գրվածքներում, Արովյանը աշխարհաբարի անհրաժեշտության հրապարակախոսական-տեսական հիմունքները տվեց։

Այդպիսով, Արովյանը մեզանում հանդիսացավ գրական նոր լեզվի՝ աշխարհաբարի հիմնադիրը։

«Վերթ Հայաստանի»-ի, ինչպես և Արովյանի մյուս արձակ գործերի լեզուն, ժողովրդի կենդանի խոսակցական լեզուն է։ Ժողովրդական լեզվի հարուստ ձևերն ու ոճերը իրենց արտացոլումն են գտել Արովյանի վեպում։ Եվ Արովյանը շատ լավ տիրելով Արարատյան և մանավանդ Քանաքենի բարբառին, ընդգծել է ժողովրդական լեզվի այն մի քանի առանձնահատկությունները, որոնք ոճին հաղորդում են մի առանձին կենդանություն և գրավչություն։ Այսպիսս, օրինակ, Արովյանը գրականության ժողովրդացման տարրերից մեկը համարում էր Փոլկորացին նյութերի օգտագործումը։ Ճիշտ է, Փոլկորն օգտագործելը դեռևս գրականությունը ժողովրդացման շի նշանակում, բայց Արովյանը կամենում էր ստեղծել մի այնպիսի գրականություն, որը, ինչպես մի մեծ և հաստատուն կաղնի, իր արմատներով գնար դեպի ժողովրդը, դեպի նրա ստեղծագործության անսպառ աղբյուրները։

Աբովյանը շեր կարող չիմանալ, որ աշխարհի բոլոր մեծ պրվածքները սնվել են ժողովրդական ստեղծագործության հյութերով:

Եզրափակում Խաշատուր Աբովյանը XIX դարի առաջին հայ մեծ լուսավորիչն է, նոր գրականության անմահ հիմնադիրը:

Հրապարակ գալով Հայաստանի նոր պատմության սկզբին, այն ժամանակ, երբ հայ ժողովրդի բախտը կապվում էր ուստի մեծ ժողովրդի բախտին, Աբովյանը հանճարեղ կերպով ըմբռնեց պատմական այդ կապի անհրաժեշտությունը և հանդես եկավ, որպես գրա պրոպագանդիստը:

Աբովյանը, զինված ելլոպայի առաջավոր գիտությամբ ու գրականությամբ անողոք կոփվ հայտարարեց հետադեմ հոգևորականությանը, եկեղեցական սխոլաստիկային և առաջաղթեց ժողովրդական լայն խավերի լուսավորության համար ղեմոկրատական կուլտուրա ու գրականություն ստեղծելու ծրագրով, ինքը հանդիսանալով այդ ծրագրի առաջին իրազործողը:

Աբովյանը ցուց տվեց, որ հայ ֆեռազական հասարակության գրական լեզուն՝ գրաբարն արգելակում է հայ ժողովրդի լուսավորությունը, և պահանջ դրել ու ինքն էլ գրեց ժողովրդի լեզվով, որը և դարձավ գրական նոր լեզվի՝ աշխարհաբարի հիմքը:

Աբովյանը որպես հայրենասեր, իր գրական ստեղծագործության ու լուսավորական-հասարակական գործունեության միջոցով, խանդավառությամբ հրահրեց ժողովրդի ազգային ինքնաճանաշման, ազգային ազատազրման գաղափարը, առաջարկեց Հայաստանի դարավոր վերքի բուժման ծրագիրը:

Ժողովրդին հասկանալի լեզվով, ժողովրդի կյանքը ճշմարտացի արտացոլող գրականություն ստեղծելով՝ Աբովյանը նոր դարավորին բացեց հայ հասարակական մտքի և կուլտուրայի պատմության մեջ ու լուսավորեց հայ առաջավոր-դեմոկրատական գրականության հետագա զարգացման ուղիները:



ԲՈՂԱԿԱՆ ԴԱԿԱՐԱԹՅՈՒՆ

ՀԻՆ ԾՐՁԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆՆԵՐ V—IX ԴԱՐԵՐԱՐԱՄ

ՆԵՐԱԾՈՎՐՅՈՒՑ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

V—IX ԴԱՐԵՐԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԻՉ ԳՐԱԴՆԵՐԸ

1. Ազաթանգեղոս	34
2. Փալստոս Բյուզանդ	38
3. Մովսես Խորենացի	44
4. Եղիշե	51
5. Ղազար Փարպեցի	54
6. Հովհան Մամիկոնյան, Սեբեոս, Մովսես Կաղանկատվացի և Ղեոնդ	56
7. Շապուհ Բագրատունի, Հովհաննես Դրասխանակերտցի և Թովմանցունի	58

ՄԻՋԻՆ ԾՐՁԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆՆԵՐ X—XVIII ԴԱՐԵՐԱՐԱՄ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սասունցի Դավիթ	62
-------------------	----

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆՆԵՐ X—XII ԴԱՐԵՐԱՐԱՄ

Ներածություն	80
2. Գրիգոր Նարեկացի	83
3. Հովհաննես սարկավագ Խմատասեր	91
3. Ներսես Շնորհալի	95
4. Միւիթար Գոշ	102

ԵՐԵՎԱՆԻ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՅԻ Բ ԽՄ-ԽՎ ԴԱՍՏԱՐԱԿԱՆ

Ներածություն		
1.	Ֆրիկ	107
2.	Կոստանդին Երզնկացի	111
3.	Վարդան Այգեկցի	119
4.	Հովհաննես Թլկուրանցի	127
5.	Մկըտիչ Նաղաշ	133
6.	Դրիգոր Աղթամարցի	137
7.	Նահապետ Քուչակ	141
8.	XVI գարի հայ մյուս բանաստեղծները	147
		154

ԶՈՐԻՑՈՐԴ ԲԱԺԻՆ

બાળ કથાગુણ

Հ Ա Յ Ի Ր Ա Կ Ա Ր Ե Ա Խ Թ Յ Յ Ո Ւ Ե Ը XIX Դ Ա Յ Ո Ւ Ե

ԱՐԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԵՎԵՆ ՀԱՆՈՂՑՊՈՅՐ

Qus-husqahr

2.3 Ubiquitous

lo. U m r q u'j w G

ՏԵԽ-ԽԱՄԲԱԳԻՐ

• *W. W. G. J.*

ՄՐՊԱԳՐԻՑ

Ψ. Ψ ψ ω q j ω 6

Վե 2734. Հրատ. 5336. Պատվիր. 637.

Տիրած 20.000. Հանձնված է արտա-

Դրության 27/VIII 1940 թ. Ստորագրված է տաղապառության 10/XII 1940 թ.

Հայովետհրատի տպ. Երևան, Լենինի 65

1 6 7 9 8 4

10001

«Ազգային գրադարան»



NL0375772

64.072

ԳԻԱԸ 5 թ.

8204

История Армянской литературы
для VIII класса

Подготовлен братцей Института Литературы и языка
Армянского филиала АН СССР
Армгиз, Ереван, 1940